ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ

ՈՒ Ղ Ե Ր Ձ

ԵՐԵՎԱՆ 2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

ՄԱՍ Ի–Ա. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 9

2021 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները 9

Տնտեսական զարգացում 9

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում 13

Էներգետիկայի և բնական պաշարների կառավարման բնագավառ 16

Միջուկային անվտանգություն 18

Ջրային տնտեսություն 20

Տրանսպորտ 21

Քաղաքացիական ավիացիա 22

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն 24

Քաղաքաշինություն 26

Արտակարգ իրավիճակների բնագավառ 26

Արտաքին քաղաքականություն 27

Արդարադատություն 29

Սփյուռք 35

Կրթություն 35

Գիտության ոլորտ 37

Մշակույթ 38

Սպորտ 39

Երիտասարդություն 40

Առողջապահություն 40

Աշխատանք և սոցիալական պաշտպանություն 42

Շրջակա միջավայր 46

Բյուջեների կազմման բնագավառ 47

Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեություն 49

Եկամուտների քաղաքականության ոլորտ 49

Կապիտալի շուկայի զարգացում 50

Պետական եկամուտների վարչարարություն 51

Պետական գույքի կառավարման ոլորտ 53
Անշարժ գույքի կադաստր 54
Հասարակական կարգի պահպանություն 55
Գենդերազգայուն բյուջե 58
ՄԱՍ I - Բ. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 60
ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 60
1.1 ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԵՎ ՇՐՋԱՆԱԿ 60
1.2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 63
1.3. ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 66
1.4. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 79
1.5. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ (COVID-19) ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ DSGE ՄՈԴԵԼՈՎ 81
1.6. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԸ 87
ՄԱՍ Ի-Գ. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ 90
2.1. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ 90
2.2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ 92
2.3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ 100
2.4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ 102
2.5. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ 105
ՄԱՍ II-Ա ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 108
Հարկաբյուջետային սկզբունքները և ցուցանիշները 108
ՄԱՍ II – Բ. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 109
2021 ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 109

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ԵՎ ՊԱՐՏՔԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ 110

Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները 111

ՄԱՍ III. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ 113

ՄԱՍ III-Ա. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 113

Պաշտոնական դրամաշնորհներ 119

Այլ եկամուտներ 120

Մ Ա Ս III – Բ. Ծ Ա Խ Ս Ե Ր Ի Կ Ա Ն Խ Ա Տ Ե Ս Ո Ւ Մ 124

ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 124

ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 131

2021Թ. ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 137

ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ 138

Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսեր 138

ՀՀ առողջապահության նախարարություն 145

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն 155

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 167

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն 177

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն 195

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն 197

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն 201

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն 212

ՀՀ արդարադատության նախարարություն 214

«Քրեակատարողական ծառայություններ» ծրագրի շրջանակներում՝ 214

ՀՀ պաշտպանության նախարարություն 216

ՀՀ Ոստիկանություն 218

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն 219

ՀՀ վարչապետի աշխատակազմ 220

Հանրային հեռարձակողի խորհուրդ 225

ՀՀ քաղաքաշինության կոմիտե 226

ՀՀ կադաստրի կոմիտե 226

ՀՀ պետական եկամուտների կոմիտե 227

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ 229

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ 229

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 239

3. ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ 245

4. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ (ԷՆԵՐԳԵՏԻԿԱ, ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ) ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 246

5. 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. 272

ԱՂԲՅՈՒՍԱԿՆԵՐ 286

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 288

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2021 թվականին տնտեսական զարգացման քաղաքականության շրջանակը կառուցվում է ՀՀ կառավարության՝ 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշմամբ հաստատված ծրագրի առաջնահերթությունների շուրջ:

Կառավարության գործունեության առանցքային նպատակը 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած ժողովրդական հեղափոխության արժեքների ամրագրումն է՝ որպես հանրային և ազգային հարաբերությունների հիմք և հեղափոխության գաղափարների իրագործում, որպես մշտական քաղաքական իրողություն:

Ակնհայտ է, որ այսպիսի քաղաքական նպատակի իրագործումը հնարավոր է միայն ամուր տնտեսական հենքի առկայության դեպքում՝ որպես նպատակ ունենալով նաև մրցակցային տնտեսության զարգացումը և հանրային միջոցների արդար բաշխումը: Այս տեսակետից Կառավարության տնտեսական զարգացման քաղաքականությունն էական նշանակություն ունի: Հետևաբար, տնտեսական զարգացման քաղաքականությունը կմշակվի բոլոր շահագրգիռ և կարող ուժերի ներգրավմամբ, ինչպես նաև լավագույնս կօգտագործվեն ժամանակակից աշխարհում կուտակված հսկայածավալ գիտելիքն ու փորձը՝ նպատակ ունենալով լայն հանրային քննարկումների արդյունքում ձևավորել տնտեսական քաղաքականության նոր մոդել:

Ակներև է նաև այն, որ որևէ տնտեսական քաղաքականության հաջողության գրավականը հանրային միջոցների այնպիսի բաշխման համակարգի առկայությունն է, որը կերաշխավորի մի կողմից տնտեսության զարգացման և մյուս կողմից՝ պետության անվտանգության ու հասարակության սոցիալական կարիքների հավասարակշռված իրականացման նախադրյալների ստեղծումը: Այդ կապակցությամբ Կառավարությունը նախատեսում է լայն հանրային քննարկումների ճանապարհով ախտորոշել պետության հանրային միջոցների բաշխմանը կոչված հարկային համակարգը, ինչպես նաև բյուջետային ծախսերի միջոցառումները և նախաձեռնել դրանից բխող անհրաժեշտ գործողությունների իրականացումը:

Վերոթվարկյալը ժամանակի ընթացքում, հասարակության բոլոր շերտերի պատշաճ ներգրավմամբ, անշուշտ, կտա իր արդյունքները: Սակայն մինչ այդ պետք է նկատի ունենալ, որ հնարավոր չէ հասարակական կյանքի ընթացքը կանգնեցնել, նոր ծրագրերի քննարկում նախաձեռնել և դրանց ընդունումից հետո միայն շարունակել այդ ընթացքը: Պետության արդեն իսկ ստանձնած պարտավորությունների կատարումը և նոր ծրագրերով տնտեսական զարգացման ապահովումը պետք է դիտարկվեն որպես միմյանց լրացնող գործընթացներ:

Հաշվի առնելով, որ պետական մարմիններն առաջիկայում ձեռնամուխ են լինելու ծախսերի արդյունավետության մանրազննին ուսումնասիրմանը և ոլորտային առաջնահերթությունների վերանայմանը՝ հիմնվելով տարբեր ոլորտներում իրականացվող քաղաքականությունների ախտորոշման արդյունքների վրա, ինչն անպայմանորեն իր արտացոլումն է

ստանալու ինչպես ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարման ընթացքում, այնպես էլ առաջիկա տարիների պետական բյուջեների նախագծերում:

ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նախանշված հիմնական ուղենիշը՝ Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական, ինչպես նաև բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող, արտահանմանը միտված մրցունակ և ներառական տնտեսության կառուցումը, շարունակում է մնալ արդիական: Այդ ճանապարհին արձանագրվել են հետևյալ հիմնական խնդիրները՝ մարդկային ներուժի զարգացման և հուսալի ենթակառուցվածքների ձևավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև պետական կառավարման արդյունավետության բարձրացման ու տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրական հնարավորությունների համար նախադրյալների ստեղծումը: Մշտապես փոփոխվող արտաքին և ներքին մարտահրավերների միջավայրում՝ հենց այս առանցքային խնդիրների լուծմանն են միտված կառավարության լիազորությունների շրջանակում իրականացվող բոլոր միջոցառումները:

Պետական բյուջեի կարևորագույն հատկանիշ է համարվում դրա իրատեսականությունը: Կարճաժամկետ «արդյունք» ստանալու համար հնարավոր է բոլոր ծրագրերը կամ նույնիսկ դրանց բացակայության դեպքում մտադրությունների հայտարարությունները ներառել ծախսերի ծրագրերում (բյուջետավորել), բայց ակնհայտ է, որ ծախսերի իրականացման համար գնահատված հնարավորությունների իրատեսական չլինելու պարագայում, այդ նույն ծրագրերի շրջանակում վճարումների կատարման փուլում, ձախողումն անխուսափելի կլինի՝ դրամական միջոցների անբավարարությամբ պայմանավորված:

Մյուս կողմից, ակնհայտ է նաև, որ արդարացված չէ այն մոտեցումը, ըստ որի պետք է հնարավորինս ցածր նշաձող թիրախավորվի միջոցառումների իրականացման տեսակետից, որպեսզի նվազագույնի հասցվի կատարման ռիսկը: Այս մոտեցումը խնդրահարույց է հատկապես հավակնոտ զարգացում ենթադրող նպատակադրումների իմաստով, հետևաբար, ճշմարտությունն այս երկու մոտեցումների հավասարակշռության կետում է: Այսինքն, նշաձողը պետք է լինի բարձր, բայց իրատեսական, ինչպիսին դրված է 2021-2023 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմքում:

Բյուջետային ցուցանիշների պատմական շարքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ բյուջեների ծրագրավորման փուլում հավակնությունները հաճախ գերագնահատվում են, մինչդեռ բյուջեների կատարման գործընթացը՝ բազմագործոն ազդեցություններով պայմանավորված, տեղի է ունենում ՀՀ-ում ձևավորված կարողություններին համահունչ: Արդյունքում, ստացվում է իրավիճակ, երբ բյուջեի ծրագրավորման փուլում հայտարարված մտադրությունները, որոնք արտահայտում են հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունները, հնարավոր է նաև՝ բնականոն իրավիճակում պատշաճ կերպով արտացոլվում են բյուջեում, բայց ծրագրավորման որակի և ծրագրավորվածից, երբեմն էականորեն շեղվող բյուջեի կատարման պատճառով հայտարարված քաղաքականությունների նպատակադրումները շարունակում են մնալ չկատարված: Բնականաբար, վերոնշյալ ձևակերպումը չի ներկայացվում բացարձակ իմաստով, որովհետև այն՝ քաղաքականություններին վերաբերելի է մասնակիորեն և ամենևին չի հերքվում, որ տարեց տարի առկա է բարելավում թե՛ բյուջեի ծրագրավորման և թե՛ կատարման ուղղությամբ կարողությունների կատարելագործման տեսակետից: Վերջինս սակայն չի նշանակում, որ բյուջետային գործընթացի որակի բարելավման խնդիրն այլևս արդիական չէ, մանավանդ, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս

ենթադրել, որ այսպիսի խնդրի բախվում են, գործնականում, բոլոր պետությունները և մշտապես:

Ընդունված է բյուջետային գործընթացը գնահատել որպես անխուսափելիորեն տեղի ունենալու ենթակա գործընթաց՝ անկախ կոնկրետ ժամանակահատվածի և տվյալ երկրի առանձնահատկություններից: Ինչը նշանակում է, որ նույնիսկ համավարակային ներկա իրավիճակում, որը բնորոշվում է որպես անորոշության զգալի աստիճան ունեցող, այլընտրանք չունի առկա կանխատեսումների և դրանց ռիսկերի հաշվառմամբ բյուջեի նախագծումը:

Նկատի ունենալով վերոնկարագրյալը, ՀՀ 2021 թվականի պետական բյուջեն նախագծվել է այն տրամաբանությամբ, որ հարկաբյուջետային քաղաքականությունն առավելագույնս համարժեք լինի կանխատեսվող տնտեսական զարգացումներին և նպաստի տնտեսական աճի վերականգնմանը, ինչպես նաև տնտեսական աճի պոտենցիալի մեծացման նախադրյալներ ձևավորի՝ պահպանելով ոլորտային քաղաքականությունների իրականացման համար հատկացումների անհրաժեշտ չափաքանակները:

ՄԱՍ Ի–Ա. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2021 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները

Տնտեսական զարգացում

2021 թվականին տնտեսական զարգացման քաղաքականության շրջանակը կառուցվում է ՀՀ կառավարության՝ 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշմամբ հաստատված ծրագրի առաջնահերթությունների շուրջ: Իրականացվելիք միջոցառումների հիմնական նպատակը լինելու է տնտեսության մրցունակության և արտադրողականության աճը:

Տնտեսական քաղաքականությունը հիմնված է լինելու ռազմավարական փաստաթղթերով նախատեսված գործողությունների իրականացման վրա այնպիսի կարևորագույն ուղղություններով, ինչպիսիք են ձեռներեցության զարգացումը, գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը, զբոսաշրջության, արդյունաբերության և գյուղատնտեսության մրցունակության աճը: Միաժամանակ թիրախավորվելու են նաև հանրային ներդրումների արդյունավետության բարձրացումն ու որակի ենթակառուցվածքների բարելավումը:

Տնտեսության մրցունակության բարձրացման տեսանկյունից կառավարության կողմից կարևորվելու է արտադրողականության աճը՝ տեխնոլոգիաների կլանման և կարողությունների զարգացման միջոցով, ՀՀ քաղաքացիների նորարարական ներուժի իրացումը՝ գործարար նախաձեռնողականության խրախուսման միջոցով: Հատուկ ուշադրության է արժանանալու օտարերկրյա ներդրումների ներգրավումը՝ որպես տնտեսության որակական փոփոխության շարժիչ ուժ:

Տնտեսական զարգացման քաղաքականությունը խարսխվելու է հինգ հենասյուների վրա, որոնք ուղենշում են կառավարության տնտեսական առաջնահերթությունները: Այսպես, թիրախավորվում է մրցունակ՝ առավել արտադրողական և տեխնոլոգիատար արդյունաբերության զարգացումը: Երկրորդ հենասյունը ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի ակտիվության բարձրացումն է, որի շնորհիվ հնարավոր կլինի ապահովել ներառական տնտեսական աճ: Երրորդ հենասյունը գործարար միջավայրի շարունակական բարելավումն է, որը ՀՀ քաղաքացիների ստեղծարար ներուժի իրացման առաջնային նախապայմանն է: Չորրորդը զբոսաշրջության զարգացումն է: Չնայած առկա մարտահրավերներին՝ զբոսաշրջությունը շարունակում է պահպանել իր երկարաժամկետ մրցունակությունը և աճի ներուժը: Միևնույն ժամանակ, ոլորտի մրցունակության աճը դրական է ազդելու տարածքային համաչափ զարգացման վրա: Հինգերորդ հենասյունը գյուղատնտեսության արդյունավետության բարձրացումն է և գյուղատնտեսական ամբողջ արժեշղթայում ընդգրկված սուբյեկտների՝ գյուղացիական տնտեսությունների, կոոպերատիվների, գյուղատնտեսական մթերքներ վերամշակողների, սպասարկող ենթակառուցվածքների եկամուտների ավելացումը: Առանձնահատուկ թիրախ է հանդիսանալու պարենային և սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացումը: Այս համատեքստում մեծապես կարևորվում է նաև գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործումը, առաջադիմական

տեխնոլոգիաների ներդրումը և բնակլիմայական ռիսկերի մեղմումը: Այս ուղղություններով արդեն իսկ մշակված են առանցքային ռազմավարական փաստաթղթեր, որոնք հիմնված են խորքային վերլուծությունների և հետազոտությունների վրա:

Արդյունաբերության մրցունակության աճի առաջնային աղբյուր է դիտարկվում արտադրողականության աճը՝ տեխնոլոգիաների կլանման, կարողությունների բարձրացման, լոգիստիկ խնդիրների մեղմման և՛ ներքին, և՛ միջազգային թիրախային շուկաների մուտքի, և՛ տեղեկատվության հասանելիության ապահովման միջոցով: Ծրագրված գործողությունները միտված են հնարավորություն ընձեռելու Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ապրանքները (ծառայությունները), մտավոր գործունեության արդյունքներն արտահանել օտարերկրյա պետությունների շուկաներ՝ ստեղծելով առավել բարենպաստ պայմաններ արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար:

Գործարար միջավայրի բարելավման համար մեծապես կարևորվում են պարզ, թափանցիկ, արագ, կանխատեսելի և հնարավորինս քիչ ծախսատար պետական կարգավորումներն ու վարչական ընթացակարգերը, հավասար մրցակցային պայմաններ, տեղեկատվության առավելագույն հասանելիություն և գործարարությանն օժանդակող զարգացած շուկայական ենթակառուցվածքներ ապահովելու քաղաքականությունը: Գործարար միջավայրի բարելավման նպատակով իրականացվող ծրագրերը թիրախավորելու են գործարարությամբ զբաղվելուն խոչընդոտող վարչարարական բնույթի խնդիրների լուծումը՝ նպաստելով գործարար գաղափարների իրագործմանը տնտեսության բոլոր ճյուղերում:

Ակնկալվում է առաջին հերթին թեթևացնել այլ երկրների համեմատությամբ առկա վարչարարական բեռը: Թիրախային գործողությունների իրականացման արդյունքում կբարձրացվի նաև գործարարներին ծառայություններ մատուցող մարմինների գործունեության թափանցիկությունը: Նախատեսված գործողությունները կնպաստեն Հայաստանում ազատ և մրցակցային գործարար միջավայրի կայացմանը և ամրապնդմանը, որը երկիրն ավելի գրավիչ կդարձնի օտարերկրյա ներդրողների համար: Զուգահեռաբար, շարունակական աշխատանք կտարվի նաև իրականացված բարեփոխումների արդյունքները միջազգայնորեն ընդունված և ճանաչում ունեցող ինդեքսներում արտացոլելու և դրանցում ՀՀ դիրքը բարելավելու ուղղությամբ՝ բարձրացնելով Հայաստանի ճանաչելիությունը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացման համար նախատեսված հիմնական աշխատանքները ենթադրում են ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների, նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների, գործարար ուսուցողական, տեղեկատվական, տեխնիկական և խորհրդատվական ծառայությունների մատուցման հնարավորությունների, ինչպես նաև ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության շրջանակների ընդլայնում և նրանց մրցունակության բարձրացում: Նոր ապրանքատեսակների արտադրության և ծառայությունների մատուցման քանակական ու որակական աճը և դրանց արտահանման ծավալների ավելացումը, սկսնակ գործարարներին աջակցության ցուցաբերումը, ՓՄՁ-ի սուբյեկտների թվաքանակի ավելացումն ու դրանց հաշվին նոր աշխատատեղերի ստեղծումը տնտեսական քաղաքականության թիրախներից են: Վերջինս կնպաստի ցածր տնտեսական ակտիվությամբ առանձնացող տարածաշրջաններում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը, երկրում գործազրկության կրճատմանը, հասարակության միջին խավի ձևավորմանը և աղքատության հաղթահարմանը:

Կորոնավիրուսի համավարակի հետևանքները մեղմելու նպատակով այս ոլորտում առավել մեծ կարևորություն է տրվելու սնանկության գործընթացի և երկրորդ հնարավորության մեխանիզմների բարելավմանը, ֆինանսների հասանելիության հետ կապված լրացուցիչ բարդությունների հաղթահարմանը, ՓՄՁ-ների՝ խոշոր արժեշղթաներում ներգրավման անհրաժեշտությանը: Իրականացվող գործողությունների արդյունքում ոչ միայն էապես բարելավվելու է ՓՄՁ-ների արտադրողականությունը և աճելու է զբաղվածների թիվը, այլ նաև փոխանցվող հմտությունների և բարելավված միջավայրի շնորհիվ ձեռներեցությամբ զբաղվելը դառնալու է արտագնա աշխատանքի, կորցրած աշխատատեղերի և եկամուտների վերականգնման այլընտրանք:

Զբոսաշրջության ոլորտի զարգացման քաղաքականությունն ուղղված է լինելու Հայաստանի ճանաչելիության և հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացմանը: Բյուջետային տարվա հիմնական միջոցառումները վերաբերում են ակտիվ մարքեթինգային քաղաքականության իրականացմանը, համայնքային ռեսուրսների հիման վրա զբոսաշրջային արդյունքի բազմազանեցմանը, զբոսաշրջային ենթակառուցվածքների և կարողությունների զարգացման աջակցությանը, միջազգային համագործակցության զարգացմանը, վիճակագրական համակարգի կատարելագործմանը: Կորոնավիրուսի համավարակի հետևանքները մեղմելու նպատակով հատկապես մեծ ուշադրություն է դարձվելու Հայաստանի զբոսաշրջային գրավչության վերականգնման մարքեթինգային միջոցառումների իրականացմանը:

Գյուղատնտեսությունը երկրի տնտեսության առանցքային ոլորտներից մեկն է: Երկրի գյուղատնտեսական քաղաքականության հիմքում 2019 թվականին ընդունված գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացման ռազմավարական փաստաթղթով սահմանված միջոցառումներն են: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը առանձնացնում է յոթ հիմնական գերակայություններ, որոնք վերաբերում են հողային բարեփոխումներին, արտահանման դիվերսիֆիկացմանը, գյուղատնտեսության ոլորտում ավելացված արժեքի բարձրացմանը, տեխնոլոգիական արդիականացմանը, նորորարություններին, մարդկային հմտությունների և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը:

Վերոնշյալի իրականացման համար մեծ կարևորություն ունեն ագրոպարենային ոլորտի արդյունավետ բարեփոխումների իրականացումը: Դրանցով նախատեսվում է պետության և մասնավոր հատվածի միջև համագործակցության արդյունքում մի շարք պետական աջակցության ծրագրերի համատեղ իրականացում, գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների, հատկապես՝ հողային ռեսուրսների նպատակային օգտագործման վիճակի բարելավում, տնտեսավարող սուբյեկտների համար գործունեության նպաստավոր պայմանների ստեղծում և մրցունակության բարձրացում, գյուղատնտեսության տնտեսավարման ձևերի զարգացում, հատկապես կոոպերացիայի խթանում, մատչելի մեխանիզմների կիրառմամբ ագրոպարենային ոլորտի տեխնիկական հագեցվածության վիճակի բարելավում, խորհրդատվական համակարգի կատարելագործում, գյուղատնտեսական մթերքների իրացման պայմանների բարելավում, գյուղատնտեսական մթերքների արտադրողների և վերամշակողների փոխհարաբերությունների կատարելագործում, ագրարային արտադրական և սպասարկման գործընթացներում արդիական մեթոդների և

տեխնոլոգիաների ներդրման աջակցություն, գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ամբողջական ներդրման համար նախադրյալների ստեղծում:

Գյուղատնտեսության զարգացման տեսանկյունից ՀՀ-ում միջնաժամկետ ժամանակահատվածում պետական բյուջեով նախատեսվող ծախսերը առաջնահերթ նպատակաուղղված կլինեն գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարողներին և գյուղատնտեսական մթերքներ վերամշակող սուբյեկտներին վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման և փոխհատուցման մեխանիզմների կիրառմանը, մատչելի մեխանիզմներով՝ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) գյուղատնտեսական և ագրոպարենային ոլորտի տեխնիկական միջոցների մատակարարմանը, ժամանակակից տեխնոլոգիայով մշակվող ինտենսիվ այգեգործության խթանմանը, ոռոգման արդիական տեխնոլոգիաների, կարկտապաշտպան ցանցերի, փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների, «խելացի» անասնաշենքերի ներդրմանը: Կթիրախավորվեն նաև խաղողագործության և գինեգործության զարգացումը, անասնաբուծության զարգացումը անասնապահության ոլորտում առաջադիմական տեխնոլոգիաների ներդրումը, գյուղատնտեսությունում ապահովագրական փորձնական ծրագրի իրականացումը, տեղեկատվական և խորհրդատվական ոլորտի ամրապնդումն ու զարգացումը: Կորոնավիրուսի պայմաններում գյուղատնտեսությամբ զբաղվելը խթանելու նպատակով արդեն իսկ էապես բարելավվել են ոլորտում պետական աջակցության ծրագրերը: Ըստ անհրաժեշտության՝ ձեռնարկվելու են նաև համապատասխան փոփոխություններ՝ ստեղծված իրավիճակում աջակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Հանրային ներդրումներ. Կորոնավիրուսի համավարակի հետևանքները մեղմելու նպատակով հատկապես կարևորվելու է հանրային կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացումն ու կատարողականի աճը, որի արդյունքում հանրային ներդրումային միջոցներն օգտագործվելու են առավել արդյունավետ և նպատակային: Ապահովվելու է հանրային ներդրումային ծրագրերի համապատասխանությունը ՀՀ կառավարության գերակայություններին և ռազմավարական առաջնահերթություններին, ինչն իր հերթին նպաստելու է ծրագրերի իրականացման արդյունավետության աճին: Հանրային սահմանափակ միջոցների արդյունավետ օգտագործման հիմնախնդրին համակարգային հանգուցալուծում տալու նպատակով վարվող քաղաքականության հիմքում դրվելու են ներդրումային առաջնահերթությունների որոշման համակարգը և ինստիտուցիոնալ կարողությունների շարունակական զարգացումը:

Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) տեսակետից կարևորվելու է մասնավոր հատվածի մարդկային, ֆինանսական ռեսուրսների, մասնագիտական փորձի և հնարավորությունների ներգրավումը հանրային բարիքի ստեղծման գործընթացում: Կառավարության նպատակն է լինելու ապահովել ռիսկերի այնպիսի բաշխում մասնավոր և հանրային գործընկերիների միջև, որը հնարավորություն կընձեռի ստեղծել ծրագրերին հատուկ ռիսկերի կառավարման առավել արդյունավետ համակարգ՝ հիմնվելով ռիսկերի լավագույն կառավարչի ընտրության սկզբունքի վրա:

Արտաքին տնտեսական քաղաքականություն. Եվրամիության հետ համագործակցությունը կշարունակի մնալ Հայաստանի առաջնայնությունների շարքում: Կշարունակվի ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրին և առևտրին առնչվող հարցերի և ոլորտային համագործակցության ուղղություններով ամրագրված դրույթների իրականացումը:

Կձեռնարկվեն անհրաժեշտ բոլոր միջոցառումները ԵՄ «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ (GSP+)» արտոնյալ առևտրային ռեժիմի ներքո ներդրված «Գրանցված արտահանողների համակարգ»-ում ընկերությունների շարունակական գրանցումներն իրականացնելու ուղղությամբ: Կապահովվի հայկական կողմի ակտիվ մասնակցությունը ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում առևտրատնտեսական համագործակցության խորացմանը: Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ համագործակցությունը և ՀՀ ստանձնած պարտավորությունների իրականացումը ևս կշարունակեն թիրախային լինել Հայաստանի համար:

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Տարածքային զարգացման նպատակով նախատեսվում է՝

- մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունների մեղմում,
- հանրապետական գործադիր մարմինների կողմից ՀՀ մարզերում իրականացվող ծրագրերի ազդեցության և արդյունավետության գնահատման համակարգի ներդնում,
- մարզերում հանրային ծառայությունների տեղայնացման աստիճանի և ֆինանսների, ապրանքների ու ծառայությունների հասանելիության աճ, համայնքային ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրամատակարարում) գնահատում, դրանց կարգաբերում ու զարգացում,
- ՀՀ պետական բյուջեով տարածքային զարգացման բաղադրիչով նախատեսված միջոցների շրջանակներում ծրագրերի ընտրության մեխանիզմների ներդնում,
- այնպիսի համակարգի մշակում և ներդրում, որը կապահովի տարածքային համաչափ զարգացումը, այսինքն՝ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին ցանկացած ներդրում իրականացնելիս հստակ հնարավոր կլինի տեսնել դրա արդյունավետությունը տվյալ համայնքի, համայնքների խմբերի և մարզի համար,
- տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող մարզերի զարգացման անհամաչափությունների մեղմանն ուղղված ծրագրերի շրջանակի ընդլայնում,
- մարզպետարաններում և խոշորացված ու խոշոր համայնքներում ներդրված տնտեսական ծրագրերի պատասխանատուների համակարգի զարգացում, մարզերի (տարածաշրջանների, համայնքների) սոցիալ-տնտեսական զարգացման կոնկրետ հնարավորությունների վերհանում և դրանց իրագործմանն ուղղված համապատասխան ծրագրերի մշակում և իրականացում,
- մարզային զարգացման ծրագրերի համապատասխանեցում ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարության հետ:

Տեղական ինքնակառավարման համակարգի, տարածքային, տնտեսական, ֆինասական և քաղաքական դերի բարձրացման նպատակով նախատեսվում է՝

- տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և իշխանության ապակենտրոնացման քաղաքականության գերակա խնդիրների համաչափ լուծում՝ վարչական (համայնքների խոշորացման գործընթացի ավարտից հետո՝ համայքների ղեկավարներին նոր լիազորությունների փոխանցում) և ֆիսկալ ապակենտրոնացում, տեղական ինքնակառավարման մարմինների հզորացում ու տեղական ժողովրդավարության զարգացում՝ օրենսդրության կատարելագործման և ինստիտուցիոնալ բարեփոխումների ու իրավական նորմերի հետևողական կիրարկման միջոցով,
- ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության, համայնքում ներքին և արտաքին վերահսկողության ընթացակարգերի հստակեցման զգալի բարձրացում, համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի

հաշվետվությունը կազմելու, ավագանու քննարկմանն ու հաստատմանը ներկայացնելու և հրապարակելու օրենսդրական պարտադիր պահանջի կատարում,

- տեղական մակարդակում որոշումների կայացմանը և հանրային կառավարմանը քաղաքացիների մասնակցության խթանում, ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության բարձրացման նպատակով համայնքի անդամների և համայնքային քաղաքացիական հասարակության ինստիտուտների իրազեկման, նրանց հետ խորհրդակցությունների և հետադարձ կապի մեխանիզմների ներդրում, ինչպես նաև հանրային վերահսկողության ինստիտուտի ամբողջական կայացում,
- համայնքների միավորման ծրագրերի իրականացում,
- համայնքների ֆինանսական հնարավորությունների բարձրացում՝ ապահովելով նրանց բյուջեների մուտքերի կայունությունը, այդ թվում՝ տեղական տուրքերի և վճարների հայեցակարգի ընդունում, հայեցակարգի կիրարկման համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակում և ընդունում, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի շեմի հետևողական բարձրացմամբ պայմանավորված՝ համայնքներին համապատասխան ֆինանսական օժանդակության տրամադրում,
- ՏԻՄ-երի սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների համապատասխանության ապահովում,
- համայնքների ֆինանսական կառավարման օրինականության, արդյունավետության, թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության բարձրացում,
- ֆինանսական համահարթեցման բազմագործոն համակարգի կիրարկման նախապատրաստում,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման նպատակով ՏԻՄ-երի կարողությունների զարգացում, համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորում և էլեկտրոնային մասնակցության խթանում, համայնքներում ՏՀՏ ներդրման գործում պետական, մասնավոր և միջազգային ռեսուրսների ներգրավում, համայնքներում ՏՀՏ ներդրման օրենսդրական, նորմատիվ և մեթոդական կարգավորում, տեխնիկական ենթակառուցվածքների ապահովում, ՏԻՄ-երում կառավարման տեղեկատվական համակարգերի ներդրում, 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների համար պարտադիր ինտերնետային պաշտոնական կայքերի ներդրում՝ օրենքով, 10000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում, ավագանու դռնբաց նիստերի պաշտոնական ինտերնետային կայքում առցանց հեռարձակման ապահովում,
- տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության արդյունավետության բարձրացում,
- համայնքային ծառայողների կարողությունների կատարելագործում,
- համայնքների միավորման արդյունքում համայնքային ծառայության ոլորտում առաջացած նոր հմտությունների գույքագրում և մասնագիտական ունակությունների զարգացում,
- համայնքային ծառայողների վերապատրաստման նկատմամբ վերահսկողության, զբաղեցված պաշտոնին համապատասխանության ստուգման մեխանիզմի ներդրում:

Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավում ծրագիր: Առավելագույն սեյսմիկ խոցելիություն ունեցող 46 դպրոցների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի թիվ 805-Ն և 2018 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 1438-Ն

որոշումներով: 2020 թվականին արդեն իսկ ավարտվել են թվով 5 դպրոցների շինարարական աշխատանքները: Միաժամանակ շինարարություն է ընթանում թվով 6 դպրոցներում, թվով 2 դպրոցների համար հայտարարված են շինարարության մրցույթներ, 15 դպրոցների համար ընթանում են նախագծային աշխատանքներ, իսկ թվով 7 դպրոցներում՝ տեղական ու միջազգային փորձաքննության աշխատանքներ: 2021 թվականին նախատեսվում է սկսել շուրջ 11 դպրոցների շինարարական աշխատանքներ:

Կոշտ կենցաղային թափոնների կառավարման (ԿԿԹԿ) ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝

- ՀՀ Կոտայք և Գեղարքունիք մարզերում 2020 թվականին մեկնարկած ԿԿԹԿ ծրագրով կառուցապատման աշխատանքները շարունակել 2021-2022 թվականներին,
- միջոցներ ձեռնարկել հանրապետությունում աղբահանության համակարգի բարելավման և աղբի վերամշակման համակարգի ներդրման ուղղությամբ,
- ՀՀ տարածքում փակման ենթակա աղբավայրերի փակում և շահագործվող աղբավայրերի բարեկարգում:

ՀՀ-ում միգրացիոն ոլորտի զարգացման նպատակով նախատեսվում է՝

- Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն քաղաքականության ռազմավարության 2017-2021 թվականների գործողությունների ծրագրով 2021 թվականի համար նախատեսված միջոցառումների իրականացում, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում,
- 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնի տեղահանված անձանց բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի իրականացում,
- միջազգային պաշտպանության կարիք ունեցող օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ-ում ապաստանի տրամադրման ուղղությամբ աշխատանքների իրականացում,
- ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգի կիրարկմանն ուղղված գործողությունների իրականացում,
- ՀՀ վերադարձի մտադրություն ունեցող քաղաքացիներին, ինչպես նաև արտերկիր մեկնել ցանկացողներին մեկնման, վերադարձի և հայրենիքում վերաինտեգրման գործընթացների վերաբերյալ «Տունդարձ» կայքի միջոցով խորհրդատվության տրամադրում, օտարերկրյա պետություններից հարկադիր վերադարձող ՀՀ քաղաքացիներին վերաինտեգրման առաջնային աջակցության տրամադրում,
- օտարերկրացիներին աշխատանքի թույլտվության տրամադրում և օտարերկրացիների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի հաշվառման էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացում,
- միգրանտների, այդ թվում՝ վերադարձած, ինչպես նաև աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների անդամների ներդրումների համար համահավասար ֆինանսավորմամբ փորձնական ծրագրի իրականացում ԵՄ-ի՝ «Տեղական դերակատարների հզորացում հանուն զարգացման» («Local Empowerment of Actors for Development (LEAD)») ծրագրի շրջանակներում,
- ՀՀ-ԵՄ միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի շրջանակներում ստացվող հայցերի ընթացքի ապահովում,

- ԵԱՏՄ շրջանակներում միգրացիոն ոլորտի օրենսդրական կարգավորումների մշակմանը և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միգրացիոն քաղաքականության հարցերով խորհրդատվական կոմիտեի աշխատանքներին մասնակցություն,

- ՌԴ ՆԳՆ միգրացիայի հարցերով գլխավոր վարչության հետ՝ ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների մուտքի արգելքի վերացման նպատակով աշխատանքների իրականացում,

- միգրացիոն ծառայությանը դիմող ինչպես ՀՀ, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներին միգրացիոն տարբեր հիմնախնդիրների շուրջ խորհրդատվության տրամադրում:

Էներգետիկայի և բնական պաշարների կառավարման բնագավառ

Էներգետիկայի բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը հետևողականորեն շարունակվելու է նպատակաուղղվել երկրի էներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը, տարածաշրջանային ինտեգրման գործընթացի ապահովմանը, էներգետիկ ոլորտի կայուն զարգացմանը՝ հենվելով տեղական առաջնային (վերականգնվող) էներգապաշարների լիիրավ և արդյունավետ օգտագործման, ատոմային էներգետիկայի հետագա զարգացման, էներգակիրների մատակարարման տարատեսականացման և էներգաարդյունավետ ու նոր տեխնոլոգիաների ներդրման վրա:

Էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնարար ուղղություններն են լինելու՝ սեփական վերականգնվող էներգապաշարների տնտեսապես հիմնավորված պոտենցիալի իրացումը, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի կառուցումը, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած նոր արտադրող հզորությունների կառուցումը, ատոմային էներգետիկայի պահպանումը և զարգացումը, այդ թվում՝ գործող ատոմային էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման հետ կապված աշխատանքների իրականացումը, էներգաբլոկի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը, նոր ատոմային էներգաբլոկի կառուցման նախապատրաստական աշխատանքների իրականացումը և տարածաշրջանային էներգահամակարգերի հետ ինտեգրումը:

Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի հատկացումների, օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին կշարունակվեն՝ «Աշնակ», «Ագարակ-2» և «Շինուհայր» 220 կՎ, «Չարենցավան-3» և «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանների վերակառուցման, կարգավարման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնման աշխատանքները: Կիրականացվեն Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծերի և համապատասխան ենթակայանների կառուցման, «Արարատ-2» և «Զովունի» 220 կՎ ենթակայանների վերակառուցման գլխավոր կապալառուների ընտրության և գլխավոր կապալառուների հետ համապատասխան պայմանագրերի կնքման աշխատանքները:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին տրամադրվող բյուջետային վարկի միջոցներով կշարունակվի Հայկական ԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման աշխատանքների իրականացումը, սեփական միջոցների և դոնոր երկրների կողմից հատկացվող միջոցների հաշվին կիրականացվեն Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի անվտանգության մակարդակի բարձրացման աշխատանքները:

Կշարունակվեն ՀՀ Գեղարքունիքի մարզի Մասրիկ տեղանքում 55 ՄՎտ պիկային հզորությամբ Մասրիկ-1 արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային կայանի կառուցման աշխատանքները:

Միաժամանակ կիրականացվի գումարային մոտ 120 ՄՎտ հզորությամբ ևս 5 արևային ֆոտովոլտային կայանների կառուցման աշխատանքները: Ներկայում ծրագրերի համար պատրաստ են նախնական տեխնիկա-տնտեսական հիմնավորումները: 5 արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ծրագրերն իրականացվելու են մրցութային կարգով:

ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1922-Լ որոշմամբ հավանություն է տրվել «Մասդար Արմենիա ծրագիր» ներդրումային ծրագրին, որի շրջանակներում ՀՀ Արագածոտնի և ՀՀ Կոտայքի մարզերի վարչական սահմաններում նախատեսվում է երկու փուլով՝ «Այգ-1» (200 ՄՎտ) և «Այգ-2» (200 ՄՎտ), իրականացնել 400 ՄՎտ արևային ֆոտովոլտային կայանների կառուցում:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն կառուցման փուլում են գտնվում էլեկտրական էներգիա արտադրող մինչև 5 ՄՎտ դրվածքային հզորությամբ 48 արևային էլեկտրակայաններ՝ գումարային շուրջ 198. 9 ՄՎտ դրվածքային հզորությամբ:

Շարունակվում են ՀՀ էլեկտրաէներգետիկ շուկայի փուլային ազատականացման գործընթացին ուղղված աշխատանքները, որի հիմնական նպատակն է էլեկտրաէներգետիկական շուկայի ամբողջությամբ կարգավորվող մոդելից նոր՝ ազատական մոդելին անցումը, առևտրի ժամանակակից կանոնների ներդրումը, սակագնային համակարգի հետագա կատարելագործումը և միջպետական առևտրի խթանումը:

Մշակվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը (մինչև 2040թ.) և դրա կատարումն ապահովող միջոցառումների ցանկը: Կիրականացվեն միջոցառումներով նախատեսված աշխատանքները:

Կշարունակվեն էներգետիկայի բնագավառի տեխնիկական կանոնակարգերի վերամշակման և ազգային ստանդարտների մշակման աշխատանքները՝ միջազգային համապատասխան ստանդարտներին ու նորմերին դրանց աստիճանական մոտարկման մեթոդների կիրառմամբ:

Կշարունակվեն Հայաստանի չգազիֆիկացված համայնքներում մաքուր էներգիայի զարգացմանն աջակցելու և արևի, կենսազանգվածի, քամու և այլ վերականգնվող աղբյուրներից էներգիայի և կենսավառելիքի ստացման ծրագրերն իրականացնելու նպատակով 2017 թվականի օգոստոսից մեկնարկած «Էներգաարդյունավետ» վարկային ծրագրի աշխատանքները:

Կշարունակվեն հանրապետության **գազամատակարարման համակարգի** անվտանգության ապահովմանն և շարունակական բարձրացմանն ուղղված աշխատանքները:

Ընդերքի բնական պաշարների բնագավառում 2021 թվականին իրականացվող պետական քաղաքականության հիմնախնդիրն է բնական պաշարների արդյունավետ և թափանցիկ կառավարման, հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացմանը նպաստելու, ինչպես նաև ոլորտի քաղաքականության օրենսդրական նոր հենքի ստեղծման նպատակով ինստիտուցիոնալ համակարգի ուսումնասիրության իրականացումը և նախկինում իրականացված ախտորոշիչ ուսումնասիրությունների հիման վրա հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակումը: Ոլորտի համապարփակ քաղաքականության մշակումը հնարավորություն կտա ապահովելու ոլորտի կայուն զարգացում, որը

կիավասարակշռի տնտեսական, սոցիալական և բնապահպանական կայունությունը, ինչպես նաև կապահովի ոլորտի թափանցիկությունը, հաշվետվողականությունը և հրապարակայնությունը:

2021 թվականին իրականացվող պետական քաղաքականությունը լինելու է՝

- միջազգային չափորոշիչներին համահունչ հետախուզված և գնահատված ընդերքի պաշարների սահմանված կարգով փորձաքննության ապահովումը,

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին համապատասխան օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարումը, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասերի պետական հաշվառման իրականացումը, հանքավայրերի և օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրի վարումը,

- երկրաբանական տեղեկության թափանցիկության և պոտենցիալ ներդրողների համար վերջինիս հասանելիության ապահովումը,

- «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում նոր հաշվառվող տվյալների թվայնացումը և հրապարակումը,

- ՀՀ կողմից ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի (հաշվետու տարվա) կազմումը և հրապարակումը,

- Հանքարդյունաբերության ոլորտի բարեփոխումներից, այդ թվում հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարությունից բխող՝ ոլորտը կարգավորող օրենքների, ինչպես նաև դրանցից բխող իրավական այլ ակտերի մշակումը և ինստիտուցիոնալ կարգավորումների իրականացումը,

- ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված տեղամասերի կոորդինատների ճշգրտման նպատակով ՀՀ տարածքում գործող WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգին համահունչ ընդերքի տեղամասերի կոորդինատների փոփոխության իրականացումը,

- արտահանվող խտանյութի որակի նկատմամբ հսկողություն սահմանելու, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող ռոյալթիի հաշվարկման ճշտությունը, օգտակար հանածոյի արդյունահանման, լրահետախուզման և շահագործական հետախուզման աշխատանքների ընթացքում օգտակար հանածոյի որակի, քանակի և այլ հատկությունների վերաբերյալ տեղեկատվության արժանահավատությունը ապահովելու նպատակով պետական վերահսկողական ֆունկցիայի ներդրման համար Լաբորատորիայի վերազինման ծրագրի իրականացման նպատակով իրագործելիության ծրագրի իրականացումը:

Միջուկային անվտանգություն

Միջուկային օրենսդրության, միջուկային ու ռադիացիոն անվտանգության կարգավորման համակարգի զարգացում և կատարելագործում. Այս ուղղությամբ Կառավարության գործունեության առաջնահերթ ուղղություններն են լինելու.

- ՀՀ միջուկային օրենսդրության համապատասխանեցումը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) անվտանգության ստանդարտներին, Եվրոպական միության անվտանգության դիրեկտիվների, այդ թվում՝ Արևմտաեվրոպական երկրների կարգավորող մարմինների ասոցիացիայի (WENRA) անվտանգության պահանջներին,

- ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի՝ ՀՀ կողմից վավերացրած միջազգային 10 պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումը,

- ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների կարգավորող վերահսկողության և տեսչական ստուգումների անցկացումը, շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգի ժամանակակից համակարգի ներդրումը՝ շրջակա միջավայրի հնարավոր ռադիոակտիվ աղտոտմամբ պայմանավորված բնակչության ճառագայթահարումը վերահսկելու համար,

- մասնագիտական և տեսչական անձնակազմի որակավորման բարձրացումը (փորձի փոխանակում, վերապատրաստում, դասընթացներ),

- միջուկային և ճառագայթային անվտանգության վերաբերյալ տեղեկատվական համակարգի (ներքին և արտաքին) կատարելագործումը,

- կոմիտեի գործունեության որակի ապահովման ծրագրի կատարելագործումը,

- վթարային հակազդման կենտրոնի համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին,

- միջազգային համագործակցության զարգացումը:

Տեսչական գործունեություն. Կարգավորող մարմնի տեսչական գործունեության կատարելագործման համար նախատեսվում է.

- համապատասխանեցնել տեսչական գործունեության վերաբերյալ գործող կարգավորող և ղեկավարող փաստաթղթերը ժամանակակից պահանջներին,

- կատարելագործել միջուկային տեղակայանքների և ռադիոակտիվ թափոնների տեղակայանքների, ատոմային էներգիայի օգտագործման այլ օբյեկտների տեսչական ստուգումների անցկացման աշխատակարգերը (համապատասխանեցնել ժամանակակից մոտեցումներին),

- բարձրացնել տեսուչների աշխատանքի որակը,

- կատարելագործել ռիսկի գնահատման հիման վրա իրականացվող տեսչական գործունեությունը:

Վթարային հակազդման համակարգի զարգացում. Վթարային հակազդման համակարգը ՀՀ միջազգային պայմանագրերի և ԱԷՄԳ պահանջներին համապատասխանեցնելու համար նախատեսվում է.

- զարգացնել և կատարելագործել գործող ճառագայթային մոնիթորինգի և տեղեկատվության համակարգը,

- համապատասխանեցնել վթարային հակազդման կենտրոնը, ներառյալ կենտրոնի գործունեության հրահանգները, ժամանակակից պահանջներին՝ հաշվի առնելով Ֆուկուշիմայի ԱԷԿ-ի վթարի ուսումնասիրության արդյունքները,

- ԱԷՄԳ պահանջներին համապատասխան անցկացնել վթարային վարժանքներ,

- վերանայել վթարային հակազդման ազգային համակարգի մեջ մտնող նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցության մասին համաձայնագրերը,

- կատարելագործել ներքին և արտաքին տեղեկատվական համակարգերը:

Միջուկային զենքի չտարածման ռեժիմի ամրապնդում. Միջուկային նյութերի չտարածման երաշխիքների, հաշվառման և հսկման պետական համակարգի զարգացման շրջանակներում նախատեսվում է.

- վերամշակել նորմերը և կանոնները՝ համաձայն ԱԷՄԳ առաջարկությունների և ստանդարտների,

- կատարելագործել միջուկային և ռադիոակտիվ նյութերի հաշվառման և վերահսկման պետական համակարգը,

- մշակել և ներդնել միջուկային և ռադիոակտիվ նյութերի պետական հաշվառման արդիական համակարգեր, ներառյալ ծրագրային միջոցներ:

Միջուկային և ռադիոակտիվ նյութերի ու տեղակայանքների ֆիզիկական պաշտպանության կարգավորման շրջանակներում նախատեսվում է.

- լրամշակել նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը,

- միջուկային տեղակայանքների ֆիզիկական պաշտպանության վիճակը գնահատելու համար ՀՀ այլ պատասխանատու գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ անցկացնել միջուկային տեղակայանքների և միջուկային նյութերի տեսչական ստուգումներ, անհրաժեշտության դեպքում, հաշվի առնելով նոր մարտահրավերները, վերանայել նախագծային սպառնալիքը,

- ստեղծել պաշտպանված կապուղիներ:

Միջազգային համագործակցությունը. Տեխնիկական աջակցության ծրագրերի շրջանակներում կառավարությունը կշարունակի համագործակցությունն ԱԷՄԳ-ի, Եվրոպական հանձնաժողովի, ԱՄՆ-ի, Չեխիայի, ՌԴ և այլ երկրների միջուկային կարգավորող մարմինների և տեխնիկական աջակցության կազմակերպությունների հետ:

Ջրային տնտեսություն

Ջրային տնտեսության ոլորտում էապես կարևորվում է անցած տարիների ընթացքում կատարված բարեփոխումների շարունակման գործընթացի ապահովումը, նոր գաղափարների իրացումն ու ոլորտի զարգացման քաղաքականությունից բխող հիմնախնդիրների լուծումը՝ մասնավորապես, ջրամատակարարման որակի բարձրացումը, յուրաքանչյուր սոցիալական խմբի և շահառուի համար ծառայությունների հասանելության ապահովումը, ոռոգվող հողատարածքների ընդլայնումը և այլն:

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեում նախատեսվում է ապահովել խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրերի իրականացումը՝ հիմնականում նպատակ դնելով բարձրացնել համակարգերի շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը: Առաջնահերթ խնդիր է համակարգերի կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացումը՝ ներառելով մասնավոր կառավարման բաղադրիչը, ինչպես նաև կրճատել ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը:

Միաժամանակ, անհրաժեշտ է շարունակել կարևորագույն հիդրոտեխնիկական կառուցվածքների, այդ թվում՝ ջրամբարների պատվարների ամրապնդման ու նորոգման աշխատանքները՝ երաշխավորելով դրանց անվտանգ ու անխափան շահագործումը:

2021 թվականին խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման աշխատանքների բարելավման գերակա ուղղությունները կլինեն համակարգերում ջրամատակարարման շարունակականության և ջրի որակի բարելավման ապահովումը, համակարգերում կառավարման բարեփոխումների խորացումն ու ամրապնդումը, կատարելագործումը, ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը և իրականացումը, ջրային համակարգերի վերականգնմանը և զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումը, համակարգերի օգտագործման տնտեսական արդյունավետության և հուսալիության բարձրացումը, համակարգում առկա և նոր գործարկվող հզորությունների պատշաճ շահագործումը և պահպանումը, մատուցված ծառայությունների

դիմաց վարձավճարների հավաքագրման մակարդակի բարձրացման և ջրի կորուստների նվազեցման նպատակով հաշվառման համակարգի կատարելագործման համալիր ծրագրերի ներդրումը, ինչպես նաև ընկերությունների ինքնաճախսաճածկման ապահովման շարունակումը:

Աշխատանքները կիրականացվեն կառուցվածքային բարեփոխումների, ջրամատակարարման տևողության ավելացման, ջրի որակի բարելավման, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացման, վարձակալության պայմանագրերի վերահսկման, մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգի ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, բյուջետային, վարկային և դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման և այլ ուղղություններով:

Հասանելի և որակյալ ծառայությունների մատուցման ապահովման նպատակով 2021 թվականի ընթացքում անհրաժեշտ է շարունակել համապատասխան ներդրումների կատարումը ջրային ոլորտում: Ներդրումային քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի համակարգերի պահպանմանը և վերականգնմանը, առկա ենթակառուցվածքների արդիականացման և նորերի կառուցմամբ ծառայությունների մատուցման էներգատար կառուցվածքների փոփոխմանը, համակարգերում հաշվառելիության համակարգի բարելավմանը և արդիականացմանը:

Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսության ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական աշխատանքները՝

- ջրամատակարար կազմակերպությունների սպասարկման տարածքներից դուրս գտնվող բնակավայրերում ջրամատակարարման ներդրումային աշխատանքներ,
- կոյուղու մաքրման կայանների կառուցման նախապատրաստման և իրականացման աշխատանքներ,
- ոռոգման ջրանցքների, ջրատարների և պոմպակայանների վերականգնման և նորոգման, ինչպես նաև ինքնահոս համակարգերի կառուցման աշխատանքներ,
- ջրամբարաշինության ծրագրերի նախապատրաստման և ջրամբարաշինական ծրագրերի իրականացման աշխատանքներ,
- Եվրասիական բանկի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման բանկի, Եվրոպական ներդրումային բանկի կողմից ֆինանսավորվող, ինչպես նաև Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացման ապահովման աշխատանքներ,
- սակավաջուր տարածքներում ջրամատակարարման կազմակերպման աշխատանքներ,
- ջրի և էլեկտրաէներգիայի խնայողության խրախուսման, ջրամատակարարման տևողության ավելացման և ջրի որակի բարելավման, ինչպես նաև հաշվառման համակարգի շարունակական կատարելագործման աշխատանքներ,
- ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում ապօրինությունների կանխարգելման ուղղությամբ վերահսկողական աշխատանքներ:

Տրանսպորտ

Լիցենզավորում և լիցենզավորման և հսկողության էլեկտրոնային համակարգի արդիականացում և սպասարկում. ՀՀ կառավարության կողմից տրամադրվող՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման, տրանսպորտային միջոցների տեխնիկական

զննության գործունեության կազմակերպման, երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման լիցենզիաների տրամադրման գործընթացի կազմակերպումը իրականացվում է թղթային եղանակով: Հիմք ընդունելով լիցենզավորման գործընթացների թվայնացմանն ուղղված ՀՀ կառավարության մարտավարությունը՝ ֆինանսական միջոցների առկայության դեպքում, ըստ ՀՀ կառավարության կողմից սահմանված առաջնահերթությունների, նախատեսվում է ստեղծել էլեկտրոնային շտեմարաններ, որոնք կարող են ներառվել փոխգործելիության հարթակներում և հիմք հանդիսանալ գործընթացների թվայնացման համար:

Միաժամանակ նախատեսվում է արդիականացնել գոյություն ունեցող լիցենզավորման և հսկողության էլեկտրոնային համակարգը:

Միջպետական բեռնափոխադրումների թույլտվությունների տրամադրում. 2021 թվականի ընթացքում շարունակվելու է իրականացվել Հայաստանի Հանրապետության և թվով 20 երկրների միջև կնքված միջպետական պայմանագրերով նախատեսված՝ ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների թույլտվությունների, ինչպես նաև ՏՆԵԿ, Տրասսեկա և Սևծովյան տնտեսական համագործակցության շրջանակներում տրամադրվող՝ փոխադրումների թույլտվությունների տրամադրման գործընթացները:

Միաժամանակ՝ նախատեսվում է նշված թույլտվությունների էլեկտրոնային շտեմարանները ներառել պետական մարմինների փոխգործելիության հարթակում, իսկ ՏՆԵԿ թույլտվությունների տրամադրման համար համագործակցել ՏՆԵԿ կենտրոնականի նախաձեռնած՝ թույլտվությունների տրամադրումը թվայնացնելու նախաձեռնությանը:

Տեխնիկական զննություն. Տեխնիկական զննության գործընթացը կանոնակարգելու նպատակով շարունակվելու են օրենսդրական բարեփոխումները: Նախատեսվում է ստեղծել վերահսկման էլեկտրոնային համակարգ, որը կփոխարինի ներկայումն շրջանառվող կտրոններին, կստեղծվի էլեկտրոնային շտեմարան, որին միացված կլինեն բոլոր կայանները: Շտերամանի տվյալները հասնելի կլինեն տեսչական մարմնին և ճանապարհային ոստիկանությանը:

Գազաբալոնային համակարգեր. 2021 թվականի ընթացքում կշարունակվեն գազաբալոնային համակարգերով վերասարքավորված տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունը բարձրացնելու ուղղությամբ իրականացվող բարեփոխումները: Կլիցենզավորվեն գազաբալոնային համակարգեր տեղադրող և վկայագրում իրականացնող բոլոր տնտեսվարողները: Կներդրվի էլեկտրոնային համակարգ՝ վերահսկելու ժամկետանց կամ չվկայագրված բալոնները հայտնաբերելու և լիցքավորումը արգելելու համար:

Քաղաքացիական ավիացիա

Քաղաքացիական ավիացիայի ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով բնագավառում իրականացվում է թռիչքային և ավիացիոն անվտանգության մակարդակների համապատասխանեցում եվրոպական և միջազգային ստանդարտներին: Շարունակվում են արդիականացվել Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանը և նրա ենթակառուցվածքները՝ ուղևորների օդանավակայանային սպասարկման ներկայիս մակարդակը պահպանելու և բարձրացնելու նպատակով: Հավասար մրցակցային պայմաններ են ապահովվում Հայաստանի Հանրապետությունից և դեպի Հայաստանի Հանրապետություն օդային փոխադրումներ իրականացնող ավիափոխադրողների համար:

Այս բնագավառում ՀՀ կառավարության 2021 թվականի գործունեության հիմնական ուղղություններն են՝

- օդային տրանսպորտի բնագավառում վարվող քաղաքականության շրջանակներում, ներքին և միջազգային օդային հաղորդակցությունների իրավունքների և այդ իրավունքներին վերաբերող, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի բնագավառում թռիչքային և ավիացիոն անվտանգության, օդային երթևեկության սպասարկման նպատակով միջազգային օդային հաղորդակցություններին վերաբերող միջազգային պայմանագրերի նախապատրաստմանը, քննարկմանը, բանակցությունների վարմանը մասնակցությունը,

- օդանավակայանային գործունեության և օդային երթևեկության կազմակերպման, ինչպես նաև ավիացիայի բնագավառում շահագործվող վերգետնյա միջոցների և մատուցվող ծառայությունների ապահովության ու անվտանգության կանոնակարգումը և վերահսկողությունը,

- Հայաստանի Հանրապետության օրենսդությամբ սահմանված կարգով ավիացիայի համակարգում գործունեություն իրականացնելու համար համապատասխան սերտիֆիկատների, լիցենզիաների, վկայականների և թույլտվությունների տրամադրումը, օդանավերի թռիչքային պիտանության, աերոնավիգացիոն միջոցների և այլ ավիացիոն սարքավորումների, թռիչքային անձնակազմերի, օդային երթևեկության կարգավարների և օդանավերի տեխնիկական սպասարկման անձնակազմերի վկայականների տրամադրումը և վավերացումը,

- օտարերկրյա պետության ավիացիոն իշխանությունների կողմից տրված օդանավի անձնակազմի անդամների վկայականների ճանաչումը,

- քաղաքացիական ավիացիայի համակարգում գործունեություն իրականացնող բոլոր շահագործողների, կազմակերպությունների ու ընկերությունների շարունակական վերահսկողությունը և դրանց կողմից կատարվող աշխատանքների ու մատուցվող ծառայությունների որակի վերահսկողության տեսչական ստուգումների անցկացումը,

- Հայաստանի Հանրապետությունում օդանավերի երկրորդային հետևանքներ չառաջացրած աղետների դեպքում որոնողափրկարարական աշխատանքների համակարգումը,

- օդանավ շահագործողի վկայականի տրամադրումը,

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օդանավերի պետական ռեգիստրների վարումը,

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի վարումը,

- ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի մշակումը և լրամշակումը,

- օդային տարածքի ճկուն օգտագործման նպատակով ռազմաքաղաքացիական համագործակցությունը:

2021 թվականին նախատեսվում է իրականացնել՝

- միջին մասնագիտական կրթության ծրագիրը, որով «Ավիաուսումնական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը միջին մասնագիտական կրթության համար հատկացվելու են անվճար տեղեր կարգավարներ, վերգետնյա և ինժեներատեխնիկական սպասարկման մասնագետներ պատրաստելու համար,

-Ավիացիայի բնագավառում վերահսկողության, կանոնակարգման և զարգացման ապահովում ծրագիրը, որով նախատեսվում է քաղաքացիական ավիացիայի կոմիտե աշխատակիցների վերապատրաստում:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն

ՀՀ Կառավարությունը նպատակադրվել է Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր, որին հասնելու ուղիներից է բարձր տեխնոլոգիաների, կապի, թվայնացման և ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը՝ զինված ուժերի մարտունակության ու պաշտպանունակության բարձրացումը, տնտեսական աճը, գիտական և տեխնոլոգիական առաջընթացը:

2021 թվականին ոլորտի աշխատանքն ուղղված է լինելու հետևյալ երեք հիմնական նպատակների (ուղենիշների) կատարմանը՝

- Պաշտպանական տեխնոլոգիաների զարգացում՝ ռազմարդյունաբերություն, գիտահետազոտական ծրագրեր, տեխնոլոգիաների ներդրում,
- Տաղանդի արտահոսքի կանխում և ներհոսքի հարուցում՝ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացում, ստարտափ և ինժեներական էկոհամակարգի զարգացում, Հայաստանը տարածաշրջանային կենտրոնի վերածում,
- ՀՀ քաղաքացիների կենսամակարդակի աճի նպաստում՝ արտաքին շուկաներում պրոյեկտների և արտադրանքի ներկայացման, տնտեսության և կառավարման համակարգի թվայնացման, արտահանման ծավալների ավելացման և տնտեսական աճի ապահովման միջոցով:

2021 թվականին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերն ու միջոցառումները.

Ռազմարդյունաբերության ոլորտ

Ռազմարդյունաբերության զարգացման ուղղությամբ պլանավորվում է 2021 թվականին ավելի քան 18.0%-ով ավելացնել նոր տեխնոլոգիական ուղղություններով գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորումը, ինչպես նաև ապահովել արտադրական կարողությունների զարգացումը:

«Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում» ծրագիրն իր մեջ ներառում է «Գիտական և գիտատեխնիկական նպատակային ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ միջոցառումը: Միջոցառման ֆինանսավորման ծավալները 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության համաձայն նախատեսվում է շեշտակի ավելացնել 2020 թվականից սկսած: Արդյունքում նախատեսվում է՝ նոր նմուշների մշակում, նոր և արդիականացված նմուշների փորձնական խմբաքանակների արտադրություն, սպառազինության և ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական ունեցվածքի արդիականացում:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտ

2021 թվականին նախատեսվում է իրականացնել բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիրը, որի նպատակն է՝

- Իրականացնել կադրերի թիրախավորված պատրաստում և վերապատրաստում՝ հաշվի առնելով շուկայի կտրուկ զարգացումն ու կադրերի նկատմամբ շուկայի պահանջարկի կտրուկ աճը,
- Զարգացնել բարձր տեխնոլոգիական ոլորտի համար անհրաժեշտ էկոհամակարգը՝ ներառյալ թիրախավորված գիտահետազոտական աշխատանքների, ստեղծագործական խմբերի, նորաստեղծ ընկերությունների ֆինանսավորումը և այլն,

- Հայկական Սփյուռքի ներգրավվածությունն ապահովելու նպատակով նախատեսվում է տարբեր ֆորմատներում շարունակական համագործակցության հարթակ ստեղծել հայկական ընկերությունների, կազմակերպությունների և անհատների համար,

- Զանգվածաբար կիրառել և զարգացնել թվային տեխնոլոգիաները: Զուգահեռաբար նախատեսվում է բարձրացնել կիբեռանվտանգության և ինտերնետ հասանելիության մակարդակը Հայաստանում:

Նշված նպատակների իրականացման համար վերոհիշյալ ծրագրի շրջանակներում իրականացվելու են հետևյալ միջոցառումները.

- Մասնագետների պատրաստման ԲՈՒՀ - մասնավոր համագործակցություն,
- «Գաղափարից մինչև բիզնես դրամաշնորհներ»,
- «Հայկական վիրտուալ կամուրջ»,
- Շուկաների զարգացում և միջազգային համագործակցություն:

Նշված միջոցառումների իրականացումը կապահովի հետևյալ արդյունքային ցուցանիշները.

- Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կտրամադրվեն դրամաշնորհներ հետևյալ փաթեթներով՝ Տաղանդի ձևավորման փաթեթ, դրամաշնորհային հրավերների Մարզային համաչափ զարգացման փաթեթ, Բաց նորարարության (օգտակար) փաթեթ և Հեռանկարային փաթեթ,
- 30 ուսանողների համար կիրականացվեն ձեռնարկատիրական ինկուբացիոն դասընթացներ, 60 ուսանող կմասնակցեն բարձր տեխնոլոգիական ոլորտում գործող ձեռներեցների համար արտասահմանում անցկացվելիք աքսելերացիոն վերապատրաստման միջոցառումներին, կիրականացվեն աշխատանքներ սիլիկոնյան հովտում հայկական հաբ-ի ստեղծման ուղղությամբ,
- Ոլորտի բարձրակարգ մասնագետների և ընտրված լավագույն ծրագրերի միջոցով կվերապատրաստվեն շուրջ 6000 շահառուներ,
- Սփյուռքի կարողությունների ներգրավման համար կստեղծվեն մեխանիզմներ, կկառուցվի ինժեներական քաղաքը, որը կբերի 1500 նոր աշխատատեղերի ստեղծման, կստեղծվի ազգային վենչուրային ֆոնդ, մարզերում կզարգանան տեխնոպարկեր և կիրականացվեն նոր ծրագրեր:

Հեռահաղորդակցության ապահովում

Ծրագրի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը, մասնավորապես՝ ՀՀ հաճախականությունների բաշխման աղյուսակի կազմումը, ռադիոեթերի մոնիթորինգի և ազդանշանների տեխնիկական պարամետրերի չափումների անցկացումը, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների տեղորոշումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում թվային հեռուստահեռարձակման ապահովման շրջանակներում հանրապետական սփռման մուլտիպլեքսի և արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալումը: Ծրագիրն իր մեջ ընդգրկում է երկու գործող միջոցառում՝

- **Հեռահաղորդակցության և կապի կանոնակարգում.** Միջոցառումը կապահովի հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը, մասնավորապես ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի կազմումը, ռադիոեթերի մոնիթորինգի և ազդանշանների տեխնիկական պարամետրերի չափումների

անցկացումը, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների տեղորոշումը: Միջոցառումն իրականացվում է «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

- **Թվային հեռուստահեռարձակման ապահովման ծառայություններ.** Միջոցառման նպատակը Հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալումն է՝ համաձայն կնքված պայմանագրի:

Քաղաքաշինություն

2021 թվականի բյուջետային հայտի ծախսային ծրագրերում ներառվել են.

- նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի բարեփոխման և արդիականացման նպատակով նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման (տեղայնացման) աշխատանքները,
- ՀՀ համայնքների միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքները,
- Ապարատի պահպանման և կարողությունների զարգացման աշխատանքները:

Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում պետական քաղաքականության ծրագրում ներառված են հետևյալ միջոցառումները.

«Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- ՀՀ Լոռու մարզ - 118 բնակավայր - 12 փաստաթուղթ,
- ՀՀ Կոտայքի մարզ (մասնակի) - 12 բնակավայր - 1 փաստաթուղթ,
- ՀՀ Շիրակի մարզ (մասնակի) - 34 բնակավայր - 4 փաստաթուղթ,
- ՀՀ Գեղարքունիքի մարզ (մասնակի) - 11 բնակավայր - 1 փաստաթուղթ:

«Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում և տեղայնացում» միջոցառմամբ նախատեսվում է թվով 20 նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում, որոնցից 8-ը կավարտվեն 2021 թվականին:

Ոլորտում իրագործվող ծախսային ծրագրերն ունեն ռազմավարական նշանակություն, որոնց արդյունքում նշված մարզերի ՀՀ համայնքներն ու բնակավայրերը կապահովվեն տարածական պլանավորման փաստաթղթերով:

Արտակարգ իրավիճակների բնագավառ

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու բնական և մարդածին աղետների ռիսկի նվազեցմանը, հնարավոր հետևանքների կանխարգելմանը և վերացմանը՝ հանդիսանալով պետության անվտանգության ապահովման բաղկացուցիչ տարր նպաստելու է երկրի կայուն զարգացմանը:

2021 թվականին ոլորտի հիմնական խնդիրներն են լինելու.

- **Փրկարար ծառայությունում փրկարարական համակարգի կատարելագործումը և զարգացումը՝** աստիճանաբար համապատասխանեցնելով ժամանակակից ընդունված պահանջներին, զուգահեռաբար պետական փրկարարական կառույցի շուրջ ձևավորելով կամավորական փրկարարական ուժեր, փրկարար ծառայողների մասնագիտական, արագ արձագանքման փրկարար ուժերի պատրաստականության բարձրացումը և տեխնիկական հագեցվածության ապահովումը, քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի քաղաքացիական պաշտպանության ուժերի ու ստորաբաժանումների խնդիրների

առավել արդյունավետ դերաբաշխման և կառավարելիության բարձրացումը, սահմանամերձ բնակավայրերում փրկարարական և արագ արձագանքման այլ ուժերի ստեղծումը և զարգացումը:

- **Սեյսմիկ պաշտպանության ոլորտում սեյսմիկ վտանգի գնահատման հուսալիությունը** բարձրացնելու նպատակով սեյսմիկ պաշտպանության ազգային դիտացանցի արդիականացումը և թվայնացումը: Շենքերի, շինությունների նախագծման, բնակավայրերի տարաբնակեցման և զարգացման ծրագրերում դրանց հնարավոր անվտանգ վայրի ընտրության և սեյսմիկ անվտանգության հաշվի առնելը:

Ճգնաժամային կառավարման ոլորտի հիմնական խնդիրներն են լինելու՝

- Ակադեմիայի հնարավորությունների զարգացումը՝ դարձնելով այն արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մասնագետների պատրաստման ու վերապատրաստման կենտրոն:

- Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում մարդուն հրատապ օգնության համապետական համակարգի «911» դիսպետչերական ծառայության զարգացումը՝ ծառայության մատուցումը հնարավորինս մոտեցնելով միջազգային չափանիշներին:

- Իրավիճակների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության հավաքման, մշակման, վերլուծության և առաջարկությունների նախապատրաստման համակարգի կատարելագործումը:

- ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական պահուստի համակարգի զարգացման և բարեփոխումների հայեցակարգի դրույթների իրականացումը, նյութական արժեքների կուտակումը, թարմացումը, փոխարինումը և պահպանումը: Այս ոլորտում նոր քաղաքականության մշակումը՝ ընդգրկելով մասնավոր սեկտորի հնարավորություններն ու կարողությունները:

- Աղետների ռիսկի վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության, համայնքներում աղետների ռիսկի բացահայտման և գնահատման համակարգի փուլային ներդրումը, սողանքային աղետի կառավարման միասնական համակարգի ներդրումը:

Արտաքին քաղաքականություն

Հայկական դիվանագիտությունը գործնականում հաստատել է, որ ինքնիշխանությունը Հայաստանի արտաքին քաղաքականության կարևորագույն սկզբունքն է և երկու մյուս սկզբունքների՝ համահայկականության և փոխգործակցության հետ մեկտեղ ապահովում է միջազգային ասպարեզում հայ ժողովրդի արժեքների և շահերի հետապնդումը:

Այդ սկզբունքների հիման վրա ուրվագծվում է կառավարության արտաքին քաղաքականության արդյունավետ իրականացումը տարբեր միջազգային դերակատարների և գործընկերների հետ՝ ուղղված երկրի արտաքին անվտանգության բաղադրիչի ամրապնդմանը, զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների ապահովմանը, բարեկամ և գործընկեր պետությունների հետ փոխշահավետ համագործակցության զարգացմանը, միջազգային կազմակերպություններում և ինտեգրացիոն գործընթացներում ներգրավվածության խորացմանը:

Հայաստանի դիվանագիտության հիմնական նպատակն է ծառայեցնել միջազգային անվտանգությունը և համագործակցությունը թե՛ երկկողմ և թե՛ բազմակողմ հարթակներում ազգային շահերի և նպատակների՝ մասնավորապես Հայաստանի ինքնիշխանության և անվտանգության, Արցախի անվտանգության երաշխավորման, լայն բարեփոխումների և զարգացման օրակարգերի իրականացմանը:

ՀՀ արտաքին քաղաքականության իրականացման առումով կարելի է առանձնացնել երեք հիմնական ուղղություն՝

Տարածաշրջանային և գլոբալ անվտանգային առաջնահերթություններ. Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մեջ համապարփակ ուրվագծված են տարածաշրջանային և գլոբալ անվտանգության առաջնահերթությունները, դաշնակիցների և միջազգային գործընկերների հետ համագործակցության ուղղությունները: Տարածաշրջանային մարտահրավերների հասցեագրման, խաղաղության և անվտանգության պահպանումն օրվա հրամայական է դարձել, և դա հնարավոր է նախ և առաջ գոյություն ունեցող համագործակցային ձևաչափերի ամրապնդման և դրանց նոր բովանդակության հաղորդելու և այդ ուղղությամբ գործընկերների հետ փոխգործակցությունն ընդլայնելու միջոցով: Այս իրողությունը պայմանավորում է արտերկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների առավել թիրախավորված գործողությունները, որոնց նպատակն է ավելի լսելի, ընկալելի դարձնել Հայաստանի առաջնահերթությունները, մտադրությունները և քայլերը՝ ուղղված երկկողմ և բազմակողմ համագործակցության օրակարգի ընդլայնմանն ու առաջմղմանը:

Թուրքիայից և Ադրբեջանից մեր տարածաշրջանին բխող սպառնալիքը մեզ պարտադրում է առավել պրոակտիվ դերակատարում ունենալ լայն տարածաշրջանային իմաստով՝ սերտ երկխոսություն հաստատելով բոլոր այն գործընկերների հետ, որոնք շահագրգռված են տարածաշրջանային խաղաղության և անվտանգության պահպանման գործում:

Այս տեսանկյունից է դիտարկվում նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում ղարաբաղյան հիմնախնդրի՝ բացառապես խաղաղ կարգավորման գործընթացը, որի հիմքում պետք է ընկած լինեն միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները, մասնավորապես՝ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքը: Արցախի կարգավիճակը և անվտանգության ապահովումը խաղաղ գործընթացում Հայաստանի առաջնահերթ գերակայություններն են:

Խաղաղ գործընթացի արդյունավետության համար էական նշանակություն ունի խաղաղությանը նպաստող միջավայրի առկայությունը՝ ներառյալ վստահության և անվտանգության միջոցների ամրապնդումը, հակամարտության սրման ռիսկերի նվազեցումը՝ այդ թվում՝ արդյունավետ և մշտապես գործող, ստուգողական մեխանիզմներով օժտված միջազգային մոնիթորինգի ներդնման միջոցով, ագրեսիվ հռետորաբանության բացառումը: Հակամարտության գոտում ապրող մարդկանց խնդիրները պետք է դառնան բանակցային օրակարգի առաջնային մաս:

Արցախը՝ որպես հակամարտության հիմնական կողմ, պետք է որոշիչ ձայն և ներգրավվածություն ունենա իրական և տևական խաղաղության հաստատմանն ուղղված հանգուցալուծման գործընթացում:

Հուլիսյան մարտերի գնահատականների հիման վրա առավել կարևորվում է Հայաստանի և Արցախի ընդհանուր անվտանգության համակարգի առավել ամրապնդումը և այդ ուղղությամբ սերտ համագործակցությանը առկա սպառնալիքներին համապատասխան նոր բովանդակություն հաղորդելը:

Տարածաշրջանում հայ ժողովրդի համապարփակ անվտանգության պաշտպանության տեսակետից՝ կարևորվում է Հայոց ցեղասպանության հետագա միջազգային ճանաչումը և դատապարտումը, որը ՀՀ անվտանգության և մարդու իրավունքների օրակարգի առաջնահերթությունն է:

- **Աջակցություն Հայաստանի բարեփոխումների, տնտեսական և ենթակառուցվածքային զարգացմանը.** Հայաստանի բարեփոխումների, տնտեսական և ենթակառուցվածքային զարգացմանն աջակցելը մնում է առաջնահերթ խնդիրներից մեկը և սերտորեն կապված է մեր համապարփակ անվտանգության հետ: Այս առնչությամբ աշխատանքներն հիմնականում ուղղված են երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացմանը, փոխկապակցվածության ենթակառուցվածքային ծրագրերի կյանքի կոչմանը, արտահանման խթանմանը, առևտրատնտեսական համագործակցության համար համապատասխան հարթակների ձևավորմանը: Կառավարության կողմից համապարփակ աջակցություն է ցուցաբերվում նաև միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում աշխատանքներին:

- **Մարդու իրավունքների պաշտպանություն, հայապահպանություն և արտերկրում Հայաստանի կերպարի ներկայացում.** Մարդու իրավունքների պաշտպանությունը ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթություններից է: 2020 թվականին ընտրվելով ՄԱԿ մարդու իրավունքների խորհրդի անդամ՝ Հայաստանը ներդրում է ունեցել Մարդու իրավունքների խորհրդի շրջանակներում ընթացող միջազգային համագործակցությանն ու երկխոսությանը՝ ուղղված մարդու բոլոր իրավունքների ու հիմնարար ազատությունների առաջմղմանը, ժողովրդավարական արժեքների ամրապնդմանը: ՄԱԿ մարդու իրավունքների խորհրդում Հայաստանի անդամակցության առաջնահերթություններից է ցեղասպանությունների կանխարգելման օրակարգի առաջմղումը, պայքարը ինքնության հիմքով խտրականության դրսևորումների, այլատյացության, անհանդուրժողականության և ատելության խոսքի և քարոզի դեմ:

Արտերկրում գործող ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները հայապահպանությամբ, օտարերկրյա պետություններում հայկական պատմամշակութային ժառանգության պահպանմամբ զբաղվողների խճանկարում արդեն իսկ ձեռք են բերել կարևոր միավորող դերակատարում: ՀՀ արտաքին գործերի նախարարության կենտրոնական ապարատի ղեկավարությամբ, Սիրիայի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հետ համագործակցությամբ մեր դիվանագիտական ներկայացուցչությունները որոշ դեպքերում անմիջական օգնություն են հատկացնում սիրիայի ծանր իրավիճակում հայտնված մեր հայրենակիցներին:

Կառավարության գործունեության առանցքային մաս է կազմում օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությունը:

Կառավարության գործունեությունն ուղղված է նաև միջազգային ասպարեզում ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումներն առավել ընկալելի դարձնելուն, բարենպաստ միջազգային հանրային կարծիք ձևավորելուն: Արտաքին քաղաքական ոլորտում զգալի մասնաբաժին ունի նաև երկկողմ և բազմակողմ ձևաչափերով խորհրդարանական դիվանագիտությունը, որի ամրապնդմանը և կապերի խթանմանն աջակցելը ևս կառավարության գործառույթների շարքում է:

Արդարադատություն

2021 թվականին ոլորտի առաջնային ռազմավարական նպատակներն են լինելու՝

Դատական և իրավական բարեփոխումների ոլորտ. ՀՀ կառավարությունը 2019 թվականի հոկտեմբերի 10-ին ընդունել է «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը

հաստատելու մասին» թիվ 1441-Լ որոշումը: 2021 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել ռազմավարությունից բխող 2021-2023 թվականների գործողությունների ծրագրով սահմանված միջոցառումները, այդ թվում՝ սահմանադրական բարեփոխումների անցկացումը, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավումը, դատարանների գործունեության արդյունավետության բարձրացումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների միասնական հարթակի ապահովումը, իրավապահ համակարգի բարեփոխումը, քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխումը, վարչական արդարադատության, սնանկության համակարգի, նոտարական համակարգի արդյունավետության բարձրացումը, վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացումը, հարկադիր կատարման համակարգի բարեփոխումները:

Էլեկտրոնային արդարադատության ոլորտ. Նախատեսվում է կառավարության կողմից ներդրված էլեկտրոնային համակարգերի և հարթակների շարունակական զարգացում, ինչպես նաև դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման կարգի կատարելագործում, ՀՀ վարչական և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի ներկայացման ընթացակարգերի, դատարաններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի, սնանկության էլեկտրոնային հարթակի (e-bankruptcy), էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի քաղաքացիական և վարչական գործերով էլեկտրոնային մոդուլի ներդրում և գործարկում, Էլեկտրոնային նոտարական e-notary համակարգի զարգացում, նոտարի կողմից Էլեկտրոնային եղանակով վավերացման ենթակա էլեկտրոնային պայմանագրերի և փաստաթղթերի փոխանակման համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգի ներդրում, իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգի արդիականացում, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի արխիվային նյութերի թվայնացում, թվային արխիվների ստեղծում, հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային համակարգի զարգացում, այլընտրանքային վեճերի լուծման էլեկտրոնային համակարգի ներդրում:

Անցումային արդարադատություն. Նախատեսվում է ստեղծել Փաստահավաք հանձնաժողով, որն իրականացնելու է 1991 թվականի սեպտեմբերից մինչև 2018 թվականի ապրիլ ամիսը տեղի ունեցած՝ մարդու իրավունքների հիմնարար և պարբերական խախտումների վերաբերյալ փաստերի հավաքագրում և ուսումնասիրություն, դրանց հիման վրա միջանկյալ և եզրափակիչ զեկույցների կազմում և հրապարակում: Հանձնաժողովը ունենալու է նստավայր, համապատասխան պայմաններ Հանձնաժողովի անդամների և աշխատակազմի գործունեության, վկաներին և տուժողներին ընդունելու, իր գործունեության ընթացքում կազմակերպելու է հանրային լսումներ, քննարկումներ կազմակերպելու համար: Հանձնաժողովը կազմակերպելու է նաև այցելություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, տուժած անձանց բնակարաններ և այլն: Հանձնաժողովը պարբերաբար առաջարկություններ է ներկայացնելու Կառավարությանը և Ազգային ժողովին նշված խախտումների արդյունքում տուժած անձանց խախտված իրավունքների վերականգնման, նրանց փոխհատուցումներ տրամադրելու, ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ: Փաստահավաք հանձնաժողովը անհրաժեշտության դեպքում ինքը ևս կարող է որոշակի փոխհատուցումներ տրամադրել տուժողներին, իրականացնել տուժողների պաշտպանություն, իրավունքների ժամանակավոր

վերականգնում և այլն: Փաստահավաք հանձնաժողովը հանդես է գալու որպես ինքնավար մարմին, կազմված է լինելու 9 անդամից, ունենալու է աշխատակազմ, որտեղ իրականացվելու է քաղաքացիական ծառայություն: Հանձնաժողովի աշխատակազմը պետք է աջակցի Հանձնաժողովի անդամներին՝ վերոնշյալ գործառույթների իրականացման համար: Հանձնաժողովը գործելու է 2-3 տարի ժամկետով:

Հակակոռուպցիոն ոլորտ. ՀՀ կառավարությունը շարունակելու է իրականացնել հակակոռուպցիոն քաղաքականությունը 2019 թվականի հոկտեմբերի 3-ին ընդունած Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի շրջանակներում: Վերոնշյալ ռազմավարության պահանջներին համապատասխան 2021 թվականի ընթացքում նախատեսվում է իրագործել հետևյալ միջոցառումները՝

- ընդունված իրավական ակտերի հիման վրա նախատեսվում է ստեղծել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի մաս կազմող մարմիններ՝ Հակակոռուպցիոն կոմիտե և հակակոռուպցիոն դատարաններ, որոնք 2019 թվականին ձևավորված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հետ մեկտեղ կկազմեն հակակոռուպցիոն ոլորտը կարգավորող համակարգ,
- նախատեսվում է ապահովել բավարար մարդկային, վարչական և նյութական ռեսուրսներ մասնագիտացված հակակոռուպցիոն մարմինների գործունեության ապահովման համար,
- ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա մշակել հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրեր, այդ թվում՝ կոռուպցիոն ռիսկերի վերհանում, ծրագրերի մշակում և իրականացում,
- կատարելագործել դատավորների, ՍԴ դատավորի, ԲԴԽ անդամի, դատախազների թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության և դրա արդյունքում եզրակացության տրամադրման մեխանիզմները,
- շարունակաբար կատարելագործել Գլխավոր դատախազության կազմում ստեղծված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցերով ստորաբաժանման գործիքակազմը,
- աշխատանքներ իրականացնել իրավաբանական անձանց իրական շահառուների բաց ռեգիստրի ստեղծման և կատարելագործման ուղղությամբ,
- իրականացնել հակակակոռուպցիոն ռազմավարության և միջոցառումների ծրագրի կատարման նկատմամբ մշտադիտարկում, գնահատման գործընթացի համակարգում, պարբերական հաշվետվությունների կազմում,
- շարունակել համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ՝ միջազգային պարտավորությունների գնահատման գործընթացներում մասնակցելու, վերջիններիս շրջանակներում Հայաստանին տրված հանձնարարականների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտ. Քրեակատարողական համակարգում իրավիճակը բարելավելու, ինչպես նաև ոլորտի շարունակական զարգացումն ապահովելու համար 2021 թվականի համար հիմնական թիրախային ուղղությունները լինելու են.

- ազատությունից զրկված անձանց, այդ թվում՝ անչափահասների պահման պայմանների բարելավումը,

- քրեակատարողական հիմնարկներում գտնվող հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմանների ապահովումը,

- քրեակատարողական հիմնարկներում արդի ինժեներատեխնիկական և անվտանգության ապահովման միջոցներով վերազինումը, ինչպես նաև լրակազմերի համաչափ բաշխվածության ապահովումը,

- քրեակատարողական ծառայողների սոցիալական պայմանների բարելավումը, որը նախատեսվում է իրականացնել քրեակատարողական ծառայողների սոցիալական ապահովության արդյունավետ համակարգի ներդրմամբ,

- ազատությունից զրկված անձանց, այդ թվում՝ անչափահասների կրթություն ստանալու իրավունքի շարունակականության ապահովումը, մասնագիտական կրթության նոր ծրագրերի ներդնումը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց համար հանրակրթության իրականացումը՝ անկախ տարիքից,

- ազատությունից զրկված անձանց ազատազրկման ժամկետը լրանալուց հետո սոցիալական-իրավական հարցերով աջակցության տրամադրումը (Երևանում և այլ համայնքներում վերականգնողական կենտրոնների գործունեության մոդելով),

- քրեակատարողական հիմնարկներում երկրորդային (հիվանդանոցային) բժշկական օգնության և սպասարկման տրամադրման պայմանների բարելավումը,

- քրեակատարողական և Պրոբացիայի ծառայությունների արդյունավետ համագործակցության մեխանիզմների ներդնումը:

Պրոբացիայի ինստիտուտի կենսագործման նպատակով 2021 թվականի ընթացքում կշարունակվեն իրագործվել մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝ նախատեսվում է զարգացնել Պրոբացիայի ծառայության կարողությունները, կատարելագործել գործունեության օրենսդրական հիմքերը, ինչպես նաև խթանել պրոբացիայի համակարգում էլեկտրոնային կառավարման գործիքների կիրառումը՝ ամբողջությամբ գործարկելով E-probation էլեկտրոնային կառավարման համակարգը:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտ. 2019 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունվել է Մարդու իրավունքների պաշտպանության նոր ազգային ռազմավարությունն և դրանից բխող 2020-2022 թվականների Գործողությունների ծրագիրը:

Ռազմավարության և գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացման, մշտադիտարկման և գնահատման համար ստեղծվել է Համակարգող խորհուրդ՝ կազմված հանրային իշխանության մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից: 2020 թվականի մարտի 2-ի թիվ 282-Ա ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատվել է մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի կատարումը համակարգող խորհրդի անհատական կազմը, գործունեության կարգը և հաշվետվությունների ներկայացման ձևաչափը:

Կարգի համաձայն՝ Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք անցկացվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ: Հարկ է նշել, որ հաշվի առնելով COVID-19-ով պայմանավորված իրավիճակը՝ Խորհրդի առաջին նիստը անցկացվել է գրավոր ընթացակարգով, որի շրջանակներում, սահմանված կարգի համաձայն, հաշվի առնելով մարդու իրավունքների ոլորտային ներկայացվածությունն ապահովելու անհրաժեշտությունը, ընտրվել են Խորհրդում Հասարակական կազմակերպությունների 7 ներկայացուցիչները:

Ռազմավարությամբ և Գործողությունների ծրագրով նախատեսվել է հաշվետվողականության հստակ մեխանիզմ, համաձայն որի հաշվետվությունները ներկայացվում են ինչպես Արդարադության նախարարություն և ՀՀ վարչապետի աշխատակազմ, այնպես էլ տեղադրվում www.e-rights.am հարթակում: Հարկ է նշել, որ արդեն իսկ ամփոփվել են 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարման ենթակա միջոցառումների հաշվետվությունները, համաձայն որոնց ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմում են 42.8%, մասամբ կատարվածները՝ 57.2%, իսկ չկատարված միջոցառումներ չկան: Միջոցառումների մասնակի կատարումը մեծամասամբ պայմանավորված է եղել COVID-19-ով:

Գործողությունների ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է քրեականացնել ընտանեկան և կանանց նկատմամբ բռնությունը՝ միջազգային չափանիշներին համապատասխան, ապահովել խոշտանգումից տուժած անձանց հոգեբանական, սոցիալական և իրավական ծառայություններից օգտվելու իրավունքի արդյունավետ իրականացման մեխանիզմները, ապահովել հոգեկան, այդ թվում՝ մտավոր խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունն իրենց իսկ վերաբերող բոլոր որոշումների կայացման գործընթացներում, ինչպես նաև ստեղծել երեխաների իրավունքներին առնչվող խնդիրների հաշվառման և վարման միասնական վիճակագրական համակարգ:

Հարկ է ընդգծել, որ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում կառավարության գործունեության թափանցիկության ու հաշվետվողականության ապահովման նպատակով 2020 թվականի ապրիլի 1-ից հասանելի է e-rights.am հարթակը:

Հարթակը հնարավորություն է ընձեռում.

- առցանց ծանոթանալ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությանը և դրանից բխող Գործողությունների ծրագրին,
- միջոցառումների իրականացման ընթացքին,
- հրապարակել պետական մարմինների կողմից ներկայացված հաշվետվությունները,
- ներկայացնել մեկնաբանություններ միջոցառումների վերաբերյալ:

Գործողություններն առավել թիրախային և հասանելի դարձնելու նպատակով դրանք առանձնացվել են ըստ իրավունքի տեսակների և Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման նպատակների:

Հարթակն ունի հատուկ ռեժիմ տեսողության հետ խնդիր ունեցող անձանց համար: Այն հասանելի է նաև բջջային տարբերակով:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտ. Նախատեսվում է նվազեցնել ոլորտում առկա վարչարարությունը՝ այն ամբողջովին համապատասխանեցնելով քաղաքացիական կացության ակտերի գրանցման «մեկ պատուհան» ծառայության շրջանակներում կիրառվող սկզբունքներին: Արդեն իսկ մշակված է և գործում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում էլեկտրոնային գործիքակազմը, որը հնարավորություն կընձեռի շահառուներին դիմել և վերջնական արդյունքները ստանալ բացառապես էլեկտրոնային հարթակում՝ թվայնացնելով բոլոր ծառայությունները: Մասնավորապես՝ ՔԿԱԳ էլեկտրոնային գործիքակազմի e-cervices.moj.am միջոցով արդեն

իսկ ընդունվում են ընտանեկան կարգավիճակի և վկայականների կրկնօրինակների դիմումները, իսկ վերջնական արդյունքները տրամադրվում են նաև ապոստիլով վավերացված տեսքով: Միաժամանակ արդեն մշակվել է և շրջանառության մեջ է գտնվում իրավական ակտերի նախագծերը, որոնցով ապահովվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման սպասարկումը՝ Front և Back office սկզբունքի շրջանակներում, որի միջոցով կնվազեցվի որոշում կայացնող և դիմող շփումը, դիմումների ընդունումը հնարավոր կլինի պատվիրակել նաև մասնավոր հատվածին, այդպիսով իսկ բարելավելով քաղաքացիների սպասարկման որակը և պայմանները, այդ թվում՝ նաև հանրային ծառայությունների միասնական գրասենյակներում, որի առաջինը հիմնադրվեց 2020 թվականի հուլիսի 22-ից և մեկ վարչական հարկի տակ համախմբում է առանձին թվով ութ գերատեսչությունների ներկայացվածությունը, դիմողներին նույն վայրում տրամադրելով ավելի քան 97 հանրային ծառայություններ:

Իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի ոլորտ. Նախատեսվում է իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված շարունակական աշխատանքների իրականացում, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով մատուցվող ծառայությունների ընդլայնում (առցանց նույնականացման նոր մոտեցումների կիրառում, կայքի դիզայնի թարմացում, փաստաթղթերի վրա արագ արձագանքման (QR) կոդերի կիրառում, ինքնաշխատ ծառայությունների իրականացում), իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության աջակցությամբ ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար անհրաժեշտ մի շարք գործառույթների իրականացման հնարավորության ստեղծում (պետական ռեգիստրի գործակալության հետ համագործակցող կազմակերպությունների և մարմինների միջոցով՝ բանկային հաշվի բացում, հսկիչ դրամարկղային մեքենաների և կնիքների տրամադրում, անձնական գրասենյակի ակտիվացում և լիազոր անձի ընտրություն, հարկային մարմնին ներկայացվող որոշ հաշվետվությունների ներկայացում), իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրերի էլեկտրոնային հարթակի գործարկում և այդ ոլորտի օրենսրական կարգավորումների բարեփոխում, օրենսդրական բարեփոխումներ՝ ուղղված իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտում մատուցվող ծառայությունների մատչելիության ապահովմանը: Նախատեսվում է նաև իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության որոշ մարզային սպասարկման գրասենյակների տեղակայումը ստեղծվելիք միասնական գրասենյակներում, ինչպես նաև իրավաբանական անձանց պետական ռեգիստրի արխիվների թվայնացմանն ուղղված աշխատանքների իրականացում:

Անձնական տվյալների պաշտպանության ոլորտ. Նախատեսվում է ապահովել անձնական տվյալների պաշտպանության ավելի բարձր մակարդակ, մասնավորապես՝ ներդաշնակեցնել անձնական տվյալների մշակում նախատեսող օրենսդրական դաշտը, մշակել օրենսդրական փոփոխությունների նախագծեր, անձնական տվյալների մշակում նախատեսող նոր ընդունվող, ինչպես նաև գործող իրավական ակտերը համապատասխանեցնել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ անձնական տվյալների մշակման սկզբունքներին, ավելացնել անձնական տվյալների պաշտպանության իրավունքի վերաբերյալ ինչպես անձնական տվյալներ մշակողների, այնպես էլ լայն հասարակության իրազեկվածությունը, ինչպես նաև հզորացնել

անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի մարդկային ռեսուրսների մասնագիտական, նյութական և տեխնիկական կարողությունները:

Սփյուռք

ՀՀ կառավարությունը կարևորում է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումը և ամրապնդումը: Այսօր սփյուռքի հայության առջև ծառացած հիմնական մարտահրավերներից մեկը հայ երիտասարդների մեջ ազգային ինքնության պահպանումն է, նրանց ընդգրկմամբ համահայկական միասնական օրակարգի ձևավորումը:

Հայաստան-Սփյուռք գործակցության համատեքստում անհրաժեշտ է խթանել համայնքային կառույցների գործունեությունը, դրանցում սփյուռքահայ երիտասարդների ներգրավվածությունը և աջակցել երիտասարդական նոր կազմակերպությունների ստեղծմանը:

Հայաստան-Սփյուռք սահմանների վերացման և համահայկական օրակարգերի ստեղծման հարցում կենսական է համայնքային գործիչների պատրաստումը:

Սփյուռքի հետ աշխատանքի հետհեղափոխական շրջանի պատկերացումներում կարևորվում է Հայաստան-Սփյուռք սահմանների միասնականացումը, ողջ հայության ներուժի ներգրավումը և հայրենադարձության իրագործումը: Այս առումով մեծ դերակատարություն ունեն սփյուռքահայ երիտասարդների մեջ ազգային ինքնության պահպանմանն ուղղված բազմաբնույթ ծրագրերի իրականացումը, Հայաստանը՝ որպես հնարավորությունների, անձնական և մասնագիտական աճի երկիր դիտարկելու նախադրյալների ապահովումը:

Հայաստան-Սփյուռք գործակցության մեջ մեծ կարևորություն ունեն նաև հանրային կապերն ու աշխարհասփյուռ հայության իրազեկվածության ապահովումը: Այս համագործակցության հանրայնացումն ունի թիրախային երկու լսարան՝ ներքին կամ ներհայաստանյան և արտաքին կամ նպատակաուղղված Սփյուռքին՝ հայ համայնքներին և միջազգային հանրությանը:

Տեղեկատվությունը լսարանին ճիշտ հասցեագրելու համար կարևոր է լրագրողական հանրույթի հետ գործընկերային կայուն կապերի ստեղծումն ու առողջ աշխատանքը, լրատվադաշտում Հայաստան-Սփյուռք գործակցության ու ամրապնդմանն ուղղված ծրագրերի, սոցիալական մեդիայի բոլոր հարթակների ակտիվ գործածումը, մեդիա արշավների իրականացումը, ներգրավվածությունը սոցիալական նախաձեռնություններում և այլն:

Հայրենադարձության պետական քաղաքականության խթանումն ու իրականացումը Հայաստանի Հանրապետության առաջնահերթություններից մեկն է, որը լուծում է պետության առջև ծառացած դեմոգրաֆիական, անվտանգության, տարածքային համաչափ զարգացման, տնտեսական առաջադիմության, հայապահպանության, համազգային ներուժի համախմբման և այլ ռազմավարական խնդիրներ:

ՀՀ պետական քաղաքականությունը միտված է մշակել և իրականացնել միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն Հայաստանի զարգացման գործընթացում Սփյուռքի ներգրավմանը:

Կրթություն

Պետական քաղաքականության մեջ կրթությունը գերակայությունների շարքում շարունակում է մնալ որպես ազգային արժեք և երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացն ապահովող հիմնարար գործոն: Մարդկային կապիտալի կայուն զարգացումը հնարավոր է ապահովել կրթության որակի, արդյունավետության և մատչելիության բարձրացման միջոցով:

Հանրակրթության ոլորտում կշարունակվեն հիմնական բարեփոխումները, որոնց նպատակն է միջնակարգ կրթության որակի բարձրացումը, բնակչության բոլոր խավերի

համար որակյալ կրթության հավասար մատչելիության ապահովումը միջնակարգ դպրոցի բոլոր (ինչպես նաև՝ նախադպրոցական) մակարդակներում և համակարգի արդյունավետության շարունակական բարձրացումը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության բարելավման ծրագրի շրջանակներում նախատեսվում է շարունակել աջակցել կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին, այդ թվում՝ նախադպրոցական հաստատությունների հիմնմանը այն համայնքերում, որտեղ չեն գործում մանկապարտեզներ: Մշակվել են նախադպրոցական կրթության տրամադրման այլընտրանքային մոդելներ, որոնց արդյունքում հաշվի կառնվեն տվյալ համայնքի առանձնահատկությունները:

Շարունակվելու են տարրական դասարանների աշակերտներին, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին և սահմանամերձ համայնքների սովորողներին անվճար դասագրքերով ապահովելու քաղաքականությունը, հանրապետության դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկման և համակարգչային սարքավորումների պահպանման, շարժական ինտերնետային կայանի շահագործման աշխատանքները, իրականացվելու են հեռավար կրթության լիարժեք ներդրմանն ուղղված քայլեր:

Սովորողների մոտ ճարտարագիտական, գիտական և համակարգային մտածողության զարգացման նպատակով դպրոցներում կիրականացվեն մի շարք միջոցառումներ:

«Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովում» ծրագրի շրջանակում սննդով կապահովվեն ՀՀ Արարատի, Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի, Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի մարզերի և 2021 թվականի սեպտեմբերից՝ Լոռու մարզի հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և դպրոցի նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված երեխաները:

Շարունակվելու են ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերը մանկավարժական կադրերով համալրելու աշխատանքները, ինչպես նաև տրանսպորտային ծախսերի փոխհատուցման գումարների տրամադրումը մարզերի՝ իրենց բնակավայրերից դուրս աշխատող մանկավարժներին և սովորողներին:

Սեյսմիկ և այլ վտանգների տեսանկյունից իրականացվելու են աշխատանքներ կապված դպրոցների շենքերի բարելավման, աղետների պատրաստվածության ու արձագանքման կարողությունների հզորացման ուղղություններով, բարելավվելու են փոքրաթիվ աշակերտակազմ ունեցող հանրակրթական դպրոցների ուսումնական գործընթացի բնականոն և համակողմանի կազմակերպմանն առնչվող հարցերը:

Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման նպատակով ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերում կստեղծվեն տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ կամ այդ ծառայությունները կպատվիրակվեն:

Մասնագիտական կրթության բնագավառում կիրականացվեն մի շարք միջոցառումներ՝ ուղղված մասնագիտական կրթության որակի բարելավմանը, աշխատաշուկայի և միջազգային չափանիշներին ու պահանջներին համապատասխան կադրերի պատրաստման կարողությունների հզորացմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը, կրթության որակի ապահովմանը, սոցիալապես խոցելի խավերի համար մասնագիտական կրթության մատչելիության և հասանելիությանը:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում շարունակվելու են ուսուցման կազմակերպման նոր մոդելների ներդրումը (աշխատանքի վրա

հիմնված), համակարգի բովանդակային արդիականացումը, ուսումնական հաստատությունների բարեկարգումը և ժամանակակից ուսումնական միջավայրի ստեղծումը:

Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում կարևորվելու են պետական ֆինանսավորման մեխանիզմների մշակումը և զուգահեռ ներդնումը՝ կախված բուհերի հավատարմագրման արդյունքներից, ՀՀ պետական և ոչ պետական բուհերի գործունեության համար արդար մրցակցային դաշտի և հավասար հնարավորությունների ստեղծումը:

Սփյուռքի հետ տարվող աշխատանքները հիմնականում ուղղված կլինեն աջակցելու Սփյուռքի կրթօջախների գործունեությանը՝ նպաստելով հայապահպանման խնդիրների լուծմանն ու միջմշակութային երկխոսության զարգացմանը:

Առաջնային են լինելու նախադպրոցականից մինչև հետբուհական կրթության որակի, մասնավորապես՝ սովորողների, միջավայրի, ծրագրերի և ուսումնական նյութերի բովանդակության, գործընթացների, ինչպես նաև վերջնարդյունքների որակի բարելավումն ըստ ներպետական և միջազգային ցուցիչների:

Գիտության ոլորտ

Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտը պետք է լինի միջազգայնորեն մրցունակ, միջազգային հետազոտական տարածքի հետ ինտեգրված, տնտեսության պահանջներից բխող, ինչպես նաև՝ երկակի նշանակության բարձր տեխնոլոգիական հետազոտություններում գերազանցությունը խթանող, հանրապետության տնտեսության մրցունակության բարձրացմանը և անվտանգության ապահովմանը նպաստող համակարգ: Այդ նպատակակետի ձեռքբերման համար անհրաժեշտ է իրականացնել գիտության ոլորտի բարեփոխումներ՝ ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմամբ և այդ արդյունավետության գնահատման հստակ, արդի պահանջներին համապատասխան չափանիշների ներդրմամբ:

Ոլորտի առաջնահերթ գերակա խնդիրներն են.

- գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը, կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմների ներդրումը,
- միջազգայնորեն մրցունակ հիմնարար ուսումնասիրությունների, տնտեսության պահանջներից բխող կիրառական հետազոտությունների, ինչպես նաև երկակի նշանակություն ունեցող գիտելիքների ձեռքբերմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքների իրականացումը,
- գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրումը, գիտության ենթակառուցվածքների արդիականացումը,
- գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական գերազանցության կենտրոնների ստեղծումը՝ բեկումնային զարգացում ապահովող որոշ տեխնոլոգիական ոլորտներում,
- կրթութուն-գիտություն կապի ամրապնդումը՝ ձևավորելով բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների ցանցեր՝ ապահովելով ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի և գիտաշխատողների ազատ տեղաշարժի իրավունքը ցանցի կազմակերպությունների մեջ,
- հայագիտական հետազոտությունների առաջանցիկ զարգացման ապահովումը, այդ թվում՝ միջազգային համագործակցության զարգացումը:

Վերոնշյալ գերակա խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներն են.

- գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում կատարողականի վրա հիմնված պետական ֆինանսավորման մեխանիզմների ներդրումը,

- գիտության ոլորտի օպտիմալացման և կառուցվածքային բարեփոխումների ծրագրի մշակումը և ներդրումը,

- տնտեսության պահանջներից բխող հետազոտությունների պատվերների ձևավորման մեխանիզմների մշակումը և ներդրումը,

- երկակի նշանակության ծրագրերի իրականացումը,

- գիտության ոլորտի երիտասարդ կադրերի ներգրավման ծրագրի իրականացումը,

- օտարերկրյա պետություններում աշխատող գիտական և (կամ) գիտակրթական կադրերի վերաինտեգրման ծրագրերի իրականացումը,

- միջազգային չափանիշներին համապատասխան գիտական հետազոտություններ իրականացնելու պայմանների ձևավորման մեխանիզմների մշակումը և ներդրումը,

- գիտանորարարական ենթակառուցվածքների ստեղծման աջակցության մեխանիզմների ներդրումը,

- Եվրոպական հետազոտական տարածքում խելացի մասնագիտացման տիրույթի ձեռքբերմանն ուղղված ծրագրերի իրականացումը,

- հայագիտական հետազոտությունների առաջանցիկ զարգացման ապահովումը, այդ թվում՝ միջազգային համագործակցության զարգացման մակարդակի բարձրացումը:

Մշակույթ

2021 թվականին մշակութային ժառանգության ծրագրի շրջանակներում կշարունակվեն պահպանության և հանրահռչակման աշխատանքները՝ ուղղված ՀՀ տարածքում և արտերկրում գտնվող մշակութային արժեքների և պատմամշակութային հուշարձանների հաշվառմանն ու գիտական ուսումնասիրությունների իրականացմանը, մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) անխաթար պահպանմանը, վերականգնմանն ու սերունդներին փոխանցմանը:

Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի շրջանակում իրականացվող ծրագրերն ուղղված կլինեն գրականության զարգացմանն ու տարածմանը, տպագիր արտադրանքի միջոցով հոգևոր-մշակութային ժառանգության փոխանցմանը, ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների համար լույս տեսնող լրատվամիջոցների և պարբերականների գործունեության շարունակականությանը, գրքի միջազգային ցուցահանդեսներին մեր երկրի մասնակցությանը, հանրապետական գրական ծրագրերի կազմակերպմանը, ստեղծագործողների և մշակութային հետազոտողների աշխատանքների խթանմանը, գրադարանների հավաքածուների համալրմանն ու պահպանմանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ գրավոր ժառանգության (անձեռնմխելի հավաքածուներ) թվայնացմանը, տեղեկատվական շտեմարանների շարունակական զարգացմանը, գրադարանային հավաքածուների օգտագործման մատչելիության ապահովմանը, ոլորտի մասնագետների վերապատրաստմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը, մատենագիտական տվյալների կազմմանն ու հրապարակմանը, հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը:

Կինեմատոգրաֆիայի ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացներն ուղղված կլինեն խաղարկային, մուլտիպլիկացիոն և վավերագրական կինոնկարների արտադրության աջակցմանը, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանմանը, կինոարվեստի պրոպագանդմանը, տարածմանը, մատչելիության ապահովմանը, հայկական կինոյի ավանդույթների շարունակականության ապահովմանը:

Արվեստների ծրագրի շրջանակներում իրականացվող ծրագրերը նպատակաուղղված կլինեն ազգային արժեհամակարգի հիման վրա ստեղծված հայ ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի և կերպարվեստի զարգացմանն ու միջազգային ասպարեզում հանրահռչակմանը, ստեղծագործական և գեղարվեստական բարձր նշաձողի պահպանմամբ և հանրության տարբեր շերտերի մշակութային պահանջարկին համապատասխան մշակութային արտադրանքի և ծառայությունների մատուցման գործընթացի ապահովմանը, մշակութային ենթակառուցվածքների արդիականացմանը, մշակութային ծառայությունների որակի բարելավմանն ու մատչելիության ապահովմանը, ստեղծագործական ներուժ ունեցող անհատների դրսևորմանը և նրանց գործունեության համար բարենպաստ դաշտի ստեղծմանը, նորարարական մտահղացումների խթանմանը, երիտասարդ ստեղծագործողներին միջազգային մշակութային գործընթացներին ինտեգրման աջակցմանը, ոլորտում գործող ստեղծագործական միությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնմանը և մրցակցային դաշտի ձևավորմանը:

Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագիրը նպատակաուղղված է կադրերի պատրաստման պետպատվերի համակարգի կատարելագործմանը, մշակութային կրթության որակի բարձրացմանը, մասնագետների կրթության շարունակականության և մատչելիության ապահովմանը, ՀՀ ապագա քաղաքացիների գեղագիտական դաստիարակության ձևավորմանը նպաստող ծրագրերի իրականացմանը, ներառական ծրագրերի աջակցմանը, մանկապատանեկան տարիքի երեխաների, կրթության իրականացման պայմանների մատչելիության և որակի ապահովմանը:

Մարզերի մշակութային զարգացման ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացներն ուղղված կլինեն մարզերում մշակութային կյանքի և մշակութաստեղծ գործունեության ակտիվացմանը, համայնքներում մշակույթի հասանելիության և մշակութային կյանքին մարզային բնակչության ընդգրկվածության ընդլայնմանը, մշակութային միջոցառումների կազմակերպմանն ու իրականացմանը, մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը, համայնքային ենթակայության մշակույթի տներում և կենտրոններում ստեղծագործական ծրագրերի և նախագծերի աջակցմանը:

Ազգային արխիվի ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացները նպատակաուղղված են ՀՀ ազգային արխիվային հավաքածուի պահպանության, համալրմանը, հաշվառմանը, արխիվային փաստաթղթերի վերանորոգմանը, փաստաթղթերի գիտատեխնիկական մշակմանը, ՀՀ արխիվային հավաքածուի փաստաթղթերի թվայնացման աշխատանքների իրականացմանը, ֆիլմերի թվայնացմանը, նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տեղեկությունների էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքների իրականացմանը, հանրության կողմից արխիվային նյութերի օգտագործման ապահովմանը:

Սպորտ

Մեծ նվաճումների սպորտի ծրագրի շրջանակում կշարունակվեն օլիմպիական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստման, բնակչության ֆիզիկական դաստիարակության ապահովման, Հայաստանի Հանրապետությունում գործող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման, ֆիզկուլտուրային-առողջարարական զանգվածային, հանրապետական և

մարզային միջոցառումների անցկացման, հաշմանդամային սպորտին, մարզական-հասարակական կազմակերպություններին պետական աջակցության գործընթացները:

Մասսայական սպորտին ուղղված միջոցառումների շրջանակում կշարունակվեն ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի իրավական դաշտի կատարելագործումը, ՀՀ մարզերում և ԱՀ-ում հանրապետական մարզական փառատոնների նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական, հանրապետական ուսանողական մարզական, ՀՀ գյուղական մարզական, տարեցների հանրապետական խաղերի կազմակերպումը:

Երիտասարդություն

Երիտասարդության հարցերի ոլորտում կառավարության կողմից վարվող պետական քաղաքականությունը միտված է հասարակական-քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանի բարձրացմանը, երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի բարելավմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային դաստիարակության խթանմանը, գիտության ոլորտում երիտասարդների ընդգրկվածության մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը, առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների ուսումնասիրմանը և երիտասարդների կենսապայմանների բարելավմանը, տաղանդավոր երիտասարդների հայտնաբերմանը և խրախուսմանը, երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության խթանմանը, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, միջազգային երիտասարդական կառույցների հետ համագործակցության ընդլայնմանը, երիտասարդությանը լիակատար ինքնադրսևորման և անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովմանը:

Առողջապահություն

Բնակչության առողջության պահպանման և բարելավման հիմնախնդիրները դիտարկվում են որպես պետության կայուն զարգացումը պայմանավորող հիմնական գործոններից և ազգային անվտանգության ապահովման առաջնահերթություններից մեկը: Առողջապահության ոլորտի գործունեության բարելավման և զարգացման քաղաքականությունը որդեգրել է ապահովել յուրաքանչյուր քաղաքացու առողջության պահպանման սահմանադրական իրավունքը՝ բուժօգնության տրամադրման հավասարությունը, արդարությունը, մատչելիությունը, բժշկական օգնության որակի ապահովումը:

Ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված է լինելու հանրային առողջապահական ծառայությունների հզորացմանը, հիվանդությունների կանխարգելմանը, առողջ կենսակերպի համար պայմանների ստեղծմանը:

Պետական առողջապահական ծախսերի նպատակայնության հետևողական բարձրացման, հատկացվող ֆինանսական միջոցների վերահսկման և մատուցվող ծառայությունների որակի կառավարման գործուն մեխանիզմների շարունակական բարելավման շնորհիվ առողջապահական համակարգի շահառուն ստիպված չի լինի հավելյալ վճարել պետության կողմից անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող ծառայությունների համար և կստանա որակյալ բժշկական օգնություն և ծառայություններ: Անվճար բժշկական օգնությունը պետք է տրամադրվի միայն սոցիալական արդարության սկզբունքի հիման վրա: Միաժամանակ պետությունը պետք է կանգնած լինի անհետաձգելի բժշկական օգնության կարիք ունեցող ցանկացած մարդու կողքին:

Առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջապահական, վերարտադրողական առողջության պահպանման ծառայությունները լինելու են պետության առաջնահերթությունը:

Հանրային առողջապահական ծառայությունների հզորացման ոլորտում ՀՀ կառավարությունն ապահովելու է հանրային առողջապահության միասնական պետական քաղաքականության մշակումը և իրականացումը, օրենսդրական դաշտի բարելավումը, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման պատճառների ուսումնասիրությունը և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Բնակչության հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության բնագավառում տարվող քաղաքականության հիմնական նպատակն է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության նվազեցումը՝ սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի, հիգիենիկ նորմատիվների պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության միջոցով:

Շարունակվելու են աշխատանքները հանրային առողջության համար վտանգ ներկայացնող իրավիճակներին արձագանքման կատարելագործման, համընդհանուր լաբորատոր ցանցի և լաբորատոր համակարգի շարունակական զարգացման, առողջ ապրելակերպի քարոզչության, աշխատողների առողջության պահպանման հիմնական կանոնների ու նորմերի սահմանման և կիրառման ուղղություններով:

Արտահիվանդանոցային և հիվանդանոցային առողջապահական ծառայությունների որակի, մատչելիության, հասանելիության ապահովման ոլորտում բժշկական օգնության կազմակերպման որակի բարձրացման առումով՝ բժշկական ծառայությունների որակի կառավարման նպատակով փուլ առ փուլ ներդրվելու են ապացուցողական բժշկության վրա հիմնված բժշկական օգնության տրամադրման չափորոշիչները:

Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի (տեղամասային թերապևտ, մանկաբույժ, ընտանեկան բժիշկ) գործառույթները առավելագույնս ուղղվելու են հիվանդությունների կանխարգելմանն ու վաղ հայտնաբերմանը:

Մոր ու մանկան առողջության պահպանման ծառայությունների բարելավման ոլորտում կառավարությունը նպաստելու է մոր և մանկան առողջության ցուցանիշների բարելավմանը՝ ուղղորդված առողջապահական ծրագրային միջոցառումների իրականացման միջոցով ապահովելու է մոր ու մանկան առողջության առաջնային պահպանման համակարգում կանխարգելիչ ծրագրային ուղղությունների ուժեղացումը:

Առողջապահական կադրային ներուժի ապահովման ոլորտում իրականացվելու են աշխատանքներ բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական բարելավման ուղղությամբ: Ներդրվելու են մեխանիզմներ առողջապահական կադրային ներուժի տարածքային օպտիմալ բաշխման, մարզային առողջապահական կազմակերպությունները որակյալ կադրերով ապահովելու և բժշկի աշխատանքը մարզում հնարավորինս խրախուսելու համար:

Դեղերի անվտանգության, արդյունավետության և որակի ապահովման ոլորտում աշխատանքներ կիրականացվեն հանրապետությունում անվտանգ, արդյունավետ, որակյալ և մատչելի դեղեր ունենալու ուղղությամբ՝ դեղային ազգային քաղաքականության մշակման, դեղերի շրջանառության բոլոր փուլերի կանոնակարգման, այս ոլորտի պետական

վերահսկողության բարելավման, հայրենական արտադրության դեղերի մրցունակության ապահովման և տեղական դեղարտադրության խրախուսման միջոցով:

Շարունակվելու են լրացուցիչ միջոցներ ուղղվել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում կյանք փրկող գլխուղեղի սուր և/կամ ենթասուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբէկտոմիա ծառայության զարգացմանը:

Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը ռազմավարական մեկ այլ կարևոր նպատակ է, որի շրջանակներում ապահովվելու է առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման, ախտորոշման ու կանխարգելման ճանապարհով բնակչության առողջության հիմնական ցուցանիշների բարելավում և այդ հիվանդությունների բարդությունների, հաշմանդամության և մահացության ցուցանիշների կրճատում, ինչպես նաև վարակիչ հիվանդություններով հիվանդացության նվազեցում, կառավարելի վարակիչ հիվանդություններից մահվան դեպքերի կանխում և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովում:

Կառավարության հիմնական խնդիրներից է հանրապետությունում ուռուցքաբանական ծառայությունների շարունակական բարելավումը: Ուռուցքաբանական վիրահատությունների գների վերանայման, ճառագայթային բուժման դեպքերի, քիմիաթերապիայի դեղերի ցանկի ընդլայնման և պետության կողմից երաշխավորված անվճար պալիատիվ ծառայության ներդրման միջոցով ուռուցքաբանական հիվանդություններով հիվանդ քաղաքացիներին մատուցվելու են որակյալ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ, միաժամանակ վերջիններիս «փրկելով» հիվանդության բուժման հետ կապված կործանարար ծախսեր կատարելու վտանգներից:

Նախատեսվում է նոր տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացնել մարդու օրգանների (երիկամ) և ոսկրածուծի/ցողունային բջիջների փոխպատվաստման ծառայություններ, որոնք կբարելավեն քրոնիկ երիկամային անբավարությամբ և արյան չարորակ հիվանդություններով տառապող անձանց կյանքի որակը և ապրելիության ցուցանիշը:

Աշխատանք և սոցիալական պաշտպանություն

Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում 2021 թվականին կառավարության համար գերակա վերջնական արդյունք է հանդիսանալու պետական միջոցների շրջանակում շահառուներին մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը՝ խրախուսելով ծառայությունների հասարակական կազմակերպություններին մրցութային եղանակով պատվիրակումը, շահառուներին մատուցվող ծառայությունների որակի բարելավումը, ծառայությունների ապաինստիտուցիոնալացման գործընթացի համատեքստում համայնքային այլընտրանքային ծառայությունների ընդլայնումը՝ ներգրավելով համայնքի ներուժը:

Ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների բնագավառում 2021 թվականին նախատեսվում է պետական նպաստների քաղաքականության մեջ շարունակել ընտանիքների անապահովության գնահատման ծրագրի հասցեականության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, մասնավորապես՝ առցանց եղանակով ստացվող անհրաժեշտ տվյալների շրջանակի հնարավոր ընդլայնումը, համադրումներ տարբեր տեղեկատվական բազաների տվյալների հետ՝ նպաստառության ոչ ենթակա ընտանիքների հայտնաբերման նպատակով: Քննարկվում են ընտանիքների անապահովության գնահատման կարգում նոր բնութագրիչների ներառման, դրանց կիրառման հետ կապված հարցադրումների,

ինչպես նաև համակարգի հասցեականության և արդյունավետության բարձրացման ու նպաստառուների համար կայուն եկամտի ստեղծմանն ուղղված քայլերի մշակման ու ներդրման հարցերը:

2021 թվականին հաշվի առնելով ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստի գծով երեխաներին սոցիալական աջակցություն տրամադրելու առաջնահերթության սկզբունքը՝ հաշվարկներում կանխատեսվել է, որ ընտանիքների մոտ 75%-ը կկազմեն երեխա ունեցող ընտանիքները: ՀՀ վիճակագրական կոմիտեի 2018 թվականի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալների համաձայն, եթե հանրապետությունում 2018 թվականին չիրականացվեր ընտանեկան նպաստի ծրագիրը, ապա ծայրահեղ աղքատությունը կավելանար շուրջ 3.6 անգամ՝ կազմելով 3.6%՝ փաստացի 1.0%-ի դիմաց և աղքատության մակարդակը՝ 25.8%՝ փաստացի 23.5%-ի դիմաց:

Ընթացքի մեջ է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումը. շարունակվելու են հանրապետության մնացած տարածաշրջաններում համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների համար հատկացված շինությունների վերանորոգման ու վերազինման աշխատանքները:

Ներկայում շարունակվում են սոցիալական դեպքի վարման գործառնական հենքի ձևավորման, ինչպես նաև տեղեկատվական համակարգի կատարելագործման աշխատանքները: Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման գործընթացում կարևորվում է համագործակցության ապահովման միջոցով աշխատանքների իրականացումը, և այդ համակարգի հիմնական բաղադրիչներից են միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերը և ոչ պետական կազմակերպությունները: Շարունակվելու են սոցիալական աջակցության տարածքային մարմինների և համագործակցող կողմերի ներկայացուցիչների վերապատրաստման, անհրաժեշտ հմտությունների և ունակությունների ուսուցման ծրագրերը:

Շարունակվելու են սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց կացարանի խնդրի լուծման նպատակով սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման, կացարանի և այլ սոցիալական ծառայությունների տրամադրման հասցեական միջոցառումների իրականացման աշխատանքները:

2021 թվականին շարունակվելու է «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության 2020-2023 թվականների պետական աջակցության ծրագրերի» իրականացումը, որի հիմնական նպատակն է աջակցել երեխա ունեցող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանը՝ համապատասխան պայմաններ ապահովելով ընտանիքների կայուն զարգացման համար, ինչպես նաև խթանել երեխա ունեցող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման գործընթացը մարզային բնակավայրերում:

Աշխատանքի և զբաղվածության բնագավառում 2021 թվականին պետական քաղաքականությունը կշարունակվի ուղղվել աշխատաշուկայի լարվածությունը մեղմելուն, զբաղվածության ակտիվ ծրագրերի միջոցով աշխատաշուկայում անմրցունակ անձանց, ըստ առաջնահերթությունների, կայուն զբաղվածության ապահովմանը և ինքնազբաղվածության խթանմանը, աշխատանք փնտրողների, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց, երիտասարդների զբաղվածության մակարդակի բարձրացմանը, կայուն զբաղվածություն ապահովող պետական ծրագրերին գործատուների շահագրգիռ ներգրավվածության խթանմանը, գործատուների կողմից ներկայացված թափուր աշխատատեղերը որակյալ

մասնագետներով համալրելուն, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման շրջանակներում աշխատաշուկայում անմրցունակ խմբերի արդյունավետ և կայուն զբաղվածության ապահովմանը, ինչպես նաև սոցիալ-աշխատանքային հարաբերությունները կարգավորող իրավական դրույթների համապատասխանեցմանը Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին: Այս համատեքստում առանձնապես կարևորվում են՝

- զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության մեծացմանը և կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջացառումների իրականացումը,

- կայուն և ժամանակավոր զբաղվածության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև աշխատաշուկայի կարգավորման նպատակային ծրագրերի և արդյունավետ գործիքների ներդրումը,

- սոցիալ-աշխատանքային երաշխիքների հետևողական կատարելագործումը, այդ թվում՝ ՀՀ աշխատանքային օրենսդրության փոփոխություններ՝ ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների համապատասխանեցման, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայից բխող խնդիրների լուծման նպատակով,

- սոցիալական գործընկերության զարգացումը և ամրապնդումը, մասնավորապես՝ ճյուղային, տարածքային ու կազմակերպությունների մակարդակում,

- 2021 թվականին նախատեսվում է զբաղվածության պետական կարգավորման թվով 16 միջոցառումների իրականացում: Ընդհանուր առմամբ, զբաղվածության պետական գրասենյակի տարածքային կենտրոնների միջնորդությամբ 2021 թվականին աշխատանքի կտեղավորվի 12868 անձ: Զբաղվածության պետական կարգավորման ծրագրում նախատեսվում է ընդգրկել 5268 շահառու (որոնցից՝ 199-ը հաշմանդամություն ունեցող), ընդ որում 1758–ը՝ ժամանակավոր բնույթ ունեցող՝ սեզոնային և վարձատրվող հասարակական աշխատանքներում: 3719 անձի համար կապահովվի կայուն զբաղվածություն:

Երեխաների հիմնահարցերի բնագավառում 2021 թվականին աշխատանքներն ուղղված են լինելու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանությանը, հաստատություններում նրանց խնամքի, դաստիարակության, ուսման և ֆիզիկական զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, ինչպես նաև թրաֆիքինգի և սեռի հատկանիշով բռնության երևույթի կանխարգելմանը:

Վերջին տարիներին երեխաների պաշտպանության համակարգի բարեփոխումների արդյունքում կրճատվել է համակարգի մանկատներում խնամվող երեխաների թիվը:

Մանկատների շրջանավարտների համար կշարունակվեն «Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրում» և «Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների 18-23 տարեկան շրջանավարտների համար բնակարանների վարձակալություն» միջոցառումները:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի ընտանիքում ապրելու իրավունքը ապահովելու, նրանց խնամքի այլընտրանքային ծառայություններ տրամադրելու նպատակով շարունակվելու է իրականացվել «Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ» միջոցառումը, որի շրջանակում վեց աջակցության կենտրոնում սոցիալ-

հոգեբանական ծառայություններ կտրամադրվեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի և նրանց ընտանիքներին:

Մրցութային կարգով ընտրված հասարակական կազմակերպությունների կողմից հանրապետության բոլոր մարզերում կիրականացվի «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառումը, որի շրջանակում երեխաներ խնամքի շուրջօրյա հաստատություններից ընտանիքներ կվերադառնան և կկանխարգելվի նրանց մուտքը այդ հաստատություններ: Կշարունակվեն «Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում», «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու, մուտքը հաստատություններ կանխարգելելու և աջակցության տրամադրման ծառայություններ» միջոցառումները:

Մանկատներում խնամվող 7-18 տարեկան դպրոցահասակ երեխաների համար ընտանեկան միջավայրին մոտ միջավայր ապահովելու և կենցաղային որոշակի հմտությունների ձեռքբերման նպատակով կշարունակվի «Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում» միջոցառումը:

Մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բնագավառում Հանրապետությունում մարդկանց շահագործման երևույթի կանխարգելմանն ուղղված քաղաքականության շարունակականության ապահովման նպատակով կշարունակվեն նաև «Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ», ինչպես նաև «Մարդկանց թրաֆիքինգի և/կամ շահագործման զոհերին միանվագ դրամական փոխհատուցման տրամադրում» միջոցառումները:

Ընտանիքում բռնության ենթարկված անձանց օրենսդրությամբ սահմանված աջակցության տրամադրման նպատակով «Ընտանիքին, կանանց և երեխաներին աջակցության ծրագրի» շրջանակներում կիրականացվեն՝ «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ», «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ» և «Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցություն» միջոցառումները:

Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բնագավառում 2021 թվականին շարունակվելու են աշխատանքներն ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և հավասար հնարավորությունների ապահովմանը՝ բնագավառի օրենսդրության կատարելագործման և հաշմանդամություն ունեցող անձի կարիքին համարժեք ծառայությունների մատուցման միջոցով:

Շարունակվելու են աշխատանքները հաշմանդամություն ունեցող անձի կարիքի բազմակողմանի գնահատման և գնահատման արդյունքներով համապատասխան ծառայությունների որոշարկման նոր մոդել ներդնելու ուղղությամբ:

Պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց պետական հավաստագրերի հիման վրա տրամադրվելու են աջակցող միջոցներ (այդ թվում՝ պրոթեզներ, օրթեզներ, քայլակներ, անվասայլակներ, լսողական սարքեր և այլն աջակցող միջոց)՝ հասարակական կյանքում նրանց մասնակցությունը խթանելու նպատակով: Աջակցող միջոցների տրամադրման գործընթացում պետական հավաստագրերի ներդրման արդյունքում ընդլայնվել է աջակցող միջոցների տեսականին, մեծացել է ծառայություն մատուցող

կազմակերպությունների մրցակցությունը, որի արդյունքում բարձրացել է նաև աջակցող միջոցների որակը:

Շարունակվելու է պետական աջակցությունը մրցութային կարգով ընտրված հասարակական կազմակերպություններին՝ ցերեկային կենտրոններում հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու նպատակով:

Տարեցների հիմնահարցերի բնագավառում 2021 թվականին կշարունակվեն իրականացվել «Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքահենք ծառայությունների ներդրման ու զարգացման ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների 2020-2023 թվականների պլան-ժամանակացույցով» 2021 թվականի համար նախատեսված միջոցառումները:

Շարունակվելու է պետական միջոցների շրջանակում շահառուներին մատուցվող խնամքի ծառայությունների տրամադրումը՝ խրախուսելով ծառայությունների պատվիրակումը հասարակական կազմակերպություններին մրցութային եղանակով, բարելավվելու է շահառուներին մատուցվող ծառայությունների որակը, ընդլայնվելու են տարեցներին մատուցվող համայնքահենք ծառայությունները՝ ներգրավելով համայնքի ներուժը, և այս ամենն իրականացվելու է զուգորդված իրավական դաշտի կատարելագործման հետ:

Ըստ ծառայությունների տեսակների տրամադրվելու են շուրջօրյա խնամքի ծառայություններ, տնային պայմաններում խնամքի ծառայություններ, ցերեկային կենտրոններում, անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանում, հատուկ բնակելի տանը կացարանով ապահովման ծառայություններ և կոմունալ ծառայությունների փոխհատուցում՝ սոցիալական տներում բնակվող անձանց:

Վերանայվելու են ծառայությունների մատուցման չափորոշիչները, արդյունքում բարելավվելու է մատուցվող ծառայությունների որակն ու մեծանալու է հասցեականությունը, ներդրվող համայնքահենք ծառայություններում կարևորվություն է տրվում համայնքի մասնակցությանը և ավելի մեծ թվով հասարակական կազմակերպությունների ընդգրկվածությանը:

Կենսաթոշակային ապահովության բնագավառում պահպանվելու են 2020 թվականի համար սահմանված պետական կենսաթոշակների չափերը:

Կշարունակվեն «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի արդիականացման (կատարելագործման) աշխատանքները՝ որոշումների կայացման գործընթացի ավտոմատացման, այլ տեղեկատվական համակարգերից ինքնաշխատ եղանակով ստացվող և կիրառվող տեղեկատվության (տվյալների) շրջանակի ընդլայնման, կենսաթոշակային ապահովության և պետական նպաստների բնագավառի կառավարման համակարգի արդյունավետության բարելավման նպատակով: 2021 թվականին երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող մայրության, երեխայի ծննդյան միանվագ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափերի փոփոխություն չի նախատեսվում:

Շրջակա միջավայր

Հիմնական ռազմավարության նպատակները և գերակա վերջնական արդյունքներն են՝

- ✓ Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում
- ✓ Ազդակիր համայնքներում բարելավված շրջակա միջավայր
- ✓ Բնական պաշարների և կենսաբազմազանության վերարտադրության աճի ապահովում
- ✓ Կայուն կառավարվող անտառային տարածքների աճ

✓ Մշտական և ժամանակավոր ցուցահանդեսների միջոցով հավաքածուները ներկայացնել հանրությանը և իրականացնել բնապահպանական քարոզչություն

Շրջակա միջավայրի ոլորտի զարգացման կարևորագույն նպատակների իրագործման շրջանակներում 2021 թվականին ՀՀ կառավարության կողմից կիրականացվեն հետևյալ ծրագրերն ու միջոցառումները.

«Բնապահպանական ծրագրերի իրականացում համայնքներում» ծրագրի շրջանակներում իրականացվելու է «Բնապահպանական սուբվենցիաներ համայնքներին» միջոցառումը:

«Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում» ծրագրի շրջանակներում իրականացվելու են ներքոհիշյալ միջոցառումները՝

- Սևանա լճի համալիր ծրագրով նախատեսված համապատասխան միջոցառումների կատարում,

- 2021 թվականին բյուջետային հատկացումները նպատակաուղղվելու են հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների («Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկեր, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետարգելոցներ, «Սոսիների պուրակ», «Խուստուփ», «Զանգեզուր» և «Զիկատար» պետական արգելավայրեր, դենդրոպարկեր և բնության հատուկ պահպանվող այլ տարածքներ) պահպանությանը, անտառային տարածքների խնամքի և բնապահպանական այլ աշխատանքների և գիտական ուսումնասիրությունների իրականացմանը, ինչպես նաև Կովկասյան տարածաշրջանային կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի վարձակալության ծառայությունների ֆինանսավորմանը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում իրականացվելու են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն» ու «Հիդրոօդերևութաբանության, շրջակա միջավայրի մոնիտորինգ և տեղեկատվության ապահովում» միջոցառումները, որոնց շրջանակներում իրականացվելու է նաև թափոնների ուսումնասիրության աշխատանքներ:

«Անտառների կառավարում» ծրագրի շրջանակներում իրականացվելու են ներքոհիշյալ միջոցառումները՝

- «Անտառների կադաստրի վարում»,
- «Անտառների վնասակար օրգանիզմների դեմ պայքար»,
- «Անտառպահպանական ծառայություններ»,
- «Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ»,
- «Անտառկառավարման պլանների կազմում»:

«Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն» ծրագրի շրջանակներում իրականացվելու են «Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն» ու «Կենդանաբանական այգու ցուցադրություններ» միջոցառումները:

2021 թվականի ընթացքում «Անտառների կառավարում» ծրագրով նախատեսվում է իրականացնել «Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ» ու «Անտառկառավարման պլանների կազմում» կապիտալ բնույթի միջոցառումները:

Բյուջեների կազմման բնագավառ

Պետական կառավարման համակարգում պատասխանատվության համախմբման և ռեսուրսների դիմաց առավելագույն արդյունքի ստացման նպատակով պետական բյուջեի կազմման բնագավառում իրականացվում են մի շարք քայլեր, որոնց իրագործումը թույլ կտա ապահովել հանրային կառավարման թափանցիկության, հաշվետվողականության և

հսկողության բարձրացումը, ինչպես նաև պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավումը՝ հանրային բարիքի արդյունավետ, օգտավետ և խնայողաբար հասցեական օգտագործման հաշվին: Մասնավորապես՝

- հարկաբյուջետային կարգապահության և ֆինանսական համապատասխանության ապահովման նպատակով ՀՀ կառավարության 28.11.2019թ. N 1716-Լ որոշմամբ հաստատվել է «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների» ռազմավարությունը: Վերջինիս գործողությունների ծրագրով նախատեսված են 27 ոլորտների 56 թիրախների ուղղությամբ թվով 93 միջոցառումներ: Ռազմավարության բազմատար և բազմապրոֆիլ միջոցառումների կատարումը 2019-2023 թվականներին մեծապես կբարձրացնի պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը՝ հարկաբյուջետային գործիքների ազդեցության շրջանակը և դրանց թափանցիկությունը,

- ՖՆ կողմից նախաձեռնված բյուջետային ծրագրերի ծախսակազմման ավտոմատացված համակարգի մշակման և թեստավորման աշխատանքները ավարտվել են 2019 թվականի դեկտեմբերին, համակարգն ամբողջությամբ կփորձարկվի սույն թվականի դեկտեմբերին՝ 2021 թվականի բյուջեի հիման վրա: Համակարգը Հայտատու մարմիններին թույլ կտա առցանց ներկայացնել բյուջետային ֆինանսավորման հայտերի բաղկացուցիչ մաս կազմող ծախսերի հաշվարկ-հիմնավորումները, ամփոփել ստացված հայտերի տվյալներն ըստ ծրագրային, գործառնական և տնտեսագիտական դասակարգիչների՝ թույլ տալով անհրաժեշտ մանրամասնությամբ ստանալ ծրագրերի/միջոցառումների ցուցանիշները:

-ՖՆ կողմից նախաձեռնվել են ՄԺԾԾ և տարեկան բյուջեի կազմման մեկ միասնական գործընթացի ապահովման համար իրավական հիմքերի ստեղծման և մեթոդաբանության մշակման աշխատանքներ:

-2021-2023թթ. ՄԺԾԾ և 2021թ. բյուջետային հայտերի կազմման և ներկայացման մեթոդական ցուցումներն արդեն իսկ պարունակում են պետության պարտադիր պարտավորություններից բխող ծրագրերի/ միջոցառումների նույնականացման և հաշվառման մեթոդաբանություն:

- 2021թ. պետական բյուջեի մասին օրենքն ընդունելուց հետո նախատեսվում է 2021թ քաղաքացու բյուջեի հրապարակում: Այդ նպատակով մշակվել է պետական մարմինների կողմից քաղաքացու բյուջեի ոլորտային նախագծերի կազմման մեթոդական ցուցումները, որոնք տեղադրվել են ՀՀ ՖՆ պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև պաշտոնապես տրամադրվել է հանրային իշխանության մարմիններին:

-2021թ. պետական բյուջեի մշակման գործընթացում ամբողջապես կներդրվեն գենդերային զգայուն բյուջետավորման տարրերը: Այդ նպատակով մշակվել է «Գենդերային զգայուն բյուջետային ծրագրերի սահմանման» մեթոդական ձեռնարկը: ՀՀ կառավարությունը 19.09.2019թ. N 1334-Լ որոշմամբ հաստատել է 2019-2023թթ. գենդերային քաղաքականության ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը, որը պետք է արտացոլվի պետական բյուջեում՝ ապահովելով սերտ կապ ՀՀ կառավարության ռազմավարությունների և պետական բյուջեի միջև: Ելնելով այս սկզբունքից՝ բյուջետային ծրագրերը, միջոցառումները, դրանց նպատակները, նկարագրությունները և արդյունքային ցուցանիշները պետք է սերտորեն կապված լինեն նաև գենդերային քաղաքականության ռազմավարության միջոցառումների, նպատակների, գերակայությունների և արդյունքների հետ:

-Պետական մարմինների բյուջետային հայտերի շուրջ հանրային քննարկումների գործընթացն ապահովելու նպատակով մշակվել է պետական մարմինների բյուջետային ծրագրերի մշակման գործընթացին հանրային մասնակցության ապահովման մեթոդական ցուցումներ (տեղադրվել է ՀՀ ՖՆ պաշտոնական ինտերնետային կայքում և տրամադրվել բոլոր պետական մարմիններին):

Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեություն

Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնած հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում իրականացվող բարեփոխումների շրջանակում՝ 2019 թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել և 2020 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ են մտել «Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքները: Ընդունված օրենսդրական փաթեթով պետական կարգավորման որոշակի գործառույթներ պատվիրակվել են մասնագիտացված կառույցներին՝ ներդնելով մասնագիտացված կառույցներ–հանրային վերահսկողության խորհուրդ մոդելը: 2021 թվականի ընթացքում նախատեսվում է շարունակել և ամբողջականացնել վերը նշված օրենքներով նախատեսված կառուցակարգերի ներդրման աշխատանքները:

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտում՝ 2021 թվականի ընթացքում շարունակվելու է հանրային հատվածի հաշվապահների որակավորման գործընթացը՝ հաշվապահի որակավորման քննությունների կազմակերպման միջոցով: Միաժամանակ, շարունակվելու են հանրային հատվածի կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվապահական հաշվառման գրանցամատյանների և ֆինանսական հաշվետվությունների փաթեթների մշտադիտարկման աշխատանքները, որոնց արդյունքում վեր հանված անճշտությունների և սխալների ուղղման ուղղությամբ մասնագիտական տեղեկատու պարբերականների միջոցով գործնական առաջարկներ են ներկայացվելու հանրային հատվածի կազմակերպություններին:

Եկամուտների քաղաքականության ոլորտ

Եկամուտների քաղաքականության ոլորտում իրականացվելիք միջոցառումները բխելու են ՀՀ կառավարության ծրագրից, Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությունից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հարկային բարեփոխումների իրականացման հայեցակարգով ամրագրված հայեցակարգային դրույթներից:

ՀՀ կառավարության ծրագրում ամրագրված ծրագրային դրույթների իրագործման մասով աշխատանքների մի մասն արդեն իսկ կատարված է: Մասնավորապես, 2020 թվականի հունիսի 25-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով համակարգային փոփոխություններ են կատարվել անշարժ գույքի հարկման ոլորտում: Կատարված փոփոխությունների հիմնական նպատակը անշարժ գույքի, այդ թվում՝ տեսանելի հարստության և բարձրարժեք գույքի համարժեք հարկումն է՝ հիմքում ունենալով շուկայական արժեքին մոտարկված արժեքը՝ որպես հարկման բազա:

Հարկային քաղաքականության ոլորտում Կառավարության առաջիկայում կատարվելիք աշխատանքներն ուղղված են լինելու՝

- հարկային արտոնությունների շրջանակի և հարկային ծախսերի կրճատման ուղղությամբ վերլուծությունների իրականացմանը և ոչ արդյունավետ գնահատված հարկային արտոնությունները վերացնելու նպատակով առաջարկությունների ներկայացմանը,

- շրջանառության հարկի գծով հարկային բեռի վերանայմանը՝ նպատակ ունենալով վերացնել հարկման տարբեր համակարգերի միջև գոյություն ունեցող հարկային բեռի տարբերությունները,

- գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործարքների փաստաթղթավորման հետ կապված խնդիրների կարգավորմանը՝ նպատակ ունենալով ստեղծել գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործարքների փաստաթղթավորման համար նոր՝ գործնականում կիրառելի փաստաթղթավորման համակարգ,

- տնտեսական շարժառիթների հիման վրա գործող՝ եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրմանը, որի շրջանակներում ֆիզիկական անձինք, հարկման բազայից որոշակի նվազեցումներ կատարելու և տարվա ընթացքում այսպես կոչված «ավել վճարված» հարկի գումարը հետ ստանալու իրենց իրավունքից օգտվելու համար, տարեկան մեկ անգամ կներկայացնեն իրենց համախառն եկամուտների (այդ թվում՝ տարվա ընթացքում հարկային գործակալի կողմից հարկված) վերաբերյալ համախմբված հայտարարագիր:

Կապիտալի շուկայի զարգացում

Հայաստանի կապիտալի շուկայի զարգացման ուղղությամբ թիրախավորված, կոորդինացված և արդյունավետ գործողություններ իրականացնելու համար 2021 թվականին նախատեսվում է.

- վերլուծել ներդրումային և բանկային ծառայությունների առավել խիստ գործառնական տարանջատման առավելությունները և թերությունները, առաջարկել տարանջատման իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմներ,

- առաջնային դիլերների հետ կնքվող համաձայնագրի վերանայում՝ առաջնային և երկրորդային շուկաներում մասնակիցների իրավունքներն ու պարտավորությունները հավասարակշռելու և լրացուցիչ խթաններ նախատեսելու համար,

- աշխատանքներ ռեպո շուկայի խորացման, այդ թվում՝ ֆինանսական շուկայի մասնակիցների հետ գլոբալ գլխավոր ռեպո համաձայնագրերի (ICMA Global Master Repurchase Agreements) ներդրման ուղղությամբ, որը հնարավորություն կտա ստանդարտացնել ռեպո գործառնությունների պայմանագրերը,

- խոշոր համայնքների (մասնավորապես՝ Երևան քաղաքի) կողմից պարտատոմսերի շուկայի միջոցով ֆինանսավորման իրականացում,

- աճի պոտենցիալ ունեցող պետական մասնակցությամբ մի քանի ընկերությունների կամ դրանց բաժնետոմսերի առնվազն մի մասի մասնավորեցում ֆոնդային բորսայում հրապարակային առաջարկի միջոցով,

- խոշոր ընկերությունների կողմից կապիտալի շուկայի միջոցով ներդրումների ներգրավմանն աջակցություն,

- Standard&Poor's-ի սուվերեն վարկանիշի ստացում,

- հեջավորման հնարավորությունների ընդլայնման համար ածանցյալների շուկայի զարգացման ուղղությամբ աշխատանքներ,

- կապիտալի շուկայի, դրա ռիսկերի վերաբերյալ կրթական և իրազեկման աշխատանքների իրականացում,

- քրաուդֆանդինգի կարգավորումների ներդրում,

- թափանցիկության բարձրացում՝ թողարկողների, արժեթղթերի, արժեթղթերով գործարքների վերաբերյալ առավել ամբողջական տեղեկատվության հրապարակման միջոցով,

- միջազգային հարթակներում երկրի ներդրումային միջավայրի ներկայացման, խթանման և ճանաչելիության բարձրացման ծրագրի մշակում,

- աշխատանքներ իրականացնել օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ ՀՀ շուկա ներգրավելու ուղղությամբ (այդ թվում՝ կարգավորումների վերանայման և երկրի խթանման միջոցառումների իրականացման միջոցով):

Պետական եկամուտների վարչարարություն

Պետական եկամուտների վարչարարության ոլորտում իրականացվելիք միջոցառումները բխելու են ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրից, ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի N 1212-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրից և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագրից: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով տնտեսության վրա COVID-19 կորոնավիրուսային համավարակի ունեցած բացասական ազդեցությունը և դրա մեղմմանն ուղղված կառավարության ձեռնարկած միջոցառումները (այդ թվում՝ նաև հարկման մեխանիզմների վերանայման միջոցով), կառավարությունն առաջնային է համարում հարկային կարգապահության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Այդ նպատակով, հաշվի առնելով ձեռք բերված փորձը, վարչարարական աշխատանքները կկազմակերպվեն.

- հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների թվայնացման ընդլանման միջոցով,

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հաստատված հարկային և մաքսային կարգապահության բարելավման ռազմավարական ծրագրին համահունչ՝ հարկային վարչարարությունն առավել ռիսկային հարկ վճարողների խմբերին կամ տնտեսական գործունեության ոլորտներին ուղղելու միջոցով: Արդյունքում իրականացվող միջոցառումներն ուղղված են լինելու հարկ վճարողների խմբերի կամ տնտեսական գործունեության ոլորտների ուղղությամբ ռիսկերի բացահայտմանն ու այդ ռիսկերի վերլուծության արդյունքներով ռիսկային հարկ վճարողների խմբերի կարգապահության մակարդակի բարձրացմանը:

2021 թվականի ընթացքում պետական եկամուտների վարչարարության ոլորտում նախատեսվում է՝

Վարչարարության արդյունավետության բարձրացման և հարկային ճեղքի կրճատման նպատակով իրականացնել աշխատանքներ՝ ուղղված ինչպես կամավոր կարգապահության բարձրացմանը, այնպես էլ հարկային և մաքսային իրավախախտումների կանխարգելմանն ու այդ խախտումների համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի ապահովմանը: Նշված ուղղությունների իրագործման նպատակով նախատեսվում է.

- զարգացնել ռիսկերի կառավարման համակարգի կարողությունները՝ ռիսկերի շրջանակի ընդլայնման և դրանց բացահայտման վերլուծական գործիքների ավտոմատացման միջոցով,

- կատարելագործել և ընդլայնել ռիսկային չափանիշներով հարկ վճարողների գնահատման և ինքնաշխատ ծանուցման համակարգերը,

- մաքսային գործառնությունների պարզեցման միջոցով ապահովել մաքսային հսկողության առավել արագ և դյուրին իրականացումը,

- ԵԱՏՄ հարթակում ստանձնած պարտավորություններին համապատասխան՝ ակտիվորեն գործարկել ԵԱՏՄ շրջանակներում ապրանքների հետագծելիության ապահովման մեխանիզմները,

- կատարելագործել էլեկտրոնային առևտրի վերահսկողության մեխանիզմներն ու կարողությունները,

- ներդնել օրինապահության և կամավոր կարգապահության խրախուսական համակարգեր,

- բարելավել միջազգային համագործակցության շրջանակներում հարկային տեղեկատվության փոխանակման գործընթացները և համապատասխանեցնել դրանք միջազգային ստանդարտներին:

Հարկ վճարողներին սպասարկման և որակյալ ծառայությունների մատուցման, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման անվտանգության ապահովման նպատակով կատարելագործել կառավարման համակարգերը՝ դրանց հնարավորինս թվայնացման միջոցով: Նշված ուղղությունների իրագործման նպատակով նախատեսվում է.

- զարգացնել և արդիականացնել սերվերային և օպերացիոն համակարգերը՝ օպտիմալացնելով տեղեկատվական շտեմարանների կառուցվածքը,

- կատարելագործել հարկ վճարողների սպասարկման կենտրոնների հաղորդակցման համակարգերը,

- ներդնել հարկային ստուգումներին և ուսումնասիրություններին վերաբերող բոլոր փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով փոխանակման համակարգը,

- զարգացնել մեծ ծավալի տվյալների (Big Data) վերլուծական և մեքենայական ուսուցման (machine learning) գործիքակազմերը,

- ավտոմատացնել պետական գնումների գործընթացին առնչվող պետական եկամուտների կոմիտեի գործառույթները,

- ստեղծել հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձի էլեկտրոնային հարթակ,

- նախագծել և ներդնել էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր և գրքեր (e-invoicing) համակարգի «վեբ» տարբերակը,

- ԵԱՏՄ շրջանակներում մաքսային ընդհանուր գործընթացների իրականացման և տեղեկատվության փոխանակման համար ներդնել և արդիականացնել ավտոմատացված համակարգեր,

- «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի ամբողջական կիրառմամբ ստեղծել էլեկտրոնային կառավարման համակարգերի և թվային լուծումների վրա հիմնված ԱՏԳ մասնակիցների սպասարկման կենտրոններ: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև ստորագրված «Մեղրիի սահմանային անցակետի ծրագիր» վարկային և դրամաշնորհային համաձայնագրերի շրջանակներում արդիականացնել Մեղրիի սահմանային անցակետը,

- կատարելագործել մաքսային վճարների վարչարարությունը՝ հնարավորություններ ստեղծելով էլեկտրոնային համակարգերի միջոցով վճարումների կատարման համար,

- կշեռքների համակարգը ինտեգրել մաքսային մարմնի միասնական տեղեկատվական համակարգին՝ ներառելով մաքսային պահեստների կշեռքները,

- ապահովել մաքսակետերի տեխնիկական հագեցվածությունը ռենտգենյան, մաքսային հսկողության և օպերատիվ հետախուզական միջոցառումների անցկացման համար անհրաժեշտ սարքավորումներով,

- նախագծել և ներդնել էքսպրես-բեռների կառավարման ավտոմատացված համակարգ և այն ինտեգրել մաքսային մարմնի ավտոմատացված այլ համակարգերին:

Կարևորելով բանիմաց, մասնագիտական և գործնական գիտելիքներով ու հմտություններով օժտված անձնակազմի դերը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գործառույթներն ու նախատեսվող բարեփոխումներն իրականացման գործում՝ միջոցներ ձեռնարկել աշխատակիցների մասնագիտական կարողությունների շարունակական բարձրացման, ինչպես նաև աշխատանքային անվտանգ և բարենպաստ միջավայրի ապահովման ուղղությամբ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գործունեության նկատմամբ վստահության բարձրացման նպատակով իրականացնել հասարակության հետ երկխոսության և փոխշահավետ համագործակցության ամրապնդմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես՝ մշտապես թարմացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կայքէջում ներկայացվող տեղեկատվությունը՝ այն դարձնելով հարկ վճարողների կողմից պահանջված, վստահելի և օգտակար տեղեկատվական աղբյուր, ինչպես նաև ԶԼՄ-ներով և տեղեկատվական այլ հարթակներով լուսաբանել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գործունեությունը:

Վերը նշված միջոցառումների իրականացմամբ բարձրացնել հարկային եկամուտների հավաքագրման արդյունավետությունը և ապահովել 2021 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված հարկային եկամուտները:

Պետական գույքի կառավարման ոլորտ

Կառավարության քաղաքականությունը պետական գույքի կառավարման ոլորտում նպատակ ունի պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման շնորհիվ նպաստել պետական գույքի մասնավորեցումից, օտարումից, օգտագործումից և սպասարկումից ներկայումս ստացվող և ապագայում՝ ներդրումների իրականացման շնորհիվ եկամուտների և սոցիալական արդյունքների ավելացմանը և գույքի հանրային օգտակարության և տնտեսական շրջանառության մեջ ներգրավվածության բարձրացմանը:

Պետական գույքի կառավարման ոլորտում կարևորվում է պետական գույքի կառավարման հայեցակարգից բխող իրավական ակտերի մշակումը և իրագործման ապահովումը, այդ թվում՝ անշարժ գույքի վիճակի վերաբերյալ դիտարկումների (մոնիթորինգի) ներդրումը, պետական գույքի օտարման գործընթացներում հրապարակայնություն և թափանցիկություն ապահովող վաճառքի կազմակերպման ժամանակակից ձևերի և մեթոդների կիրառումը, պետական կառավարման համակարգի մարմինների տիրապետմանը և օգտագործմանը հանձնված (ամրացված), պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքի վաճառքի գործընթացի միասնական կանոնակարգումը, անհատույց օգտագործման տրամադրման գործընթացում մրցակցային դաշտի ապահովումը, որի արդյունքում կվերացվեն պետական գույքի անհատույց օգտագործման հանձնելու գործընթացում վարչարարական քաշքշուկները, կսահմանվեն տարածքների անհատույց տրամադրման կիրառելի, արդար և բոլոր շահառուների գործունեության արդյունավետության բարձրացմանը նպաստող և գործունեության համար լիարժեք աջակցություն ապահովող

չափանիշներ և պայմաններ, բոլոր սուբյեկտների համար հստակ և միասնական պահանջներ, որի շնորհիվ կբարձրացվի գործընթացի արդյունավետությունը և ծառայությունների մատուցման որակը, ինչպես նաև կշտկվեն պետական գույքի մրցույթով մասնավորեցման գործընթացի առկա բացթողումները:

Ընդհանուր առմամբ օրենսդրական բարեփոխումների նպատակով 2021 թվականի ընթացքում կշարունակվեն պետական գույքի կառավարման ոլորտում մեթոդական բնույթի օրենսդրական փոփոխությունները, որոնց հիմնական նպատակն է կանոնակարգել, հստակեցնել կառավարման գործառույթները և լրացնել այն բացերը, որոնք առաջանում են նոր իրավական ակտերի կիրառման արդյունքում:

Անշարժ գույքի կադաստր

Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման համակարգի արդիական և հասարակության տեղեկատվական պահանջները բավարարելու նպատակով կառավարությունը կփորձի ամբողջապես անցնել առցանց ծառայությունների ինքնաշխատ համակարգի՝ հրաժարվելով թղթային փաստաթղթաշրջա-նառությունից: Նշված փոփոխությունները նպաստելու են տեղեկատվության տրամադրման գործընթացի դյուրացմանը, առցանց տրամադրվող տեղեկատվության նկատմամբ պահանջարկի խթանմանը, տրամադրման ժամկետների կրճատմանը և պահպանման ծախսերի զգալի նվազեցմանը:

Անշարժ գույքի հարկման համակարգի բարեփոխումների շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում կներդրվի անշարժ գույքի միասնական գնահատման և հարկման համակարգ, որը հնարավորություն կընձեռի անշարժ գույքի հարկով արդարացի հարկման մեխանիզմների ներդրմամբ ապահովել անշարժ գույքի շուկայի գնային իրավիճակի վերաբերյալ վերլուծական տեղեկատվական բազայի ստեղծումը, խթանել պարապուրդում գտնվող գույքի մասնակցությունը անշարժ գույքի շուկայում և նպաստել ավելացված արժեքի աճին, ինչպես նաև նպաստել անշարժ գույքի հարկման առավել արդարացի դաշտի ձևավորմանը, վարչարարության պարզեցմանը:

Բարեփոխումներ են նախատեսվում իրականացնել նաև գույքի շուկայական գնահատման ոլորտում, մասնավորապես՝ օրենսդրական փոփոխություններով կկարգավորվի ոչ միայն անշարժ գույքի, այլ նաև գույքի մյուս տեսակների շուկայական գնահատումը, այդ թվում՝ շարժական գույքի, բիզնեսի, ոչ նյութական ակտիվների և այլն: Նշված բարեփոխումները հնարավորություն կստեղծեն գնահատման ոլորտի ինքնակարգավորման ինստիտուտի ներդրման, ինչպես նաև անշարժ գույքի գործակալների գործունեության կարգավորման ու զարգացման համար:

Նշված ռազմավարության պահանջների խթանումը գեոդեզիական, քարտեզագրական և երկրատեղեկատվական համակարգի հիման վրա Հայաստանի Հանրապետության ինտեգրված, միասնական կադաստրի ստեղծումն է, որի նպատակը տեղեկատվական տեխնոլոգիաների նորագույն լուծումներով ոլորտի համակարգի արդիականացումն է, որն էլ իր հերթին կնպաստի տարածական որոշումների օպերատիվության բարձրացմանը և հողային քաղաքականության պատշաճ և արդյունավետ վարմանը:

Շարունակվում են իրականացվել Հայաստանի Հանրապետության քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի ստեղծման աշխատանքները, որոնք կհանդիսանան տնտեսության տարբեր բնագավառներում աշխատանքների արդյունավետության բարձրացման կարևոր նախադրյալ:

Ստեղծված քարտեզագեոդեզիական հիմքով երկրատեղեկատվական համակարգը հանդիսանալու է գերատեսչական տարբեր ոլորտների, այդ թվում՝ քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերական, անշարժ գույքի կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, գույքահարկի և գնահատման բազաների ճշգրտման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության, արտակարգ իրավիճակների ժամանակ օպտիմալ և օպերատիվ որոշումների կայացման, հանրապետության մարզերի, համայնքների և առանձին տարածքների զարգացման ու արդյունավետ պլանավորման համար որպես բազա:

Հասարակական կարգի պահպանություն

Ոստիկանությունում մեկնարկած բարեփոխումների նպատակը ժամանակակից մարտահրավերներին դիմակայող, մասնագիտացված ու տեխնիկապես հագեցած, բարեվարք և հարգանքի արժանի ոստիկանության վերափոխումն ու ժողովրդավարական իրավակարգին բնորոշ նոր ոստիկանի կերպարի ստեղծումն է:

Նշված նպատակադրումների իրականացմանն ուղղված միջոցառումները, որոնք ներառվելու են ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունում և դրա իրականացման 2020-2022 թվականների գործողությունների ծրագրում, հանդիսանալու են ոստիկանության գործունեության ոլորտում առաջիկա տարիներին նախատեսվող բոլոր բարեփոխումների հիմքը: Մասնավորապես նախատեսվում է՝

- վերանայել ու ըստ մասնագիտական կարիքների բարեփոխել ոստիկանության ծառայողների պատրաստման ու շարունակական մասնագիտական վերապատրաստման համակարգը՝ թե ծրագրերի բովանդակության և թե պատրաստման մեթոդի տեսանկյունից,
- ստեղծել ոլորտի քաղաքականություն մշակող և իրականացնող, հաշվետվողականության ու քաղաքացիական վերահսողության մեխանիզմներ ունեցող պետական կառավարման մարմին, ինչպես նաև իրականացնել ոստիկանության ծառայության կառուցվածքային ու գործառութային վերանայում՝ ըստ բարեփոխումների հիմնական ուղղություններով իրականացվելիք փոփոխությունների,
- ապահովել բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական բազան,
- հանրային երկխոսություն իրականացնել նաև մասնագիտացված շրջանակների հետ ոչ միայն բարեփոխումների պլանավորման, այլև իրականացման փուլում,
- հանրությանը մատչելի ու ժամանակին ներկայացնել բարեփոխումների ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև հարգանքի արժանի նոր ոստիկանի կերպարը,
- բարձրացնել հանրային ծառայության այս տեսակի նկատմամբ գրավչությունը՝ նաև նախատեսելով սոցիալական լրացուցիչ երաշխիքներ՝ պետության բոլոր մարզերում ու ծառայության բոլոր տեսակներում պրոֆեսիոնալների համաչափ ներգրավման նպատակով,
- արդյունավետ համագործակցության հիմքեր ստեղծել կամ զարգացնել տարածաշրջանային ու գլոբալ մակարդակներում գործող միջազգային մասնագիտացված կազմակերպությունների ու ցանցերի հետ՝ միտված լավագույն փորձառության շարունակական փոխանակմանը, ինչպես նաև միասնական ջանքերով կազմակերպված հանցավորության դեմ արդյունավետ պայքարին:

Նշված ռազմավարական նպատակադրումների իրականացման առաջին քայլը հանդիսանալու է տուժողներին արագ օգնության հասնելու, որակյալ, անհետաձգելի բժշկական, հոգեբանական օգնություն ցուցաբերելու, իրավախախտումները կանխելու ու խափանելու, սահմանային ռեժիմի կառավարումն իրականացնող, իրավախախտների հայտնաբերմանն աջակցող, նրանց կողմից ցուցաբերվող դիմադրությանը համարժեք ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ կիրառելու հմտություններ ունեցող Պարեկային ծառայության ստեղծումը, որի կառավարումը նախատեսվում է իրականացնել ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների կառուցվածքում ներկայումս գործող հերթապահ մասերի հենքի վրա ստեղծվելիք Օպերատիվ կառավարման կենտրոնների (ՕԿԿ) միջոցով:

Պարեկային ծառայության հիմնական գործառույթներն են հանդիսանալու.

- հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգության ապահովումը,
- ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը,
- իրավախախտումների նախականխումը, կանխումը և խափանումը,
- հետախուզվող հանցագործների, անհետ կորած անձանց և հետախուզվող տրանսպորտային միջոցների հայտնաբերումը,
- վարչական իրավախախտումների արձանագրումն ու փաստաթղթավորումը,
- երթևեկության տեխնիկական և կազմակերպական կարգավորումը խցանումների, զանգվածային հասարակական միջոցառումների, դժբախտ պատահարների, այդ թվում՝ տեխնածին աղետների և արտակարգ այլ իրավիճակների ընթացքում,
- աջակցությունը հավաքը սպասարկող ոստիկանական ուժերին,
- հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ դիմումների ու հաղորդումների ընդունումը,
- իրավախախտումների ու պատահարների մասին հաղորդումներին ու ահազանգերին օպերատիվ արձագանքումն ու դեպքի վայրում հաղորդումների ստուգումը,
- դեպքի վայրի պահպանությունը,
- ականատես վկաների հայտնաբերումը,
- անհետաձգելի քննչական գործողություններին և օպերատիվ հետախուզական միջոցառումներին աջակցությունը, ներառյալ իրավախախտում կատարած անձի հետապնդումն ու հայտնաբերումը,
- սահմանային անցակետերում սահմանային ռեժիմի պահպանությունը,
- տուժած անձանց անհետաձգելի բժշկական, հոգեբանական օգնության ցուցաբերումը,
- քաղաքացիներին աջակցության ցուցաբերումը,
- բնակչությանն անհետաձգելի օգնություն ցուցաբերող ծառայություններին աջակցելը,
- իրավախախտումների դեմ պայքարի ոլորտում ոստիկանության ստորաբաժանումների և շահագրգիռ այլ մարմինների հետ համագործակցությունը:

ՀՀ ռազմավարական նշանակության օբյեկտների և ենթակառուցվածքների անվտանգության պատշաճ ապահովման, ինչպես նաև ՀՀ ներքին ու արտաքին սպառնալիքներին դիմագրավելու կարողությունների բարձրացման համատեքստում ոստիկանության կողմից նախապատրաստվել է «ՀՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի և շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկերը հաստատելու մասին և ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի թիվ 1008-Ն

որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է ամբողջացնել պետական պահպանության ենթակա ռազմավարական նշանակության կարևորագույն օբյեկտների ցանկը: Ներկայում ՀՀ-ում առկա մի շարք ռազմավարական նշանակության կարևորագույն օբյեկտներ դուրս են մնացել ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի թիվ 1008-Ն որոշմամբ հաստատված հավելվածներից, ընդ որում, դրանց մեծ մասն իրենց տեսակով և բնույթով չեն տարբերվում որոշման հավելվածներում ընդգրկվածներից: Դրանց մի մասը ներկայումս պահպանվում են մասնավոր պահնորդական կազմակերպությունների, մի մասը՝ տնօրինող կազմակերպությունների ոչ մասնագիտացված ուժերի /պահակների/ կողմից, իսկ մի մասը չեն պահպանվում ընդհանրապես: Նախագիծը գտնվում է արտաքին շրջանառության փուլում:

Այս համատեքստում նաև նախատեսվում է ոչ ռազմավարական նշանակության օբյեկտների պահակային պահպանությունը աստիճանաբար թողնել մասնավոր պահնորդական կազմակերպություններին, իսկ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության ստորաբաժանումները մասնավոր օբյեկտների պաշտպանությունը կիրականացնեն բացառապես տեխնիկական միջոցներով՝ ոստիկանության ստորաբաժանումներին միացված ահազանգման համակարգերով: Ընդ որում, տեխնիկական միջոցներով մասնավոր օբյեկտներից ստացված ահազանգերի արձագանքմանն ու «տաք հետքերով» սեփականության դեմ ոտնձգող անձանց հետապնդման աշխատանքներում օգտագործվելու են նոր ստեղծվող պարեկային ծառայության կարգախմբերի և ՕԿԿ-ի հնարավորությունները:

Ոստիկանության կողմից պաշտպանության ենթակա անձանց նկատմամբ պաշտպանության միջոցներն իրականացնելու հետ կապված հարաբերությունները կանոնակարգող «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ մշակվել և շրջանառվել է «Պաշտպանության ենթակա անձանց նկատմամբ ոստիկանության կողմից պաշտպանության միջոցների իրականացման կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագծի ընդունումից հետո ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությանն է վերապահվելու քրեական դատավարության մասնակիցների, պետական պաշտոնատար անձանց, օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ անձանց անձնական անվտանգության պաշտպանության ապահովումը, որի կազմում նախատեսվում է ստեղծել նշված գործառույթների իրականացումն ապահովող մասնագիտական ստորաբաժանում:

Խոշտանգումները կանխելու և բացահայտելու նպատակով ոստիկանության շենքերի մուտքերին և ելքերին, ինչպես նաև ոստիկանության ստորաբաժանումների՝ հարցաքննության համար նախատեսված տարածքներում տեսաձայնագրող տեխնիկական միջոցներ տեղադրելու և տեսաձայնագրում իրականացնելու համար իրավական հիմքեր նախատեսող «Ոստիկանության մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ պիլոտային ծրագրի շրջանակներում նման համակարգեր արդեն իսկ ներդրվել են ոստիկանության Երևան քաղաքի և մի շարք մարզային վարչությունների ենթակա որոշ տարածքային բաժիններում: Գործընթացը պետք է ավարտին հասցվի հիշյալ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 3 տարվա ընթացքում:

Գենդերազգայուն բյուջե

Շարունակվում են պետական կառավարման համակարգի բարեփոխումները բյուջետային ոլորտում: Սկսած 2020թ. ՀՀ պետական բյուջեից՝ քայլեր են ձեռնարկվում ծրագրային բյուջետավորման շրջանակներում գենդերազգայուն բյուջետավորման ներդրման ուղղությամբ: Սա ենթադրում է գենդերային հիմնահարցերի, խնդիրների և հավասար հնարավորությունների ապահովման կարևորումը ՀՀ պետական բյուջեի պլանավորման և կատարման բոլոր փուլերում՝ սկսած իրավիճակային վերլուծությունից մինչև ծրագրերի ու միջոցառումների և նրանց ֆինանսական ու ոչ-ֆինանսական ցուցանիշների պլանավորումն ու կատարման մոնիտորինգը:

2019 թվականի սեպտեմբերի 19-ին ՀՀ կառավարությունն ընդունեց ՀՀ 2019-2023թթ. գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը (ՀՀ կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 19-ի N 1334-Լ որոշում): Ծրագրի գերակայություններն են

1) Կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի կատարելագործում, կանանց և տղամարդկանց հավասար մասնակցություն կառավարման ոլորտում և որոշումների ընդունման մակարդակում,

2) Սոցիալ-տնտեսական ոլորտում գենդերային խտրականության հաղթահարում, կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնում,

3) Կանանց և տղամարդկանց լիարժեք ու արդյունավետ մասնակցություն և հավասար հնարավորությունների ընդլայնում կրթության ու գիտության ոլորտում,

4) Առողջապահության ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ընդլայնում,

5) Գենդերային խտրականության կանխարգելում:

Գենդերային զգայուն բյուջետավորման (ԳԶԲ) մոտեցման ներդրումը փորձարկվեց 2020թ. պետական բյուջեի պատրաստման գործընթացում: Մասնավորապես, ՀՀ ԱՍՀՆ «Զբաղվածություն» և «Ընտանիքներին՝ կանանց և երեխաներին աջակցություն» ծրագրերի շրջանակներում մշակվեցին լրացուցիչ միջոցառումներ և գենդերային զգայուն ցուցանիշներ, ինչպես նաև վերանայվեցին վերջնական արդյունքների, նպատակների և միջոցառումների նկարագրությունները՝ հաշվի առնելով ՀՀ գենդերային քաղաքականության ռազմավարությունը և դրանից բխող արդյունքները, ինչպես նաև բյուջետային ծրագրերի, միջոցառումների և դրանց գծով արդյունքային ցուցանիշների սահմանման վերաբերյալ ընդունված ծրագրային բյուջետավորման մեթոդաբանության պահանջները:

2021-2023թթ. ՄԺԾԾ և 2021թ. պետական բյուջեի մշակման գործընթացում գենդերային զգայուն բյուջետավորման տարրերը ներդրվել են ամբողջապես: Այդ նպատակով մշակվել է «Գենդերային զգայուն բյուջետային ծրագրերի սահմանման» մեթոդական ձեռնարկը, որը կցվել է ՀՀ 2021-2023թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2021թ. պետական բյուջեի նախագծերի մշակման շրջանակներում պետական մարմինների բյուջետային հայտերի կազմման և դրանք ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման մեթոդական ցուցումներին: ՀՀ 2019-2023թթ. գենդերային քաղաքականության ռազմավարության գերակայությունները արտացոլվել են ՀՀ 2021թ. պետական բյուջեի նախագծում և դրա շրջանակներում պետական մարմինների կողմից նախատեսվող ծրագրերի և միջոցառումների նպատակներում և արդյունքային ցուցանիշներում: Նշվածը հատկապես վերաբերում է այն պետական մարմիններին, որոնք հանդես են գալիս որպես 2019-2023թթ. գենդերային

քաղաքականության ռազմավարության կամ գենդերային հավասարության / կանանց և երեխաների իրավունքների պաշտապանությանն ուղղված և ՀՀ կառավարության հավանությանն արժանացած այլ ծրագրերի և ռազմավարությունների գործողությունների ծրագրերի համար պատասխանատու մարմիններ: Այսպիսով, ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը գենդերային զգայուն է՝ ներառելով համապատասխան չափելի արդյունքային ցուցանիշներ, որոնք կապված են գենդերային հավասարության ռազմավարության իրականացումն ապահովող ծրագրերի հետ:

ՄԱՍ I - Բ. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

1.1 ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԵՎ ՇՐՋԱՆԱԿ

- Դեռևս 2019թ. վերջին կանխատեսվում էր, որ աշխարհի ավելի քան 170 երկրների տնտեսությունները 2020թ. կաճեն: Մինչդեռ, կորոնավիրուսի համավարակի (COVID 19) ազդեցության գնահատականների ձևավորմանը զուգընթաց վերանայվեցին նաև հենց այդ նույն թվով երկրների տնտեսական զարգացումների կանխատեսումները՝ անկման ուղղությամբ: Ներկայում, ամբողջ աշխարհը շարունակում է կրել արագ տարածված համավարակի բացասական հետևանքները: Այս պայմաններում հատկանշական է, որ զգալի անկում է կանխատեսվում ՀՀ գործընկեր երկրների տնտեսությունների համար, որի էական բացասական ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա անխուսափելի է:
- Արտակարգ դրության և կիրառվող սահմանափակումների պայմաններում ՀՀ-ում նվազում է ինչպես պահանջարկը, այնպես էլ առաջարկը: Առավելապես տուժել են ծառայությունների, շինարարության և մշակող արդյունաբերության ճյուղերը: Այս զարգացումների և ՀՀ գործընկեր երկրների տնտեսական զարգացումների հունիսի կանխատեսումների պայմաններում ՀՀ համար գնահատվող հավանական սպասումը 2020 թվականին 6.0% տնտեսական անկումն է, իսկ 2021 թվականին՝ 4.8% տնտեսական աճը:
- Տնտեսական ակտիվության դանդաղման և թուլացող ներքին ու արտաքին պահանջարկի պայմաններում 2020թ. կանխատեսվում է արտահանման և ներմուծման դոլարային ծավալների անկում, որի պատճառով առևտրային բացասական պակասուրդը կկրճատվի, ինչի արդյունքում ընթացիկ հաշիվը կբարելավվի: 2021թ. ընթացիկ հաշվի պակասուրդը կշարունակի բարելավվել՝ ձգտելով իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին:
- Հարկաբյուջետային կանոններին համահունչ՝ 2020թ. հարկաբյուջետային քաղաքականությունը կլինի խթանող՝ հակազդելու համավարակի հետևանքով առաջացած տնտեսական շոկերին: Ընդ որում, 215 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ում 3.4% հակաճգնաժամային միջոցառումները, այդ թվում՝ կորոնավիրուսի սոցիալ-տնտեսական հետևանքների կանխարգելմանն ուղղված փաթեթի (150 մլրդ դրամ) ամբողջական օգտագործումը, ինչպես նաև հարկային քաղաքականության ոլորտում կատարված բարեփոխումները (շահութահարկի գծով՝ 65 մլրդ դրամ) թույլ կտան մեղմել տնտեսական անկումը: Իսկ 2021թ. տնտեսության վերականգնման պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունը կունենա փոքր զսպող ուղղվածություն՝ պայմաններ ստեղծելով միջնաժամկետում ՀՀ կառավարության պարտքի նվազման և հարկաբյուջետային կայունության ապահովման համար:
- ԿԲ-ն կարճաժամկետ հատվածում կշարունակի վարել խթանող դրամավարկային քաղաքականություն, և, անհրաժեշտության դեպքում, կպահպանի քաղաքականության խթանող դիրքը նաև 2021թ.:

- Պետք է նշել, որ համավարակի տարածման և տևողության մեծ անորոշություններով պայմանավորված, համաշխարհային տնտեսության զարգացման ընթացքը մեծապես կախված է COVID-19 համավարակի հաղթահարմանն ուղղված առողջապահական միջոցառումներից: Այս պայմաններում, անորոշության մեծ աստիճանից ելնելով՝ 2021թ., ինչպես աշխարհի և ՀՀ գործընկերների, այնպես էլ ՀՀ տնտեսական աճի կանխատեսումներում գերակշռում են դեպի ներքև ռիսկերը: Բացի այդ, ՀՀ տնտեսական զարգացումների հետագա ընթացքի մասով էական դերակատարում ունի ՀՀ կառավարության՝ համավարակի տնտեսական հետևանքների կանխարգելմանն ու տնտեսության վերականգմանն ուղղված միջոցառումների ընթացքը:

Աղյուսակ 1.1. 2021թ. պետական բյուջեի մակրոտնտեսական շրջանակ

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	**2017**	**2018**	**2019**	**2020**	**2021**
	փաստ	**փաստ**	**փաստ**	**սպասում**	**ծրագիր**
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	5,564.5	6,017.0	6,569.0	6,247.9	6,720.0
Տնտեսական աճ, %	7.5	5.2	7.6	-6.0	4.8
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	2.1	2.8	1.5	1.2	2.6
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), %	2.6	1.8	0.7	1.9	2.3
Գնաճ (միջին), %	1.0	2.5	1.4	1.2	2.3
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, %					
Արդյունաբերություն	11.8	4.9	8.3	-1.0	5.2
Գյուղատնտեսություն	-5.1	-6.9	-2.6	0.7	3.9
Շինարարություն	2.8	0.6	3.7	-17.6	4.9
Ծառայություններ	10.6	9.1	10.7	-6.9	4.1
Զուտ հարկեր	9.7	8.0	7.1	-10.7	8.7
ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, %					
Վերջնական սպառում	11.6	3.8	11.8	-6.4	4.9
Պետական	-2.1	-3.0	12.5	2.0	6.4
Մասնավոր	14.0	4.8	11.7	-7.7	4.6
Հիմնական միջոցներում ներդրումներ[1]	9.7	4.8	4.4	-12.9	5.3
Պետական	9.9	3.4	38.9	7.8	-10.7
Մասնավոր	9.7	5.1	-2.2	-18.5	11.0
Արտահանում	19.3	5.0	16.0	-20.2	8.8
Ներմուծում	24.6	13.3	12.0	-23.2	6.1
Արտաքին հատված (մլն ԱՄՆ դոլար)					
Ընթացիկ հաշիվ	-173.9	-860.0	-987.5	-711.6	-685.6
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-1,241.5	-1,702.3	-1,828.8	-1415.4	-1480.3
Արտահանում	4,409.1	4,907.2	5,640.7	4,328.5	4,797.2
Փոփոխություն, %	23.7	11.3	14.9	-23.3	10.8
Ներմուծում	5,650.6	6,609.5	7,469.5	5743.9	6277.5

[1] Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումները, քանի որ 2019թ.-ից ՀՀ ՎԿ կողմից պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշռող գործոն կամ այլ կերպ՝ վիճակագրական սխալները ներառվում են դրա մեջ:

Փոփոխություն, %	26.4	17.0	13.0	-23.1	9.3
Դրամական փոխանցումներ	1,179.3	1,136.2	1,143.8	924.2	978.7
ՀՆԱ-ի նկատմամբ %					
Ընթացիկ հաշիվ	-1.5	-6.9	-7.2	-5.5	-5.0
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-10.8	-13.7	-13.4	-11.0	-10.8
Արտահանում	38.2	39.4	41.3	33.6	35.0
Ներմուծում	49.0	53.1	54.6	44.6	45.7
Դրամական փոխանցումներ	10.2	9.1	8.4	7.2	7.1

1.2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Կորոնավիրուսի համավարակի (COVID-19) հետևանքով համաշխարհային տնտեսությունն ապրում է այնպիսի անկում, որը չի դիտվել 1930-ականների «Մեծ Դեպրեսիայից» ի վեր: Կորոնավիրուսի համավարակը խաթարել է համաշխարհային տնտեսության բնականոն զարգացումն ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում՝ հանգեցնելով ամբողջ աշխարհում առողջապահական և տնտեսական ճգնաժամի: ԱՄՀ-ի հունիսի գնահատականներով 2020թ. համաշխարհային տնտեսական անկումը կկազմի 4.9%, որն ապրիլի կանխատեսումների համեմատ, ռիսկերի բարձրացմամբ պայմանավորված, դեպի ներքև վերանայման արդյունք է: ՀՀ հիմնական գործընկեր երկրներում 2020թ. նույնպես տնտեսական անկում է կանխատեսվում, մասնավորապես՝ ՌԴ-ում կանխատեսվում է 6.6% անկում, Եվրոգոտում՝ 10.2, ԱՄՆ-ում՝ 8.0, իսկ Չինաստանում կանխատեսվում է 1.0% աճ:

Աղյուսակ 1.2. *ԱՄՀ կանխատեսումներ*

	2019	2020 թ.-ի կանխատեսում				2021 թ.-ի կանխատեսում			
	Փաստ	2019 Հոկտ.	2020 Հունվ.	2020 Ապրիլ	2020 Հունիս	2019 Հոկտ.	2020 Հունվ.	2020 Ապրիլ	2020 Հունիս
Աշխարհի տնտեսական աճ, %	2.9	3.4	3.3	–3.0	–4.9	3.6	3.4	5.8	5.4
ՌԴ	1.3	1.9	1.9	–5.5	–6.6	2.0	2.0	3.5	4.1
Եվրոգոտի	1.2	1.4	1.3	–7.5	–10.2	1.4	1.4	4.7	6.0
Չինաստան	6.1	5.8	5.6	1.2	1.0	5.9	5.8	9.2	8.2
ԱՄՆ	2.3	2.1	2.0	–5.9	–8.0	1.7	1.7	4.7	4.5
Համաշխարհային առևտրի աճ, %	0.9	3.2	2.9	-11.0	-11.9	3.8	3.7	8.4	8.0


Աղբյուրը՝ ԱՄՀ «World Economic Outlook»

Հումքային ապրանքների համաշխարհային գները կտրուկ նվազում են: Համավարակով պայմանավորված ամբողջ աշխարհում պահանջարկի անկումը, անորոշության բարձրացումը և նավթի շուկայում հիմնական խաղացողների միջև տարաձայնությունները հանգեցրել են հումքային ապրանքների գների նվազման: 2020թ. հունվար-օգոստոս ամիսներին նավթի միջազգային գները նվազել են 35.7%-ով, պղնձի գները՝ 5.8%-ով: Վերջին կանխատեսումներով (Բլումբերգ, 2020թ. օգոստոս) 2020թ. նավթի բորսային գները կնվազեն 34.5%-ով, պղնձի գները՝ 0.4%-ով, իսկ 2021թ. գները կսկսեն վերականգնվել:

Զարգացող երկրներում ազգային արժույթները սկսել են թուլանալ, իսկ երկրների ռիսկի հավելավճարները բարձրանալ: Համավարակն իր բացասական ազդեցությունն է թողել նաև միջազգային ֆինանսական շուկաների վրա, երկրների միջև առևտրային սահմանափակումները, ներդրումային միջավայրի բարձր անորոշությունը թուլացրել են զարգացող երկրների ազգային արժույթները և բարձրացրել երկրների ռիսկի հավելավճարները՝ սուվերեն սպրեդները:


Միջազգային տնտեսական և ֆինանսական զարգացումները և կանխատեսումները

Գծապատկեր 1.1 *Համաշխարհային ամենախոր անկումը «Մեծ Դեպրեսիայից» հետո և թույլ վերականգնումը հաջորդ տարի, փնտրեսական աճեր*




Աղբյուրը՝ ԱՄՀ

Գծապատկեր 1.2 *Հումքային ապրանքների գների դինամիկան*




Աղբյուրը՝ կանխատեսումները ըստ Բլումբերգի

Գծապատկեր 1.3. *Թույլ պահանջարկի և սահմանափակումների արտացոլումը համաշխարհային առևտրում*




Աղբյուրը՝ ԱՄՀ

Գծապատկեր 1.4. *Զարգացող երկրներում նկատվում է ազգային արժույթների թուլացում դոլարի նկատմամբ*




Աղբյուրը՝ Բլումբերգ, ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.5. *Բաժնետոմսերի միջազգային շուկան վերականգնվում է*



Աղբյուրը՝ Բլումբերգ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.6. *Զարգացող երկրներում ռիսկի հավելավճարները (EMBI Sovereign Spreads) բարձրացել են*





Աղբյուրը՝ ԱՄՀ WEO, (EMBI = J.P. Morgan Emerging Markets Bond Index)


Առողջապահական և տնտեսական ճգնաժամին հակազդելու համար աշխարհում Կառավարությունները և Կենտրոնական բանկերը ավելի ագրեսիվ են խթանում տնտեսություններին, քան իրականացրել են համաշխարհային ֆինանսական ճգնաճամի

ժամանակ: COVID-19 համարավարակի հետևանքները հաղթահարելու համար հարկաբյուջետային քաղաքականությունը առանցքային դերակատարում ունի: ԱՄՀ հունիս ամսվա գնահատումներով[2] հարկաբյուջետային փաթեթները աշխարհում գերազանցում են 11 տրիլիոն ԱՄՆ դոլարի ծավալը, որից 5.4 տրիլիոնը բաժին է ընկնում հարկերին և ծախսերին, իսկ 5.4 տրիլիոնը՝ վարկավորմանը և երաշխիքներին: Կենտրոնական բանկերը ևս խթանող դրամավարկային քաղաքականությամբ հակազդում են համավարակի տարածման տնտեսական ազդեցություններին՝ նվազեցնելով տոկոսադրույքները և ներդնելով ֆինանսական շուկայից ակտիվների ձեռք բերման աննախադեպ ծրագրեր:

Գծապատկեր 1.7. *Համաշխարհային տնտեսության և հարկաբյուջետային քաղաքականության արձագանքը (% ՀՆԱ-ում) ճգնաժամերի տարիներին*







Աղբյուրը՝ ԱՄՀ, 2020թ. կանխատեսում:

[2] Աղբյուրը՝ ԱՄՀ, հունիս ամսվա հրապարակում՝ https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2020/06/24/WEOUpdateJune2020

1.3. ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

1.3.1. ՀՆԱ և տնտեսական աճ

2019 թվականին ՀՀ տնտեսությունը շարունակեց աճել ավելի արագ տեմպերով և գրանցվեց 7.6% տնտեսական աճ՝ համաշխարհային տնտեսության 2.9% աճի պայմաններում, ինչի շարժիչ ուժ են հանդիսացել ծառայությունների և արդյունաբերության ճյուղերը, ընդ որում՝ աճ է արձանագրվել տնտեսության բոլոր ճյուղերում, բացառությամբ գյուղատնտեսության: Պահանջարկի տեսանկյունից աճին նպաստել է ներքին պահանջարկը, ինչը պայմանավորված է եղել հիմնականում վերջնական սպառման բարձր աճով:

Կորոնավիրուսի համավարակի բացասական ազդեցությունից անմասն չմնաց նաև ՀՀ տնտեսությունը: Չնայած 2020թ. տարեսկզբի աճի բարձր տեմպերին՝ ՀՀ-ում և գործընկեր երկրներում բռնկված համավարակի բացասական ազդեցությամբ պայմանավորված, մարտ ամսից սկիզբ առան բացասական զարգացումներ, որոնք համավարակի տարածման կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների (առավել մանրամասն տես՛ ներդիր 1-ում) հետևանքով ապրիլին կտրուկ վատթարացան, ինչը մայիս ամսին սահմանափակումների մեծ մասի վերացման արդյունքնում փոքր-ինչ մեղմվեց:

Ներդիր 1. Կորոնավիրուսային համավարակի (COVID-19) զարգացման դինամիկան ՀՀ-ում, կորոնավիրուսի կանխարգելման նպատակով տնտեսական գործունեության տեսակների սահմանափակումները

2020թ. մարտի 1-ին ՀՀ-ում գրանցվեց կորոնավիրուսով հիվանդության առաջին դեպքը, որից հետո վարակը շատ արագ տարածվեց:

Կորոնավիրուսային համավարակի տարածման կանխարգելման նպատակով 2020թ. մարտի 16-ից ՀՀ-ում հայտարարվեց **արտակարգ դրություն** և պարետի որոշումներով արգելվեց տնտեսական գործունեության որոշ տեսակների գործունեությունը, մասնավորապես **արգելվեցին՝**

Գծապատկեր. *ՀՀ-ում կորոնավիրուսի հաստատված դեպքերը*



1. մարտի 16-ից՝ *20 և ավելի անձանց մասնակցությամբ համերգները, ցուցադրությունները, թատերական ներկայացումները, սպորտային, մշակութային, կրթական, ժամանցային, փոնական, հիշատակի և այլ միջոցառումները, ուսումնական գործընթացը (բացառությամբ՝ հեռավար ուսուցման) և այլ գործունեություններ,*

2. մարտի 22-ից՝ *առևտրի կենտրոնների (բացառությամբ՝ սննդի, խմիչքների, ծխախոտի մանրածախ առևտրի), բարերի, գիշերային ակումբների, պարահրապարակների, կինոֆիլմերի ցուցադրման, խաղատների, բուքմեյքերական և խաղագումարով գրազի կազմակերպման գործունեության սպասարկման գրասենյակների գործունեությունը,*

3. մարտի 27-ից՝ *գյուղատնտեսության բնագավառում օժանդակ գործունեությունը և ծառայությունների մատուցումը, շինարարությունը, առևտուրը (բացառությամբ՝ սննդամթերքի, խմիչքների, դեղատների գործունեության), կանոնավոր ուղևորափոխադրումները, անշարժ գույքի հետ կապված, մշակույթի, զվարճությունների, հանգստի, կացության, հանրային սննդի, տեղեկատվության և կապի, նորոգման և մի շարք այլ ծառայությունների գործունեությունը,*

4. մարտի 31-ից՝ *մշակող արդյունաբերության (բացառությամբ՝ սննդամթերքի, խմիչքների, դեղերի, զենքի, զինամթերքի և տնտեսական որոշ ապրանքատեսակների արտադրության) և ցամաքային, քաղաքային, մերձքաղաքային տրանսպորտի գործունեությունը:*

Տնտեսական գործունեության որոշ տեսակների նկատմամբ գործող սահմանափակումները աստիճանաբար սկսեցին հանվել՝ սկսած ապրիլ ամսվա կեսերից, մասնավորապես թույլատրվեց՝

1. ապրիլի 13-ից՝ *ծխախոտի, շինարարական որոշ նյութերի և կոնստրուկցիաների արտադրությունը, շինարարությունը (բացառությամբ ավարտական փուլի աշխատանքների) և մի շարք այլ գործունեություններ,*

2. ապրիլի 23-ից՝ *մի շարք արտադրությունների գործունեությունը, բացառությամբ մեծածախ առևտրի, անշարժ գույքի հետ կապված գործունեության, նորոգման և մի շարք այլ ծառայությունների մատուցումը,*

3. մայիսի 4-ից՝ *ամբողջ մշակող արդյունաբերությունը, շինարարությունը, առևտուրը (բացառությամբ՝ մոլերի, առևտրի կենտրոնների և շուկաների), տեղեկատվության և կապի ոլորտի գործունեությունը, ռեստորանների, բարերի, սրճարանների, պանդոկների գործունեությունը բացառապես բացօթյա տարածքում և մի շարք այլ գործունեություններ,*

4. մայիսի 18-ից՝ *փնտրեսական գործունեության բոլոր տեսակների գործունեությունը, սակայն շարունակեցին գործել հեռավար ուսուցումը, հեռավար կազմակերպման հնարավորություն ունեցող գործունեության այլ տեսակները, հանրային միջոցառումների և որոշ բժշկական նշանակության ապրանքների և դեղորայքի հետ կապված որոշակի սահմանափակումներ, ինչպես նաև որոշակի ժամանակահատվածով ըստ անհրաժեշտության շարունակվեց կասեցվել առանձին փնտրեսավարողների գործունեությունը,*

5. օգոստոսի 12-ից՝ *ընտրանեկան արարողությունների և ժամանցային բնույթի միջոցառումների անցկացումը (ոչ ավել քան 40 հոգու մասնակցությամբ), օդային ճանապարհով ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձանց մուտքը ՀՀ, որոշ բժշկական նշանակության ապրանքների և դեղորայքի ՀՀ-ից արտահանումը,*

6. օգոստոսի 18-ից՝ *գրադարանների, թանգարանների, մշակույթի ոլորտի (այդ թվում՝ թատերահամերգային միջոցառումները և կինոցուցադրությունները, որոնք պետք է անցկացվեն բացառապես բացօթյա տարածքներում) գործունեությունը, ոչ ֆորմալ և շարունակական կրթությունը մի շարք ուղղություններով, սակայն դեռևս շարունակվեց պահպանվել սահմանափակումները արտադպրոցական սպորտային, արվեստի և մշակութային խմբակների մասով,*


6. սեպտեմբերի 1-ից՝ *բուհական կրթությունը միայն բակալավրիատի 1-ի կուրսի ուսանողների համար, իսկ մնացածի մասով՝ սահմանվեց հիբրիդային (հեռավար տեսական և առկա գործնական պարապմունքներ) եղանակով ուսումնական գործընթաց,*

7. ***սեպտեմբերի 15-ից՝*** *հանրակրթությունը:*


2020թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2021թ. հունվարի 11-ը կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված հայտարարվեց ***կարանտին*** *(մինչ այդ գործող արտակարգ դրության փոխարեն) և սահմանվեց ՀՀ մուտքի և ելքի հատուկ ռեժիմ, մասնավորապես՝ ցամաքային սահմանի անցակետերով արգելվեց ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց մուտքը ՀՀ (բացառությամբ սահմանված դեպքերի), իսկ հանրային միջոցառումները թույլատրվեցին միայն որոշակի սահմանափակումներով, մասնավորապես՝ փոնական, հիշատակի, սոցիալական, մշակութային, կրթական, սպորտային և այլ ժամանցային միջոցառումների (որոնք չեն հանդիսանում փնտրեսական գործունեության տեսակ) մասնակիցների առավելագույն քանակ սահմանվեց 60 հոգին:*

Արդյունքում 2020թ. առաջին կիսամյակում ՀՆԱ-ն կրճատվեց 5.7%-ով: Տնտեսության բոլոր ճյուղերում՝ բացառությամբ գյուղատնտեսության արձանագրվեց անկում:

Գծապատկեր 1.8. *ՀՆԱ աճ (%) և ճյուղերի նպաստումները ՀՆԱ աճին, (տ. կ.)*




Գծապատկեր 1.9. *ՀՆԱ աճ (%) և պահանջարկի բաղադրիչների նպաստումները ՀՆԱ աճին, (տ. կ.)*



Հուլիս ամսին տնտեսական ակտիվության անկումը սկսեց նորից խորանալ: 2020թ. հունվար-հուլիսին արձանագրվեց տնտեսական ակտիվության (ՏԱՑ) 5.7% նվազում, ինչը զիջում է նախորդ տարվա ցուցանիշը 12.4 տոկոսային կետով: Տնտեսական ակտիվության նվազումը պայմանավորված է եղել ծառայությունների (4.1 տոկոսային կետ), շինարարության (1.5 տոկոսային կետ) և առևտրի (1.4 տոկոսային կետ) համախառն թողարկումների իրական անկումներով, իսկ արդյունաբերությունը 0.3 տոկոսային կետ դրական նպաստում[3] է ունեցել տնտեսական ակտիվությանը:


Զգալի թվով պոտենցիալ հիվանդ մարդկանց առկայության, մեկուսացման, կարանտինի, արտակարգ դրության հետևանքով աշխատելու անհնարինության, կիրառվող սահմանափակումների, ինչպես նաև առկա անորոշությունների պայմաններում համավարակի բացասական ազդեցությունն առավելապես կրեց ծառայությունների ճյուղը: Ընդ որում՝ հուլիս ամսին հունիսի համեմատ ծառայությունների նվազման տեմպն արագացավ:

Գծապատկեր 1.10. *ՏԱՑ և փնտրեսության ճյուղերի իրական աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, (%)*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ


Գծապատկեր 1.11. *ՏԱՑ և փնտրեսության ճյուղերի իրական աճերը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, (%)*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ


[3] *ՏԱՑ-ի աճին ճյուղերի նպաստումները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են: Գյուղատնտեսության ցուցանիշը ներառված չէ հաշվարկներում, քանի որ հրապարակվում է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:*

Գծապատկեր 1.12. *Տնտեսության ճյուղերի նպաստումները ՏԱՑ-ին (տ.կ.)*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.13. *Տնտեսության ճյուղերի նպաստումները ՏԱՑ-ին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, (տ.կ.)*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ


Համավարակի բացասական ազդեցությամբ պայմանավորված նվազեց նաև ներքին պահանջարկը: Արդեն 2020թ. առաջին կիսամյակում կրելով համավարակի բացասական հետևանքները՝ առկա անորոշությունների պայմաններում վերջնական սպառումը, կապիտալ ներդրումները, արտահանումն ու ներմուծումը նվազեցին: Այս միտումները շարունակվեցին նաև հուլիս ամսին. դա է վկայում տնտեսությունում առկա թույլ գնաճային միջավայրը, առևտրի շրջանառության զգալի նվազումը, աշխատավարձերի աճի դանդաղումը, տրանսֆերտների էական կրճատումը և մշակող արդյունաբերության ներքին իրացման նվազումը:

<u>Կանխատեսում:</u> Կորոնավիրուսի համաշխարհային ճգնաժամի պայմաններում 2020թ. կանխատեսվում է ՀՀ տնտեսության 6.0% տնտեսական անկում, իսկ 2021թ.՝ 4.8% աճ: 2020թ. անկումը պայմանավորված կլինի առաջարկի և պահանջարկի (ինչպես ներքին, այնպես էլ արտաքին) բացասական շոկերով: ՀՀ կառավարության և ԿԲ կողմից վարվող խթանող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության արդյունքում 2020թ. ՀՆԱ անկումը որոշակիորեն կմեղմվի: Բացասական ազդեցությունների աստիճանական չեզոքացման հետ մեկտեղ տնտեսական աճը կվերականգնվի և 2021թ. տնտեսական աճը իր ներուժային մակարդակից կլինի բարձր: Տնտեսական աճը պայմանավորված կլինի հիմնականում ծառայությունների և արդյունաբերության ճյուղերի աճերով: Ամբողջական պահանջարկը նույնպես կաճի՝ պայմանավորված հիմնականում ներքին սպառողական և ներդրումային պահանջարկի աճերով:

2020թ. դեֆլյատորը կաճի՝ պայմանավորված ՍԳԻ-ի և ապրանքների միջազգային գների զարգացումներով, իսկ 2021թ.՝ ՍԳԻ-ին համահունչ կարագանա:


Վերոնշյալ զարգացումների պայմաններում անվանական ՀՆԱ-ն 2020թ. կկազմի 6,247.9 մլրդ դրամ՝ 847.2 մլրդ դրամով պակաս լինելով 2020թ. պետական բյուջեով ծրագրված ցուցանիշից, և 257.2 մլրդ դրամով՝ 2021-2023թթ. ՄԺԾԾ ցուցանիշից: Իսկ 2021թ. անվանական ՀՆԱ-ն կաճի՝ կազմելով 6,720.0 մլրդ դրամ:

Գծապատկեր 1.14. *Անվանական ՀՆԱ և տնտեսական աճ*




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 1.15. *Իրական ՀՆԱ անկումը/աճը տնտեսական ճգնաժամերի տարիներին, (%)*




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ կանխատեսում

Գծապատկեր 1.16. *Տնտեսության առանձին ճյուղերի նպաստումը տնտեսական աճին*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 1.17. *Տնտեսական աճին պահանջարկի բաղադրիչների նպաստումները*




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

<u>Համախառն առաջարկի կանխատեսում</u>. 2020թ. համավարակի բացասական ազդեցության հետևանքով առաջարկի կրճատմամբ, ինչպես նաև ներքին և արտաքին պահանջարկի անկմամբ պայմանավորված՝ սպասվում է տնտեսական անկում: Մասնավորապես, ծառայությունների (ներառյալ առևտուրը), շինարարության և արդյունաբերության ճյուղերը կնվազեն համապատասխանաբար 6.9%-ով, 17.6%-ով և 1.0%-ով: Գյուղատնտեսությունը կաճի 0.7%-ով:


2021թ. համավարակի բացասական ազդեցությունների չեզոքացման հետ մեկտեղ, պայմանավորված սահմանափակումներից հետո արտադրության բնականոն աշխատանքների վերագործարկմամբ, արտաքին և ներքին պահանջարկի վերականգնմամբ, տնտեսությունում իրականացվող ներդրումներով, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից համավարակի ազդեցությունների մեղմանն ուղղված հարկաբյուջետային և արտահանման ու ներդրումների խթանմանն ուղղված քաղաքականություններով՝ ծառայությունները կաճեն 4.1%-ով, արդյունաբերությունը՝ 5.2%-ով, շինարարության ճյուղը՝ 4.9%-ով, իսկ գյուղատնտեսությունը՝ 3.9%-ով:

Գծապատկեր 1.18. *Ճյուղերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ի կազմում*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 1.19. *Ծախսային բաղադրիչների տեսակարար կշիռները ՀՆԱ-ի կազմում*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

<u>Համախառն պահանջարկի կանխատեսում.</u> Կրելով համավարակի պայմաններում եկամուտների և տրանսֆերտների նվազման ազդեցությունը՝ 2020թ. վերջնական սպառումը կնվազի 6.4%-ով, իսկ ներդրումները՝ 12.9%-ով: Սպառման և ներդրումների նվազումը կմեղմվի ՀՀ կառավարության և ԿԲ կողմից վարվող համավարակի կանխարգելմանն ուղղված խթանող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների, ինչպես նաև ՀՀ կառավարության ներդրումային միջավայրը խթանող քաղաքականության արդյունքում: 2021թ. պահանջարկը աստիճանաբար կվերականգնվի՝ սպառումը կաճի 4.9%-ով, իսկ ներդրումները՝ 5.3%-ով:

Արտահանումը և ներմուծումը 2020թ. կնվազեն 20.2%-ով և 23.2%-ով՝ պայմանավորված հիմնականում համավարակի ներքին և արտաքին բացասական ազդեցություններով, իսկ ՀՀ տնտեսական ակտիվության, համաշխարհային տնտեսության վերականգնման և տնօրինվող եկամտի աճի պայմաններում 2021թ. կաճեն համապատասխանաբար՝ 8.8%-ով և 6.1%-ով:

1.3.2. Աշխատանքի շուկա


Տնտեսական աճին զուգահեռ, 2019թ. գործազրկության մակարդակը նվազել է՝ 20.5%-ից հասնելով 18.9%-ի, իսկ աշխատուժի մասնակցության մակարդակն աճել՝ 56.9%-ից հասնելով 57.7%-ի: Նույն ժամանակաշրջանում զբաղվածների թիվն աճել է 4.3%-ով, իսկ գործազուրկներինը՝ կրճատվել 5.8%-ով, ինչը վկայում է տնտեսական աճի որակի բարելավման մասին: Ավելին, նույն ժամանակահատվածում իրական արտադրողականությունն աճել է 3.2%-ով: Միաժամանակ, ՀՀ ՎԿ կողմից աշխատանքի շուկայի վիճակագրության վերանայված մեթոդաբանության համաձայն գործազրկության մակարդակը 2019թ. կազմել է 17.9%, իսկ աշխատուժի մասնակցության մակարդակը՝ 58.9%: Նույն ժամանակաշրջանում զբաղվածների թիվը կազմել է 1,009.8 հազ. մարդ, իսկ գործազուրկների թիվը՝ 220.8 հազ, մարդ:[4]

[4] 2020թ. ՀՀ ՎԿ կողմից աշխատանքի շուկայի վիճակագրության վերանայված մեթոդաբանության համաձայն աշխատանքի շուկայի ցուցանիշները հաշվարկվում են ոչ թե առկա, այլ մշտական բնակչության թվի հիման վրա:

Միջին ամսական անվանական աշխատավարձը 2019թ. աճել է 5.8%-ով, միաժամանակ իրական աշխատավարձը՝ 1.4% միջին գնաճի պայմաններում ավելացել է 4.3%-ով:


2020թ. առաջին եռամսյակում գործազրկության մակարդակը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 1.3 տոկոսային կետով՝ կազմելով 19.8%, պայմանավորված նույն ժամանակահատվածում գրանցված 3.9% տնտեսական աճով: Առաջին եռամսյակի գործազրկության մակարդակի վրա համավարակի բացասական ազդեցությունը չի արտացոլվել, քանի որ տնտեսական սահմանափակումները ՀՀ-ում սկսեցին գործել մարտի երկրորդ կեսից:

Գծապատկեր 1.20. *Գործազրկություն և զբաղվածություն*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Գծապատկեր 1.21. *Միջին ամսական անվանական աշխատավարձի կուտակային աճ*, 2020թ., %



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ


2020թ. տարեսկզբին արձանագրված աշխատավարձի աճի բարձր տեմպերը կրելով համավարակի բացասական ազդեցությունները գնալով դանդաղեցին: 2020թ. հունվար-հուլիսին միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.0%-ով՝ կազմելով 187,224 դրամ: Ընդ որում՝ սպառողական գների ինդեքսի 0.7% աճի պարագայում իրական աշխատավարձն աճել է 4.3%-ով: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 7.7%-ով՝ կազմելով 165,813 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 3.5%-ով, կազմելով 197,603 դրամ:

1.3.3. ՀՀ վճարային հաշվեկշիռ, արտահանում և ներմուծում

2019թ. վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատ վատթարացել է 0.3 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ-ի 7.2%-ը: Ընթացիկ հաշիվը բնութագրվել է ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշռի խորացմամբ և դրամական փոխանցումների ծավալների նախորդ տարվա համեմատ թույլ աճով:

Կանխատեսում: Համավարակի հետևանքով ներքին և արտաքին թուլացող պահանջարկի և գլոբալ զբոսաշրջության կրճատման հետևանքով 2020թ. ընթացիկ հաշվի պակասուրդը կփոքրանա՝ մոտենալով ՀՆԱ-ի 5.5% մակարդակի: Ընթացիկ հաշվի պակասուրդի նվազումը պայմանավորված կլինի ներմուծման նվազման հետևանքով առևտրային հաշվեկշռի բարելավմամբ: Ակնկալվում է, որ պակասուրդի բարելավմանը կհակազդի հիմնական գործընկեր՝ ՌԴ տնտեսության անկման արդյունքում դրամական փոխանցումների զգալի կրճատումը: 2021թ. արտահանման և դրամական փոխանցումների ներհոսքի աճերով պայմանավորված ընթացիկ հաշվի պակասուրդը կշարունակի բարելավվել՝ մոտենալով իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին:

Գծապատկեր 1.22. *Ընթացիկ հաշվի պակասուրդը և բաղադրատարրերը (ՀՆԱ-ում %)*




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ԿԲ և ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ


Արտահանում: 2019թ. արձանագրվել է ապրանքների և ծառայությունների դոլարային արտահանման երկնիշ՝ 14.9% աճ: 2019թ. ապրանքների արտահանումն աճել է 19.4%-ով և հիմնականում պայմանավորված է եղել մշակող և հանքագործական արդյունաբերության աճերով: Ընդ որում մշակող արդյունաբերության դերը արտահանման կառուցվածքում բարձրացել է, որը տնտեսության կառուցվածքում բարելավման և այդ ոլորտի կշռի մեծացման հետևանք է: Ծառայությունների արտահանման աճը պայմանավորվել է զբոսաշրջության նախորդ տարվա համեմատ ավելի բարձր՝ շուրջ 15% աճով:

Համավարակի հետևանքով 2020թ. առավել մեծ վնասներ է կրել ծառայությունների արտահանման ոլորտը. 2020թ. առաջին եռամսյակին ծառայությունների արտահանումը կրճատվել է 8.1%-ով, որին հիմնականում նպաստել է զբոսաշրջության արտահանման 15.3% անկումը: Ծառայությունների արտահանման նվազման տեմպերը խորացել են երկրորդ եռամսյակում, ինչի մասին են վկայում վերևում նկարագրված՝ ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչներից ապրանքների և ծառայությունների նվազման միտումները: **Չնայած 2020թ.**

տարեսկզբի աճի բարձր տեմպերին՝ 2020թ. հունվար-հուլիս ամիսներին ՀՀ ապրանքների արտահանումը կրճատվել է 6.4%-ով, ինչը պայմանավորվել է տնտեսության սահմանափակումների հետևանքով հայկական ապրանքների առաջարկի, ինչպես նաև արտաքին պահանջարկի նվազմամբ:

Գծապատկեր 1.23. *2020թ. ապրանքների արտահանման միտումները, %*





Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հաշվարկներ:


<u>Կանխատեսում:</u> Վերոնշյալ զարգացումների պայմաններում 2020թ. սպասվում է շուրջ 23.3% արտահանման նվազում: 2021թ. համաշխարհային և ՀՀ տնտեսական ակտիվության վերականգման, արտահանման ու ներդրումների խրախուսմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականության պայմաններում ակնկալվում է արտահանման 10.8% աճ:


<u>Ներմուծում:</u> 2019թ. արձանագրվել է ապրանքների և ծառայությունների դոլարային ներմուծման 13% աճ: Ապրանքների ներմուծման ծավալներն աճել են 12.8%-ով՝ պայմանավորված տնտեսական ակտիվության, ներքին պահանջարկի, բնակչության տնօրինվող եկամուտների աճերով, ինչպես նաև մեծ քանակով ավտոմեքենաների ներկրմամբ: 2019թ. ընթացքում ներմուծման աճին մեծամասամբ նպաստել են վերջնական և միջանկյալ սպառման ապրանքները, դրական էր նաև կապիտալ բնույթի ապրանքների նպաստումը: 2019թ. ծառայությունների ներմուծման աճը կազմել է 13.5% և հիմնականում պայմանավորվել է ճանապարհորդության հետ կապված ծառայությունների աճով:

Համավարակի հետևանքով տնտեսական ակտիվության և ներքին պահանջարկի նվազման, ինչպես նաև զբոսաշրջության սահմանափակումների հետևանքով ապրանքների և ծառայությունների ներմուծումը 2020թ. նվազել է: Չնայած տարեսկզբի աճի տեմպերին՝ 2020թ. հունվար-հուլիսին արձանագրվել է 13.7% ապրանքների ներմուծման անկում, որին հիմնական ազդեցությունն է ունեցել մաքսատուրքերի փոփոխությամբ պայմանավորված մարդատար ավտոմեքենաների ներկրման կտրուկ նվազումը: Ներմուծման կրճատմանը նպաստել է նաև միջանկյալ և վերջնական սպառման ապրանքների, ինչպես նաև կապիտալ բնույթի ապրանքների ներմուծման նվազումը:

2020թ. առաջին եռամսյակի տվյալներով ծառայությունների ներմուծումը կրճատվել է 10.7%-ով՝ հիմնականում պայմանավորված ճանապարհորդության և մարդատար տրանսպորտով զբոսաշրջության հետ կապված ծառայությունների 12.6% անկմամբ: Ծառայությունների ներմուծման նվազման տեմպերը խորացել են երկրորդ եռամսյակում, ինչի մասին են վկայում վերևում նկարագրված՝ ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչներից ապրանքների և ծառայությունների ներմուծման նվազման միտումները:

Գծապատկեր 1.24. *2020թ. ապրանքների ներմուծման միտումները, %*







Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հաշվարկներ:

Կանխատեսում: Ապրանքների և ծառայությունների նկատմամբ ներքին պահանջարկի, ավտոմեքենաների ներմուծման և զբոսաշրջության հոսքերի նվազմամբ պայմանավորված 2020թ. սպասվում է մոտ 23.1% ներմուծման կրճատում: 2021թ. ՀՀ տնտեսության աճի և ներքին պահանջարկի վերականգմանը զուգընթաց ներմուծման աճը կվերականգնվի՝ կազմելով 9.3%:

Գծապարկեր 1.25. *ՀՀ ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման միտումները ՀՖՃ տարիներին և 2017-2021թթ., %*





Աղբյուր՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ:

1.3.4. Փոխարժեքներ


2019թ. նախորդ տարվա միջինի համեմատ դրամն արժևորվել է բոլոր հիմնական արժույթների նկատմամբ: ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամը դրսևորել է հարաբերականորեն կայուն վարքագիծ. գրանցվել է ՀՀ դրամի անվանական արժեքի շուրջ 0.5% արժևորում: Եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը նույնպես արժևորվել է, համապատասխանաբար՝ 6.1% և 4.0%-ով:

Չնայած 2020թ. ընթացքում արժեզրկման որոշ ճնշումներին՝ ՀՀ դրամը համավարակի պայմաններում դրսևորել է կայուն վարքագիծ: 2020թ. հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել է մոտ 483.9 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի միջինի նկատմամբ արժեզրկվելով մոտ 0.4%-ով: **Համավարակով պայմանավորված ՀՀ փոխարժեքի շուկայում մարտ ամսին նկատվել են արժեզրկման ճնշումներ, որն իր առավելագույն արժեքին հասել է ապրիլի 1-**

ին՝ կազմելով 505 ՀՀ դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց: Ստեղծված իրավիճակին ՀՀ ԿԲ-ի համարժեք արձագանքման արդյունքում դրամն աստիճանաբար կայունացել է: 2020թ. հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ դրամն եվրոյի նկատմամբ արժևորվել է շուրջ 0.5%, իսկ ռուսական ռուբլու նկատմամբ՝ 7.3%-ով:


ՀՀ արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր արժույթներից բաղկացած զամբյուղի նկատմամբ ՀՀ ազգային արժույթն իրական արտահայտությամբ 2019թ. արժևորվել է 3.5%-ով, իսկ անվանական արտահայտությամբ՝ 7.2%-ով: 2020թ. հունվար-հուլիս ամիսներին ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքի արժևորումը կազմել է 1.8%, իսկ անվանականի արժևորումը՝ 4.7%՝ իր բացասական ազդեցությունը թողնելով տեղական ապրանքների արտաքին մրցունակության վրա:

Գծապատկեր 1.26. *ՀՀ դրամի անվանական փոխարժեքի օրական դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ (աճ՝ արժեզրկում)*



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.27. *ՀՀ իրական և անվանական արդյունավետ փոխարժեքների կուտակային փ/փ աճերի դինամիկան (աճ՝ արժևորում)*



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

1.3.5. Գնաճ և դրամավարկային քաղաքականություն

2019թ. ընթացքում տնտեսությունը գտնվել է չափավոր գնաճային միջավայրում: 2019թ. գնաճային միջավայրը թուլացել է՝ տարվա առաջին կեսին 12-ամսյա գնաճի փոքր ինչ արագացման, իսկ երկրորդ կեսին՝ էական դանդաղման արդյունքում: 12-ամսյա գնաճը դեկտեմբերին կազմել է 0.7%, իսկ միջին գնաճը՝ 1.4%: Գնաճի դանդաղմանը նպաստել են ապրանքային շուկաներում մրցակցության ավելացումը և սպառողական պահանջարկի կառուցվածքի փոփոխությունն ի հաշիվ երկարաժամկետ սպառման ապրանքների:

2020թ. հունվար-օգոստոս ամիսներին գնաճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դանդաղել է՝ կազմելով 0.8%, 1.8%-ի համեմատ: Դանդաղումը պայմանավորված է համավարակի բռնկման և տնտեսական գործունեության սահմանափակումների պայմաններում մի կողմից արտաքին հատվածից եկող գնանկումային ազդեցություններով, և մյուս կողմից՝ ներքին մասնավոր պահանջարկի թուլացմամբ:


2019թ. ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականությունն ունեցել է խթանող ուղղվածություն: ԿԲ-ն նվազեցրել է վերաֆինանսավորման (ռեպո) տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով, ինչպես նաև ֆինանսական շուկայում հանդես է եկել որպես իրացվելիության զուտ տրամադրող: Ֆինանսական շուկայի կարճաժամկետ տոկոսադրույքների՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի շուրջ ձևավորումն ապահովելու

համար հիմնականում ամբողջությամբ բավարարվել է իրացվելիության նկատմամբ բանկային համակարգի պահանջարկը:


Համավարակի հետևանքով պահանջարկի նվազմանը հակազդելու նպատակով ՀՀ ԿԲ-ն թուլացրել է դրամավարկային պայմանները: 2020թ. հունվար–օգոստոս ամիսներին ՀՀ ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցրել է ընդհանուր առմամբ 1 տոկոսային կետով՝ ցածր գնաճային միջավայրում ավելացնելով դրամավարկային խթանման չափը: Փողի շուկայի տոկոսադրույքների ձևավորումը վերաֆինանսավորման տոկոսադրույքի շուրջ ապահովելու համար ԿԲ-ն շարունակել է բավարարել իրացվելիության նկատմամբ բանկային համակարգի պահանջարկը՝ ռեպո գործարքների միջոցով ավելացնելով զուտ իրացվելիության ներարկման չափը: Բացի դրանից COVID-19-ի տարածմամբ պայմանավորված անորոշությունների բացասական հետևանքները մեղմելու նպատակով ԿԲ-ն հիմնական կապիտալի համարժեքության նորմատիվը 10%-ից իջեցնել 9%-ի: Սեպտեմբեր ամսին ՀՀ ԿԲ-ն, արձագանքելով նվազող պահանջարկին և ցածր գնաճին, մեղմացրել է դրամավարկային պայմանները՝ նվազեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը ևս 0.25 տոկոսային կետով:

Կանխատեսում. ԿԲ-ն կարճաժամկետ հատվածում կշարունակի վարել խթանող դրամավարկային քաղաքականություն և կպահպանի քաղաքականության խթանող դիրքը նաև 2021թ.: 2020 և 2021թթ. կպահպանվի ցածր գնաճային միջավայրը և գնաճը կգտնվի նպատակային թիրախի ստորին հատվածում[5]:

Գծապատկեր 1.28. *Սպառողական գների աճը, դրամավարկային քաղաքականության հիմնական ցուցանիշները 2017-2020թթ. օգոստոսին և գնաճի կանխատեսումները միջնաժամկետ հատվածում*



[5] Տե՛ս Գնաճի հաշվետվություն, 2020/2, ՀՀ ԿԲ, https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/Gnach_II_20.pdf:



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

1.4. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2021թ. Պետական բյուջեի մակրոտնտեսական շրջանակի կանխատեսումներն իրականացվել են ՀՀ ՖՆ կողմից՝ կիրառելով տնտեսաչափական մոդելներ և համադրելով ՀՀ ՖՆ հարկաբյուջետային քաղաքականության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (Fiscal Policy Strategy Dynamic Stochastic General Equilibrium (DSGE)) մոդելի[6]՝ համավարակի հետևանքով առաջացած արտաքին, ներքին մի շարք շոկերի և հարկաբյուջետային միջոցառումների ազդեցությունների գնահատումների հետ, որոնց համար տեղեկատվական հիմք են հանդիսացել օգոստոսի դրությամբ հայտնի նեքին և արտաքին ընթացիկ տնտեսական և ֆինանսական զարգացումները, 2020թ. հունիսի դրությամբ ՀՀ գործընկեր երկրների տնտեսական զարգացումների և օգոստոսի դրությամբ հումքային ապրանքների համաշխարհային գների միջազգային կառույցների կողմից արված կանխատեսումները, ինչպես նաև իրականցված և նախատեսվող հարկաբյուջետային միջոցառումները: Կանխատեսումների հիմքում ընկած է նաև այն ենթադրությունը, որ ՀՀ և գործընկեր երկրների տնտեսությունները «V-աձև» զարգացում են ունենալու՝ ամենամեծ անկումը գրանցելով երկրորդ եռամսյակում և սկսելով վերականգնվել դրանից հետո: Մասնավորապես՝

- Մարտ ամսին հայտարարված արտակարգ դրության պայմաններում կիրառվեցին տնտեսական ակտիվության համատարած սահմանափակումներ, որոնք աստիճանաբար հանվեցին մինչև հունիս՝ առաջացնելով, հիմնականում երկրորդ եռամսյակում, առաջարկի և պահանջարկի էական բացասական շոկեր:
- Արտաքին աշխարհից ՀՀ տնտեսություն փոխանցվող շոկերը գնահատվել են հիմնվելով հիմնականում ԱՄՀ հունիս ամսին հրապարակված գնահատականների և կանխատեսումների վրա՝
- ԱՄՀ-ի կանխատեսումներին համապատասխան գնահատվում է, որ Հայաստանի հիմնական գործընկեր երկրների, այդ թվում՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Չինաստանի և Եվրոգոտու արտաքին պահանջարկը 2020թ. միջինում կկրճատվի 7.5%-ով, իսկ 2021թ. կաճի 5.3%-ով[7]:
- Նավթի համաշխարհային գների անկումը 2020թ. կշարունակվի, պղնձի գները երրորդ եռամսյակից կսկսեն վերականգնվել՝ տարեվերջին գրանցելով փոքր անկում: Ակնկալվում է, որ 2021թ. նավթի միջազգային գները ևս կսկսեն վերականգնվել:
- Արտաքին զարգացումներով, մասնավորապես Ռուսաստանի տնտեսական անկմամբ պայմանավորված՝ 2020թ. գնահատվում է դրամական փոխանցումների կրճատում, իսկ 2021թ.՝ որոշակի վերականգնում:

---

[6] ***ՀՀ ֆինանսների նախարարության հարկաբյուջետային քաղաքականության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելը մշակվել է 2018-2020թթ. ընթացքում՝ ԱՄՀ կողմից տրամադրված տեխնիկական աջակցության շրջանակներում, ավելի մանրամասն տես Ներդիր 2.-ում:***

[7] *ՀՀ գործընկեր երկրների տնտեսական աճերի 2020 և 2021 թթ. ԱՄՀ կողմից հունիս ամսվա կանխատեսումները ներկայացված են Աղյուսակ 1.2.-ում*


- 2020թ. ենթադրվել է համավարկի հետևանքների չեզոքացմանն ուղղված խթանող հարկաբյուջետային միջոցառումների՝ 150 մլրդ դրամի ամբողջական օգտագործում, ինչպես նաև հաշվի են առնվել շահութահարկի կանխավճարների համակարգում իրականացված բարեփոխումների հետևանքով մոտ տնտեսավարող սուբյեկտների մոտ խնայված շրջանառու շուրջ 65 մլրդ դրամ միջոցները, (ինչը նշանակում է, որ, այլ հավասար պայմաններում, այդ նույն չափով պակաս հարկային եկամուտներ են հավաքագրվելու)[8] և COVID-19-ի կանխարգելման և բուժման նպատակով առողջապահության ոլորտին հատկացված ծախսերի աճը, որը ըստ առկա վերջին տվյալների (սեպտեմբերի 17-ի դրությամբ) կազմել է 16.8 մլրդ դրամ:
- 2021թ. տնտեսության վերականգնման պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունը կունենա փոքր զսպող ուղղվածություն՝ պայմաններ ստեղծելով միջնաժամկետում ՀՀ կառավարության պարտքի նվազման և հարկաբյուջետային կայնության ապահովման համար:
- ԿԲ-ն կարճաժամկետ հատվածում կշարունակի վարել խթանող դրամավարկային քաղաքականություն, և անհրաժեշտության դեպքում, կպահպանի քաղաքականության խթանող դիրքը նաև 2021թ.:

[8] Առավել մանրամասն ներկայացված է Ներդիր 3-ում:

1.5. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ (COVID-19) ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ DSGE ՄՈԴԵԼՈՎ


ՀՀ տնտեսության վրա կորոնավիրուսի համավարակի ազդեցությունը, դրա փոխանցումային մեխանիզմները, ինչպես նաև համավարակի տնտեսական հետևանքները մեղմելու նպատակով ՀՀ կառավարության կողմից իրականացվող միջոցառումների ազդեցությունը գնահատելու նպատակով կառուցվել է COVID-19 համավարակի սցենար՝ կիրառելով ՀՀ ՖՆ հարկաբյուջետային քաղաքականության DSGE մոդելը: Կառուցվել են արտաքին և ներքին շոկերի ազդեցության, ինչպես նաև հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության սցենարներ, որոնց արդյունքների հիման վրա մշակվել է 2021թ. Պետական բյուջեի մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակները: Ինչպես «ՄԺԾԾ 2021-2023» սցենարում, այնպես էլ «Բյուջե-2021» սցենարում ենթադրվել է, որ ՀՀ տնտեսությունն, այսպես կոչված, «V-աձև» զարգացում է ունենալու, ամենամեծ տնտեսական անկումը գրանցվելու է երկրորդ եռամսյակում, որից հետո երրորդ եռամսյակից սկսած տնտեսությունը սկսելու է վերականգնվել, սակայն հաշվի առնելով 2020թ. առաջին կիսամյակի զարգացումները, որոնք հիմնականում համահունչ են եղել 2021-2023թթ. ՄԺԾԾ գործընթացում կառուցված «Այլընտրանքային»[9] սցենարի արդյունքներին, ինչպես նաև «Այլընտրանքային» սցենարում մատնանշված այլ արտաքին և ներքին ռիսկերի դրսևորումների բարձր հավանականությունը, «Բյուջե-2021» սցենարում գնահատվել է 2020թ. համար ավելի խորը անկում և միջնաժամկետ հատվածում առավել դանդաղ վերականգնում:

Գծապատկեր 1.29. *«ՄԺԾԾ-2021-2023», «Այլընտրանքային» և «Բյուջե-2021» սցենարներում ՀՆԱ կորուստները*




[9] «Այլընտրանքային» սցենարը կառուցվել է 2021-2023 ՄԺԾԾ գործընթացի ժամանակ, որը ենթադրում էր արտաքին և ներքին ավելի ուժգին և երկարատև բացասական շոկերի դրսևորումներ:

Գծապատկեր 1.30. *Տնտեսության արձագանքը ներքին և արտաքին շոկերին, հարկաբյուջետային քաղաքականության խթանող ազդեցությունը*



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ գնահատումներ և կանխատեսումներ: Գծապատկերներում ցուցանիշները ներկայացված են որպես իրենց հավասարակշիռ մակարդակներից, համապատասխանաբար, տոկոս կամ տոկոսային կետ շեղումներով

Գծապատկեր 1.31. *Հարկաբյուջետային միջավայրը շոկերի ազդեցության ներքո և քաղաքականության իրականացումից հետո*



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ գնահատումներ և կանխատեսումներ: Գծապատկերներում ցուցանիշները ներկայացված են որպես իրենց հավասարակշիռ մակարդակներից տոկոսային կետ շեղումներով

Ներդիր 2. ՀՀ ՖՆ հարկաբյուջետային քաղաքականության DSGE մոդելը (Fiscal Policy Strategy DSGE)

FPS DSGE մոդելը իր տեսակի մեջ առաջինն է, որը մշակվել է ՀՀ ՖՆ-ում և պատկանում է նախարարությանը: Մոդելի մշակումը կարևորագույն քայլ է ՀՀ ՖՆ-ում քանակական մակրոտնտեսական մոդելավորման ավանդույթի ձևավորման ուղղությամբ: Հարկաբյուջետային քաղաքականության մշակմանն ու իրականացմանն աջակցելու համար ՀՀ ՖՆ մակրոտնտեսական կանխատեսման և վերլուծության համակարգը անցել է զարգացման որոշ փուլեր՝ պարզ մեթոդներից մինչև կիսակառուցվածքային վիճակագրական մեթոդներ, ինչը սակայն, բավարար չէ հարկաբյուջետային քաղաքականության միջնաժամկետ և երկարաժամկետ բազմակողմանի հետևանքները վերլուծելու, ինչպես նաև արդյունավետ ու հետևողական ձևով քաղաքականության սցենարներ մշակելու համար: Նշված խնդրին ինստիտուցիոնալ լուծում տալու նպատակով ՀՀ ՖՆ և ԱՄՀ համատեղ ջանքերով մշակվել է հարկաբյուջետային քաղաքականության ռազմավարության մոդելը, որը լիովին կալիբրացված, ստուգված և համապատասխանեցված է Հայաստանի տնտեսական զարգացումներին և մակրոտնտեսական քաղաքականությունների միտումներին, պատկանում է նախարարությանը և կարող է օգտագործվել հարկաբյուջետային և այլ մակրոտմտեսական քաղաքականությունների խնդիրների լայն դասի վերլուծության համար:

Այսպիսով, հարկաբյուջետային քաղաքականության ռազմավարության մոդելը ամբողջությամբ միկրո հիմքերով փոքր բաց տնտեսության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (DSGE) մոդել է, որտեղ շեշտադրվում է հարկաբյուջետային քաղաքականությունը:

Մոդելի հիմնական կառուցվածքային հատկանիշներն են՝

- ✓ **հարկաբյուջետային քաղաքականության գործիքների՝ հարկերի, պետական ծախսերի և պետական տրանսֆերտների առկայություն**
- ✓ **դրամավարկային քաղաքականության գործիքների առկայություն**
- ✓ **երկու խմբի տնային տնտեսություններ՝ համատեղ գոյատևող/խնայող (OLG) և սահմանափակ իրացվելիությամբ (ROT)**
- ✓ **տնտեսության արտահանելի և ոչ արտահանելի հատվածներ**
- ✓ **կապիտալ արտադրող ֆիրմաներ, վերավաճառողներ, արհմիություններ:**

Մոդելում կան նաև վարքագծային հատկանիշներ, որոնց շնորհիվ տարբեր խմբերի տնային տնտեսություններն ու ֆիրմաները որոշակի ձևով են արձագանքում հարկաբյուջետային քաղաքականության փոփոխություններին: Մոդելը հիմնվում է տնտեսական գործակալների վարքագծի վրա և թույլ է տալիս բացահայտել հարկաբյուջետային քաղաքականության բազմակողմանի ազդեցությունները, ինչը դժվար է իրագործել վիճակագրական մոդելների միջոցով: Այսպիսով, նշված գործիքի միջոցով հնարավոր է դառնում հասկանալ քաղաքականության փոփոխությունների մակրոտնտեսական ազդեցությունները, դրանց փոխանցումային մեխանիզմը և քանակապես գնահատել հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունները տնտեսական զարգացումների վրա միջին և երակարաժամկետ հատվածներում:

1.5.1. Ներքին շոկերի ազդեցությունը

Համաճարակի կանխարգելման նպատակով կիրառվող ներքին սահմանափակումների հետևանքով տնտեսությունում ձևավորվում են և՛ առաջարկի, և՛ պահանջարկի շոկեր:

Շոկերը կալիբրացվել են կիրառվող ներքին սահմանափակումների ազդեցությունների վերաբերյալ կատարված առանձին ՀՀ ՖՆ գնահատումների հիման վրա (2020թ համար ՀՆԱ-ի շուրջ 3.0%-ից 3.5% կորուստ): Այսպիսով, կիրառվող սահմանափակումների հետևանքով խաթարվում է տնտեսությունում արտադրանքի թողարկման գործընթացը, բարձրանում են արտադրական ծախսերը, որոնք հանգեցնում են աշխատուժի և ներդրումների նկատմամբ պահանջարկի նվազման, ինչն էլ իր հերթին առաջացնում է զբաղվածության կրճատում և աշխատավարձերի նվազում,

արդյունքում տնտեսությունում կրճատվում է տնօրինվող եկամտի մակարդակը՝ առաջացնելով նաև մասնավոր պահանջարկի անկում:

1.5.2. Արտաքին շոկերի ազդեցությունը

Համաճարակի հետևանքով առաջացած արտաքին տնտեսական շոկերի ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա գնահատելու համար դիտարկվել են արտաքին պահանջարկի նվազման, դրամական փոխանցումների կրճատման և երկրի ռիսկ պրեմիայի բարձրացման շոկեր, որոնց կալիբրացման համար հիմք են հանդիսացել ԱՄՀ կանխատեսումները և ՀՀ ՖՆ գնահատումները: Մասնավորապես, 2020թ. համար ենթադրվել է ՀՀ գործընկեր երկրներում տնտեսական աճերի միջինում 9.5 տոկոսային կետ դանդաղում, ամենամեծ անկումն ենթադրվել է 2020թ. երկրորդ եռամսյակում և դանդաղ վերականգնում՝ սկսած երրորդ եռամսյակից, դրամական փոխանցումների շուրջ 18% կրճատում և երկրի ռիսկ պրեմիայի (0.8 տոկոսային կետ) բարձրացում:

Այսպիսով, արտաքին շոկերի ազդեցության արդյունքում նվազում է արտահանման պահանջարկը և կրճատվում դրամական փոխանցումների ներհոսքը: Արտահանման պահանջարկի նվազման հետևանքով կրճատվում են արտահանելի հատվածում արտադրության ծավալները և զբաղվածության մակարդակը՝ հանգեցնելով նաև ներքին պահանջարկի թուլացման: Դրամական փոխանցումների կրճատումը հանգեցնում է տնօրինվող եկամտի կրճատման, և հետևաբար՝ տնտեսությունում մասնավոր պահանջարկի նվազման: Ներքին և արտաքին պահանջարկի թուլացումը ստիպում է կրճատել ընդհանուր թողարկման ծավալները և ներդրումային ծախսերը: Արդյունքում տնտեսությունում առաջանում են միաժամանակ առաջարկի և պահանջարկի անկում, որն Էլ իր հերթին նվազեցնում է ինչպես ՀՆԱ փաստացի մակարդակը, այնպես էլ երկարաժամկետ ներուժային մակարդակը:

1.5.3. Հարկաբյուջետային շոկերի ազդեցությունը

Կորոնավիրուսի ազդեցությունների մեղմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականության (ՀՀ կառավարության աջակցության փաթեթներ) արձագանքը պարունակում է սոցիալական և տնտեսական աջակցության, ինչպես նաև մասնավոր ներդրումների խթանմանն ուղղված միջոցառումներ՝ 150 մլրդ դրամ ընդհանուր ծավալով: Բացի այդ, կառավարության հակաճգնաժամային ծրագրերը ներառում են նաև մի շարք հարկային քաղաքականության ոլորտի միջոցառումներ (առավել մանրամասն ներկայացված է ներդիր 3-ում), որոնք հաշվի առնելով, ընդհանուր հակաճգնաժամային փաթեթը (առանց COVID-19 կանխարգելման և բուժմանն ուղղված առողջապահական ծախսերի) կազմում է 215.0 մլրդ դրամ[10], կամ 2020թ.-ի սպասվող ՀՆԱ-ի շուրջ 3.4%-ը:

Աղյուսակ 1.3. Կորոնավիրուսի ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների հիմնական ուղղությունները

Օժանդակության ծրագրեր		Հարկաբյուջետային ազդեցություններ	Սպասվող արդյունքներ
Տնտեսական աջակցության	20 մլրդ դրամ ծավալով սուբսիդավորման ծրագրեր	Ընթացիկ ծախսերի աճ	Ամբողջական պահանջարկի խթանում և

[10] 215.0 մլրդ դրամն ունի հետևյալ կառուցվածքը. 150 մլրդ դրամ՝ սոցիալ-տնտեսական միջոցառումների փաթեթների գծով ծախսեր, 65 մլրդ դրամ՝ շահութահարկի կանխավճարների համակարգի վերանայման և տրամադրված հարկային արձակուրդի արդյունքում չստացված հարկային եկամուտներ:

ծրագրեր	10 մլրդ դրամ ծավալով համաֆինանսավորման և վերաֆինանսավորման ծրագրեր	Պետական վարկավորման աճ (պակասուրդի գործառնություններ)	մասնավոր հատվածի իրացվելիության խնդիրների մեղմում
30 մլրդ դրամ սոցիալական աջակցության ծրագրեր		Ընթացիկ ծախսերի աճ	
10 մլրդ դրամ պահուստային գումարներ՝ հնարավոր վերաբաշխումների համար		Ընթացիկ ծախսերի աճ	
80 մլրդ դրամ մասնավոր ներդրումների խթանման ծրագրեր		Պետական վարկավորման աճ (պակասուրդի գործառնություններ)	Մասնավոր ներդրումների աճ
Շահութահարկի կանխավճարների համակարգի բարեփոխում և 2020թ.-ի երկրորդ եռամսյակի համար հարկատուներին շահութահարկի կանխավճարների վճարումից ազատում		Հարկային եկամուտների նվազում	2020թ. հարկատուների ընթացիկ իրավցելիության խնդիրների մեղմում և շահութահարկի՝ որպես հակապարբերաշրջանային ազդեցության գործիքի դերի մեծացում

Վերոնշյալ միջոցառումների իրականացումը նպաստում է մասնավոր սպառման և ներդրումների վերականգնմանը, ինչի արդյունքում զբաղվածության և իրական աշխատավարձի անկումը լինում է ավելի փոքր, տնտեսական աճի անկումը մեղմվում է մոտ 2.2 տոկոսային կետով և տնտեսության վերականգնումը տեղի է ունենում ավելի արագ:

1.6. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԸ

Կանխատեսման առկա ռիսկերը պայմանավորվում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տնտեսական գործոններով, որոնք կարող են հանգեցնել ինչպես տնտեսական աճի տեմպերի ավելացմանը, այնպես էլ նվազմանը՝ ներկայացված կենտրոնական կանխատեսումների համեմատ: Ռիսկերի տեղի ունենալու դեպքում շեղումներ կարձանագրվեն սույն փաստաթղթի 1.4 բաժնում ներկայացված ենթադրություններից՝ հանգեցնելով մակրոտնտեսական կանխատեսումներից շեղումների և դրա հետևանքով էլ հարկաբյուջետային շրջանակի ցուցանիշների շեղման:

Պետք է նշել, որ համաշխարհային տնտեսության զարգացման ընթացքը մեծապես կախված է COVID-19 համավարակի հաղթահարմանն ուղղված առողջապահական միջոցառումներից: Այս պայմաններում, անորոշության մեծ աստիճանից ելնելով՝ ինչպես աշխարհի և ՀՀ գործընկերների, այնպես էլ ՀՀ տնտեսական աճի կանխատեսումներում առկա են դեպի ներքև ռիսկեր:

1. **ՀՀ տնտեսական աճի դեպի ներքև ուղղությամբ ռիսկեր՝**


- Արտաքին միջավայրից բխող դեպի ներքև ռիսկերը կապված են համաշխարհային տնտեսական ավելի խորը անկման և կորոնավիրուսի համավարակի երկրորդ ալիքի տարածման ու նոր հնարավոր սահմանափակումների կիրառման հետևանքով տնտեսական կորուստների, երկրների սահմանների բացման և փոխադրումների սահմանափակումների վերացման ընթացքի անորոշությունների, ինչպես նաև հումքային ապրանքների գների ոչ բարենպաստ տատանումների հետ:
- Ներքին միջավայրից բխող դեպի ներքև ռիսկերը կապված են ՀՀ-ում կորոնավիրուսի համավարակի տարածման անորոշությունների, երկրորդ ալիքի հավանական ի հայտ գալու և դրա հետևանքով հետագա տնտեսական կորուստների, ՀՀ կառավարության աջակցության փաթեթների (մասնավորապես ներդրումների խթանմանն ուղղված՝ 80 մլրդ դրամ փաթեթի) ազդեցության ավելի դանդաղ դրսևորման, ՀՀ կառավարության կառուցվածքային բարեփոխումների և ներդրումների խթանման քաղաքականության ակնկալվող արդյունքների սպասվածից ավելի ուշ արտահայտման հետ:

2. **Տնտեսական աճի դեպի վերև ուղղությամբ ռիսկեր՝**

Ներքին միջավայրից բխող դեպի վերև ռիսկերը կապված են տնտեսության վերականգման ուղղված ՀՀ կառավարության միջոցառումների հետ, մասնավորապես՝ արտահանման և ներդրումների խթանման ուղղությամբ:

Տնտեսական աճի ռիսկերը ներկայացված են ներքոնշյալ Գծապատկեր 1.32-ում և Աղյուսակ 1.4-ում:

Գծապատկեր 1.32. *Իրական ՀՆԱ աճի կանխատեսման հավանականությունների բաշխումը (Fan Chart)*



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ գնահատումներ և կանխատեսումներ

Աղյուսակ 1.4. *Իրական ՀՆԱ-ի աճի կանխատեսման հավանականությունների բաշխումը, (կուտակային)*[11]

Տնտեսական աճի միջակայքը, %	Տնտեսական աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը, %			
	2021 I եռ.	2021 II եռ.	2021 III եռ.	2021 IV եռ.
0-2	**0.29**	0.23	0.18	0.15
2-4	0.13	**0.29**	0.26	0.24
4-6	0.02	0.21	**0.27**	**0.27**
6-8	0.00	0.06	0.13	0.17

Ինչպես երևում է Գծապատկեր 1.32-ից, 2021թ. տնտեսական աճի ձևավորման ամենաբարձր հավանականությունը գտնվում է կենտրոնական կանխատեսումները պարունակող համապատասխան միջակայքում (Գծապատկեր 1.32-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 1.4-ում՝ հոծ նշումով), իսկ իրական ՀՆԱ-ի տարեկան աճի կենտրոնական կանխատեսումներից շեղման ռիսկերում ավելի մեծ են դեպի ներքև ռիսկերը:

[11] **Աղյուսակի 1-ին սյունը իրենից ներկայացնում է տնտեսական աճի հնարավոր միջակայքերը, իսկ 2-ից 5-րդ սյուները՝ համապատասխան միջակայքերում տնտեսական աճի գտնվելու հավանականությունները: Աղյուսակում ներկայացվել են տնտեսական աճի ամենահավանական միջակայքերը, որոնք միասին ծածկում են բաշխման ընդհանուր հավանականության շուրջ 83%-ը, այսինքն՝ հավանականությունը, որ տնտեսական աճը կգտնվի 0%-ից 8% միջակայքում, կազմում է մոտ 83%:**

1.7. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ՆԱԽՈՐԴ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

Աղյուսակ 1.5. *ՀՆԱ-ի կանխատեսումները 2021-2023 թթ. ՄԺԾԾ-ով և 2020թ. և 2021թ. պետական բյուջեներով*

Ցուցանիշներ	Ծրագիր	2019	2020	2021
		փաստ/կանխ.*	*կանխ.*	*կանխ.*
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	*2021 Պետական բյուջե*	6,569.0	6,247.9	6,720.0
	2021-2023 ՄԺԾԾ	6569.0	6,505.1	7,143.0
	2020 Պետական բյուջե	6,566.5	7,095.1	-
Տնտեսական (իրական ՀՆԱ-ի) աճ, %	*2021 Պետական բյուջե*	7.6	-6.0	4.8
	2021-2023 ՄԺԾԾ	7.6	-2.6	7.0
	2020 Պետական բյուջե	6.3	4.9	-
ՀՆԱ-ի դեֆլյատորի աճ, %	*2021 Պետական բյուջե*	1.5	1.2	2.6
	2021-2023 ՄԺԾԾ	1.5	1.7	2.7
	2020 Պետական բյուջե	2.9	3.0	-

** 2021-2023 ՄԺԾԾ և 2021 պետական բյուջեի համար 2019թ. ցուցանիշները փաստացի են*

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ կանխատեսումներ

Աղյուսակ 1.6. *Ընթացիկ հաշվի կանխատեսումները 2021-2023 թթ. ՄԺԾԾ-ով և 2020թ. և 2021թ. պետական բյուջեներով*

Ցուցանիշներ	Ծրագիր	2019	2020	2021
		փաստ/կանխ.*	*կանխ.*	*կանխ.*
Ընթացիկ հաշիվ, մլն ԱՄՆ դոլար	*2021 Պետական բյուջե*	-987.5	-711.6	-685.6
	2021-2023 ՄԺԾԾ	-987.5	-1,247.3	-1,020.0
	2020 Պետական բյուջե	-943.9	-862.5	-
Ընթացիկ հաշիվ, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*2021 պետկան բյուջե*	-7.2	-5.5	5.0
	2021-2023 ՄԺԾԾ	-7.2	-9.7	-7.3
	2020 Պետական բյուջե	-7.	-6.0	-

** 2021-2023 ՄԺԾԾ և 2021 պետական բյուջեի համար 2019թ. ցուցանիշները փաստացի են*

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ կանխատեսումներ

ՄԱՍ Ի-Գ. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

2.1. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

- Վերջին տարիների բարձր տնտեսական աճի պայմաններում իրականացված հարկաբյուջետային քաղաքականությունը միտված է եղել ՀՀ կառավարության պարտքի կայունության ապահովմանը, ինչի արդյունքում 2019թ. արձանագրվել է կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության 50%-ից ցածր մակարդակ:
- ՀՀ կառավարության կողմից իրականացվող ստվերի դեմ պայքարով, հարկային վարչարարության բարելավմամբ և 2019թ. համար նշանակալի՝ ավտոմեքենաների ներմուծման ծավալների աճով պայմանավորված արձանագրվել է հարկեր/ՀՆԱ ցուցանիշի աննախադեպ բարելավվում՝ որը հասել է 22.3%-ի:
- 2020 թվականի պետական բյուջեի ընթացիկ զարգացումների վրա զգալի ազդեցություն են ունեցել COVID-19 համավարակի (կորոնավիրուսի) արագ տարածումը, դրա կանխման նպատակով կիրառված ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աշխարհի տնտեսական և աշխարհագրական սահմանափակումները, ինչպես նաև ՀՀ կառավարության հակաճգնաժամային գործողությունները՝ հանգեցնելով հարկային եկամուտների նվազմանը և ընթացիկ ծախսերի աճին: Արդյունքում 2020թ.-ին սպասվում է պետական բյուջեի պակասուրդի՝ նախորդ տարվա համեմատ 5.1 և կառավարության պարտքի՝ 15.0 տոկոսային կետով (ՀՆԱ-ի նկատմամբ) աճ:
- COVID-19 համավարակի հետևանքով առաջացած իրավիճակը հարկաբյուջետային կանոններով սահմանված կարգով դիտարկվել է որպես բացառիկ դեպք, , ինչն արտացոլված է «2020թ. պետական բյուջեի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին կառավարության՝ 2020թ. ապրիլի 23-ի թիվ 587-Ա որոշմամբ:
- Կորոնովիրուսի հետևանքների մեղման նպատակով կառավարությունը մշակել է հակաճգնաժամային միջոցառումներ մոտ 215 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ում 3.4%-ի չափով, այդ թվում՝ կորոնավիրուսի սոցիալ-տնտեսական հետևանքների կանխարգելմանն ուղղված փաթեթը (150 մլրդ դրամ), ինչպես նաև հարկային քաղաքականության ոլորտում կատարված բարեփոխումները (շահութահարկի գծով՝ 65 մլրդ դրամ), որոնք թույլ կտան նվազեցնել ճգնաժամի բացասական հետևանքները և մեղմել տնտեսական անկումը:
- 2021թ. տնտեսության վերականգնման պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունը կունենա փոքր զսպող ուղղվածություն՝ պայմաններ ստեղծելով միջնաժամկետում ՀՀ կառավարության պարտքի նվազման և հարկաբյուջետային կայնության ապահովման համար: Իսկ միջնաժամկետում՝ տնտեսության վերականգնմանը զուգահեռ հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված է

լինելու պարտքի մակարդակի նվազեցմանը և կայունություն պահպանմանը, ինչպես նաև երկարաժամկետ տնտեսական աճի խթանմանը՝ շեշտադրվելով պետական ներդրումների մասնաբաժնի մեծացումը և ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացումը:

- 2021 թվականին կանխատեսվող տնտեսական վերականգնման, հարկային վարչարարության բարելավման և ստվերի դեմ պայքարի արդյունքում ակնկալվում է հարկեր/ՀՆԱ-ի բարելավում շուրջ 0.6 տոկոսային կետով:
- Կորոնավիրուսի տարածման հետ կապված բացասական իրադարձությունները և անորոշությունները տնտեսության վրա կարող են ունենալ կանխատեսվածից ավելի մեծ բացասական ազդեցություն (գերակշռում են տնտեսական աճի դեպի ներքև ռիսկերը), ինչի արդյունքում առկա են պետական բյուջեի հարկային եկամուտների դեպի ներքև ռիսկեր:

Աղյուսակ 2.1. *2021թ. պետական բյուջեի հարկաբյուջետային շրջանակ*

	2017	2018	2019	2020	2021
մլրդ դրամ	Փաստացի			Սպասում	Բյուջե
Պետական բյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	1237.8	1341.7	1565.5	1437.5	1569.1
Հարկային եկամուտներ և տուրքեր	1158.0	1258.1	1464.3	1355.9	1500.9
Պետական բյուջեի ծախսեր	1504.8	1447.1	1629.4	1821.1	1843.1
Ընթացիկ ծախսեր	1267.4	1299	1437.1	1597.4	1627.7
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	237.4	148.1	192.3	223.7	215.4
Պետական բյուջեի դեֆիցիտ (-) / պրոֆիցիտ (+)	-267.0	-105.4	-64.0	-383.6	-274.1
Կառավարության պարտք	2988.4	3082.9	3277.3	4053.1	4246.9
կշիռը ՀՆԱ-ում, %					
Պետական բյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	22.2	22.3	23.8	23.0	23.3
Հարկային եկամուտներ և տուրքեր	20.8	20.9	22.3	21.7	22.3
Պետական բյուջեի ծախսեր	27.0	24.0	24.8	29.1	27.4
Ընթացիկ ծախսեր	22.8	21.6	21.9	25.6	24.2
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	4.3	2.5	2.9	3.6	3.2
Պետական բյուջեի դեֆիցիտ (-) / պրոֆիցիտ (+)	-4.8	-1.8	-1.0	-6.1	-4.1
Կառավարության պարտք	53.7	51.2	49.9	64.9	63.2

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ կանխատեսումներ

2.2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

2019 թվականի զարգացումները

2019 թվականին իրականացված հարկաբյուջետային քաղաքականությունը միտված է եղել ՀՀ կառավարության պարտքի կայունության ապահովմանը՝ զուգահեռաբար նպաստելով բարձր տնտեսական աճի և մակրոտնտեսական կայունության ապահովմանը: 2019 թվականին ՀՀ պետական բյուջեի եկամուտները ՀՆԱ-ում կազմել է 23.8%: Ընդ որում՝ եկամուտների կշիռը 2019 թվականին 2018-ի նկատմամբ բարելավվել է աննախադեպ 1.53 տոկոսային կետով: Հարկային եկամուտները և տուրքերը 2019 թ.-ին 2018 թ.-ի ՀՆԱ-ի նկատմամբ բարելավվել են 1.38 տոկոսային կետով՝ 20.9%-ից դառնալով 22.3%: Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարելավումը պայմանավորվել է ՀՀ կառավարության ստվերի դեմ իրականացվող պայքարով, հարկային վարչարարության բարելավմամբ և ավտոմեքենաների ներմուծման ծավալների աճով:

2019 թվականին պետական բյուջեի ընդամենը ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 24.8%-ը՝ 2018 թվականի նկատմամբ բարելավելով 0.8 տոկոսային կետով, որում ընթացիկ ծախսերը ՀՆԱ-ի նկատմաբ կազմել են 21.9%՝ բարելավվելով 0.3 տոկոսային կետով, իսկ ոչ ֆինանասական ակտիվների հետ գործառնությունները ՀՆԱ-ի նկատմաբ կազմել է 2.9%՝ բարելավվելով 0.47 տոկոսային կետով:

Արդյունքում, 2019 թվականներին հարկաբյուջետային քաղաքականությունն ամբողջական պահանջարկի վրա ունեցել է չեզոք ազդեցություն: Ընդ որում ուշադրության կենտրոնում է պահվել ՀՀ կառավարության պարտքի կայունության ապահովումը՝ զուգահեռաբար նպատակ դնելով նպաստել տնտեսական աճի վերականգնմանը և մակրոտնտեսական կայունության ապահովմանը: Հարկաբյուջետային ազդակը 2019 թվականին գնահատվել է 0.2 չեզոք՝ եկամուտների 1.1 զսպող և ծախսերի 1.3 ընդլայնող ազդեցություններով:

2019 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունն իրականացվել է «ոսկյա կանոնի» և նոր հարկաբյուջետային կանոնների տրամաբանության պահպանմամբ, ինչի արդյունքում կապիտալ ծախսերի չափը գերազանցել է պակասուրդի մեծությունը, իսկ հարկային եկամուտները գերազանցել են ընթացիկ ծախսերը:


2019թ. հարկաբյուջետային կանոններին համահունչ իրականացված հարկաբյուջետային կոնսոլիդացիայի արդյունքում ՀՀ կառավարության պարտքի բեռը նվազել է: 2019թ. ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը ցածր է գտնվել 50% շեմային ցուցանիշից, որը, ըստ 2019-2023թթ. ՀՀ կառավարության պարտքի նվազեցման վերանայված ծրագրի (2020-2022թթ. ՄԺԾԾ մաս կազմող), նախատեսվել էր արձանագրել 2023թ.: Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը նվազել է 1.3%-ային կետով, ինչին ամենաշատը նպաստել է տնտեսական աճը՝ -3.6%-ային կետով: Առաջնային հաշվեկշռի նպաստումը կազմել է -1.4%-ային կետ, իսկ իրական տոկոսադրույքի դրական նպաստումը աճել է՝ հասնելով 1.7%-ային կետի (տես՝ Գծապատկեր 2.5):

2020թ. ընթացիկ զարգացումներ

2020 թվականի ընթացքում COVID-19 համավարակի տարածման հետևանքով տնտեսական ակտիվության դանդաղման և թույլ պահանջարկի պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա գնահատվում է խթանող: Համավարակի հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամը հարկային եկամուտների վրա ունեցել է բացասական ազդեցություն, որն վերջին ամիսների աստիճանաբար թուլանում է: Այսպես՝ 2020թ.-ի ապրիլին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ հարկային եկամուտները նվազել են 9.1%-ով, մայիսին և հունիսին նվազման տեմպն արագացել է՝ հասնելով 32.1%-ի, իսկ հուլիս ամսից անկման տեմպն աստիճանաբար թուլացել է և օգոստոսին՝ կազմել 7.3%: Արդյունքում՝ 2020 թվականի ութ ամիսներին ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 937.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 6.0%-ով, իսկ հարկեր և տուրքերը կազմել են 887.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 5.3%-ով: Հարկային եկամուտների հավաքագրման վրա մեծ ազդեցություն է ունեցել շահութահարկի բարեփոխումները (տես ներդիր՝ 3):

2020 թվականի հունվար-օգոստոս ամիսների արդյունքներով պետական բյուջեի ծախսերը կազմել են 1072.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 19.5%-ով: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են 993.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 17.4%-ով, որն իր մեջ ներառում է COVID-19-ին արձագանքման սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերի իրականացումը և առողջապահական ծախսերի աճը (COVID-19-ին արձագանքման փաստացի ծախսերը պետական բյուջեից օգոստոսի 31-ի դրությամբ կազմել են 49.6 մլրդ դրամ (COVID-19 արձագանքման ծախսերի առավել ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է ներդիր 3-ում)): Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները հունվար-օգոստոս ամիսներին կազմել են 79.4 մլրդ դրամ, որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը՝ 80.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 56.1%-ով:

Գծապատկեր 2.1. *Պետական բյուջեի հարկային եկամուտները 2019-2020 թվականներին ըստ ամիսների*




Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

2020 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ձևավորվել է պետական բյուջեի պակասուրդ 135.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ձևավորված 100.1 մլրդ դրամ պետական բյուջեի հավելուրդի դիմաց:

Կարճաժամկետ կանխատեսումներ

Ելնելով համավարակի տարածման տեմպից և արդեն իսկ տնտեսության վրա ունեցած ազդեցություններից՝ գնահատվում է, որ 2020թ.-ին տնտեսական անկման հետևանքով տեղի կունենա հարկային եկամուտների նվազում, ինչպես նաև ընթացիկ ծախսերի աճ՝ պայմանավորված հակաճգնաժամային միջոցառումների իրականացմամբ (հակաճգնաժամային միջոցառումների մանրամասն նկարագրությունը ներկայացված է ստորև՝ ներդիրում): 2019թ.-ի համեմատ հարկերի նվազումը կլինի ՀՆԱ-ի շուրջ 0.6 տոկոսի չափով, իսկ ընդհանուր ծախսերը կաճեն ՀՆԱ-ի մոտ 4.3 տոկոսի չափով: Սպասվում է նաև, որ կարձանագրվի կապիտալ ծախսերի որոշակի թերակատարում՝ հիմք ընդունելով նախորդ տարիների կատարողականները և ընթացիկ տարվա զարգացումները: Արդյունքում, հաշվի առնելով նաև կառավարության հակաճգնաժամային միջոցառումների փաթեթը, պետական բյուջեի պակասուրդը կաճի՝ կազմելով ՀՆԱ-ի շուրջ 6.1 տոկոսը, իսկ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կկազմի շուրջ 64.9 տոկոս: Այս առումով, 2020թ.-ի տնտեսական անկումը համարելով բացառիկ դեպք (Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.3 կետի համապատասխան), 2020թ.-ին հարկաբյուջետային կանոնների համակարգին համահունչ հնարավոր կլինի շեղվել պարտքի և ծախսերի կանոններից. բյուջեի պակասուրդը կլինի ավելի մեծ քան կապիտալ ծախսերն են, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի աճը կգերազանցի նախորդ 7 տարիների անվանական ՀՆԱ-ի աճի միջին տեմպը:

Գծապատկեր 2.2. *Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը, մլրդ դրամ*




Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

Հարկաբյուջետային և պարտքային կայուն միջավայր ձևավորելու անհրաժեշտությունից ելնելով՝ 2021 թվականին ծրագրավորվում է իրականացնել զսպող հարկաբյուջետային քաղաքականություն: 2020թ.-ին տնտեսության վերականգնմանը

զուգահեռ կիրականացվի խթանող հարկաբյուջետային քաղաքականություն, որի ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա գնահատվում է 4.13 տոկոս ընդլայնող, իսկ զուտ վարկավորման ցուցանիշները (որն իր մեջ ներառում է 2020թ.-ին կորոնովիրուսի հաղթահարման տնտեսական հետևանքները չեզոքացնող միջոցառումների զգալի մասը) հաշվի առնելու դեպքում, ընդլայնող ազդեցությունը կկազմի 5.4 տոկոս: 2021 թվականին, պետական բյուջեի դեֆիցիտը կնվազի՝ կազմելով ՀՆԱ-ի 4.1%-ի չափ, իսկ հարկաբյուջետային քաղաքականությունը կլինի զսպող՝ պայմաններ ստեղծելով միջնաժամկետում ՀՀ կառավարության պարտքի նվազման և հարկաբյուջետային կայունության ապահովման համար:

Գծապատկեր 2.3. *Հարկաբյուջետային ազդակը*



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ գնահատականներ


2021թ.-ին, հաշվի առնելով տնտեսական ճգնաժամի հետևանքով տնտեսության վերականգնման սպասվածից ավելի դանդաղ կանխատեսումները, նախատեսվում է ևս մեկ տարի օգտագործել հարկաբյուջետային կանոնների համակարգով նախատեսված բացառիկ դեպքի կարգավորումներից[12] և պետական ֆինանսների «ոսկե կանոնների» տրամաբանությանը վերադառնալ միջնաժամկետ հատվածում՝ վերականգնման արդյունավետ ընթացքն ապահովելու նպատակով: Այդ տրամաբանությամբ, 2021թ.-ին տնտեսության վերականգնումը չխաթարելու և մակրոտնտեսական կայունությանը նպաստելու նպատակով, նախատեսվում է իրականացնել հարկաբյուջետային սահուն կոնսոլիդացիա, ինչի արդյունքում պետական բյուջեի կապիտալ ծախսերը ևս մեկ տարի կլինեն ավելի փոքր, քան բյուջեի պակասուրդը:

Միջնաժամկետում, տնտեսության վերականգնմանը զուգահեռ, վերադարձ կկատարվի հարկաբյուջետային կանոններով սահմանված պետական ֆինանսների «ոսկե կանոնների» տրամաբանությանը՝ ապահովելով պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազող հետագիծը և ծախսերի կառուցվածքի բարելավումը, ինչպես նաև հետևողական քայլեր կատարելով ծախսերի գծով խնայողությունների և եկամուտների ավելացման ուղղությամբ

[12] Առավել մանրամասն ներկայացված է «2.5. Հարկաբյուջետային քաղաքականության համապատասխանությունը հարկաբյուջետային կանոններին» հատվածում

(Հարկաբյուջետային քաղաքականության միջնաժամկետ առաջնահերթությունները և նպատակները առավել մանրամասն ներկայացված են ՀՀ կառավարության 2021-2023թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի 2-րդ գլխի 2.2 կետում):

Գծապատկեր 2.4. *Ոսկե կանոններից շեղումը 2020-2021թվականներին*




Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ


Վերոնշյալի հետևանքով 2021թ.-ին կապիտալ ծախսերի համար պետական ֆինանսների «ոսկե կանոնը» ևս մեկ տարի չի պահպանվի և բյուջեի պակասուրդը կլինի ավելի մեծ, քան կապիտալ ծախսերի ծավալն է:

COVID-19 համավարակով պայմանավորված տնտեսական ցնցման և վերջինիս խթանող հարկաբյուջետային քաղաքականությամբ հակազդելու պատճառով ՀՀ կառավարության պարտքի բեռը 2018-2019թթ. արձանագրված հարկաբյուջետային կոնսոլիդացիայից հետո կտրուկ կաճի՝ գերազանցելով սահմանային շեմ հանդիսացնող 60% ցուցանիշը և 2021 թ.-ին կկազմի 63.2%, որից հետո միջնաժամկետում աստիճանաբար կնվազի:, Իսկ 2024թ.-ին կնվազի 60% շեմային ցուցանիշիցից : Միջնաժամկետում ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազմանը նպաստող հիմնական գործոնը կլինի տնտեսական աճը :

Գծապատկեր 2.5. *ՀՀ կառավարության պարտքի դինամիկան և այն պայմանավորող գործոնները*[13]

[13] Կառավարության պարտքի բեռի փոփոխության տրոհումը ըստ գործոնների հաշվարկվել է բաց տնտեսությունում «պարտքի շարժման» բանաձևի օգնությամբ, որտեղ պարտքի փոփոխությունը ֆունկցիա է տնտեսական աճից, բյուջեի առաջնային հաշվեկշռից, փոխարժեքից, իրական տոկոսադրույքից և պարտք առաջացնող այլ հոսքերից (ՀՀ համար՝ զուտ վարկավորում պետական բյուջեից): Հաշվարկման ընթացքում այս գործոններով չբացատրված պարտքի փոփոխության չափը արտացոլվում է որպես «մնացորդ», և, կարող է բնութագրել քրոս (արժույթների միմյանց նկատմամբ) փոխարժեքների փոփոխությամբ պայմանավորված վերագնահատման ազդեցությունները:





Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

Ներդիր 3: Կորոնավիրուսի ճգնաժամի հաղթահարմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականության միջոցառումները

COVID-19 համավարակի տարածման բացասական ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա արտացոլվել են ինչպես արտաքին աշխարհից փոխանցվող շոկերի այնպես էլ ներքին տնտեսական սահմանափակումների տեսքով: Տնտեսական խորը անկումը կանխելու, ինչպես նաև հետագա վերականգնումը խթանելու համար, կառավարությունը 2020 թվականին իրականացնելու է 150 մլրդ դրամ ընդհանուր գումարի չափով սոցիալ տնտեսական աջակցության միջոցառումների ծրագիր՝ հետևյալ հիմնական ուղղություններով.

•30 մլրդ դրամ՝ տնտեսավարողներին աջակցության ծրագրեր, որոնք ուղղված են ընթացիկ իրացվելիության խնդիրների լուծմանը,

•30 մլրդ դրամ՝ սոցիալական աջակցության ծրագրեր,

•80 մլրդ դրամ՝ տնտեսության վերականգնման և երկարաժամկետ զարգացմանն ուղղված ծրագրեր,

•10 մլրդ դրամ՝ պահուստային միջոցներ անհրաժեշտ վերաբաշխումներ իրականացնելու համար:


Սեպտեմբերի 23-ի դրությամբ COVID-19 համավարակին ուղղված սոցիալական աջակցության փաստացի ծախսերը կազմել են 25.7 մլրդ դրամ, տնտեսական աջակցության ծախսերը կազմել են 30.4 մլրդ դրամ, իսկ առողջապահական ծախսերի ծավալը կազմել է մոտ 16.1 մլրդ դրամ:

Բացի վերոնշյալ միջոցառումներից, կառավարության հակաճգնաժամային ծրագրերը ներառում են նաև մի շարք հարկային քաղաքականության ոլորտի միջոցառումներ (առավել մանրամասն ներկայացված է ներքևում), որոնք հաշվի առնելով, ընդհանուր հակաճգնաժամային փաթեթը կազմում է 231.1 մլրդ դրամ[14], կամ 2020թ.-ի սպասվող ՀՆԱ-ի շուրջ 3.7%-ը:

Կառավարության հակաճգնաժամային միջոցառումների իրականացմամբ, ինչպես նաև տնտեսական անկման հետևանքով հարկային եկամուտների նվազմամբ պայմանավորված 2020թ.-ին պետական բյուջեի պակասուրդը կաճի՝ կազմելով ՀՆԱ-ի շուրջ 6.1 տոկոսը, իսկ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կկազմի շուրջ 64.9 տոկոս:


Գծապատկեր 2.6. Հարկաբյուջետային քաղաքականությունների արձագանքը տնտեսական ճգնաժամերին

[14] 231.1 մլրդ դրամն ունի հետևյալ կառուցվածքը. 150 մլրդ դրամ՝ սոցիալ-տնտեսական միջոցառումների փաթեթների գծով ծախսեր, 65 մլրդ դրամ՝ շահութահարկի կանխավճարների համակարգի վերանայման և տրամադրված հարկային արձակուրդի արդյունքում չստացված հարկային եկամուտներ, 16.1 մլրդ դրամ՝ առողջապահական ծախսեր:



Համավարակին հակազդելու համար մշակված հարկաբյուջետային փաթեթները աշխարհի մակարդակով գնահատվում են 11 տրիլիոն դոլար[15]: Դրանք ներառում են ոչ միայն ուղղակի ծախսային կամ հարկային միջոցառումներ, այլև վարկերի և վարկային երաշխիքների տրամադրում, որոնք ներկայացվել են Գծապատկերում՝ որպես պակասուրդի գործառնություններ և պայմանական պարտավորությունների ստանձնում: Հատկանշական է, որ երկրների մեծ մասը կիրառում է պետական վարկավորումը կամ երաշխիքները՝ որպես աջակցության հիմնական գործիքներ:

Գծապատկեր 1. Հարկաբյուջետային քաղաքականության արձագանքը համավարակի տնտեսական հետևանքներին առանձին երկրներում[16]



Առավել խոշոր հակազդման փաթեթներով առանձնանում են Գերմանիան և Իտալիան, որոնց մշակած միջոցառումների ամբողջական փաթեթները ՀՆԱ 40%-ի շուրջ են: Սակայն ընդհանուր առմամբ զարգացած երկրների միջինացված ցուցանիշները չեն գերազանցում 20%-ը, որից 9%-ային կետը բաժին է ընկնում ծախսերին և հարկերին: Զարգացող շուկաների (Emerging markets) միջոցառումների միջինացված փաթեթները սակայն ՀՆԱ 5%-ը չեն գերազանցում, որից շուրջ 3%-ային կետը ծախսային և հարկային միջոցառումներին է բաժին ընկնում:

ՀՀ դեպքում աջակցության փաթեթի զգալի մասը (3.7%-ից 1.4%-ը) նախատեսվում է ուղղել երկարաժամկետ տնտեսական ծրագրերի իրականացմանը՝ օգտագործելով պետական վարկավորման

[15] Աղբյուրը՝ https://blogs.imf.org/2020/07/10/fiscal-policies-for-a-transformed-world/:
[16] Աղբյուրը՝ ԱՄՀ, https://www.imf.org/en/Topics/imf-and-covid19/Fiscal-Policies-Database-in-Response-to-COVID-19: Տվյալները հունիսի 12-ի դրությամբ:

գործիքը (պակասուրդի գործառնությունների միջոցով): Ընդհանուր առմամբ, միջոցառումների քննարկման գործընթացը շարունակվում է, բայց արդեն ընթացքի մեջ են գտնվում կամ իրենց բովանդակությամբ պայմանավորված՝ ավարտվել են 24 միջոցառումներ: Դրանցից 9-ը հանդիսանում են տնտեսական[17] աջակցության (վարկերի համաֆինանսավորում, վերաֆինանսավորում և տոկոսադրույքների մասամբ կամ ամբողջությամբ սուբսիդավորում, առանձին ոլորտներում օժանդակություն և դրամաշնորհների տրամադրում և այլն), իսկ 12-ը սոցիալական[18] աջակցության (միանվագ աջակցություն բնակչությանն ըստ տարբեր սոցիալական հատկանիշների, աջակցություն կոմունալ վճարների, ուսման վճարների հարցում, օգնության տրամադրում տուժած ոլորտներում աշխատողներին և այլ) միջոցառումներ:

Հարկային քաղաքականության տեսանկյունից Կառավարության քայլերն ուղղված են եղել տնտեսական ճգնաժամի պայմաններում հարկ վճարողների իրացվելիության խնդիրների լուծմանը, տնտեսական ճգնաժամի պայմաններում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգավորումների գործարար միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության մեղմմանը և տնտեսության հետագա վերականգնման համար տնտեսական ներուժի ստեղծման համար հարկային կարգավորումների բերալավմանը:

Համավարակի հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամն ընդհանուր իրացվելիության տեսանկյունից բավական լուրջ խնդիրներ էր ստեղծել տնտեսավարող սուբյեկտների համար: Ստեղծված իրավիճակում իր բացասական ազդեցությունն էր թողնում նաև շահութահարկի կանխավճարների համակարգը, որը բավարար չափով ճկուն չլինելու պատճառով ընթացիկ տարվա ընթացքում տնտեսավարող սուբյեկտների համար բավական լուրջ խնդիրներ էր ստեղծել:

Մասնավորապես, տնտեսավարող սուբյեկտներից շատերը, մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը չկարողանալով կանխատեսել իրացման շրջանառության ծավալների անկումն ու հնարավոր տնտեսական դժվարությունները, հարկային մարմին չէին ներկայացրել շահութահարկի կանխավճարներն այլընտրանքային եղանակով կատարելու հայտարարություններ, ինչի արդյունքում ստիպված էին ընթացիկ տարվա ընթացքում յուրաքանչյուր եռամսյակի շահութահարկի կանխավճարները կատարել նախորդ տարվա շահութահարկի գումարի 20 տոկոսի չափով:

Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ ցանկացած տնտեսություն զարգանում է պարբերա-շրջաններով, ինչը նշանակում է, որ զարգացման այս կամ այն փուլում տնտեսական և այլ շոկերը անխուսափելի են ինչպես ամբողջ տնտեսության համար, այնպես էլ առանձին ճյուղերում և նույնիսկ առանձին տնտեսավարող սուբյեկտների մոտ: Այդ շոկերը հանգեցնում են տնտեսվարող սուբյեկտների (այս դեպքում՝ շահութահարկ վճարողների) իրացվելիության տատանումների և կանխիկ հոսքերի կառավարման խնդիրների: Ընդ որում, նշված շոկերը և մասնավորապես՝ խոշոր շոկերի (անկումներ և ճգնաժամեր) տեղի ունենալու ժամանակահատվածը հիմնականում անկանխատեսելի է, այդ իսկ պատճառով շատ տնտեսավարող սուբյեկտներ դժվարությամբ կարող են կանխատեսել, թե շոկերը տվյալ տարվա որ եռամսյակում են տեղի ունենալու: Հետևաբար, այս պայմաններում կարևոր է շահութահարկի կանխավճարների ճկուն համակարգի առկայությունը, որը հնարավորություն կտա տնտեսավարող սուբյեկտներին ճկուն կերպով արձագանքել այդ շոկերին և իրացվելիության տատանում-ներին՝ ապահովելու համար այդ շոկերի սահուն հաղթահարումը և վերադարձը դեպի բնականոն զարգացման:

Շահութահարկի կանխավճարների ճկուն համակարգի առկայությունը կարևոր է նաև մակրո մակարդակում հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետ իրականացման տեսանկյունից: Մասնավորապես, դրա կիրառումը հնարավորություն կտա ապագայում ավելի արդյունավետ կերպով մեղմել տնտեսական տատանումները՝ ավտոմատ կերպով արձագանքելով շոկերին և դրանց հետևանքով առաջացող իրացվելիության խնդիրներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կառավարության նախաձեռնությամբ վերանայվել է շահութահարկի կանխավճարների համակարգը և սահմանվել, որ՝

ա) տնտեսավարող սուբյեկտները պարտավոր են ընթացիկ հարկային տարվա յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև տվյալ եռամսյակի վերջին ամսվա 20-ը ներառյալ, կատարել շահութահարկի կանխավճարներ նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի 20 տոկոսով հաշվարկվող

[17] Տնտեսության աջակցության ծրագրերն առավել մանրամասն ներկայացված են ՀՀ կառավարության պաշտոնական էջում, որը հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.gov.am/am/covid19./

[18] Սոցիալական աջակցության ծրագրերն առավել մանրամասն ներկայացված են ՀՀ կառավարության պաշտոնական էջում, որը հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.gov.am/am/covid-19-cragrer./

գումարի և նախորդ եռամսյակի ընթացքում ստացվող եկամուտների երկու տոկոսով հաշվարկվող գումարի նվազագույնի չափով՝ զուգահեռաբար վերացնելով նաև կանխավճարի որևէ եղանակի ընտրության համար հայտարարություն ներկայացնելու պահանջը,

բ) 2020 թվականի երկրորդ եռամսյակի համար շահութահարկի կանխավճարներ չեն հաշվարկվում և չեն վճարվում,

գ) 2020 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում հաշվարկված շահութահարկի կանխավճարի և 2019 թվականի շահութահարկի գումարի 20 տոկոսով հաշվարկվող գումարի տարբերության չափով ճշգրտվում է 2020 թվականի հուլիսի 1-ից հետո առաջիկա եռամսյակի շահութահարկի կանխավճարի գումարը:

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ օրենդրական վերոնշյալ փոփոխությունը դրականորեն է ազդելու 2020 թվականին՝ շուրջ 7650, իսկ հետագա տարիներին՝ շուրջ 8300 տնտեսավարող սուբյեկտների հարկային միջավայրի վրա (հաշվի առնելով այն, որ կատարված փոփոխությունը ժամանակավոր բնույթ չի կրում և ուղղված է նաև երկարաժամկետ հատվածում հարկային միջավայրի բարելավմանը), իսկ օրենսդրական փոփոխության արդյունքում 2020 թվականին տնտեսավարող սուբյեկտների մոտ խնայված շրջանառու միջոցները կազմում են շուրջ 65 մլրդ դրամ, ինչը նշանակում է, որ, այլ հավասար պայմաններում, այդ նույն չափով պակաս հարկային եկամուտներ են հավաքագրվելու:

Համավարակի հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամի հնարավոր բացասական հետևանքները մեղմելու և հարկային պարտավորությունները չկատարելու հետևանքով տնտեսավարող սուբյեկտների հնարավոր սնանկացման ռիսկերը չեզոքացնելու նպատակով 2020 թվականի ապրիլի 22-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով, մասնավորապես, նվազեցվել է հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվող տույժի դրույքաչափը և 0,075 տոկոսի փոխարեն սահմանվել է 0,04 տոկոս: Նշյալ օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի մայիսի 14-ից և տարածվում է 2020 թվականի ապրիլի 21-ից ծագած հարաբերությունների վրա: Այսինքն, 2020 թվականի ապրիլի 21-ից տույժերը հաշվարկվում են նվազեց-ված դրույքաչափով: Ընդ որում, 2020 թվականի ապրիլի 21-ից տույժերը նվազեցված դրույքաչափով հաշվարկվում են նաև այն դեպքերում, երբ տույժերի հաշվարկը սկսվել է մինչև նշյալ օրենքն ուժի մեջ մտնելը:

Վերոգրյալը նշանակում է, որ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվող տույժի հաշվարկային մեծությունը գրեթե հավասարվում է ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի տոկոսա-դրույքին:

Ավելին, վերոնշյալ օրենքով բարձրացվել է չկատարված հարկային պարտավորությունների շեմը, որը գերազանցելու դեպքում հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ հարկ վճարողի գույքի վրա կարող է արգելանք դրվել: Մասնավորապես, չկատարված հարկային պարտավորությունների շեմը 500 հազար դրամի փոխարեն սահմանվել է 1. 5 միլիոն դրամ:

Ինչ վերաբերում է տնտեսության հետագա վերականգնման, ներդրումային ակտիվության մակարդակի բարձրացման և տնտեսական ներուժի ստեղծման համար հարկային կարգավորումների բերալավմանը, ապա այդ կապակցությամբ կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանվել է, որ 2020 թվականի հուլիսի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ներմուծվող կամ ձեռք բերվող (կառուցվող, մշակվող) հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է տնտեսավարող սուբյեկտի հայեցողությամբ, բայց ոչ պակաս, քան մեկ տարի:

2.3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Հարկաբյուջետային կանխատեսումները հիմնված են մի շարք ենթադրությունների և հիմնական դատողությունների վրա, որոնց համար օգտագործվել է տվյալ պահի դրությամբ

առկա և հասանելի ամբողջ տեղեկատվությունը[19]: Ինչպես ցանկացած կանխատեսում, հարկաբյուջետային կանխատեսումները նույնպես պարունակում են ռիսկեր առ այն, որ փաստացի իրադարձությունները կարող են տարբերվել սպասումներից: 2021 թվականի պետական բյուջեի հիմքում ընկած հիմնական մակրոտնտեսական հարկաբյուջետային ռիսկերը հետևյալն են՝

•**COVID-19 համավարակի անորոշություններ:** Կորոնավիրուսի տարածման և տևողության անորոշությունների հետևանքով տնտեսական աճի ռիսկերը գնահատվում են առավելապես դեպի ներքև, որը պայմանավորված է ճգնաժամից տնտեսության վերականգնման անորոշությունների՝ ավելի ուշ դուրս գալու ռիսկերով: Տնտեսական բացասական ռիսկերի ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտները պետական բյուջեի հարկաբյուջետային շրջանակից ավելի ցածր կլինեն: Այս պարագայում 2021 թվականին տնտեսության ավելի դանդաղ վերականգնման պայմաններում ծախսային ծրագրերով ընթացիկ ծախսերի նվազման հնարավորություններ առկա չեն:

•**ՀՀ կառավարության հակաճգնաժամային և տնտեսության հետագա վերականգնմանն ուղղված միջոցառումների ընթացք:** ՀՀ կառավարության կողմից իրականացվող COVID 19-ի հետևանքների չեզոքացման և տնտեսական վերականգնման միջոցառումների դրական ազդեցությունները տնտեսության վրա կարող են լինել սպասվածից ավելի փոքր՝ չնպաստելով պետական բյուջեի սպասվող ցուցանիշների արձագանքմանը: Վերջինս կապված է նաև ծրագրերի իրականացման ժամկետների անորոշությամբ, հատկապես մասնավոր ներդրումների խթանման ուղղված ծրագրի մասով, քանի որ այդ փաթեթի գծով փաստացի ծախսերը դեռևս բավականին փոքր են և դրանք 2020թ. ընթացքում ամբողջ ծավալով իրականացման ռիսկեր կան (չնայած բյուջեի կանխատեսումների հիմքում ընկած է այս տարի դրա ամբողջական օգտագործման ենթադրությունը): Բացի այդ, տնտեսության աջակցության միջոցառումներում հնարավոր է նախատեսվեն աջակցության նոր ծրագրեր, որոնց արդյունքում հարկաբյուջետային շրջանակի ցուցանիշները վերանայման կարիք կունենան:

•**Հարկաբյուջետային շրջանակի հնարավոր փոփոխությունները մակրոտնտեսական կանխատեսումների շեղումների դեպքում և սթրես թեստերի ներքո**[20]**.**

- **Հարկային եկամուտներ:** 2021 թվականի ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա գնահատված է մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման ռիսկերի շեղման ամփոփ գնահատականը: Հարկային եկամուտների վրա ազդող վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտների ծրագրված մակարդակից շեղումը կկազմի շուրջ 16.6 մլրդ ՀՀ դրամ:

---

[19] Հարկաբյուջետային կանխատեսումների համար հիմք է հանդիսացել 2020թ.-ի հունիսի վերջի դրությամբ առկա տեղեկատվությունը՝ համավարակի տարածման արագության, դրա տնտեսական ազդեցությունների, միջազգային կազմակերպությունների կանխատեսումների, ինչպես նաև հարկաբյուջետային քաղաքականության հակաճգնաժամային միջոցառումների վերաբերյալ:

[20] Այս հատվածում նկարագրված ռիսկերի առավել մանրամասն վերլուծությունը ներկայացված է այս փաստաթղթի ՄԱՍ IV-ի «Պետական բյուջեի վրա մակրոտնտեսական կանխատեսված ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատում» և «ՀՀ կառավարության պարտքի կայունության վերլուծություն» բաժիններում:

- **Պետական բյուջեի դրամաշնորհներ:** 2020-2021թթ. սպասվում է շուրջ 68 մլն Եվրոի չափով ԵՄ բյուջետային աջակցության դրամաշնորհի ստացում, որի մի մասը կարող է ստացվել 2020, իսկ մյուս մասը 2021 թվականին: Սակայն, վերջիս պարունակում է անորոշություններ, այդ իսկ պատճառով ներառված չէ հիմնական սցենարի կանխատեսումներում: Դրամաշնորհի ստացումը հանդիսանում է դրական ռիսկ, և դրա ստացման պարագայում փոփոխություններ կառաջանան ինչպես բյուջեի եկամուտների, այնպես էլ պակասուրդի և պարտքի ցուցանիշներում:
- **Պետական բյուջեի ծախսեր**: Կանխատեսումներում մեծ ուշադրություն է դարձվում նաև պետական բյուջեի ծախսերի պլանավորված մակարդակների ապահովումը խաթարող ռիսկերին, որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման: ՀՀ պետական բյուջեի ծախսերի վրա գնահատված է մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման ռիսկերի շեղման ամփոփ գնահատականը, որոնց միաժամանակյա ի հայտ գալու պարագայում 2021թվականին ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի լրացուցիչ ֆինանսավորման պահանջը կկազմի շուրջ 12.0 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 0.2%-ը: Ընդ որում՝ ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական նպատակադրումը լինելու է սոցիալական բնույթի ծախսերի կրճատման բացառումը, իսկ հնարավորության դեպքում՝ բյուջեի ծախսերի ամբողջական իրականացումը:

Ամփոփելով հարկաբյուջետային ռիսկերի նկարագրությունը կարող ենք նշել, որ ճգնաժամային իրավիճակով պայմանավորված դրանք առավելապես ուղղված են դեպի ներքև: Առկա են անորոշություններ ինչպես ճգնաժամի տևողության հետ կապված, այնպես էլ հարկաբյուջետային արձագանքի չափի և ժամկետների, ինչպես նաև վերջիններիս արդյունավետության գծով: Նշված ռիսկերի ի հայտ գալու կամ անորոշությունների վերաբերյալ նոր տեղեկատվության առկայության պայմաններում, առաջիկա տարվա հարկաբյուջետային շրջանակը վերանայման կարիք կունենա:

2.4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ

ՀՀ հարկաբյուջետային կանոնների ներկա համակարգը գործարկվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 20-ին «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Պետական պատքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարող օրենքների, ինչպես նաև են ՀՀ Կառավարության՝ 2018 թվականի օգոստոսի 23-ի N 942-Ն որոշման ընդունմամբ: Կանոնների համակարգը ներառում է ծախսային կանոններ, որոնք ուժի մեջ են մտնում պարտքի սահմանված շեմերը գերազանցելիս: Մասնավորապես.

- Երբ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է 40%-ը, պետական բյուջեի կապիտալ ծախսերը չպետք է փոքր լինեն բյուջեի պակասուրդից:
- Կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության՝ 50-60% միջակայքում գտնվելու դեպքում, ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճով, ինչպես նաև հաջորդ տարում կազմվող պետական

միջնաժամկետ ծախսերի ծրագրում կառավարությունը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ համախառն ներքին արդյունքի նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 50 տոկոսից նվազեցնելու համար:

- Երբ Կառավարության պարտքը գերազանցում է ՀՆԱ 60%-ը, ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճից 0.5 տոկոսային կետով նվազեցված ցուցանիշով, ընթացիկ ծախսերը սահմանափակվում են հարկերի և տուրքերի մեծությամբ, ինչպես նաև Կառավարությունը Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ու տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների քննարկմանը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ ՀՆԱ նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 60 տոկոսից նվազեցնելու համար:
- Ներկայացված սահմանափակումները չեն գործում կառավարության որոշմամբ սահմանված բացառիկ դեպքերում՝ ելնելով խոշորածավալ տարերային և տեխնածին աղետների, պատերազմական գործողությունների, տնտեսությունը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տնտեսական ցնցման հանգամանքներով պայմանավորված բացասական տնտեսական զարգացումների պարագայում:

2019 թվականի պետական բյուջեի կատարումը համապատասխանել է հարկաբյուջետային կանոններով սահմանված չափանիշներին: Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը) գերազանցել են պետական բյուջեի պակասուրդի մեծությանը, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը ցածր է եղել անվանական ՀՆԱ աճի պատմական միտումների հիման վրա հաշվարկված ցուցանիշից: Քանի որ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը ցածր է եղել 60% շեմից, պետական բյուջեի ընթացիկ ծախսերի ծավալի սահմանափակման դրույթը չի գործել:

Աղյուսակ 2.4. *Փաստացի և ծրագրավորված հարկաբյուջետային քաղաքականության համապատասխանությունը հարկաբյուջետային կանոններին*

Կանոնի ցուցանիշ	Ուղենիշային ցուցանիշ	2019		2020		2021	
		Սահմ.	Փաստ.	Սահմ.	Պլան	Սահմ.	Պլան
Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	>/= պետական բյուջեի պակասուրդ, մլրդ դրամ	64.0	193.0	383.6	223.7	271.4	215.4
Պետական բյուջեի ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպ*	</= նախորդ 7 տարիների անվանական ՀՆԱ աճի միջին տեմպ, %	6.1	5.9	5.9	11.7	6.4	6.1

Պետական բյուջեի ընթացիկ ծախսեր	</= հարկային եկամուտների և տուրքերի ծավալ, մլրդ դրամ**	-**	1437.1	-	1597.4	-	1632.9
Կառավարության պարտք/ՀՆԱ, %		49.9		64.9		63.2	

**Հաշվարկված է որպես երկու տարի առաջ (t-2) արձանագրված ցուցանիշի նկատմամբ համապատասխան տարվա (t) հավելաճի տեմպի կես*

***Պետական պարտքի առկա չափի դեպքում կիրառելի չէ*

2020թ.-ի ծրագրային ցուցանիշները շեղվում են ծախսային կանոններով պահանջվող սահմանագծերից, ինչը բացատրվում է կորոնավիրուսի համավարակով պայմանավորված տնտեսական ցնցմամբ, և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.3 կետով և ՀՀ կառավարության՝ 2018թ. օգոստոսի 23-ի N 942-Ն որոշման 3-րդ կետով նախատեսված դրույթներով և 2020թ.-ի ապրիլի 23-ի ՀՀ կառավարության որոշմամբ[21] համարվում է բացառիկ իրավիճակ:

Սպասվում է, որ COIVID-19 համավարակի պատճառով ծագած բացառիկ դեպքով պայմանավորված 2020թ.-ին ՀՀ կառավարության պարտքի բեռը կգերազանցի ՀՆԱ-ում 60% սահմանային շեմից, որի պայմաններում կառավարությունը պետք է ծրագրավորի հարկաբյուջետային կոնսոլիդացիա և նվազեցնի պարտքի բեռը այդ շեմային ցուցանիշից:

2021թ.-ի նախատեսվում է իրականացնել սահուն հարկաբյուջետային կոնսոլիդացիա՝ միաժամանակ նպատակ դնելով չխաթարել վերականգնման փուլում տնտեսական ակտիվությունը և աջակցել կառուցվածքային բարեփոխումների իրականացմանը: Հետևաբար, 2021թ.-ին նախատեսվում է նվազեցնել կառավարության պարտքի բեռը 1.7 տոկոսային կետով, ինչը հիմք կհանդիսանա միջնաժամկետ հատվածում հարկաբյուջետային կանոններին համահունչ «առավել անվտանգ մակարդակներ» պարտքի բեռի նվազեցման ճանապարհով պետական պարտքի կայունության ամրապնդման համար:

Միևնույն ժամանակ, 2021թ.-ին ՀՀ կառավարությունը ծրագրում է պահպանել ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը հարկաբյուջետային կանոններով նախատեսված՝ ՀՆԱ երկարաժամկետ աճի միտումին համահունչ մակարդակում՝ միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում էականորեն զսպելով եկամուտ գեներացնելու կարողություններին առաջանցիկ պարտավորությունների ավելացումը:

Սակայն պետական ֆինանսների «ոսկե կանոնի» սկզբունքով գործող հարկաբյուջետային կանոնին («երբ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է 40%-ը, պետական բյուջեի կապիտալ ծախսերը չպետք է փոքր լինեն բյուջեի պակասուրդից») ամբողջական համապատասխանությունը ևս մեկ տարի չի պահպանվի: 2020թ.-ի տնտեսական ցնցման երկարաժամկետ ազդեցություններով պայմանավորված, վերոնշյալ օրենսդրական դրույթներին համապատասխան կարգով, 2021թ.-ին ևս կպահպանվեն բացառիկ դեպքի կարգավորումները: Միևնույն ժամանակ 2021թ.-ին

[21] Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին»

ծրագրվում է շեղման չափը զգալիորեն կրճատել (2020թ. համար սպասվող շուրջ 160 մլրդ շեղման դիմաց 2021թ.-ին ծրագրվում է ունենալ 58.6 մլրդ դրամի չափով շեղում)՝ հիմքեր ստեղծելով հաջորդ տարում հարկաբյուջետային կանոնին ամբողջական համապատասխանության ապահովման համար:

Միջնաժամկետում նախատեսվում է վերադարձ հարկաբյուջետային կանոնների ամբողջական պահպանմանը: Տնտեսության վերականգնմանը զուգահեռ, ՀՀ Կառավարությունը վերադարձ կկատարի հարկաբյուջետային կանոններով սահմանված պետական ֆինանսների «ոսկե կանոնների» ամբողջական պահպանմանը՝ ապահովելով պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազող հետագիծը և ծախսերի կառուցվածքի բարելավումը:

2.5. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 2.5.1. *Պետական բյուջեի եկամուտների կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)*

Ընդունման տարին	Ծրագիր	2019	2020	2021
-	Փաստացի	1,565.5		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*23.8%*		
2019	ՄԺԾԾ 2020-2022		1,710.6	1,858.8
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*24.5%*	*24.4%*
	2020թ. Պետական բյուջե		1,695.0	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*23.9%*	
2020	ՄԺԾԾ 2021-2023		1,488.7	1,669.9
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*22.9%*	*23.4%*
	2021թ. Պետական բյուջե		1437.5	1,569.1
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*23.0%*	*23.3%*

Աղյուսակ 2.5.2. *Պետական բյուջեի հարկային եկամուտների կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)*

Ընդունման տարին	Ծրագիր	2019	2020	2021
-	Փաստացի	1,464.3		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*22.3%*		
2019	ՄԺԾԾ 2020-2022		1,621.2	1,787.5
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*23.2%*	*23.5%*
	2020թ. Պետական բյուջե		1,602.3	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*22.6%*	
2020	ՄԺԾԾ 2021-2023		1,395.9	1,600.3
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*21.5%*	*22.4%*
	2021թ. Պետական բյուջե		1355.9	1,500.9

	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		21.7%	*22.3%*

Աղյուսակ 2.5.3. *Պետական բյուջեի ծախսերի կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)*

Ընդունման տարին	Ծրագիր	2019	2020	2021
-	Փաստացի	1,629.4		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*24.8%*		
2019	ՄԺԾԾ 2020-2022		1,868.2	2,027.7
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*26.8%*	*26.6%*
	2020թ. Պետական բյուջե		1,855.7	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*26.2%*	
2020	ՄԺԾԾ 2021-2023		1,850.2	1,879.0
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*28.4%*	*26.3%*
	2021թ. Պետական բյուջե		1821.1	1,843.1
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		29.1%	*27.4%*

Աղյուսակ 2.5.4. *Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)*

Ընդունման տարին	Ծրագիր	2019	2020	2021
-	Փաստացի	1,437.1		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*21.9%*		
2019	ՄԺԾԾ 2020-2022		1,479.9	1,568.3
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*21.2%*	*20.6%*
	2020թ. Պետական բյուջե		1,568.0	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*22.1%*	
2020	ՄԺԾԾ 2021-2023		1,628.0	1,629.0
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*25.0%*	*22.8%*
	2021թ. Պետական բյուջե		1597.4	1,627.7
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		25.6%	*24.2%*

Աղյուսակ 2.5.5. *Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերի կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)*

Ընդունման տարին	Ծրագիր	2019	2020	2021

-	Փաստացի	193.0		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*2.9%*		
2019	ՄԺԾԾ 2020-2022		388.3	459.4
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*5.6%*	*6.0%*
	2020թ. Պետական բյուջե		287.7	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*4.1%*	
2020	ՄԺԾԾ 2021-2023		222.2	250.0
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*3.4%*	*3.5%*
	2021թ. Պետական բյուջե		223.7	215.4
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		3.6%	*3.2%*

Աղյուսակ 2.5.6. *Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)*

Ընդունման տարին	Ծրագիր	2019	2020	2021
-	Փաստացի	63.9		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*1.0%*		
2019	ՄԺԾԾ 2020-2022		157.6	169.0
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*2.3%*	*2.2%*
	2020թ. Պետական բյուջե		160.7	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*2.3%*	
2020	ՄԺԾԾ 2021-2023		361.5	209.1
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*5.6%*	*2.9%*
	2021թ. Պետական բյուջե		383.6	274.1
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		6.1%	*4.1%*

ՄԱՍ II-Ա ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Հարկաբյուջետային սկզբունքները և ցուցանիշները

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման ընթացքում ՀՀ կառավարությունն առաջնորդվել է ՀՀ 2021-2023թթ. Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով ամրագրված հիմնական սկզբունքներով: Ստորև բերված Աղյուսակ 1-ում ներկայացված են 2017-2021թթ պետական բյուջեների ցուցանիշներն արտացոլող ամփոփ ցուցանիշները:

Աղյուսակ 1. *2017-2021թթ պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները (մլրդ դրամով)*


Ցուցանիշներ	2017թ փաստ	2018թ փաստ	2019թ փաստ	2020թ ճշտված բյուջե	2021թ կանխատեսում
1. Ընդամենը եկամուտներ	1,237.8	1,341.7	1,565.5	1,437.5	1,569.1
այդ թվում՝					
- ներքին եկամուտներ	1,223.1	1,330.5	1,553.1	1,413.3	1,545.8
որից՝					
- հարկեր և պետական տուրքեր	1,158.0	1,258.1	1,464.3	1,355.9	1,500.9
2. Ընդամենը ծախսեր	1,504.8	1,447.1	1,629.4	1,821.1	1,843.1
այդ թվում՝					
- ընթացիկ ծախսեր	1,267.4	1,299.0	1,437.1	1,597.4	1,627.7
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	237.4	148.1	192.3	223.7	215.4
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	267.0	105.4	63.9	383.6	274.1
Բ. Արտահայտված ՀՆԱ-ի նկատմամբ %-ով					
1. Ընդամենը եկամուտներ	22.2%	22.3%	23.8%	23.0%	23.3%
որից՝					
- ներքին եկամուտներ	22.0%	22.1%	23.6%	22.6%	23.0%
որից՝					
- հարկեր և պետական տուրքեր	20.8%	20.9%	22.3%	21.7%	22.3%
2. Ընդամենը ծախսեր	27.0%	24.0%	24.8%	29.1%	27.4%
այդ թվում՝					
- ընթացիկ ծախսեր	22.8%	21.6%	21.9%	25.6%	24.2%
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	4.3%	2.5%	2.9%	3.6%	3.2%
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	4.8%	1.8%	1.0%	6.1%	4.1%
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	5,564.5	6,017.0	6,569.0	6,247.9	6,720.0

Հիմք ընդունելով ՀՆԱ-ի 23.3 %-ի չափով կանխատեսված ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի եկամուտների մակարդակը և ելնելով ՀՆԱ-ի 4.1 %-ի չափով դեֆիցիտի ֆինանսավորման հնարավորություններից, ՀՀ կառավարությունը ծրագրում է 2021 թվականին ապահովել ծախսերը ՀՆԱ-ի 27.4 %-ի կամ 1,843.1 մլրդ դրամի չափով:

ՄԱՍ II – Բ. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային եկամուտների կազմում, ինչպես և նախորդ տարիներին, գերակշիռ մաս են կազմում հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով ակնկալվող մուտքերը, ինչը ներկայացված է 0-ում:

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային եկամուտների կառուցվածքը (%-ով ընդհանուրի նկատմամբ)



ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 1,569.1 մլրդ դրամ եկամուտներ, որից հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով՝ 1,500.9 մլրդ դրամ: Բյուջետային եկամուտների՝ ըստ առանձին եկամտատեսակների կանխատեսումների մանրամասները ներկայացված են «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի բացատրագրի՝ եկամուտների կանխատեսմանը վերաբերվող մասում (սույն ուղերձի մաս 3):

2021 ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվի առնելով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի եկամուտների կանխատեսվող մակարդակը և դեֆիցիտի ու պետական պարտքի նպատակային ցուցանիշները, որոնք ներկա-

յացվում են հաջորդ բաժնում, ՀՀ կառավարությունը ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի ծախսերի ծավալը առաջարկում է սահմանել 1,843.1 մլրդ դրամի չափով:

ՀՀ կառավարությունն առաջիկա տարիներին առավել կարևորում է պետական բյուջեի ծախսային հետևյալ գերակայությունները.

Սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառում պետական մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում.

Հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Արցախյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում.

Տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես և հիմնականում՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ԵՎ ՊԱՐՏՔԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը ծրագրավորվել է ՀՆԱ-ի 4.1 %-ի չափով և կազմում է 274.1 մլրդ դրամ: Դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրների հիմնական մասը ՀՀ 2021 թվականին ձևավորվելու է պետական արժեթղթերի տեղաբաշխումից գոյացող մուտքերից, ելքերի ֆինանսավորմանն ուղղվող ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի տարեսկզբի, կայունացման դեպոզիտային հաշվի միջոցներից, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտներին տրամադրված բյուջետային վարկերի զուտ մուտքերից (տրամադրվածից հանած մարումները):

Դեռևս զգալի են արտաքին աղբյուրներից՝ միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից ստացվելիք վարկերի հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորմանն ուղղվող միջոցները:

Համաձայն կանխատեսումների, ծրագրային ժամանակահատվածում, ի տարբերություն նախորդ տարիների, արտաքին օժանդակության կառուցվածքում գերակշռելու են նպատակային ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսված բյուջետային աջակցության պաշտոնական դրամաշնորհներն ու վարկերը (98.6%, 2):

Աղյուսակ 2. ***2021թ ակնկալվող արտաքին օժանդակությունն ըստ բնույթի***

Ցուցանիշներ	Գումարը (մլրդ դրամներով)	Տեսակարար կշիռը արտաքին օժանդակության ընդհանուր գումարում (%)
1. Ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակություն	**1.7**	1.4
1.1 Պաշտոնական դրամաշնորհներ	1.7	X

2. Ծրագրային (նպատակային) օժանդակություն	**124.2**	98.6
2.1 Պաշտոնական դրամաշնորհներ	21.5	X
2.2 Վարկեր	102.7	X
Ընդամենը արտաքին օժանդակություն	**125.9**	

Բյուջետային փաթեթում ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակության թերստացման պայմաններում ծախսերի վերանայման անհրաժեշտության առաջացման դեպքում այդ վերանայումն իրականացվելու է՝ ելնելով ծախսերի գերակայության աստիճանից: Ծրագրային (նպատակային) պաշտոնական դրամաշնորհների և վարկերի թերստացումը հանգեցնելու է այն ծրագրերի գծով ծախսերի կրճատմանը, որոնք անմիջականորեն կապակցված են ֆինանսավորման այդ աղբյուրներին:

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծի հաշվարկներում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.1-րդ մասի պահանջի համաձայն կիրառվել են ս.թ. սեպտեմբեի 1-ի դրությամբ ՀՀ արտարժութային շուկայում ձևավորված տարադրամի փոխարժեքները ՀՀ դրամով:

Աղյուսակ 3. ***ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծի հաշվարկներում կիրառված տարադրամների փոխարժեքները ՀՀ դրամով***

Տարադրամի տեսակը	Փոխարժեքը ՀՀ դրամով
1 ԱՄՆ դոլար	486.86
1 եվրո	583.01
1 Մեծ Բրիտանիայի ֆունտ ստեռլինգ	654.49
1 Ռուսաստանյան ռուբլի	6.60
1 Շվեյցարական ֆրանկ	538.80
1 Կանադական դոլար	374.22
10 ճապոնական իեն	46.03
1 Չինական յուան	71.08

Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները

Պետական բյուջեի ձևավորումը 2021 թվականին շարունակելու է ընթանալ բյուջետային եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ, ընդ որում՝ բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման համար միջոցների ներգրավումն իրականացվելու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից, համապատասխանաբար՝ 355.4 մլրդ դրամի և -81.3 մլրդ դրամի չափով:

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներքին աղբյուրներից ներգրավվող փոխառու զուտ միջոցների ընդհանուր գումարը ծրագրավորվում է շուրջ 210.0 մլրդ դրամի չափով, ընդ որում, փոխառու միջոցների մուտքերի ներգրավումը ամբողջությամբ նախատեսվում է ապահովել պետական արժեթղթերի թողարկումից: Ֆինանսական ակտիվներից 2021 թվականի զուտ մուտքերը ծրագրավորվում են շուրջ 145.4 մլրդ դրամ, ընդ որում, վարկերի և փոխատվությունների տրամադրման գծով՝ (72.8) մլրդ դրամ,

իսկ տնտեսվարող և այլ սուբյեկտներին տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքերի գծով՝ 27.1 մլրդ դրամ:

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով արտաքին աղբյուրներից ներգրավվող փոխառու զուտ միջոցների ծրագրված ընդհանուր գումարը՝ (16.3) մլրդ դրամ հաշվարկվել է որպես միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետությանը 2021 թվականին տրամադրվելիք վարկերի (որոնց մասն ունի հստակ ծրագրային ուղղվածություն) և մինչ այդ արդեն ստացված վարկերի, ըստ վարկային պայմանագրերով նախատեսված ժամկետների, մարման գումարների տարբերություն (նշված զուտ մուտքերի վերաբերյալ մանրամասն համապատասխան տեղեկատվությունը բերված է սույն բացատրագրի N 4 հավելվածում, NN 17-20 աղյուսակներում և «ՀՀ պետական պարտքը» բաժնում): Ֆինանսական ակտիվներից 2021 թվականի զուտ մուտքերը ծրագրավորվում են շուրջ 65.0 մլրդ դրամ: Նախագծով նախատեսվել է շուրջ (1.4) մլրդ դրամ՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալում մասնակցության գծով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարման համար: Արցախի Հանրապետությանը տրամադրվող միջպետական վարկի գումարը կազմում է 64.5 մլրդ դրամ:

Ստորև ներկայացվում են ՀՀ 2017-2021 թվականների պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (տես Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. ***ՀՀ 2017-2021 թթ պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (մլն դրամ)***

Ցուցանիշներ	2017թ փաստ	2018թ փաստ	2019թ փաստ	2020թ բյուջե	2021թ կանխատեսում
Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներն ու դրանց տարրերի անվանումները՝ ընդամենը	267,021.5	105,392.4	63,947.9	160,687.3	274,070.5
Ա.Ներքին աղբյուրներ- ընդամենը	70,559.3	69,364.0	(13,317.2)	211,047.0	355,369.2
Բ. Արտաքին աղբյուրներ - ընդամենը	196,462.2	36,028.4	77,265.2	(50,359.8)	(81,298.7)

Պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2021 թվականին կկազմի 4.1%: Ինչպես 2021-2023թթ միջնաժամկետ ծախսային ծրագրում, ՀՀ 2021թ բյուջեում նույնպես պահպանվել է ՀՀ պետական բյուջեի կախվածությունն արտաքին ֆինանսավորման աղբյուրներից (արտասահմանյան վարկերից և պաշտոնական դրամաշնորհներից):

Աղյուսակ 5. ***Ընդհանուր և առաջնային դեֆիցիտները (%-ով ՀՆԱ-ի նկատմամբ) 2021թ***

Ցուցանիշներ	2021թ կանխատեսում

Ընդհանուր դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ծախսերի տարբերությունը	4.1
Առաջնային դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ծախսերի (առանց տոկոսավճարների) տարբերությունը	*1.2*

ՄԱՍ III. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ՀՀ 2021 թվականի պետական բյուջեն հաստատել՝ եկամուտների գծով՝ 1,569.1 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 1,843.1 մլրդ դրամ, իսկ դեֆիցիտը՝ 274.1 մլրդ դրամ:

2020թ. և 2021 թ. պետական բյուջեի դեֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ կանխատեսվում է համապատասխանաբար՝ 6.1 և 4,1 %-ի չափով, ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող դեֆիցիտի ֆինանսավորման համար ծրագրավորված վարկերի զգալի մասը կտրամադրվի Համաշխարհային բանկի կողմից (ներգրավվող վարկերի տրամադրման ժամկետների և տոկոսադրույքների մասին տվյալները ներկայացված են սույն բացատրագրի N 4 հավելվածում և N 17-20 աղյուսակներում):

ՄԱՍ III-Ա. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում (սույն մասում այսուհետ՝ Նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 1,569.1 մլրդ դրամի չափով, 2020 թվականի համար նախատեսված 1,437.4 մլրդ դրամի և 2019 թվականին փաստացի ստացված 1,565.5 մլրդ դրամ համադրելի գումարների դիմաց: Եկամուտների տարեկան ծրագրային ծավալները կապահովվեն հիմնականում ի հաշիվ հարկային եկամուտների:

Աղյուսակ 6. ***2017-2021թթ փաստացի/կանխատեսումային բյուջետային եկամուտները (մլրդ դրամներով)***

Եկամտատեսակը	2017 փաստ	2018 փաստ	2019 փաստ	2020 բյուջե	2021 կանխատեսում
Պետական բյուջեի եկամուտներ, որից՝	1,237.8	1,341.7	1,565.5	1,695.0	1,569.1

հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	22.2%	22.3%	23.8%	23.9%	23.3%
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,158.0	1,258.1	1,464.3	1,602.3	1,500.9
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	20.8%	20.9%	22.3%	22.6%	22.3%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	93.6%	93.8%	93.5%	94.5%	95.7%
2. Այլ եկամուտներ	65.2	72.3	88.8	57.4	45.0
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	1.2%	1.2%	1.4%	0.8%	0.7%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	5.3%	5.4%	5.7%	3.4%	2.9%
3. Պաշտոնական դրամաշնորհներ	14.6	11.2	12.4	35.3	23.2
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	0.3%	0.2%	0.2%	0.5%	0.3%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	1.2%	0.8%	0.8%	2.1%	1.4%

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի եկամուտները ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին եկամտատեսակների բազայի ձևավորման կամ հաշվարկման վրա: Առանձին դեպքերում հաշվի են առնվել նաև պայմանագրային հարաբերություններով կարգավորվող ցուցանիշները:


Հարկային եկամուտներ և պետական տուրքեր

Հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 2021 թվականի բյուջետային մուտքերի հաշվարկներում ենթադրվել է, որ հարկերի գծով 2021 թվականի համար հարկային եկամուտներ և պետական տուրքեր /ՀՆԱ ցուցանիշի սպասողական մակարդակը ապահովելու համար բավարար հիմքեր կստեղծեն առկա օրենսդրական նախադրյալները, կիրառվելիք վարչարարական միջոցառումները, ինչպես նաև մակրոտնտեսական զարգացումները: Մասնավորապես, հիմք են ընդունվել Աղյուսակ 7-ում ներկայացված մակրոտնտեսական ցուցանիշները:

Աղյուսակ 7. ***Առանձին մակրոտնտեսական ցուցանիշների 2017-2021թթ փաստացի/կանխատեսումային մեծությունները (մլրդ դրամներով)***

Ցուցանիշներ	2017 փաստ	2018 փաստ	2019 փաստ	2020 սպասում	2021 կանխատեսում
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	5,568.9	6,017.0	6,569.0	7,095.1	6,720.0
ՀՆԱ-ի իրական աճ (%, տոկոս)	7.5	5.2	7.6	-0.6	4.8
ՀՆԱ-ի դեֆլյատոր (%, տոկոս)	2.1	2.5	1.5	1.2	2.6

Գծապատկեր 1. *ՀՀ 2017-2021թթ հարկային եկամուտները և պետական տուրքերը (մլրդ դրամով) և կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ*



2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ի լրումն վերոշարադրյալին հարկ է նշել, որ ՀՀ 2021 թվականի հարկային եկամուտների մուտքերի կանխատեսմամբ հանդերձ միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցումների հիման վրա կատարվել է ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի գծով 2021 թվականի հարկային ծախսերի մեծության գնահատում, որի արդյունքները ներկայացված են Վերլուծություններ բաժնում:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Պետական տուրքերի գծով 2021 թվականի բյուջետային մուտքերը ծրագրվել են 46.1 մլրդ դրամի չափով՝ 2020 թվականի համար հաստատված[22] 50.2 մլրդ դրամի և 2019 թվականին փաստացի ստացված[23] 45.7 մլրդ դրամի դիմաց:

Պետական տուրքերի գծով 2021 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները կատարվել են ըստ դրանց նախորդ տարիների փաստացի հավաքագրումների միտումների, հաշվի առնելով ՀՀ օրենսդրության մեջ կատարված առանձին փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև պետական տուրքի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները: Կորոնավիրուսային հիվանդության համաշխարհային համաճարակի պատճառով 2020 թվականին արձանագրվում է ցուցանիշների կրճատման միտում, որն իր ազդեցությունն է թողնում 2021 թվականի կանխատեսումների վրա:

Պետական տուրքի առանձին տեսակների («Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված հիմնական խմբերի) գծով 2021 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները, հաշվարկման մեթոդների համառոտ նկարագրությունը, ծրագրային և փաստացի ցուցանիշների համեմատականները ներկայացվում են ստորև:

Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2021 թվականի մուտքերը գնահատվել են 2,098.7 մլն դրամի չափով՝ 2020 թվականի համար հաստատված 1,907.5 մլն դրամ և 2019 թվականի փաստացի ստացված 2,177.2 մլն դրամ ցուցանիշների դիմաց: Պետական տուրքի այս տեսակի գծով 2021 թվականի ցուցանիշը ծրագրվել է 2020 թվականի սպասողական ցուցանիշի չափով՝ որպես 2020 թվականի առաջին 7 ամիսների և 2019 թվականի վերջին 5 ամիսների փաստացի մուտքերի հանրագումար:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոփոխելու համար գանձվող պետական տուրքի գծով 2021 թվականի մուտքերը կանխատեսվել են 141.0 մլն դրամի չափով՝ 2020 թվականի համար հաստատված 140.9 մլն դրամի և 2019 թվականին փաստացի ստացված 138.1 մլն դրամի դիմաց: Պետական տուրքի այս տեսակի գծով 2021 թվականի ցուցանիշը ծրագրվել է հաշվի առնելով փորձագիտական գնահատականը:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2021 թվականի մուտքերը կանխատեսվել են 1,775.2 մլն դրամի չափով՝ 2020 թվականի համար հաստատված 2,447.0 մլն դրամի և 2019 թվականին փաստացի ստացված 2,165.1 մլն դրամի դիմաց: Պետական տուրքի այս տեսակի գծով 2021 թվականի ցուցանիշը ծրագրվել է 2020 թվականի սպասողական մուտքերի չափով՝ որպես 2020 թվականի առաջին 7 ամիսների և 2019 թվականի վերջին 5 ամիսների փաստացի մուտքերի

---

[22] Այս բաժնում որպես ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի պետական տուրքի համար հաստատված ցուցանիշներ դիտարկվել են ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման N 6 հավելվածով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի պետական տուրքի գծով հաստատված ցուցանիշները:

[23] Առանց ՀՀ 2019 թվականի պետական բյուջեից ծախս-եկամուտ գործառույթի եղանակով ստացված 207.5 մլն դրամի չափով այն եկամուտների, որոնք հաշվառվում են պետական տուրքերի կազմում:

հանրագումար: Նշված պետական տուրքերի գծով մուտքերի նվազման միտումը պայմանավորված է վիզային ռեժիմների դյուրացման կամ վերացման գործընթացների շարունակականությամբ, ինչպես նաև ՀՀ մուտքի վիզաների քանակի շեշտակի կրճատմամբ՝ կապված կորոնավիրուսային հիվանդության համաճարակի հետ:

Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գծով 2021 թվականի մուտքերը կանխատեսվել են 6,176.3 մլն դրամի չափով՝ 2020 թվականի համար հաստատված 6,765.8 մլն դրամի և 2019 թվականին փաստացի ստացված 7,895.3 մլն դրամի դիմաց:

Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գերակշռող մասը՝ 94.7 %-ը կամ 5,848.9 մլն դրամը 2021 թվականին ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 4 խմբերի հաշվին՝

- ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցման, ինչպես նաև պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2021 թվականի մուտքերը ծրագրվել են 2,401.5 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2021 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 38.9%-ը)՝ 2020 թվականի հաստատված 2,590.7 և 2019 թվականի փաստացի ստացված 3,443.8 մլն դրամի դիմաց: Հարկ է նշել, որ պետական տուրքի նշված տեսակի մուտքերի 2019 թվականի փաստացի և 2020 թվականի հաստատված ցուցանիշները պետական համարանիշերի պահանջարկի ավելացման արդյունք են՝ պայմանավորված ավտոմեքենաների ներմուծման քանակների աննախադեպ աճով, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների կողմից ավտոմեքենաների ձեռք բերման գործարքների ավելացմամբ: Պետական տուրքի այս և հաջորդ տեսակի գծով մուտքերը կանխատեսվել են փորձագիտական գնահատականների չափով: ԸՆդ որում, ընթացիկ տարում թերակատարումը պայմանավորված է COVID-19-ի հետ կապված ՀՀ–ում հայտարարված արտակարգ դրության ընթացքում ՀՀ ոստիկանության ՃՈ հաշվառման քննական ստորաբաժանումների սահմանափակ աշխատանքային ռեժիմով:
- ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) տալու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2021 թվականի մուտքերը ծրագրվել են 1,200.0 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2021 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 19.4%-ը)՝ 2020 թվականի հաստատված 1,367.6մլն և 2019 թվականի փաստացի ստացված 1,752.1մլն դրամի դիմաց:
- լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2021 թվականի մուտքերը ծրագրվել են փորձագիտական գնահատականի՝ 1,220.0 մլն դրամի չափով՝ (պետական գրանցումից 2021 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 19.8%-ը) 2020 թվականի հաստատված 1,212.5 մլն և 2019 թվականի փաստացի ստացված 1,240.2 մլն դրամի դիմաց:
- գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2021 թվականի մուտքերը կանխատեսվել են 1,027.5 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2021 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 16.6%-ը), 2020 թվականի համար հաստատված

1,239.5 մլն դրամի և 2019 թվականին փաստացի ստացված 1,150.1 մլն դրամի դիմաց: Պետական տուրքի այս տեսակի գծով 2021 թվականի մուտքերը ծրագրվել են 2020 թվականի սպասողական մուտքերի նկատմամբ կիրառելով փորձագիտական գնահատման աճի տեմպը, իսկ 2020 թվականի սպասողական մուտքերը գնահատվել են 2020 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի նկատմամբ կիրառելով 2017-2019 թվականների տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների մուտքերի տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը:

Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, բույսերի սորտերի, ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների, երաշխավորված ավանդական արտադրանքի, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2021 թվականի մուտքերը կանխատեսվել են փորձագիտական գնահատականի՝ 437.0 մլն դրամի չափով՝ 2020 թվականի համար հաստատված 434.5 մլն դրամի և 2019 թվականին փաստացի ստացված 437.5 մլն դրամի դիմաց:

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2021 թվականի մուտքերը կանխատեսվել են 2,602.9 մլն դրամի չափով՝ ներառյալ կենսաչափականան անձնագրերի և նույնականացման քարտերի գծով ներկայացված փորձագիտական գնահատականները՝ համապատասխանաբար 230.0 մլն և 180.0 մլն դրամի չափով, իսկ մնացած 2,192.9 մլն դրամը կանխատեսվել է հիմք ընդունելով 2018 և 2019 թվականների տարեկան փաստացի մուտքերը՝ 2020 թվականի համար հաստատված 2,239.8 մլն դրամի և 2019 թվականին փաստացի ստացված 2,144.7 մլն դրամի դիմաց:

Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2021 թվականի մուտքերը կանխատեսվել են 15,502.6 մլն դրամի չափով՝ 2020 թվականի համար հաստատված 18,947.6 մլն և 2019 թվականին փաստացի ստացված 10,868.0 մլն դրամի դիմաց: Պետական տուրքերի այս խմբի գծով 2019 թվականի փաստացի մուտքերի նկատմամբ 2020 և 2021 թվականների մուտքերի աճը պայմանավորված է հիմնականում օրենսդրական փոփոխություններով: Համաձայն «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 25.06.2019թ. ՀՕ-69-Ն օրենքի, 2020 թվականի հունվարի 1-ից վիճակախաղերի, շահումներով խաղերի բնագավառի, բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների բնագավառի, արժութային կարգավորման բնագավառի և արժեթղթերի շրջանառության բնագավառի պետական տուրքերի մի շարք տեսակների համար սահմանվել են բարձր դրույքաչափեր, իսկ բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների բնագավառի համար՝ նաև պետական տուրքի նոր տեսակներ: Համաձայն «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 14.11.19թ. ՀՕ-230-Ն օրենքի, 2020 թվականի փետրվարի 1-ից մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար սահմանվել է պետական տուրքի գանձում:

Այս խմբի պետական տուրքերի 2021 թվականի մուտքերի գերակշիռ մասը՝ 14,151.7 մլն դրամը կամ 91.3 %-ը նախատեսվում է գանձել վիճակախաղերի, շահումներով խաղերի, բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների, պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների, ինչպես նաև բանկային, մաքսային, տրանսպորտի և քաղաքաշինության բնագավառներում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար վճարվելիք պետական տուրքերի հաշվին: Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար գանձվող պետական տուրքերի գծով կանխատեսումներն իրականացվել են՝ ելնելով օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ առկա քանակական տվյալներից, 2019 թվականի փաստացի և 2020 թվականի սպասողական մուտքերից:

Այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2021 թվականի մուտքերը կանխատեսվել են 17,357.6 մլն դրամի չափով՝ 2020 թվականի համար հաստատված 16,914.8 մլն դրամի և 2019 թվականի փաստացի ստացված 19.378.6 մլն դրամի դիմաց: Նշված պետական տուրքերից 2021 թվականի բյուջետային մուտքերի գերակշռող մասը՝ 77.1%-ը, ապահովվելու է ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվող պետական տուրքի հաշվին:

ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվող պետական տուրքի գծով 2021 թվականի մուտքերը կանխատեսվել են 13,383.8 մլն դրամի չափով՝ հիմք ընդունելով «Զվարթնոց» օդանավակայանի կառավարչի կողմից ներկայացված Մաստեր Պլանում նախատեսված ուղևորափոխադրումների փորձագիտական գնահատականը:

Պաշտոնական դրամաշնորհներ

Պաշտոնական դրամաշնորհները 2021 թվականի համար ծրագրվել են՝ հաշվի առնելով առկա պայմանագրերը, դոնորների հետ ձեռքբերված նախնական համաձայնությունները և Եվրամիությունից ակնկալվող դրամաշնորհների դեպքում՝ սպասումները:

Աղյուսակ 8. ***2017-2021թթ փաստացի/կանխատեսումային պաշտոնական դրամաշնորհները (մլրդ դրամներով)***

Պաշտոնական դրամաշնորհներ	2017թ փաստ	2018թ փաստ	2019թ փաստ	2020թ բյուջե	2021թ կանխատեսում
Ընդամենը, այդ թվում՝	14.6	11.2	12.4	35.3	23.2
ԵՄ (Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված դրամաշնորհային ծրագրեր)	3.7	11.1	4.5	7.7	1.7
Այլ նպատակային դրամաշնորհներ	11.0	0.2	7.9	27.6	21.5

Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսվում է ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակություն պաշտոնական դրամաշնորհների (չկապակցված դրամաշնորհներ) ստացում՝ 2.92 մլն եվրո կամ 1.7 մլրդ դրամ:

Աղյուսակ 9. ***2021 թվականի համար ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակություն պաշտոնական դրամաշնորհային ծրագրեր (մլրդ դրամներով)***

Ծրագրի անվանումը	2021թ կանխատեսում
Ընդամենը	**1.7024**
1. «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ֆինանսավորման համաձայնագրի թիվ 1 լրացում	**1,1660**
2. «Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին. առավել արդյունավետ եւ արձագանքող հանրային կառավարման միջոցով ծառայությունների մատուցման որակի բարելավում»	**0.1428**
3. «Որակավորումների բարելավում՝ ավելի լավ աշխատատեղերի համար»	**0.2478**
4. «Հայաստանում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր»	**0.1458**

Նպատակային օժանդակություն պաշտոնական դրամաշնորհային (կապակցված դրամաշնորհներ) ծրագրերից նախատեսվում է 44.2 մլն ԱՄՆ դոլարի կամ 21.5 մլրդ դրամի ստացում: Նպատակային պաշտոնական դրամաշնորհային ծրագրերի գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծի ցուցանիշների մանրամասները ներկայացված են նախագծի N 1 հավելվածի N 5 աղյուսակում:

Այլ եկամուտներ

Այլ եկամուտները ներառում են բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարները, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինները, պետական ձեռնարկությունների գույքի օգտագործման վճարները, պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց վճարները (տոկոսավճարները), իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ստացվող մուտքերը, պետական մարմինների կողմից ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից մուտքերը և այլ եկամուտները:

Այլ եկամուտների գծով մուտքերը 2021 թվականի համար համար ծրագրվել են 45.0 մլրդ դրամի չափով, հաշվի առնելով գանձման համար պատասխանատու պետական կառավարման

մարմինների կողմից ՀՀ 2021 թվականի բյուջետային գործընթացի շրջանակում համապատասխան հայտերով ներկայացված կանխատեսումները, կատարված օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև առանձին եկամտատեսակների գծով նախորդ տարիներին արձանագրված միտումները:

Այլ եկամուտների գծով կանխատեսումային ցուցանիշների ընդհանուր պատկերն ըստ եկամտի հիմնական աղբյուրների հետևյալն է.

Աղյուսակ 10. ***Այլ եկամուտների կազմում հաշվառվող եկամտատեսակների գծով ՀՀ 2017-2021թթ փաստացի/կանխատեսումային ցուցանիշները (մլրդ դրամներով)***

Այլ եկամուտներ	2017թ փաստ	2018թ փաստ	2019թ փաստ	2020թ բյուջե	2021թ կանխատեսում
Ընդամենը	65.2	72.3	88.8	57.4	45.0
2. Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ	2.0	2.5	2.4	0.3	1.1
3. Տոկոսավճարների և շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտներ	19.6	20.0	24.8	18.0	20.1
4. Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքեր	13.4	14.7	15.7	13.4	10.5
5. Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտներ, որից՝	27.2	27.4	34.0	24.5	11.7
6. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ	3.0	7.7	11.9	1.2	1.6

Ստորև ներկայացվում են 2021 թվականի այլ եկամուտների գծով կանխատեսվող մուտքերի հաշվարկներում կիրառված մեթոդաբանության համառոտ նկարագրությունը:

Պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի (բացառությամբ հողի) վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները 2021 թվականի համար կանխատեսվում են շուրջ 1,077.7 մլն դրամ, 2020 թվականի համար ծրագրված 255.0 մլն դրամի և 2019 թվականին փաստացի ստացված 2,419.8 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հիմք են ընդունվել պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկությունները վարձակալական պայմանագրերի համաձայն 2021 թվականներին վճարվելիք վարձավճարների վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան բյուջետային փաստացի մուտքերի գծով գանձապետական տվյալները:

Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում գանձապետական միասնական հաշվի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարներից, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2021 թվականին ակնկալվում են 6,057.2 մլն դրամի չափով մուտքեր: Մասնավորապես.

Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով մուտքերը ծրագրվել են 4,923.0 մլն դրամ՝ 2020 թվականի համար ծրագրված 5,700.0 մլն դրամի և 2019 թվականի փաստացի ստացված 12,708.4 մլն դրամի դիմաց: 2021 թվականի մուտքերն ապահովվելու են հիմնականում ի հաշիվ ժամանակավորապես ազատ բյուջետային միջոցները ՀՀ կենտրոնական բանկում ավանդադնելու դիմաց ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքված «Հաշվի սպասարկման մասին» պայմանագրի հիման վրա վճարվելիք տոկոսավճարների:

Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2021 թվականին ակնկալվում են 1,134.2 մլն դրամի չափով մուտքեր՝ 2020 թվականի համար ծրագրված 2,008.1 մլն դրամի և 2019 թվականին փաստացի ստացված 2,150.6 մլն դրամի դիմաց: Շահաբաժինների գծով 2021 թվականի կանխատեսվող մուտքերը ծրագրելիս հաշվի է առնվել ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 202-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն պետական մասնակցության դիմաց պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների հաշվարկման բազայի 50%-ի չափով պետական բյուջե կատարվելիք մասհանումների սահմանումը:

Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները 2021 թվականին կանխատեսվում են 14,069.4 մլն դրամի չափով: Մասնավորապես.

ՀՀ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործումից 2021 թվականին ակնկալվում է ստանալ 13,994.7 մլն դրամ՝ 2020 թվականի համար ծրագրված 10,151.2 մլն դրամի և 2019 թվականին փաստացի ստացված 9,833.4 մլն դրամի դիմաց: Այն ծրագրվել է՝ հաշվի առնելով համապատասխան պայմանագրերով նախատեսված դրույթները: Մասնավորապես, 2021 թվականին տոկոսավճարների գծով մուտքերն ապահովվելու են ի հաշիվ «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր», «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ներին, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ին և այլ կազմակերպություններին տրամադրված վարկերի դիմաց հաշվարկված տոկոսավճարների:

Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտին տրամադրված վարկերի գծով 2021 թվականի բյուջետային մուտքերը կգոյանան Վրաստանի Հանրապետությանը տրամադրված վարկի սպասարկման տոկոսավճարներից, որոնք կկազմեն 153.4 հազ. ԱՄՆ դոլար կամ մոտ 74.7 մլն դրամ՝ 2020 թվականի համար ծրագրված 97.8 մլն դրամի և 2019 թվականին փաստացի ստացված 122.4 մլն դրամի դիմաց:

Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից 2021 թվականի մուտքերը գնահատվել են 10,479.9 մլն դրամի չափով՝ 2020 թվականի համար ծրագրված 13,424.4 մլն դրամի և 2019 թվականին փաստացի ստաց-

ված 15,652.6 մլն դրամի դիմաց: Կանխատեսումները կատարված են ըստ համապատասխան իրավական հիմքով վարչական պատժամիջոց կիրառող պետական կառավարման մարմինների՝ հաշվի առնելով պատժամիջոցների գծով 2018-2020 թվականների մուտքերի հավաքագրման միտումները, ինչպես նաև այս բնագավառում իրականացված օրենսդրական փոփոխությունները:

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտների գծով 2021 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 11,651.5 մլն դրամի չափով՝ 2020 թվականի համար ծրագրված 24,505.3 մլն դրամի և 2019 թվականին փաստացի ստացված 33,997.0 մլն դրամի դիմաց: Եկամուտների այս խմբի մեծ մասը կազմում են ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանումների կողմից 2021 թվականին մատուցվելիք ծառայությունների դիմաց ստացվելիք վճարները՝ 4,950.0 մլն դրամի չափով և հայկական երկաթուղու համակարգի վերաբերյալ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված տարեկան վճարը՝ 393.7 մլն դրամի չափով:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով 2021 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 1,629.1 մլն դրամի չափով՝ 2020 թվականի համար ծրագրված 1,291.0 մլրդ դրամի և 2019 թվականին փաստացի ստացված 10,401.9 մլն դրամի դիմաց: Այն կանխատեսվել է՝ ելնելով նախորդ տարիների փաստացի մուտքերի միտումներից:

Մ Ա Ս III – Բ. Ծ Ա Խ Ս Ե Ր Ի Կ Ա Ն Խ Ա Տ Ե Ս Ո Ւ Մ

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրավորվել է շուրջ 1,843.1 մլրդ դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի 88.3%-ը կամ 1,627.7 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 11.7 %-ը կամ 215.4 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին: ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծի ծախսային մասը ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի հաստատված մակարդակի համեմատ նվազել է շուրջ 12.7 մլրդ դրամով:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալները, կազմն ու կառուցվածքը ձևավորվել են ելնելով 2021 թվականի մակրոտնտեսական կանխատեսումներից, գների և սակագների կանխատեսվող ցուցանիշներից, հանրապետությունում տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքը խաթարող նոր բյուջետային պարտքերի չառաջացման անհրաժեշտությունից ու առանձին ծախսատեսակների գծով մշակված բյուջետային նորմատիվներից:

«Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը կազմվել է Ծրագրային բյուջետավորման ձևաչափով՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համահունչ, ապահովելով ծրագրային բյուջետավորման սկզբունքների ամբողջական ներդրումը: Ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման հիմնական նպատակն է բարելավել հանրային ծախսերի առաջնահերթությունների սահմանումը և բարձրացնել հանրային ֆինանսների կառավարման թափանցիկությունը, հաշվետվողականությունը, արդյունավետությունը և արդյունքայնությունը, ինչպես նաև բյուջետային տեղեկատվությունը ներկայացնել այնպիսի ձևաչափով, որը հնարավոր կդարձնի վերահսկել, թե ինչպես է բյուջեն օգտագործվում ընդունված քաղաքականություններն իրականացնելու համար: Փոփոխությունները ֆորմալ առումով ուղղված են ծրագրային դասակարգումը՝ որպես բյուջետային հատկացումների հիմնական դասակարգում սահմանելուն, բյուջետային գործընթացի բոլոր փուլերում (բյուջեի պլանավորում, կատարում, հաշվետվողականություն):

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշներն ու ծախսային ծրագրերի գծով վերջնական արդյունքային ցուցանիշները ներկայացված են համապատասխանաբար սույն բացատրագրի NN 3 և 14 հավելվածներում:


ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

2021 թվականի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է 24.2 %: Նույն ժամանակահատվածում ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերի հարաբերակցությունները ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է 3.2%:

Աղյուսակ 11. ***2017-2021թթ ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի փոփոխության և հարաբերակցության միտումները***

Ցուցանիշներ	2017թ. փաստացի	2018թ. փաստացի	2019թ. փաստացի	2020թ. հաստատված	2021թ. բյուջեի նախագիծ
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, (մլն դրամ)	1,504,802.2	1,447,083.0	1,629,436.9	1,855,882.7	1,843,133.6
այդ թվում՝					
- ընթացիկ ծախսեր, (մլն դրամ)	1,267,436.7	1,298,977.9	1,437,142.9	1,568,161.8	1,627,708.7
- %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	22.8%	21.6%	21.9%	25.1%	24.2%
- ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսեր, (մլն դրամ)	237,365.6	148,105.1	192,294.0	287,720.9	215,424.9
%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	4.3%	2.5%	2.9%	4.6%	3.2%

Գծապատկեր 2. ***2017-2021թթ. ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի փոփոխության և հարաբերակցության միտումները***




2021 թվականի ծախսերի ընդհանուր ծավալի միջին տարեկանի շուրջ 88,3 %-ը կկազմեն **ընթացիկ ծախսերը**, (2020 թվականին այդ ցուցանիշը ծրագրվել է 84.5%):

Դիտարկվող ժամանակահատվածում ընթացիկ ծախսերն ուղղված կլինի ծառայությունների մատուցման, տրանսֆերտների տրամադրման, ֆինանսավորման ծախսերի իրականացման և հանրության կողմից անմիջականորեն օգտագործվող ակտիվների հետ կապված միջոցառումներին:

2021թ. ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ըստ տնտեսագիտական դասակարգման կառուցվածքի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ ներկայացված է ստորև:

Գծապատկեր 3. ***2017-2021թթ. ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ըստ տնտեսագիտական դասակարգման կառուցվածքի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ***



2021թ. պետական բյուջեից աշխատավարձերին ուղղվող ծախսերը կկազի 181.1 մլրդ դրամ: Այս ծախսը 2020 թվականի հաստատված բյուջեի նույն ցուցանիշի համեմատ ավել է 1.3 տոկոսով կամ 2.3 մլրդ դրամի չափով:

2021թ. տոկոսավճարների գծով ծախսը կազմում է 191.7 մլրդ դրամ: 2021թ. պետական բյուջեից կազմակերպություններին նախատեսվում է տրամադրել 122.3 մլրդ դրամի

սուբսիդիաներ, որը 2020 թվականի հաստատված բյուջեի համեմատ սուբսիդիաների գծով ծախսն ավել է կանխատեսվել 5.1 տոկոսով կամ 5.9 մլրդ դրամով:

2021թ. ընթացիկ ծախսերի աճը մեծապես ապահովվելու է սոցիալական նպաստների և կենսաթոշակների վճարների գծով պետական բյուջեի ծախսերի ավելացման հաշվին, որոնք 2020 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ ավելացել է 2.6 տոկոսով կամ 13.6 մլրդ դրամով:

2021թ պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել դրամաշնորհներ 2020 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ համապատասխանաբար 2.7 մլրդ դրամով կամ 1.7 տոկոսով պակաս:

2021թ պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել ծառայությունների, ապրանքների ձեռքբերման և այլ ծախսերի գծով 2020 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ 16.9 մլրդ դրամով կամ 4.0 տոկոսով ավել:

Աղյուսակ 12. ***2017-2021թթ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը ըստ տնտեսագիտական դասակարգման***

մլն դրամ

Ցուցանիշներ	2017թ փաստացի	2018թ փաստացի	2019թ փաստացի	2020թ հաստատված	2021թ. բյուջե
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	**1,267,436.7**	**1,298,977.9**	**1,437,142.9**	**1,568,161.8**	**1,627,708.7**
այդ թվում՝					
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	145,268.8	152,755.1	172,578.6	178,777.6	181,056.8
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	154,276.7	155,647.0	192,121.3	201,161.5	166,342.8
ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ	122,110.3	139,014.9	157,552.7	168,116.5	191,695.0
ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	112,823.5	111,225.7	113,375.5	116,352.2	122,302.6
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	133,034.8	126,318.0	149,999.7	165,355.4	162,605.5
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ	411,087.7	425,478.7	453,218.6	514,042.5	527,663.9
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	188,834.9	188,538.3	198,296.4	224,356.0	276,042.1

2021 թվականի ծախսերի ընդհանուր ծավալի 11.7 %-ը կկազմեն ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, (2020 թվականին այդ ցուցանիշը ծրագրվել է 15.5%):

2021թ պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել հատկացումներ ՀՀ համայնքներին, մասնավորապես Համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների տրամադրման, օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով 2021 թվականին նախատեսվում է տրամադրել 64,6 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 3.4 և

ՀՆԱ-ի 0.9 տոկոսը: 2020թվականին այն կազմել է՝ 55,4 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 3 և ՀՆԱ-ի 0.8 տոկոսը, նախորդ 2019 թվականի այն կազմել է 51,1 իսկ 2017 և 2018 թվականներին՝ 48,2 մլրդ դրամ: 2021 թվականին համայնքներին նախատեսվել է տրամադրել նաև սուբվենցիաներ՝ 16.6 մլրդ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 0.9 տոկոսը, 2020 թվականին՝ այն կազմել է 19.6 մլրդ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 0.7 տոկոսը, իսկ 2017-2019 թվականներին այն կազմել է համապատասխանաբար՝ 9.2, 11.2 և 15.8 մլրդ դրամ: 2021 թվականին «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ պայմանավորված նախատեսվել է պետական աջակցություն տրամադրել սահմանամերձ համայնքներին՝ 0.8 մլրդ դրամի չափով, ինչպես և նախատեսված էր 2020 թվականի բյուջեով: 2021 թվականին սուբվենցիաների գումարը նախկին 2017-2019 թվականների համեմատ աճել է 0.1 մլրդ դրամի չափով:

Աղյուսակ 13. ***ՀՀ պետական բյուջեից համայնքներին տրվող հատկացումների վերաբերյալ***


հազ. դրամ

Ցուցանիշներ	2017 թվական փաստայի	2018 թվական փաստայի	2019 թվական փաստայի	2020 թվական հաստ-ատված	2021 թվական նախագիծ
ԸՆԴԱՄԵՆԸ	**58,005,930.5**	**60,167,365.9**	**67,606,297.1**	**79,249,736.8**	**82,081,825.7**
Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ, որից	***48,068,316.7***	***48,232,000.0***	***51,071,361.3***	**55,378,535.0**	**64,596,984.0**
Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում	*52,021.3*	*67,892.9*	*77,853.5*	*66,273.3*	*59,819.5*
Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին, որից	***9,000.0***	***2,168.4***	***2,242.0***	**3,488,232.1**	***2,168.4***
«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի կիրարկմամբ պայմանավորված ֆինանսական փոխհատուցում տեղական ինքնակառավարման մարմիններին				3,486,363.7	
Սուբվենցիաներ համայնքներին, այդ թվում	***9,216,413.6***	***11,223,599.7***	***15,801,349.6***	**19,582,969.7**	**16,682,673.3**

ընթացիկ սուբվենցիաներ	*9,001,058.6*	*8,677,571.0*	*9,268,940.8*	8,982,969.7	8,932,673.3
կապիտալ սուբվենցիաներ	*215,355.0*	*2,546,028.7*	*6,532,408.8*	10,600,000.0	7,750,000.0
«Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ պայմանավորված պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին	***712,200.2***	***709,597.9***	***731,344.2***	**800,000.0**	**800,000.0**

2021 թվականի ընթացքում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքում արձանագրվում է արտաքին աղբյուրների ծավալի նվազում ի հաշիվ ներքին աղբյուրների ֆինանսավորման ծավալի մեծացման:

Գծապատկեր 4. 2017-2021թթ. ***Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը***



Ընդ որում 2021 թ. ընթացքում ընդհանուր ծավալի կանխատեսվող 215.4 մլրդ դրամ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շուրջ 38.3 %-ը (82.4 մլրդ դրամ) նախատեսվում է

ֆինանսավորել արտաքին աղբյուրների, իսկ 61.7%-ը (133.0.5 մլրդ դրամ)՝ ներքին աղբյուրների հաշվին: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի իրականացման գերակայությունները հանդիսանալու են ինչպես ենթակառուցվածքային, այնպես էլ սոցիալական ոլորտներում ներդրումները:

Աղյուսակ 14. *2019-2021թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը ըստ արտաքին և ներքին աղբյուրների*

մլն դրամ


Ցուցանիշներ	2019թ.	2020թ.	2021թ.
Ընդամենը	193,017.1	287,741.0	215,426.2
- արտաքին աղբյուրներ	71,630.60	172,418.60	82,437.3
- ներքին աղբյուրներ	121,386.48	115,322.40	132,988.9
Տրանսպորտ, այդ թվում	34,357.1	89,251.6	58,057.1
- արտաքին աղբյուրներ	18,829.6	67,692.00	23,916.9
- ներքին աղբյուրներ	15,527.5	21,559.60	34,140.2
Էներգետիկա, այդ թվում	4,488.8	3,477.9	1,224.3
- արտաքին աղբյուրներ	4,488.8	3,477.90	1,224.3
- ներքին աղբյուրներ	0.0		
Շրջակա միջավայր և գյուղատնտեսություն	3,904.1	10,627.3	4,863.3
- արտաքին աղբյուրներ	3,557.7	10,007.20	4,323.8
- ներքին աղբյուրներ	346.3	620.1	539.5
Ջրային տնտեսություն	6,819.5	38,796.5	20,316.8
- արտաքին աղբյուրներ	4,661.9	38,382.20	18,629.8
- ներքին աղբյուրներ	2,157.6	414.3	1,687.0
Առողջապահություն	1,979.3	863.9	3,947.2
- արտաքին աղբյուրներ	529.6	863.9	947.2
- ներքին աղբյուրներ	1,449.6		3,000.0
Կրթություն, գիտություն մշակույթ և սպորտ	4,774.1	18,413.6	9,899.4
- արտաքին աղբյուրներ	1,672.4	13,973.60	8,462.2
- ներքին աղբյուրներ	3,101.7	4,440.00	1,437.2
Սոցապ	546.5	4,338.3	2,483.3
- արտաքին աղբյուրներ	464.9	3,816.30	1,192.7
- ներքին աղբյուրներ	81.6	522	1,290.6

Ուժային	**114,347.4**	**95,310.1**	**87,606.6**
- արտաքին աղբյուրներ	**31,389.0**	**12,959.10**	
- ներքին աղբյուրներ	**82,958.4**	**82,351.00**	**87,606.6**
Այլ	**21,800.4**	**26,661.7**	**27,028.2**
- արտաքին աղբյուրներ	**6,036.60**	**21,246.30**	**23,740.4**
- ներքին աղբյուրներ	**15,763.80**	**5,415.40**	**3,287.8**

ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

2017-2021թթ. ժամանակահատվածում նկատելի է նախորդ տարվա համեմատությամբ պետական բյուջեի ընդամենը ծախսերի աճը՝ 2019 թվականին 2018-ի համեմատ 182,0 մլրդ. ՀՀ դրամի, 2020թ.-ին՝ 2019թ.-ի համեմատ 226,8 մլրդ. ՀՀ դրամի չափով, բացառությամբ՝ 2017-2018թթ.: 2021թ. ծախսային չափաքանակների հնարավորություններն ավելի ցածր են, քան նախորդ հաստատված՝ 2020 թվականի բյուջետային ծախսերի չափաքանակներն են՝ շուրջ 13,0 մլրդ. ՀՀ դրամի չափով՝ կորոնավիրուսի տնտեսական հետևանքներով պայմանավորված:

Գծապատկեր 5. ***2017-2021թվականների ծախսերի համեմատականը***




	2017թ. փաստացի	2018թ. փաստացի	2019թ. փաստացի	2020թ.	2021թ. նախագիծ
2018-2021թ. ընդամենը ծախսեր	1,504.8	1,447	1,629.0	1,855.8	1,843.1
տարբերությունը նախորդ տարվա համեմատությամբ		-57.8	182.0	226.80	(13)

ՀՀ 2017-2021 թվականների պետական բյուջեների ծախսեր՝ ըստ ոլորտների բնութագրվում են ստորև ներկայացված աղյուսակի ցուցանիշներով:

Աղյուսակ 15. ***ՀՀ 2021-2023թթ պետական բյուջեների ծախսերը՝ ըստ ոլորտների (մլն. դրամ)***

Ցուցանիշներ	2017թ. փաստացի	2018թ. փաստացի	2019թ. փաստացի	2020թ.	2021թ. նախագիծ
ԸՆԴԱՄԵՆԸ	**1,504,802,229**	**1,447,083,011**	**1,629,436,862**	**1,855,882,737**	**1,843,133,614**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	27.0	24.0	24.8	28.5	27.4
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**274,708.0**	**278,461.5**	**320,072.8**	**361,782.4**	**393,576.2**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	4.9	4.6	4.9	5.8	5.9
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	18.3	19.2	19.6	19.5	21.4
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	**416,977.2**	**361,579.4**	**459,284.1**	**460,468.8**	**468,785.2**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	7.5	6.0	7.0	7.4	7.0
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	27.7	25.0	28.2	24.8	25.4
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ	**147,537.7**	**129,599.4**	**133,980.8**	**230,831.4**	**173,315.5**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.65	2.15	2.04	3.69	2.58
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	9.8	9.0	8.2	12.4	9.4
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ	**642,556.0**	**643,132.5**	**716,099.0**	**797,818.1**	**803,606.5**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	11.5	10.7	10.9	12.8	12.0
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	42.7	44.4	43.9	43.0	43.6
ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	**23,023.1**	**34,310.0**	**0**	**4,981.8**	**3,850.0**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.41	0.57	-	0.08	0.06
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.53	2.37	-	0.27	0.21
ՊԱՐՏՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	**122,110. 3**	**139,014.8**	**157,552. 7**	**168,116. 5**	**191,694.9**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.19	2.31	2.39	2.69	2.85
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	8.11	9.61	9.67	9.06	10.4

ՀՀ 2017-2021 թվականների պետական բյուջեի ծախսերն ըստ ոլորտների ունեն հետևյալ գրաֆիկական տեսքը.



2017-2020թթ. պետական բյուջեի ընդամենը ծախսերում գերակայել են սոցիալական բնույթի ծախսերը (կրթություն, սոցիալական պաշտպանություն, առողջապահություն և այլն) միջինում 44%, պաշտպանության, հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեությանն՝ միջինում 26%, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների՝ միջինում 20%, տնտեսական ոլորտի՝ միջինում 10% ֆինանսավորումը: Այս միտումը կշանունակվի նաև 2021 թվականին:

Սոցիալական ոլորտի խմբում 2017-2020 թվականներին առանցքային են եղել և 2021 շարունակվելու են կարևորվել հատկապես սոցիալական ապահովության, կրթության և առողջապահության բնագավառների զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացումը:

Աղյուսակ 16. ***Սոցիալական ոլորտի բյուջետային ծախսերը (մլն դրամ)***

Ցուցանիշներ	2017թ. փաստացի	2018թ. փաստացի	2019թ. փաստացի	2020թ.	2021թ. նախագիծ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ ԸՆԴԱՄԵՆԸ	**642,556.0**	**643,132.5**	**716,818.1**	**797,818.1**	**803,606.5**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	11.5	10.7	10.9	12.8	12.0
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	42.7	44.4	44.0	43.0	43.6

Ցուցանիշներ	2017թ. փաստացի	2018թ. փաստացի	2019թ. փաստացի	2020թ.	2021թ. նախագիծ
այդ թվում՝					
1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	**124,373,5**	**121,626.5**	**129,336.3**	**161,053.5**	**153,457.3**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.23	2.02	1.97	2.58	2.28
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	8.27	8.40	7.94	8.68	8.33
2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	**408,962.8**	**416,625.8**	**453,921.2**	**492,045.9**	**504,846.4**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	7.34	6.92	6.91	7.88	7.51
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	27.2	28.8	27.9	26.5	27.4
3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	**83,215.4**	**79,574,1**	**99,283,0**	**113,734.2**	**114,792.9**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.49	1.32	1.51	1.82	1.71
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	5.53	5.50	6.09	6.13	6.23
4. ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	**26,004.2**	**25,306.0**	**33,558,3**	**30,984.4**	**30,509.7**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.47	0.42	0.51	0.50	**0.45**
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.73	1.75	2.06	1.67	**1.66**

2017-2020թթ. ժամանակահատվածում կրթության և առողջապահության ոլորտների ֆինանսավորումը ՀՆԱ նկատմամբ փոփոխական բնույթ է կրել:

2021թ. համար այս ոլորտների բյուջետային ծախսերի չափաքանակները սահմանելիս առաջնային է դիտարկվել նշված ոլորտների համար ծախսեր/ՀՆԱ ցուցանիշի առաջանցիկ մակարդակի ապահովումը:

2017-2020թթ. ընթացքում կրթության ոլորտին ուղղված պետական միջոցները կազմել են համապատասխանաբար 124,373.5, 121,626.5, 129,336.3 և 161,053.5 մլն.դրամ: 2021թ. ոլորտի ֆինանսավորման համար հատկացվելիք 153,457.3 մլն. դրամը նախատեսվում է համամասնորեն ուղղել կրթության առանձին տեսակների՝ նախադպրոցական, տարրական, միջնակարգ, մասնագիտական, բարձրագույն, հետբուհական, ինչպես նաև կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ֆինանսավորմանը:

Առողջապահության ոլորտի ֆինանսավորումը 2017-2020թթ. համապատասխանաբար կազմել է 83,215.4, 79,574,1, 99,283,0 և 113,734.2 մլն. դրամ: 2021թ. ոլորտին ուղղվող ծախսերը պլանավորվում են 114,792.9 մլն. դրամի չափով, որոնք, հաշվի առնելով 2020թ. համավարակով պայմանավորված առողջապահության համակարգի համաշխարհային արդի մարտահրավերներն, առաջնահերթ ուղղվելու են վերջինիս դեմ պայքարի միջոցառումների իրականացմանը, առողջապահական համակարգի ռիսկերին արագ և համարժեք արձագանքմանը:

2017-2020թթ. սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորումը համապատասխանաբար կազմել է 408,962.8, 416,625.8, 453,921.2 և 492,045.9 մլն. դրամ: 2021 թվականի պետական բյուջեի նախագծով այս ոլորտին հատկացվելիք 504,846.4 մլն. դրամը, ինչպես և դիտարկվող տարիների ընթացքում առաջնահերթ ուղղվելու են տարեցներին և հաշմանդամներին աջակցության տրամադրմանը, ինչպես նաև ուղղվել գործազրկության, սոցիալական հատուկ արտոնությունների, բնակարային ապահովման, ընտանեկան նպաստների տրամադրման և այլ սոցիալական ծառայությունների ապահովմանը:


Աղյուսակ 17. ***Տնտեսական ոլորտի 2021-2023թթ բյուջետային ծախսերը (մլն դրամ)***

Ցուցանիշներ	2017թ. փաստացի	2018թ. փաստացի	2019թ. փաստացի	2020թ.	2021թ. նախագիծ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ ԸՆԴԱՄԵՆԸ	**147,537.7**	**129,599.4**	**133,980.8**	**230,831.4**	**173,315.5**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.6	2.2	2.0	3.7	2.6
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	9.8	9.0	8.2	12.4	9.4
այդ թվում՝					
1.ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**129,520.5**	**112,199.5**	**111,916.2**	**195,608.6**	**147,880.0**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.33	1.86	1.70	3.13	2.20
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	8.6	7.8	6.9	10.5	8.0
2.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	**5,406.6**	**5,690.8**	**5,816.9**	**12,294.4**	**10,600.3**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.10	0.09	0.09	0.20	0.16
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	0.36	0.39	0.36	0.66	0.58
3. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**12,610.5**	**11,709.0**	**16,247.5**	**22,928.2**	**14,835.1**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.23	0.19	0.25	0.37	0.22
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	0.84	0.81	1.00	1.24	0.80

2021 թվականից սկսած տնտեսության ճյուղերի պետական ֆինանսավորումը նպատակաուղղված են լինելու ենթակառուցվածքների, տնտեսության իրական հատվածի, բարձր տեխնոլոգիական արդյունաբերական, ինչպես նաև բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող՝ արտահանմանը միտված մրցունակ և ներառական տնտեսության կառուցմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

2021 թվականի ընթացքում պետական բյուջեների ծախսերի ընդհանուր ծավալը որոշ կախվածության մեջ կլինի նաև արտաքին հոսքերից:

Գծապատկեր 6. ***2017-2021 թթ. վարկային, դրամաշնորհային միջոցների հաշվին ֆինանսավորումը, կշիռը ՀՆԱ-ում, կշիռը ընդամենը ծախսերում***



Աղյուսակ 18. ***Արտաքին աղբյուրներից 2021թ. ստացվելիք միջոցների (վարկերի և պաշտոնական դրամաշնորհներ) հաշվին ֆինանսավորվող ծախսերը***

Ցուցանիշներ	2017թ.	2018թ.	2019թ.	2020 թ.	2021թ.
Արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվող ծախսերի ծավալը (մլն դրամ)	**176,510.6**	**69,364.1**	**76,301.5**	**161,535.7**	**85,322.8**
- հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	**3.2%**	**1.2%**	**1.2%**	**2.6%**	**1.3%**
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	**11.7%**	**4.8%**	**4.7%**	**8.9%**	**4.6%**

Արտաքին աղբյուրներից վարկերի և պաշտոնական դրամաշնորհների տեսքով ստացվելիք միջոցների հաշվին 2021թվականին ֆինանսավորվող ծախսերի տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում կազմում է 4.6% և ՀՆԱ-ի նկատմամբ՝ 1.3%:

2021Թ. ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ կառավարության ծրագրին համապատասխան ծախսային քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորում է հանրային ֆինանսների նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործումը, ինչի արդյունքում ՀՀ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում աստիճանաբար հնարավորության սահմաններում կմեծանա մարդկային կապիտալին և ենթակառուցվածքներին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը:

Երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման տեսանկյունից կարևորելով կապիտալ ծախսերի, ինչպես նաև կառավարության կողմից ընդունված ռազմավարական ծրագրերի դերն ու նշանակությունը, մյուս կողմից հաշվի առնելով 2021թվականի բյուջեի հարկաբյուջետային շրջանակի սահմանափակումները 2021 թվականի բյուջեում առանձին հավելվածներով ներկայացվել են ծախսային առաջնահերթություններ համարվող կապիտալ ծախսերը, ռազմավարություններից բխող նոր նախաձեռնությունները և վարկային միջոցների հաշվին իրականացվող միջոցառումների առաջնահերթությունները, որոնք զետեղվել են N 6 հավերվածում: Նշված ծախսերը դիտարկվում են որպես առաջնահերթություններ և 2021թ. բյուջեում լրացուցիչ ֆինանսական միջոցների առկայության պայմաններում (Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման բարենպաստ միջավայրի և այլ գործոններով պայմանավորված), ինչպես նաև 2021թ. բյուջեով նախատեսված ծախսերի կրճատման, ծախսային ուղղությունների գծով հնարավոր գերակայությունների (առաջնահերթությունների) փոփոխման արդյունքում վերաբաշխումների (փոխատեղումների), խնայողությունների առկայության, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի դեֆիցիտի սահմանաչափի ավելացման պարագայում վերջիններիս ֆինանսավորումը պետք է իրականացվի առաջնահերթ կարգով՝ կապիտալ ծախսերի դեպքում հիմք ընդունելով համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա այդ աշխատանքների արժեքների ճշգրտումները:

2021 թվականի համար առաջնահերթ կապիտալ ծախսերը կազմում են 81,337.3 մլն. դրամ, ռազմավարություններից բխող նոր նախաձեռնությունների գծով ծախսերը՝ 30,531.3 մլն. դրամ, իսկ վարկային միջոցների հաշվին իրականացվող միջոցառումների առաջնահերթությունները՝ 44,821.0մլն.դրամ:

Կապիտալ ծրագրերի դերը կարևորվել է նաև ՊՖԿՀ բարեփոխումների ռազմավարությունում, որտեղ ընդգրկված է նաև «Հանրային ներդրումների կառավարման» համակարգի ներդրումը, որը հանդիսանում է կապիտալ ծրագրերի գնահատման, առաջնահերթությունների որոշման և ֆինանսավորման համար անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկման առանցքային գործիքակազմի բաղադրիչներից մեկը: Այս միջոցառման իրականացումը ապագայում կնպաստի կապիտալ ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացմանը՝ խթանելով երկարաժամկետ տնտեսական աճի արագացումը:

ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ

Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսեր

Պետական մարմինների պահպանման ծախսերը ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծում ծրագրավորվել են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի N1212-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրային ցուցանիշները, որոնք ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծի կազմման ժամանակ, ըստ անհրաժեշտության, ճշտվել են օրենսդրական փոփոխություններին և կարգավորումներին համապատասխան:

Պետական մարմինների պահպանման գծով ՀՀ 2021 թվականի բյուջեի նախագծի ֆինանսական ցուցանիշները ծրագրավորելիս հաշվի են առնվել ինչպես պետական կառավարման համակարգի բարեփոխումները, այնպես էլ գործող օրենսդրության պահանջները:

Ստորև ներկայացվում են պետական կառավարման համակարգին առնչվող օրենսդրական և իրավական այն կարգավորումները, որոնք անմիջականորեն որոշակի ազդեցություն են ունեցել 2021 թվականի պետական կառավարման համակարգի պահպանման ծախսերի ծրագրավորման վրա:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2020 թվականի հուլիսի 16-ին ընդունվել է «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքը, որի 23-րդ հոդվածով սահմանվում է, որ՝ Հանրային հեռարձակողի կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող մարմինը Խորհուրդն է, որը բաղկացած է յոթ անդամից՝ Խորհրդի նախագահ և Խորհրդի վեց անդամ: Մինչ այդ գործող «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի համաձայն, Հեռուստառադիոընկերության խորհուրդը բաղկացած էր 5 անդամից:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2020 թվականի ապրիլի 16-ին ընդունվել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն ՀՀ դատախազությունում ստեղծվել է համապատասխան ստորաբաժանում:

ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 1807-Ն որոշմամբ սահմանվել է, որ Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը կից գործում է Հայաստանի Հանրապետության մաքսային կցորդ՝ Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմնի խորհրդականի կարգավիճակով: Մաքսային կցորդի նստավայրը տեղակայվում է Դաշնային մաքսային ծառայության Հյուսիս-Կովկասյան մաքսային վարչության Հյուսիս-Օսեթական մաքսատան շենքում՝ քաղաք Վլադիկավկաս:

Պետական մարմինների պահպանման ծախսերի ծրագրավորումը

Ընդհանուր առմամբ, ՀՀ պետական բյուջեի նախագծում պետական մարմինների պահպանման ծախսերի ծրագրավորվող մակարդակի վրա ազդող գործոններն են՝

- պետական կառավարման համակարգի բարեփոխումներից բխող օրենսդրական փոփոխությունները,
- պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային փոփոխությունները,
- պետական մարմինների աշխատողների թվաքանակի փոփոխությունը:

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծում պետական մարմինների պահպանման ծախսերի ծրագրավորումը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով՝

«ՀՀ դատական օրենսգրքի», «Սահմանադրական դատարանի մասին», «Դատախազության մասին», «Հաշվեքննիչ պալատի մասին», «ՀՀ հատուկ քննչական ծառայության մասին» և «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան ՀՀ դատարանների, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատախազության, ՀՀ հաշվեքննիչ պալատի, ՀՀ հատուկ քննչական ծառայության և ՀՀ քննչական կոմիտեի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում են պահուստային ֆոնդեր: Յուրաքանչյուր վերը նշված մարմնի պահուստային ֆոնդը ներկայացվում է պետական բյուջեի առանձին տողով, ընդ որում, ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով տվյալ մարմնի գծով նախատեսված ընդամենը ծախսերի կամ աշխատավարձի ֆոնդի երկու տոկոսին:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (09.06.2010թ. ՀՕ-63-Ն) պահանջներից ելնելով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) ոլորտում կիրառվելիք ապահովագրության վճարների նվազագույն և առավելագույն չափերը՝ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են հատկացումներ ծառայողական ավտոմեքենաների ապահովագրության համապատասխան վճարներ կատարելու համար:

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծում պետական մարմինների պահպանման ծախսերը հաշվարկվել են հիմք ընդունելով 19771 հաստիքային միավորների քանակը, որը 2020 թվականի համեմատ ավելացել է 62 միավորով: Թվաքանակի փոփոխությունը հիմնականում պայմանավորված է օրենսդրական կարգավորումներով, ինչպես նաև պետական մարմինների գործառույթների և կառուցվածքների օպտիմալացմամբ:

ՀՀ պետական մարմինների աշխատողների թվաքանակի փոփոխությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2ա աղյուսակում:

Ծախսերի ծրագրավորման սկզբունքները ըստ առանձին ծախսային ուղղությունների.

Աշխատավարձի ֆոնդ

Պետական մարմինների պահպանման ծախսերում աշխատավարձի ֆոնդում ներառվում են ինչպես աշխատողներին վճարվող հիմնական աշխատավարձերը, հավելումներն ու հավելավճարները, այնպես էլ պարգևատրման և դրամական խրախուսման համար օրենսդրությամբ նախատեսված միջոցները: Աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի դրույթներին և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N 737-Ն որոշման պահանջներին համապատասխան:

2021 թվականի համար աշխատավարձի ֆոնդի հաշվարկման հիմքում բազային աշխատավարձի չափ է ընդունվել 66140.0 դրամը:

Աշխատավարձի ֆոնդը ծրագրավորվել է հաշվի առնելով՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ գործող օրենսդրությամբ նախատեսված հավելավճարները (դասային, դիվանագիտական աստիճանների, կոչման,

աշխատանքային ստաժի և այլն), հավելումները (բարձր լեռնային, ծանր, վնասակար աշխատանքների համար և այլն) և պետական ծառայողների հիմնական աշխատավարձի բնականոն աճերը, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը չգերազանցող աշխատավարձ ստացողների համար 1000 դրամի չափով դրոշմանիշային վճարի ապահովմամբ պայմանավորված ծախսերը, ինչպես նաև «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Աշխատավարձի ֆոնդում նախատեսվել է նաև պետական ծառայողների պարգևատրման ֆոնդ՝ նրանց 2020 թվականի աշխատավարձի ֆոնդի 10 տոկոսի չափով: Միաժամանակ, բոլոր մարմինների համար նախատեսվել է պարգևատրման ֆոնդ, որը պետական ծառայողների պարգևատրման ֆոնդի հետ միասին կազմում է պարգևատրման ֆոնդի հաշվարկման համար հիմք հանդիսացող աշխատավարձի ֆոնդի 30%-ը:

Էներգետիկ ծառայությունների՝ էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսերը ծրագրավորվել են ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների գծով բյուջետային ծախսերի առանձին տեսակների ջեռուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ձեռքբերման ծավալների հաշվարկման հիմքում դրվող նորմաները հաստատելու մասին» N 629-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով գործող սակագները: Բնական գազի սակագինը սահմանվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 19-ի N 221-Ն որոշմամբ (մինչև 10 հազար խորանարդ մետր սպառման դեպքում՝ բնական գազի սակագինը 139.0 դրամ է, իսկ 10 հազար խորանարդ մետրը գերազանցող բնական գազի համար՝ 255.91 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ): Էլեկտրաէներգիայի սակագինը՝ 1 կվտ/ժ-ը 44.98 դրամ: Էլեկտրաէներգիայի ծախսերը ծրագրավորվել են սահմանված նորմաներով հաշվարկվածի 65%-ի չափով:

Պետական մարմինների կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններից օգտվելու վարձի վճարման ծախսերը հաշվարկվել են գործող սակագներով՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր հաստիքային միավորի համար սահմանված նորմատիվը՝ օրական 30 լիտր (հիմք ՀՀ կառավարության 23.09.2004թ. N 1536-Ն որոշում): Բացի այդ, ՀՀ դատարանների համար ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 12-ի N 732-Ա որոշման պահանջներին համապատասխան նախատեսվել է նաև լրացուցիչ ծախս՝ ելնելով դատական նիստերի դահլիճների ընդհանուր մակերեսի մեծությունից:

Կապի ծառայությունների վճարները հաշվարկվել են ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կապի և կոմունալ ծախսերի նորմաներ սահմանելու մասին» N 1536-Ն և ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում կապի ծառայությունների նորմաները և հեռախոսակապից օգտվելու օրինակելի ներքին կանոնները հաստատելու մասին» N 1956-Ն որոշումների պահանջներին համապատասխան: 2021 թվականի համար հեռախոսային խոսակցությունների տարեկան սահմանաչափը ծրագրավորվել է սահմանված նորմայի 30%-ի չափով: Կապի ծախսերը հաշվարկելիս հիմք են ընդունվել Հայաստանի Հանրապետությունում գործող կապի առանձին օպերատորների կողմից մատուցվող ծառայությունների սակագները՝ ըստ համապատասխան մարմինների հետ կնքված պայմանագրերի:

Գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմաներով:

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծում պահպանվել է պետական կառավարման համակարգի մարմինների արտասահմանյան պաշտոնական գործուղումների հետ կապված ծախսերի գծով հատկացումները ՀՀ պետական բյուջեում առանձին տողով արտացոլվող կենտրոնացված ֆոնդում ներառելու սկզբունքը:

Ծառայողական ավտոմեքենաների պահպանման ծախսերը ծրագրավորվել են համապատասխան մարմինների կողմից 2021 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերով ներկայացված ծառայողական ավտոմեքենաների քանակին համապատասխան, բայց ոչ ավելի քան ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշմամբ նախատեսված սահմանաքանակը: 2021 թվականի պետական բյուջեի նախագծում պետական մարմինների պահպանման ծախսերում նախատեսված է 923 մեքենայի պահպանման ծախս: Ընդ որում, 1 մեքենայի պահպանման տարեկան ծախսը հաշվարկվել է 1,2 մլն դրամի չափով (պահպանվել է նախորդ տարիների մակարդակը):

ՀՀ պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակների փոփոխությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2բ աղյուսակում:

ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերը 2021 թվականի համար ծրագրավորվել են 13,581. 3 մլն դրամի չափով՝ նախորդ տարվա համեմատ 2,791.4 մլն դրամով ավելի:

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի մոտ 22.06.2020թ. կայացած Արտաքին գործերի նախարարության 2021-2023թթ. ՄԺԾԾ-ի և 2021թ. բյուջեի հայտի քննարկման արդյունքները, ծախսերն ավելացվել են 2,176. 1 մլն դրամով, որից՝

1) 61.9 մլն դրամ – Իրաքի Էրբիլ քաղաքում ՀՀ հյուպատոսության շենքի վարձակալության, ավտոմեքենայի և գույքի ձեռքբերման,

2) 136.8 մլն դրամ – Դուբայում ՀՀ գլխավոր հյուպատոսության պահպանման ծախսերի նախատեսման (մինչ այդ ծախսերը հոգում էր նախորդ հյուպատոսը),

3) 1,147.0 մլն դրամ - օտարերկրյա պետություններում ծառայող դիվանագետի ծառայության հետ կապված ծախսերի փոխհատուցման չափերի ավելացման,

4) 61.9 մլն դրամ - դիվանագետի ուղեբեռի հետ կապված ծախսերի փոխհատուցման չափի ավելացման,

5) 366.2 մլն դրամ - նախարարության հաստիքացուցակի շրջանակներում 8 դիվանագետի (բոլոր ծախսերով) օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններ գործուղելու,

6) 476.3 մլն դրամ - առանձին դեսպանությունների շենքերի ընթացիկ նորոգման, նոր ավտոմեքենաների, գույքի, սարքավորումների և անվտանգության համակարգերի ձեռքբերման ու միջոցառումների անցկացման համար,

ինչպես նաև ծախսերից նվազեցվել է 73.9 մլն դրամ, որը նախորդ տարի նախատեսված էր Եթովպիայի և Իսրաելի դեսպանությունների համար ավտոմեքենայի և գույքի ձեռքբերման նպատակով:

Միաժամանակ, 2021 թվականի համար ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերն ավելացվել են շուրջ 615.3 մլն դրամով՝ կապված ՀՀ դրամի նկատմամբ արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետ (1 Եվրոն -

583.01 դրամ, 1 ԱՄՆ դոլարը - 486. 86 դրամ, 2020 թվականի պետբյուջեում՝ 531.16 դրամ և 476.46 դրամ):

2021 թվականի պետական բյուջեում միջոցներ են նախատեսվել տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների համար՝ 1 420,7 մլն դրամի չափով:

Համաձայն 2018 թվականի մարտի 21-ի «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՕ-194-Ն օրենքի 21-րդ հոդվածի, մարդահամարը՝ որպես համատարած հաշվառում, անցկացվում է առնվազն 10 տարին մեկ անգամ: Հիմք ընդունելով ՄԱԿ-ի նախաձեռնությունը և ԱՊՀ անդամ երկրների ղեկավարների խորհրդի կողմից 2016թ. սեպտեմբերի 16-ին ք. Բիշքեկում ընդունված «2020 թվականի փուլում ԱՊՀ անդամ-երկրներում մարդահամարների անցկացման մասին» որոշումը հերթական մարդահամարները 2020 թվականին առավել մոտ ժամկետներում անցկացնելու մասին, որոշվել էր Հայաստանում մարդահամարն անցկացնել 2020 թվականին: Սակայն, COVID19 համավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում որոշվեց մարդահամարն անցկացնել 2021 թվականին: Այդ նպատակով բյուջեի 2021 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել է 1 020,6 մլն դրամ:

Ծրագրավորված ծախսերի համեմատական վերլուծությունը

Հանրային իշխանության մարմինների պահպանման ծախսերի ընդհանուր գումարը (առանց այս ոլորտում իրականացվող նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի) ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծում ծրագրավորված է 130 789,8 մլն դրամի չափով, որը 2019 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2020 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների նկատմամբ կազմում է համապատասխանաբար 112,2 և 102,0 տոկոս: Նշված ցուցանիշների համեմատությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2 աղյուսակում: Ստորև ներկայացվում է վերը նշված ծախսերի վերծանումն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հիմնական հոդվածների:

Աշխատավարձի ֆոնդ

Հանրային իշխանության մարմինների աշխատողների աշխատավարձի ֆոնդը 2021 թվականի համար ծրագրավորվել է 89 784,6 մլն դրամի չափով, որը 2020 թվականի ծրագրավորվածից ավելի է 2 441,7 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է օրենսդրական կարգավորումների արդյունքում առանձին պետական մարմիններում պետական պաշտոն զբաղեցնող անձանց թվաքանակի ավելացմամբ:

Աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի դրույթներին և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N 737-Ն որոշման պահանջներին համապատասխան: Միաժամանակ, բոլոր մարմինների համար նախատեսվել է պարգևատրման ֆոնդ, որը պետական ծառայողների պարգևատրման ֆոնդի հետ միասին կազմում է հիմնական աշխատավարձի ֆոնդի 30%-ը:

Էներգետիկ ծառայությունների ծախսերը (ներառում է էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը) ծրագրավորվել են 2 580,1 մլն դրամի չափով, որը 2020 թվականի ծրագրավորվածից ավելի է 96,4 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է պետական

մարմիններին հատկացված տարածքների փոփոխությամբ, գազի սակագնի բարձրացմամբ, ինչպես նաև առանձին մարմիններում այդ ծախսերի կանոնակարգմամբ:

Կոմունալ ծառայությունների գծով ծախսերը ծրագրավորվել են 203,9 մլն դրամի չափով, որը 2020 թվականի ծրագրավորվածից ավելի է 0,9 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է պետական մարմինների աշխատողների թվաքանակի աճով, ինչպես նաև առանձին մարմիններում այդ ծախսերի կանոնակարգմամբ: Նշված հոդվածը ներառում է ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև միջատազերծման հետ կապված ծախսերը:

Կապի ծառայությունների գծով ծախսերը ծրագրավորվել են 2 083,3 մլն դրամի չափով, այն 2020 թվականի ծրագրավորվածից պակաս է 9,8 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է վերոնշված կառուցվածքային փոփոխություններով, ինչպես նաև կապի օպերատորների կողմից առաջարկվող սակագներով:

Ապահովագրական ծախսերը ծրագրավորվել են 38,2 մլն դրամի չափով՝ ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակին համապատասխան, առանձին դեպքերում հաշվի առնելով կնքված պայմանագրերը:

Գույքի և սարքավորումների վարձակալության գծով ծախսերը ծրագրավորվել են ներկայացված պայմանագրերին համապատասխան՝ շուրջ 588,5 մլն դրամ:

Արտագերատեսչական ծախսերի գծով նախատեսվել է 926,3 մլն դրամ, որը 2020 թվականի ծրագրավորվածից ավելի է 828,6 մլն դրամով, որը մասնավորապես պայմանավորված է ՊԵԿ-ի կողմից առանձին ստորաբաժանումների տարածքների պահպանության ծառայությունը մասնավոր կազմակերպությունից ձեռք բերելու (արտապատվիրակում) նախաձեռնությամբ:

Գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսերը ծրագրավորվել են 3 341,8 մլն դրամի չափով:

Պայմանագրային ծառայությունների ձեռք բերման ծախսերը ծրագրավորվել են 5 084,0 մլն դրամի չափով, որը 2020 թվականի մակարդակից ավելի է 410,4 մլն դրամով: Պայմանագրային ծառայությունները ներառում են՝ վարչական ծառայությունները, համակարգչային ծառայությունները, աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունները, տեղեկատվական ծառայությունները, կառավարչական ծառայությունները, կենցաղային և հանրային սննդի ծառայությունները, ներկայացուցչական ծախսերը և ընդհանուր բնույթի այլ ծառայությունները:

Նյութեր - ծախսերը ծրագրավորվել են 1 836,1 մլն դրամի չափով, որը 2020 թվականի ծրագրավորվածից ավելի է 183,7 մլն դրամով: Նյութերը ներառում են գրասենյակային նյութերի, գյուղատնտեսական ապրանքների, առողջապահական և լաբորատոր նյութերի, կենցաղային և հանրային սննդի նյութերի և հատուկ նպատակային այլ նյութերի ձեռք բերման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ դատախազների, քննչական կոմիտեի ծառայողների, հատուկ քննչական ծառայողների, ՀՀ դատարանների դատական կարգադրիչների, հարկադիր կատարողների, բնապահպանական տեսուչների, հարկային և մաքսային ծառայողների մասնագիտական համազգեստների ձեռքբերման ծախսերը, որը ծրագրավորվում է հիմք ընդունելով համազգեստները կրելու օրենսդրությամբ սահմանված կարգը և ժամկետները:

Տրանսպորտային միջոցների պահպանման ծախսերը ծրագրավորվել են 1206,7 մլն դրամի չափով, որը 2020 թվականի ծրագրավորվածից պակաս է 21,6 մլն դրամով: Այս

ծախսերը տարանջատված են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման երեք հոդվածներում՝ տրանսպորտային նյութեր, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում և պարտադիր վճարներ:

Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին - ծախսերը ծրագրավորվել են 919,8 մլն դրամի չափով՝ «Սպասարկում» և «Կոնդի առանձնատների տնտեսություն» պետական ոչ առևտրային կազմակերպություններին պետական աջակցության համար:

Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին – ծրագրավորվել է 1,073.6 մլն դրամի չափով՝ ՀՀ օրենսդրությամբ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի պահպանման համար նախատեսված պետական աջակցություն:

Այլ նպաստներ բյուջեից - ծրագրավորված է 2143,0 մլն դրամի չափով, ներառում է ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերը (հիմք ընդունելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթները, նշված ծախսը նախատեսվել է յուրաքանչյուր պատգամավորի համար ամսական 50.0 հազ. դրամի չափով), «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծախսերը, պատգամավորների, դատավորների, դատախազների, քննիչների՝ այլ վայր գործուղվելու դեպքում բնակվարձի փոխհատուցման գումարները, յուրաքանչյուր մարզպետարանին այս հոդվածով նախատեսվող գումարները, ծառայողական պարտականությունները կատարելիս հարկադիր կատարողի կողմից հասարակական տրանսպորտից օգտվելու և անձնական օգտագործման ավտոմեքենան ծառայողական նպատակներով օգտագործելու հետ կապված ծախսերի հատուցման գումարը, ինչպես նաև առանձին պետական մարմինների առանձնահատկություններով պայմանավորված համապատասխան ծախսերը: Բացի այդ, նախատեսված են համապատասխան միջոցներ՝ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության և համայնքային ենթակայության սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորումն ապահովելու նպատակով:

Այլ ծախսեր - այս ծախսերում ներառված են՝ ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների, ՀՀ ռազմական կցորդների, արտասահմանում ՀՀ առևտրային ներկայացուցչությունների պահպանման ծախսերը, ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի նախագահի և ՀՀ վարչապետի ֆոնդերը, ՀՀ Նախագահի կողմից առանձին անձանց պարգևատրելու համար անհրաժեշտ մեդալների և շքանշանների պատրաստման ծախսերը, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատարանների, ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ հատուկ քննչական ծառայության և ՀՀ հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդերը: Այս ծախսերը ծրագրավորվել են 15 489,3 մլն դրամի չափով, որը 2020 թվականից ավելի է 2 440,6 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերի ավելացմամբ, ինչպես նաև առանձին մարմինների՝ օրենսդրությամբ սահմանված պահուստային ֆոնդերի գծով հատկացվող միջոցների փոփոխությամբ:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նախատեսվել են 1 583,8 մլն դրամի չափով՝ առանձին պետական մարմիններում կարողությունների զարգացման համար:

ՀՀ առողջապահության նախարարություն

Նախագծով նախատեսվում է հատկացնել (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի) 110,615.5 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 108,332.7 մլն դրամի դիմաց: ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերի ավելացումը կազմում է 2,283.8 մլն դրամ կամ 2.1 %:

Առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումների գործընթացում խնդիր է դրվում առկա միջոցների և ներուժի պայմաններում ապահովել քաղաքացու առողջության պահպանման սահմանադրական իրավունքը, բարձրացնել բնակչության համար երաշխավորված անվճար բժշկական օգնության որակը և հասանելիությունը, նպաստել ծնելիության և կյանքի միջին տևողության ավելացմանը:

Առողջապահության ծախսերի ձևավորումն ունի երկու հիմնական մոտեցում.

- ✓ առողջապահական գերակայությունների պահպանում,
- ✓ սոցիալական ուղղվածության ապահովում:

ՀՀ առողջապահությանը հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

1. «Հանրային առողջության պահպանում» ծրագիր.

Ծրագրի գծով նախատեսվել է 6,329.6 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 5,772.9 մլն դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1.1. «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 2,421.3 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 2,021.3 մլն դրամի դիմաց կամ 400.0 մլն դրամով ավել, որը պայմանավորված է անձնակազմի տարբեր կատեգորիաների միջին աշխատավարձերի բարձրացմամբ, ինչպես նաև դեղերի և բժշկական պարագաների, բժշկական սարքերի ձեռք բերման և որոշ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ավելացմամբ:

Միջոցառմամբ նախատեսվում է իրականացնել համաճարակաբանական հետազոտություններ վարակների օջախներում, մանրէաբանական հետազոտությունների, վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների, թունավորումների հաշվառում, համաճարակների, բռնկումների, արտակարգ իրավիճակների ժամանակ հատուկ հակահամաճարակային միջոցառումների, մալարիայի դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների իրականացում, էպիզոոտոլոգիական հետազոտություն հանրապետության տարածքում ժանտախտի, տուլարեմիայի և այլ բնական օջախային վարակների էպիզոոտիաները հայտնաբերելու և մարդկանց մեջ հիվանդացությունը ժամանակին կանխելու նպատակով և այլն: Իրականացվելու են նաև ի հայտ եկած մարդուց մարդ փոխանցվող նոր հարուցչի՝ նոր կորոնավիրուսի (COVID-19) դեմ պայքարի և կանխարգելման ուղղությամբ մասնագիտացված շարունակական դիտարկումներ՝ վարակիչ հիվանդություններ փոխանցողների պոպուլյացիաների նկատմամբ ՀՀ ողջ տարածքում, ինչպես նաև փոխանցողների դեմ պայքարի աշխատանքներ:

1.2. «Իմունականխարգելման ազգային ծրագիր» միջոցառման գծով նախատեսվել է 3,500.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 3,343.2 մլն դրամի դիմաց կամ 156.8 մլն դրամով ավել, որը պայմանավորված է իմունականխարգելման ոլորտում

գործող ենթածրագրերով, Արցախի Հանրապետության իմունականխարգելման ծրագրի կարիքներով, ինչպես նաև առկա և գերակայող խնդիրներով, մասնավորապես՝ Պատվաստումների ազգային օրացույցով նախատեսված պատվաստանյութերի և համապատասխան օժանդակ պարագաների ձեռքբերմամբ, իմունականխարգելման գործընթացը գլոբալ քաղաքականություններին և մարտահրավերներին համապատասխանեցմամբ (մասնավորապես վեցավալենտի ներդրման վերջնական փուլը՝ կապույտ հազի հիվանդացության վերահսկում ավելի բարձր տարիքի անձանց շրջանում):

Իմունականխարգելման ազգային ծրագրի շրջանակում նախատեսվում է ազգային օրացույցում ընդգրկված պատվաստումների ժամանակին և որակով իրականացումը:

1.3. «Արյան հավաքագրման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 308.4 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարին համապատասխան:

Միջոցառման շրջանակում նախատեսվում է դոնորական արյան հավաքագրում և պաշարում, կադրային դոնորի փոխհատուցում, դոնորական արյան վարակային անվտանգության ապահովում, հակառեզուս իմունոգլոբուլինի պատրաստում, պահպանում, տրամադրում և այլն:

1.4. «Առողջ ապրելակերպի խթանման և ծխելու դեմ պայքարի իրականացում միջոցառումներ» միջոցառման գծով նախատեսվել է 100.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ծխելու դեմ պայքարին ուղղված միջոցառումներ, մասնավորապես՝ առողջ ապրելակերպի և ծխելու դեմ պայքարի հանրային իրազեկման, ծխելը թողնելուն օժանդակության թեժ գծի ծառայության ներդրման, բուժաշխատողների շրջանում կրթական միջոցառումների իրականացման և այլ ծառայություններ:

2. «Առողջության առաջնային պահպանում» ծրագիր

Ծրագրի գծով նախատեսվել է 27,804.5 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 27,058.8 մլն դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

2.1. «Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումը ներառում է առողջության առաջնային պահպանման՝ ընտանեկան բժշկի, ընդհանուր պրակտիկայի թերապևտի, ընդհանուր պրակտիկայի մանկաբույժի կողմից մատուցվող ծառայություններ՝ հավաքագրված բնակչության շրջանում հիվանդությունների կանխարգելում, վաղ հայտնաբերում, ախտորոշում, բուժում, քրոնիկ հիվանդների դինամիկ հսկողություն (ներառյալ ակտիվ կանչերը), ժամանակավոր անաշխատունակության փորձաքննություն, տնային կանչերի իրականացում, ըստ ցուցումների, հիվանդների հոսպիտալացման կազմակերպում, բնակչության բժշկահիգիենիկ կրթում, անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող անձանց դեղերով ապահովում, առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների (արյան շրջանառության համակարգի, շաքարային դիաբետի, չարորակ նորագոյացությունների և այլն) վաղ հայտնաբերման և կանխարգելման գործընթացի պարտադիր իրականացում, վարակիչ հիվանդությունների կանխարգելում ու վաղ հայտնաբերում: Նշված միջոցառումը ներառվում է նաև նեղ մասնագիտական՝ վիրաբուժական/վնասվածքաբանական, ակնաբանական, սրտաբանական, նյարդաբանական, քիթ-կոկորդ-ականջաբանական մասնագիտական խորհրդակվությունը և դիսպանսերային՝ հակատուբերկուլոզային, ուռուցքաբանական, հոգեբուժական

(նարկոլոգիական), մաշկավեներաբանական, վարակաբանական, էնդոկրինոլոգիական ծառայությունների մատուցումը պետական պատվերի շրջանակում հավաքագրված բնակչության շրջանում:

Ամբուլատոր հատվածում ներառված է նաև ընտանեկան բժշկի կողմից նեղ մասնագիտական խորհրդատվության և լոբորատոր-գործիքային հետազոտությունների ուղեգրում, տնային կանչերի իրականացում աշխատաժամից դուրս՝ շտապօգնության մեքենայով, բուժքույրերի կողմից երեխաների բժշկական օգնություն և սպասարկում դպրոցներում:

Առաջնորդվելով գենդերային զգայուն բյուջետավորման սկզբունքից, առաջնային օղակում իրականացվում է հղիների հսկողություն, հղիների նախածննդյան և հետծննդյան հսկողության ընթացքում, ինչպես նաև կանանց և 15 տարեկան աղջիկների առողջական վիճակի գնահատման նպատակով կատարվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ, զորակոչային, նախազորակոչային տարիքի անձանց արտահիվանդանոցային փորձաքննություն:

Ամբուլատոր-պոլիպլինիկական օղակում իրականացվում է նաև արտահիվանդանոցային պալիատիվ բժշկական օգնություն և սպասարկում, հիվանդանոցային պայմաններում արտահիվանդանոցային անհետաձգելի բժշկական օգնություն (Էմերջենսի), հեպատիտ Ց-ի ախտորոշման և բուժման նպատակով լաբորատոր հետազոտություններ, մինչամուսնական խորհրդատվություններ և հետազոտություններ:

«Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 27,369.4 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 26,592.6 մլն դրամի դիմաց կամ 776.8 մլն դրամով (2.8%-ով) ավել, որն ուղղվելու է առաջնային օղակի կողմից մատուցվող ծառայությունների արդիականացմանը, անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող անձանց դեղերով ապահովմանը, 15 տարեկան աղջիկների առողջական վիճակի գնահատման նպատակով կատարվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծավալների ընդլայնմանը, ինչպես նաև հղիների նախածննդյան հսկողութան բարելավման շրջանակներում բարձր ռիսկի հղիներին ըստ ցուցումների իրականացվելու են լրացուցիչ լաբորատոր հետազոտություններ:

2.2. «Ախտորոշման ճշտման նպատակով լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ նեղ մասնագիտացված կենտրոններում և շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ» միջոցառումը ներառում է ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի բժիշկների կողմից սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված բնակչությանն ախտորոշման ճշտման նպատակով նեղ մասնագիտացված կենտրոններում խորհրդտվության կազմակերպումը և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացումը:

Միջոցառումը ընդգրկում է նաև մինչև 18 տարեկան երեխաների շարունանակ հսկողության կազմակերպումը առանձին խրոնիկական ընթացք ունեցող հիվանդությունների ժամանակ նեղ մասնագիտացված կենտրոններում:

Միջոցառման գծով նախատեսվել է 435.1 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 305.1 մլն դրամի դիմաց կամ 130.0 մլն դրամով ավել, որն ուղղվելու է հիվանդությունների առավել վաղ հայտնաբերման, խրոնիկական հիվանդությունների շարունակական հսկողության բարելավմանը, որի արդյունքում նախատեսվում է

հիվանդությունների վաղ ախտորոշում, հիվանդանոցային դեպքերի քանակի կրճատում, մանկական հաշմանդամության ցուցանիշը բարելավում:

Միջոցառումը ներառում է նաև ՀՀ 2020թ. պետական բյուջեով նախատեսված «Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ» միջոցառման շրջանակներում իրականացվող հետազոտությունները:

3. «Դատաբժշկական և ախտաբանաանատոմիական ծառայություններ».

Ծրագրի գծով նախատեսվել է 502.9 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

3.1. «Դատաբժշկական փորձաքննություններ» միջոցառման գծով նախատեսվել է 449.9 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման նպատակն է ՀՀ դատախազության, ՀՀ արդարադատության և ՀՀ պաշտպանության նախարարությունների, ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանության պատվերի հիման վրա դիակների, կենդանի անձանց, իրեղեն ապացույցների, դատաքիմիական, դատաբժշկաքրեագիտական, դատագենետիկ, հյուսվածքաբանական և դատակենսաբանական փորձաքննությունների, ինչպես նաև դիակների արտաշիրիմումների իրականացնումը:

3.2. «Ախտաբանաանատոմիական հետազոտություններ» միջոցառման գծով նախատեսվել է 53.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման նպատակն է պերինատալ մահերի դեպքում հերձումների և ախտաբանաանատոնիական հերձման նյութի հիստոլոգիական հետազոտությունների իրականացումը:

4. «Դեղապահովում» ծրագիր.

Ծրագրի գծով նախատեսվել է 3,490.8 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 3,265.2 մլն դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

4.1. «Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման աշխատանքներ» միջոցառման գծով նախատեսվել է 100.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 74.4 մլն դրամի դիմաց կամ 26.5 մլն դրամով ավել, որը պայմանավորված է ՀՀ կառավարության կողմից դեռևս 2019թ.-ին նախաձեռնված հանրապետությունում մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման աշխատանքները ամբողջովին ՊԲԳ (Պատշաճ Բաշխման Գործունեություն) միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու հանգամանքով՝ հաստիքների ավելացմամբ, աշխատանքների ծավալների մեծացմամբ, ինչպես նաև աշխատավարձերի բարձրացմամբ:

Միջոցառման շրջանակում նախատեսվում է մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման, հաշվառման, պահպանման, բաշխման և այլ աշխատանքների իրականացում:

4.2. «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» միջոցառման գծով նախատեսվել է 3,390.8 մլն դրամ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 3,190.8 մլն դրամի դիմաց կամ 200.0 մլն դրամով ավել: Միջոցառման շրջանակներում պետության կողմից անվճար և արտոնյալ պայմաններով բնակչությանը դեղորայքի տրամադրման շրջանակը ընդլայնվում է տարեցտարի՝ ապահովելով 12 հիվանդության ծածկույթ:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից դեղորայքային ապահովումը իրականացվում է ՀՀ կառավարության 30.05.2019 թվականի «Բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի և այն հիվանդությունների ցանկերը, որոնց դեպքում դեղերը շահառուներին հատկացվում են դրանց արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ, ինչպես նաև այդ բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի ցանկում ընդգրկված շահառուներին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների միջոցով դեղերի հատկացման և փոխհատուցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1717-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 642-Ն որոշման համաձայն, ըստ հետևյալ հիվանդությունների ցանկի՝ հոգեկան հիվանդությունների, չարորակ նորագոյացությունների, շաքարային և ոչ շաքարային դիաբետի, տուբերկուլյոզի, էպիլեպսիայի, սրտամկանի ինֆարկտի, պարբերական հիվանդության, սրտի փականների արատների, մալարիայի, քրոնիկ երիկամային անբավարարության, ֆենիլկետոնուրիայի, անհաս նորածինների շնչառական խանգարման համախտանիշի և մարդու իմունային անբավարարության (ՄԻԱՎ) վարակի, հիպոֆիզային գաճաճություն ախտանիշի և վիրուսային հեպատիտ Ց հիվանդության դեպքերում:

5. «Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ» ծրագիր.

Ծրագրի գծով նախատեսվել է 271.3 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 321.3 մլն դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

5.1. «Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ» միջոցառման գծով նախատեսվել է 221.3 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 176.6 մլն դրամի դիմաց կամ 44.6 մլն դրամով ավել, որը պայմանավորված է ՀՀ կառավարության 30.01.2020թ. N 80-Ա որոշմամբ ՀՀ առողջապահության նախարարության «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ-ը ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին միացնելով: «Գիտաբժշկական գրադարանային ծառայություններ» միջոցառման համար նախկին տարիների բյուջետային միջոցները նախատեսվել այս միջոցառման շրջանակներում:

Ծրագրի շրջանակում նախատեսվում են մասնագիտական գործունեության հավաստագրման ծառայություններ, Հայաստանի առողջապահության արդյունավետության գնահատման տարեկան զեկույցի կազմման և նորմատիվ փաստաթղթերի մշակման ծառայություններ, առողջապահության ոլորտի վիճակագրական հաշվետվությունների հետ կապված վերլուծական աշխատանքների տեխնիկական սպասարկման և գիտաբժշկական

գրադարանային հավաքածուների պահպանման և համալրման, ընթերցողների սպասարկման, գրադարանային միջոցառումների կազմակերպման այլ ծառայություններ:

5.2. «Բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման միջոցով Հայաստանի Հանրապետության մարզային առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայությունների մատուցում» միջոցառման գծով նախատեսվել է 50.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման նպատակն է բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման միջոցով ՀՀ մարզային առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայությունների մատուցումը:

6. «Մոր և մանկան առողջության պահպանում» ծրագիր.

Ծրագրի գծով նախատեսվել է 19,082.1 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 20,398.9 մլն դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

6.1. «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակում նախատեսվել է 7,043.9 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 7,548.4 մլն դրամի դիմաց կամ 504.5 մլն դրամով պակաս:

Միջոցառումն ընդգրկում է ծննդաբերության, նախածննդյան և հետծննդյան բարդությունների բուժօգնությունը:

6.2. «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումը ներառում է մինչև 18 տարեկան երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության հիմնական և նորագույն թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ծառայությունների փաթեթը, հիվանդանոցային պայմաններում ախտորոշման ճշտումը:

Միջոցառման շրջանակում նախատեսվել է 10,500.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 11,163.8 մլն դրամի դիմաց կամ 663.8 մլն դրամով պակաս:

6.3. «Մտավոր, հոգեկան (վարքագծային), լսողական, ֆիզիկական (շարժողական) և զարգացման այլ խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ» միջոցառման շրջանակում կազմակերպվում է զարգացման խանգարումներով երեխաների վաղ հայտնաբերման և վաղ միջամտության գործընթացի կազմակերպում (Հայաստանի Հանրապետությունում մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաների քանակը կազմում է 7525), որի գծով նախատեսվել է 320,3 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 400,3 մլն դրամի դիմաց կամ 80.0 մլն դրամով պակաս:

Ծրագրային ժամանակահատվածում նախատեսվում է զարգացման խանգարումներով երեխաների շրջանում հաշմանդամության հնարավոր կանխում և նրանց սոցիալական ինտեգրման ապահովում:

6.4. «Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումը վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բնակչության որոշ առանձին և հատուկ խմբերում ընդգրկված անպտուղ զույգերի բժշկական օգնության և սպասարկման ծառայություն է, որը հանդիսանում է առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման բաղադրիչ:

Միջոցառման գծով նախատեսվում է 917.9 մլն դրամ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

6.5. «Բնածին հիպոթիրեոզի, ֆենիլկենտոնուրիայի, լսողության և տեսողության (անհասների ռետինոպաթիա) խանգարումների, կոնքազդրային հոդի խախտման վաղ հայտնաբերման նպատակով նորածնային սքրինգների անցկացում» միջոցառման գծով նախատեսվել է 300.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 368.5 մլն դրամի դիմաց կամ 68.5 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է ծնունդների քանակի կանխատեսվող նվազմամբ:

Միջոցառման նպատակն է մասնագիտացված ախտորոշման կենտրոնների, պոլիկլինիկաների և հիվանդանոցների միջոցով նորածնային սկրինինգների իրականացումը, որոնք ուղղված են բնածին, ժառանգական հիվանդությունների հնարավորինս վաղ ախտորոշմանը, ինչի շնորհիվ հնարավոր է հասնել հիվանդության կանխարգելման, ինչպես նաև բուժման կամ ախտաբանական վիճակի շտկման:

7. «Շտապ բժշկական օգնություն» ծրագիր.

«Շտապ բժշկական օգնության» ծրագիրը ներառում է հանրապետության տարածքում ամբողջ բնակչության համար արտահիվանդանոցային անհետաձգելի և շտապ բժշկական օգնությունը, հոսպիտալացումը, ուղղաթիռով սանավիացիայի ծառայությունը, արագ արձագանքման ծառայությունը:

Ծրագրի շրջանակներում իրականացվում է մեկ միջոցառում՝ «Շտապ բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումը, որի գծով նախատեսվել է 5,000.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 4,292,3 մլն դրամի դիմաց կամ 707.7 մլն դրամով ավել, որը նախատեսվում է ուղղել կանչերի գների վերանայմանն ըստ սպասարկվող տարածքի և ծառայության ծանրաբեռնվածության գործակցի, ինչպես նաև շտապ բժշկական օգնության աշխատակիցների աշխատավարձերի բարձրացմանը:

8. «Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում» ծրագիր.

Ծրագրի գծով նախատեսվել է 15,802.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 13,707.5 մլն դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

8.1. «Հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի անցկացման ծառայություններ» միջոցառման շրջանակներում իրականացվում է բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ծրագրային հեմոդիալիզային ծառայությունը:

Ծրագրի գծով նախատեսվել է 3,200.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 2,686.2 մլն դրամի դիմաց կամ 513.8 մլն դրամով ավել:

8.2. «Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 3,400.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 2,829.2 մլն դրամի դիմաց կամ 570.8 մլն դրամով ավել, որը պայմանավորված է պայմանավորված է հիմնականում գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ ինսուլտի բուժման դեպքերի քանակի նախատեսվող աճով:

Միջացառման շրջանակներում մատուցվում են անհետաձգելի բժշկական օգնության, ինչպես նաև գլխուղեղի սուր և ենթասուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբէկտոմիա ծառայություններ:

Միջոցառումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված անհետաձգելի վիճակների և հիվանդությունների ցանկի համաձայն:

8.3. «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակում նախատեսվել է 2,932.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 2,772.0 մլն դրամի դիմաց կամ 160.0 մլն դրամով ավել, որը նախատեսվում է ուղղել ծառայության պահպանման ծախսերին:

Միջոցառման շրջանակում նախատեսվում է իրականացնել քրոնիկ հոգեկան հիվանդների խնամք, հիվանդների փորձաքննություն, հարկադիր և սուր վիճակների բուժում և նարկոլոգիական դիսպանսերներում թմրամոլությամբ, թունամոլությամբ, ալկոհոլամոլությամբ տառապող անձանց հիվանդանոցային բուժման ապահովում:

8.4. «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակում նախատեսվել է 4,370.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 3,420.1 մլն դրամ գումարի դիմաց կամ 949.9 մլն դրամով ավել:Միջոցառման շրջանակում նախատեսվում է իրականացնել չարորակ նորագոյացությունների համալիր, վիրահատական և ճառագայթային բուժում, չարորակ հիվանդների ճառագայթային բուժում ցերեկային ստացիոնարի պայմաններում, ինչպես նաև քիմիաթերապևտիկ և սիմպտոմատիկ բուժում:

8.5. «Սրտի անհետաձգելի վիրահատություններ» միջոցառման գծով նախատեվել է 1,900.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 2,000.0 մլն դրամ գումարի դիմաց կամ 100.0 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է դեպքերի թվի կայունացմամբ:

Միջոցառումը ներառում է «Սրտամկանի սուր ինֆարկտ» էլեկտրասրտագրության ST-էլևացիայով դեպքերը և հանդիսանում է կյանքին վտանգ սպառնացող դեպքերի բժշկական օգնություն և սպասարկում:

Միջոցառումը ֆինանսավորվում է չսահմանափակվող բյուջեի սկզբունքով, առանց պացիենտների հերթագրման:

9. «Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» ծրագիր.

Ծրագրի գծով նախատեսվել է 27,205.5 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 27,104.1 մլն դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

9.1. «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումն ընդգրկում է սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության և սպասարկումը հիվանդանոցային պայմաններում, սրտի վիրահատությունները, դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները, զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային փորձաքննությունը և բուժումը:

Միջոցառման շրջանակում նախատեսվել է 19,100.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 19,172.4 մլն դրամի դիմաց կամ 72.4 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է դեպքերի թվի նվազմամբ:

9.2. «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումը ներառում է ամբուլատոր-պոլիկլինիկական մասնագիտացված ստոմատոլոգիական օգնության իրականացումը սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին մասնագիտացված ստոմատալոգիական պոլիկլինիկաների և ստոմատոլոգիական կաբինետներ ունեցող պոլիկլինիկաների միջոցով:

Ծրագրի գծով նախատեսվել է 500.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 644.6 մլն դրամի դիմաց կամ 144.6 մլն դրամով պակաս:

9.3. «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակում նախատեսվել է 3,577.2 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 3,077.2 մլն դրամ գումարի դիմաց կամ 500.0 մլն դրամով ավել, որը պայմանավորված է շահառուների թվի կանխատեսվող ավելացումով (ոստիկանության հոսպիտալի պահպանման և սպասարկման հաշվին) և չսահմանափակվող բյուջեի սկզբունքով իրականացվող ֆինանսավորման արդյունքում հասանելության և մատչելիության մակարդակի բարձրացմամբ և հերթագրումների բացառմամբ:

9.4. «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ» միջոցառման գծով սոցիալական փաթեթի շուրջ 120.4 հազար շահառուների համար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու անխոչընդոտ հնարավորությունների ստեղծման նպատակով նախատեսվել է 3,826.3 մլն դրամ պահպանելով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված ծախսերի մակարդակը:

ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 375-Ն որոշման համաձայն՝ շահառուների բժշկական օգնությունն ու սպասարկումը կազմակերպվում և ֆինանսավորվում է ՀՀ առողջապահության նախարարության և առողջության ապահովագրության ծառայություններ մատուցող ընկերությունների միջև կնքված առողջության ապահովագրության պայմանագրերի միջոցով: Առողջապահական կազմակերպությունների կողմից շահառուներին մատուցված բժշկական օգնության և սպասարկման հատուցումն իրականացվում է ապահովագրական ընկերությունների կողմից:

9.5. «Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակներում նախատեսվել է 2.0 մլն դրամ՝ պահպանելով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված ծախսերի մակարդակը:

9.6. «Փոխպատվաստման ծառայություններ» միջոցառման նպատակն է իրականացնել մարդու օրգանների, մասնավորապես՝ երիկամի, լյարդի ոսկրածուծի/ցողունային բջիջների փոխպատվաստման վիրահատություններ, որի արդյունքում կնվազի հեմոդիալիզային ծառայության շահառուներիմ աճի տեմպը, կբարելավվի նրանց կյանքի որակը:

Միջոցառման գծով նախատեսվել է 200.0 մլն դրամ՝ պահպանելով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված ծախսերի մակարդակը:

10. «Վարակիչ հիվանդությունների կանխարգելում» ծրագիր.

Ծրագրի գծով նախատեսվել է 2,609.9 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 2,869.9 մլն դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

10.1. «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 262.1 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 283.0 մլն դրամի դիմաց կամ 20.9 մլն դրամով պակաս:

Միջոցառման շրջանակներում իրականացվում է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն, համաճարակաբանական հետազոտություն, դիսպանսերային հսկողություն, ՄԻԱՎ վարակի հետկոնտակտային կանխարգելում, և ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություններ:

10.2. «Տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 1,000.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 1,189.1 մլն դրամի դիմաց կամ 189.1 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է հիվանդացության ցուցանիշի բարելավմամբ:

Միջոցառման շրջանակում իրականացվում է առաջնակի հայտնաբերված, հիվանդության սրացման փուլում գտնվող տուբերկուլյոզով հիվանդների համաճարակաբանական հսկողություն, հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում, հիվանդանոցային պայմաններում ախտորոշման ճշտումը, լաբորատոր-գործիքային հետազոտություններ:

10.3. «Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակում նախատեսվել է 1,397.8 մլն դրամ գումար՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 1,397.8 մլն դրամի դիմաց կամ 50.0 մլն դրամով պակաս:

Ինֆեկցիոն հիվանդությունների բուժումը ներառում է աղիքային, վիրուսային և միջատներով տարածվող ինֆեկցիաներով ախտահարվածների բուժում, որն ունի սոցիալական նշանակություն: Ինֆեկցիոն հիվանդություններով տառապող անձանց բուժօգնության կազմակերպումն իրականացվում է ընդհանուր և մասնագիտացված ինֆեկցիոն հիվանդանոցներում, բաժանմունքներում:

Միաժամանակ ՀՀ առողջապահության նախարարության գծով նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր», որի նպատակներն են ՀՀ բնակչության ռիսկային խմբերում ՈՎՀ սքրինինգային հետազոտությունների իրականացման աշխատանքների շարունակումը, հանրապետության տարբեր մարզերում ընտրված հիվանդանոցների արդյունավետության և որակի բարելավումը, ինչպես նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի նոր բժշկական կենտրոնի շենքի կառուցումը: 2021թ. նախատեսվում է 1,288.7 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,056.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 232.2 մլն դրամ:

2. ՀՀ կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկողության կատարելագործում» ծրագիր, որի նպատակն է ՀՀ մարզերում սքրինինգային հետազոտությունների իրականացումը, որի շրջանակներում նախատեսվում է՝ մամոգրաֆիկ սքրինինգային հետազոտությունների փոխհատուցում Լոռու, Սյունիքի, Տավուշի մարզերում, մամոգրաֆիայի շարժական սարքի ձեռքբերում, նշված

մարզում հանրային իրազեկման քարոզարշավի կազմակերպում և ծրագրում ընդգրկված բժշկական անձնակազմի վերապատրաստումներ, ծրագրային ապահովման ստեղծում ընտանեկան բժիշկների առցանց սերտիֆիկացման համար, մարդկային ռեսուրսների ռեգիստրի մշակում, կրծքագեղձի քաղցկեղի բուժման վերաբերյալ ուղեցույցների մշակում, առցանց մոդուլի մշակում: 2021թ. նախատեսվում է 78.5 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 71.0 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 7.5 մլն դրամ:

3. Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծրագրերի հզորացում» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակներն են տուբերկուլոզի բոլոր տեսակների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ախտորոշման հասանելիության բուժման մոնիթորինգի և կանխարգելման ապահովումը՝ ախտորոշիչ նյութերի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերմամբ, հակատուբերկուլոզային դեղերի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ բուժման նպատակով հակառետրովիրուսային և օպորտունիստական վարակների բուժման դեղորայքի անխափան մատակարարումը, տուբերկուլոզով հիվանդների սոցիալական և հոգեբանական օժանդակությունը՝ ուղղված բուժման հետևողականության բարելավմանը, հիվանդների ակտիվ հայտնաբերման միջոցառումները, բուժման մոնիթորինգի, դեղերի կողմնակի ազդեցությունների կառավարման և վարակի վերահսկման բարելավումը, ՏԲ ազգային ծրագրի կառավարման կարողությունների հզորացումը, համաճարակաբանական հսկողության, մոնիթորինգի և գնահատման համակարգերի ամրապնդումը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային միասնական համակարգի ամրապնդումն ու համաճարակաբանական հետազոտությունների իրականացումը, ՄԻԱՎ-ի և այլ արյունային վարակների կանխարգելման նպատակով ներարկային թմրամիջոցներ գործածող անձանց շրջանում վնասի նվազեցմանն ուղղված միջոցառումների, ներառյալ մեթադոնային փոխարինող բուժման իրականացումը: 2021թ. նախատեսվում է 1,149.6 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 946.8 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 202.8 մլն դրամ:

ՀՀ առողջապահության նախարարության 2021 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը 2019-2020 թվականների ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 4 աղյուսակում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Նախագծով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գծով նախատեսվում է հատկացնել 175,645.6 մլն դրամ՝ 2020 թվականի 177,6244.0 մլն դրամի դիմաց, ծախսերի նվազումը կազմել է 1,978.4 մլն դրամ կամ 1.1 տոկոս:

Կրթության և գիտության ոլորտների գծով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացվելիք ծրագրերին (առանց կառավարման ապարատի գծով ծախսերի) նախատեսվում է հատկացնել 155,587.6 մլն դրամ՝ 2020 թվականի 155,478.4 մլն դրամի դիմաց, ծախսերի աճը կազմել է 109.2 մլն դրամ կամ 0.1 տոկոս:

2021 թվականին նախարարությանը նախատեսված հատկացումներն ուղղվելու են 10 ծրագրերի իրականացմանը: Մասնավորապես.

«Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն» ծրագրի գծով նախատեսվել է 11,602.0 մլն դրամ՝ 2020 թվականի 12,645.2 մլն դրամի դիմաց, ծախսերի նվազումը կազմել է 1,043.2 մլն դրամ կամ 8.2 տոկոս, պայմանավորված հետևյալով.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակի և ուսանողական նպաստների տրամադրման գծով միջոցառումներով նախատեսվել է՝ ընդամենը 11,342.3 մլն դրամ՝ 2020թվականի 12,409.3 մլն դրամի դիմաց, ծախսերը նվազել են 1,067.0 մլն դրամով կամ 8.6%-ով՝ պայմանավորված սովորողների թվաքանակների փոփոխությամբ: Նշված միջոցառումների գծով ծախսերը նախատեսվել են հանրապետության 22 արհեստագործական ուսումնարաններում արհեստագործական կրթության մեջ ընդգրկվող 7.9 հազար սովորողների ուսուցման գծով՝ 2020 թվականի 8.3 հազարի դիմաց (սովորողների թվաքանակը 2021 թվականին կնվազի 0.4 հազարով) և 69 հաստատություններում միջին մասնագիտական կրթության մեջ ընդգրկվող 22.3 հազար սովորողների ուսուցման գծով՝ 2020 թվականի 22.4 հազարի դիմաց (սովորողների թվաքանակը կնվազի 0.1 հազարով):

Նախագծով «Միջին մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 23.8 մլն դրամ (2020 թվականին նշված ծախսերը նախատեսված են եղել «1192 Կրթության որակի ապահովում» ծրագրի «Նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ» միջոցառման շրջանակներում), «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում» միջոցառման իրականացման գծով՝ 235.9 մլն դրամ, պահպանվել է 2020 թվականի մակարդակը (ընդհանուր առմամբ՝ կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով ծախսերը նախատեսվել են 1,327.6 մլն դրամի չափով, որը 2020 թվականի համար հաստատված համապատասխան ցուցանիշից (1,873.2 մլն դրամ) պակաս է 545.6 մլն դրամով):

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի» գծով նախատեսվել է 11,861.9 մլն դրամ՝ 2020 թվականի 12,627.1 մլն դրամի դիմաց, ծախսերի նվազումը կազմել է 765.2 մլն դրամ կամ 6.1 տոկոս՝ պայմանավորված ուսանողների թվաքանակների փոփոխությամբ:

Ծրագրի շրջանակներում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակի և ուսանողական նպաստների տրամադրման գծով միջոցառումներով նախատեսվել է՝ ընդամենը, 11,432.0 մլն դրամ՝ 2020 թվականի 12,062.3 մլն դրամի դիմաց, կամ՝ ծախսերի նվազումը կազմում է 630.3 մլն դրամ: Նշված միջոցառումների գծով ծախսերը նախատեսվել են 12.3 հազար ուսանողի հաշվով՝ 2020 թվականի 13.5 հազարի դիմաց (ուսանողների թվաքանակը 2021 թվականին կնվազի 1.2 հազարով):

Նախագծով «Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում» և «Աջակցություն արտասահմանում սովորող ուսանողներին» միջոցառումների գծով ծախսերը նվազել են, համապատասխանաբար՝ 4.0 և 206.0 մլն դրամով, միաժամանակ, «Բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 63.8 մլն դրամ (2020 թվականին նշված ծախսերը նախատեսված են եղել «1192 Կրթության որակի ապահովում» ծրագրի «Նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ» միջոցառման շրջանակներում):

Ծրագրի շրջանակներում «Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակներ» միջոցառման գծով նախատեսվել է 47.5 մլն դրամ՝ 2020 թվականի 35.0 մլն դրամի դիմաց կամ՝ 12.5 մլն դրամով ավել, այն ուղղվելու է 102 ասպիրանտների կրթաթոշակ տրամադրելուն:

«Հանրակրթության ծրագրի» գծով նախատեսվել է 103,163.0 մլն դրամ՝ 2020 թվականի 99,854.7 մլն դրամի դիմաց, ծախսերի աճը կազմում է 3,308.3 մլն դրամ կամ 3.3 տոկոս՝

պայմանավորված սովորողների թվաքանակների փոփոխությամբ: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել պարտադիր կրթության երեք մակարդակներում սովորողների ուսուցման գծով: «Տարրական ընդհանուր հանրակրթություն», «Հիմնական ընդհանուր հանրակրթություն», «Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն», «Նախադպրոցական կրթություն» և «Միջնակարգ հանրակրթություն երեկոյան դպրոցում (Շիրակի մարզ)» միջոցառումների գծով նախատեսվել է՝ ընդամենը, 93,233.5 մլն դրամ՝ 2020 թվականի 91,302.3 մլն դրամի դիմաց, ծախսերի աճը կազմում է 1,931.2 մլն դրամ կամ 2.1 տոկոս՝ պայմանավորված հետևյալով.

ա) մանկավարժների աշխատավարձի ֆոնդի գծով ծախսերի աճը, սովորողների թվաքանակների փոփոխությամբ պայմանավորված, նախատեսվել է 2,276.4 մլն դրամի չափով: Շարունակվելու է համընդհանուր ներառական կրթության ընդլայնման քաղաքականությունը և մինչև 2022 թվականը բոլոր մարզերը կանցնեն համընդհանուր ներառական կրթության, որով պայմանավորված՝ հաշվարկներում համապատասխան միջոցներ են նախատեսվել ՀՀ Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզերում, Երևան քաղաքում, իսկ 2021 թվականի սեպտեմբերից՝ նաև ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերում համընդհանուր ներառական կրթության իրականացման գծով:

բ) Ներկայումս հանրապետության 7 մարզերում (Արագածոտն, Արարատ, Շիրակ, Սյունիք, Վայոց ձոր, Տավուշ, 2020 թվականի սեպտեմբերից՝ Գեղարքունիք) իրականացվում է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը: 2021 թվականին ծրագիրը կներդրվի Լոռու մարզում, արդյունքում՝ սննդով կապահովվեն նշված մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված, շուրջ 79.3 հազար երեխաները, որոնցից 13.3 հազարը՝ 2021 թվականի սեպտեմբերից ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներում (2020 թվականին սննդով կապահովվեն շուրջ 65.9 հազար երեխաներ):

Նախագծով ծախսերը հաշվարկվել են 1337 հանրակրթական դպրոցների, միջին տարեկան հաշվարկով, 402.3 հազար աշակերտի ուսուցման գծով՝ 2020 թվականի 398.4 հազարի դիմաց կամ՝ աշակերտների թվաքանակի ավելացումը կազմում է 3.9 հազար (ընդ որում, հաշվարկներում նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվածների թվաքանակը նախատեսվել է 7.9 հազար՝ 2020 թվականի 7.6 հազարի դիմաց կամ՝ ավելացումը կազմում է 0.3 հազար երեխա, իսկ հանրակրթական դպրոցների սովորողների թիվը՝ 394.4 հազար աշակերտ՝ 2020 թվականի 390.8 հազարի դիմաց կամ՝ ավելացումը կազմում է 3.6 հազար աշակերտ):

«Հանրակրթության ծրագրի» շրջանակներում «Տարրական հատուկ հանրակրթություն», «Հիմնական հատուկ հանրակրթություն» և «Միջնակարգ հատուկ հանրակրթություն» միջոցառումների գծով նախատեսվել է՝ ընդամենը, 1,121.6 մլն դրամ՝ 2020 թվականի 1,527.4 մլն դրամի դիմաց, ծախսերը նվազել են 405.8 մլն դրամով կամ 26.6 տոկոսով (ծախսերը նախատեսվել են 0.6 հազար սաների ուսուցման կազմակերպման գծով՝ 2020 թվականի շուրջ 0.8 հազար սանի դիմաց):

«Հանրակրթության ծրագրի» շրջանակներում «Ներառական կրթություն տարրական դպրոցում», «Ներառական կրթություն միջին դպրոցում» և «Ներառական կրթություն ավագ դպրոցում» միջոցառումների գծով նախատեսվել է՝ ընդամենը, 350.7 մլն դրամ՝ 2020 թվականի 615.2 մլն դրամի դիմաց, ծախսերի նվազումը կազմում է 264.5 մլն դրամ կամ 43.0 տոկոս: Ծախսերը նախատեսվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, միջին

տարեկան հաշվարկով, շուրջ 0.5 հազար երեխաների ուսուցման կազմակերպման գծով՝ 2020 թվականի շուրջ 1.0 հազարի դիմաց:

«Հանրակրթության ծրագրի» շրջանակներում «Տարրական մասնագիտացված հանրակրթություն», «Հիմնական մասնագիտացված հանրակրթություն» և «Միջնակարգ մասնագիտացված հանրակրթություն» միջոցառումների գծով նախատեսվել է՝ ընդամենը, 4,452.5 մլն դրամ՝ 2020 թվականի 3,483.4 մլն դրամի դիմաց, ծախսերի աճը կազմում է 969.1 մլն դրամ կամ 27.8 տոկոս (ծախսերը նախատեսվել են 4.1 հազար սովորողի ուսուցման գծով՝ 2020 թվականի շուրջ 3.3 հազարի դիմաց):

«Դպրոցականների օլիմպիադաների անցկացում» միջոցառման գծով նախատեսվել է 52.0 մլն դրամ՝ 2020 թվականի 61.1 մլն դրամի դիմաց, «Օժանդակություն «Հայ-չինական բարեկամության դպրոց» հիմնադրամին» միջոցառման գծով՝ 20.8 մլն դրամ՝ 2020 թվականի 38.6 մլն դրամի դիմաց:

«Հանրակրթության ծրագրի» շրջանակներում «Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում» միջոցառման գծով 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 1,170.4 մլն դրամ՝ 2020 թվականի 780.3 մլն դրամի դիմաց կամ՝ ծախսերի աճը կազմել է 390.1 մլն դրամ:

«Դպրոցներում STEM կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում» միջոցառման գծով նախատեսվել է 767.0 մլն դրամ՝ 2020 թվականի 671.7 մլն դրամի դիմաց կամ՝ ծախսերի աճը կազմել է 95.3 մլն դրամ (ծախսերը նախատեսվել են ինժեներական 760 լաբորատորիաների խմբակավարների վարձատրության գծով, 2020 թվականի՝ ռոբոտաշինության 30 խմբակների և ինժեներական 676 լաբորատորիաների դիմաց):

«Գնահատման և թեստավորման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 563.0 մլն դրամ (2020 թվականին նշված միջոցառման գծով ծախսերը՝ 548.2 մլն դրամի չափով, նախատեսված են եղել «1192 Կրթության որակի ապահովում» ծրագրի շրջանակներում):

«Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում» միջոցառման գծով նախատեսվել է շուրջ 332.3 մլն դրամ՝ 2020 թվականի շուրջ 276.0 մլն դրամի դիմաց, կամ՝ ծախսերի աճը կազմել է 56.3 մլն դրամ:

«Արտադպրոցական դաստիարակության ծրագրի» գծով 2021 թվականին նախատեսվել է 3,873.9 մլն դրամ՝ 2020 թվականի 4,546.4 մլն դրամի դիմաց, ծախսերի նվազումը կազմում է 672.5 մլն դրամ կամ 14.8 տոկոս՝ պայմանավորված ոլորտի գերակայություններով և ծախսային առաջնահերթություններով: 2021 թվականին «Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացում» միջոցառման գծով ծախսերը նախատեսվել են սպորտի ոլորտի գծով նախատեսված հատկացումներում: 2021 թվականին չեն նախատեսվել որոշ միջոցառումների գծով 2020 թվականին նախատեսված ծախսերը, մասնավորապես. «Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում և տրանսպորտային ծախսերի փոխհատուցում»՝ 501.2 մլն դրամ, «Գրադարանային ֆոնդի համալրում»՝ 88.0 մլն դրամ, «Գիմնազիադա» համաշխարհային խաղերի մասնակցություն»՝ 37.3 մլն դրամ:

«Արտադպրոցական դաստիարակություն» և «Արտադպրոցական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից» միջոցառումների գծով ծախսերը նվազել են, համապատասխանաբար՝ 34.4 և 12.8 մլն դրամով:

Միաժամանակ, 34.1 մլն դրամ է նախատեսվել «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոցի մարզադահլիճի կառուցում» միջոցառման գծով (2020 թվականին նշված ծախսը նախատեսված չի եղել):

«Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի» գծով 2021 թվականին նախատեսվել է 13,559.7 մլն դրամ՝ 2020 թվականի 14,062.2 մլն դրամի դիմաց, ծախսերը նվազել են 502.5 մլն դրամով կամ 3.6 տոկոսով:

Վերոնշված ծրագրի շրջանակներում «Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում», «Գիտական գրադարանային ծառայություններ», «Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ» միջոցառումների գծով նախատեսվել է, ընդամենը՝ 410.4 մլն դրամ՝ պահպանելով 2020 թվականի ծախսերի մակարդակը:

«Գիտական ենթակառուցվածքի արդիականացում» միջոցառման գծով նախատեսվել է 7,367.1 մլն դրամ՝ 2020 թվականի 7,928.8 մլն դրամի դիմաց կամ՝ 561.7 մլն դրամով պակաս: Գումարի չափը ձևավորվել է միջոցառման ցանկում ընդգրկված կազմակերպությունների կողմից ներկայացված բյուջետային հայտերի, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով ձևավորված միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի քննարկման արդյունքում եղած առաջարկությունների հիման վրա՝ գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացման, ծրագրերի իրականացման, գիտական սարքավորումների արդիականացման, միջազգային համագործակցության աջակցության նպատակով:

Միջոցառման մեջ ներառվել են միջազգային գիտական կառույցներին անդամակցության և գիտատեղեկատվական շտեմարանի ռեսուրսների օգտագործման 4 ծրագրեր՝ «Հորիզոն Եվրոպա» շրջանակային (9-րդ) ծրագրի մասնակցություն, Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ, Բարձր էներգիաների ստերեոսկոպիկ համակարգ, Տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոն, Քլարիվելթ Անալիտիքս, որոնց համար նախատեսվել է 603.2 մլն դրամ:

Միջոցառման միջազգային գիտական համագործակցության շրջանակներում նախատեսվում է շուրջ 12 միջազգային գիտական կառույցների հետ համագործակցության նոր ծրագրերի (թվով շուրջ 96 թեմա) իրականացում, որի համար նախատեսվում է 317.3 մլն դրամ:

«Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն» միջոցառման գծով 2021 թվականին նախատեսվել է 1,085.9 մլն դրամ՝ Հին ձեռագրերի ինստիտուտի, Ցեղասպանության թանգարանի, Բյուրականի աստղադիտարանի, Հայկենսատեխնոլոգիայի կենսաբանական թանգարանի, ԵՊՀ գրադարանի պահպանման նպատակով, պահպանելով 2020 թվականի ծախսերի մակարդակը:

«Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» միջոցառման գծով նախատեսվել է 2,454.4 մլն դրամ՝ 2020 թվականի 2,300.3 մլն դրամի դիմաց կամ՝ 154.1 մլն դրամով ավել, որը պայմանավորված է մրցութային կարգով նոր թեմաների ընդգրկմամբ:

«Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ» միջոցառման գծով նախատեսվել է 136.0 մլն դրամ՝ պահպանելով 2020 թվականի ծախսերի մակարդակը:

«Բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացում» միջոցառման գծով 2021 թվականին նախատեսվել է 710.8 մլն դրամ՝ պահպանելով 2020 թվականի ծախսերի մակարդակը:

«Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում» միջոցառման գծով 2021 թվականին նախատեսվել է 225.9 մլն դրամ՝ 2020 թվականի 277.5 մլն դրամի դիմաց կամ՝ 51.6 մլն դրամով պակաս:

«Անտենային էտալոնների պահպանում և զարգացում» միջոցառման գծով 2021 թվականին նախատեսվել է 45.0 մլն դրամ՝ պահպանելով 2020 թվականի ծախսերի մակարդակը:

«Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» միջոցառման գծով նախատեսվել է 842.0 մլն դրամ՝ պահպանելով 2020 թվականի ծախսերի մակարդակը: Միջին կտրվածքով հաշվարկվել է հավելավճար գիտության 618 դոկտորների և գիտության 1570 թեկնածուների համար, համապատասխանաբար՝ ամսական 50.0 հազ. դրամի և 25.0 հազ. դրամի հաշվարկով:

«ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարների տրամադրում» միջոցառման գծով նախատեսվել է 139.2 մլն դրամ՝ 2020 թվականի 182.4 մլն դրամի դիմաց կամ՝ 43.2 մլն դրամով պակաս: Հաշվարկը կատարվել է 42 իսկական և 53 թղթակից անդամների համար և «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 815-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 76 կետի համաձայն (ըստ որի ակադեմիայի ակադեմիկոսների և թղթակից անդամների ընտրություններն անցկացվում են ոչ ուշ, քան յուրաքանչյուր երեք տարին մեկ) ընտրված նոր ակադեմիկոսների և թղթակից անդամների համար, համապատասխանաբար՝ ամսական 150.0 հազ. դրամի և 100.0 հազ. դրամի հաշվարկով:

«ՀՀ ԳԱԱ ինստիտուտների տեխնիկական հագեցվածության բարելավում և արդիականացում» միջոցառման գծով 2020 թվականին նախատեսվել է 143.0 մլն դրամ՝ պահպանելով 2020 թվականի ծախսերի մակարդակը:

«Ապահով դպրոց» ծրագրի գծով նախատեսվել է 1,127.0 մլն դրամ՝ 2020 թվականի 1,706.7 մլն դրամի դիմաց, ծախսերի նվազումը կազմում է 579.7 մլն դրամ, որը «Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում» միջոցառման գծով է (վերջինիս գծով 2021 թվականին նախատեսվել է 57.6 մլն դրամ՝ 2020 թվականի 637.3 մլն դրամի դիմաց):

«Կրթության որակի ապահովում» ծրագրի գծով նախատեսվել է 6,257.9 մլն դրամ՝ 2020 թվականի 7,100.1 մլն դրամի դիմաց, ծախսերը նվազել են 842.2 մլն դրամով կամ 11.9%-ով, պայմանավորված 2021 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման» վարկային ծրագրի ավարտով, «Կրթության ոլորտում ՏՀՏ ներդրում և շարունակականության ապահովում» միջոցառման՝ առանձին ծրագրով նախատեսմամբ, «Գնահատման և թեստավորման ծառայություններ» միջոցառման՝ «Հանրակրթության ծրագրում» նախատեսմամբ, «Նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ» միջոցառման՝ «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր» ծրագրերում նախատեսմամբ:

2021 թվականին չեն նախատեսվել նաև որոշ միջոցառումների գծով 2020 թվականին նախատեսված ծախսերը, մասնավորապես. «Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտների այլ միջոցառումներ»՝ 194.3 մլն դրամ, «Ֆինանսական գրագիտության, ձեռնարկատիրական հմտությունների զարգացման, մասնագիտական կրթության վերաբերյալ հեռուստահաղորդաշարի ու սոցիալական հոլովակների և

կարճամետրաժ խաղարկային ֆիլմերի պատրաստում»՝ 134.0 մլն դրամ, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահների վերապատրաստման դասընթացի» կազմակերպում»՝ 9.7 մլն դրամ:

«Ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը» միջոցառման գծով ծախսերը նվազել են 144.2 մլն դրամով:

Միաժամանակ, 2021 թվականին 25.0 մլն դրամ է նախատեսվել «Կրթության դերի վերարժևորմանն ուղղված սոցիալական արշավներ» միջոցառման գծով (2020 թվականին նշված ծախսը նախատեսված չի եղել):

«Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» ծրագրի գծով նախատեսվել է 2,636.1 մլն դրամ՝ 2020 թվականի 2,469.9 մլն դրամի դիմաց, ծախսերի աճը կազմում է 166.2 մլն դրամ կամ 6.7%: Ընդ որում, «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ» միջոցառման գծով ծախսերն աճել են 200.2 մլն դրամով՝ համընդհանուր ներառական կրթության անցմամբ պայմանավորված, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեության հետ կապված: 31.9 մլն դրամով նվազելու են Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող «Ներառական կրթության համակարգի ներդրում» դրամաշնորհային ծրագրի գծով ծախսերը:

«Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացում» ծրագրի գծով նախատեսվել է 1,082.0 մլն դրամ՝ 2020 թվականի 466.2 մլն դրամի դիմաց, ծախսերի աճը կազմում է 615.8 մլն դրամ կամ՝ 132.1%: Նախագծով 660.0 մլն դրամ է նախատեսվել 2021 թվականին Հայաստանում «STARMUS» փառատոնի կազմակերպման և անցկացման մասնակցության վճարի գծով (2020 թվականին նշված ծախսը նախատեսված չի եղել): «Օտարերկրյա պետություններում հայերենի և հայագիտական առարկաների դասավանդում» միջոցառման գծով նախատեսվել է 119.2 մլն դրամ՝ 2020 թվականի 82.1 մլն դրամի դիմաց, ծախսերի աճը կազմում է 37.1 մլն դրամ: Միաժամանակ, չի նախատեսվել «Համահայկական և համապետական կրթական խորհրդաժողով» միջոցառման գծով 2020 թվականին նախատեսված ծախսը՝ 28.9 մլն դրամի չափով (երկու տարին մեկ է անցկացվում), նվազել են նաև «Սփյուռքի կրթօջախների համար դասագրքերի և այլ ուսումնական նյութերի մշակում, ձեռքբերում և տրամադրում», «Մանկապատանեկան և երիտասարդական կրթական ու կրթամշակութային միջոցառումների կազմակերպում», «Կրթամշակութային աջակցություն սփյուռքի համայնքներին» միջոցառումների գծով ծախսերը՝ համապատասխանաբար, 37.7; 6.0 և 10.0 մլն դրամի չափով:

«Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում»

ծրագրի գծով 2021 նախատեսվում է հատկացնել 424.1 մլն դրամ:

Միաժամանակ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գծով նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

Համաշխարհային բանկի կողմից իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագիր, որի նպատակն է հանրակրթության ոլորտի հետագա բարելավումը՝ դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման, միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանն

աջակցության, հիմնական կրթական կազմակերպությունների կարողությունների հզորացման և կրթության որակի բարելավման աջակցության միջոցով, ինչպես նաև մասնագիտական կրթության ուղղությամբ նորարարությունների խթանումը՝ նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանն աջակցության միջոցով: 2021 թվականին նախատեսվել է 3,322.0 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,657.6 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 664.4 մլն դրամ:

Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող «Ներառական կրթության համակարգի ներդրում» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է Հայաստանում երեխաների պաշտպանության բարեփոխումների իրականացման բարելավումը, արդյունքը՝ ներառական կրթության համակարգի հզորացումը բոլոր երեխաներին որակյալ ուսուցում ապահովելու նպատակով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝ առնվազն 100 ընդունող հանրակրթական դպրոցների փոքրածավալ ենթակառուցվածքային վերանորոգումներ, ներառյալ՝ թեքահարթակներ, հասանելի սանհանգույցներ, ռեսուրս սենյակներ, ընդունող դպրոցների ռեսուրս սենյակների և մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների ապահովում անհրաժեշտ սարքավորումներով և դիդակտիկ նյութերով, առնվազն 5 մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների փոքրածավալ վերանորոգում՝ ներառական դպրոցներին օժանդակելու համար: 2021 թվականին նախատեսվել է 171.8 մլն դրամ դրամաշնորհային միջոցներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «ԵՄ-ն հանուն նորարարության ծրագիր» դրամաշնորհային ծրագրի նպատակն է «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն»-ի կարողությունների զարգացումը, ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված շարունակական վերապատրաստումները, վերապատրաստում իրականացնողների հավաստագրման չափանիշների մշակումը, ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների (հիմնական և միջնակարգ) ուսուցիչների՝ ՏՀՏ ուղղությամբ վերապատրաստումը: Ծրագիրը նաև նպատակաուղղված է լինելու Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններին (հիմնական և միջնակարգ) համապատասխան համակարգչային և այլ սարքավորումներով ու տեխնիկայով ապահովելուն: 2021 թվականին նախատեսվել է 1,306.8 մլն դրամ դրամաշնորհային միջոցներ:

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեում ընդգրկելու նպատակով գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի ցանկն արտացոլված է սույն բացատրագրի N 13 հավելվածում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կրթության և գիտության ոլորտների գծով 2021 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը 2019-2020 թվականների ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 8 աղյուսակում:

Մշակույթի ոլորտի համար ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 15,406.9 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 16,042.6 մլն դրամի դիմաց: Ծախսերն նվազել են 635.7 մլն դրամով, կամ 4.0 տոկոսով:

Մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության, հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման գծով ծախսերը նախատեսվել են 70.1 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված 421.3 մլն դրամի դիմաց, կամ ծախսերը նվազել են՝ 351.3 մլն դրամով:

Հիմնանորոգման և շինարարության համար նախատեսված հատկացումներն ուղղվելու են Մշակութային ժառանգության ծրագրի շրջանակներում «Հուշարձանների ամրակայում, նորոգում և վերականգնում» միջոցառման իրականացմանը:

Նախագծով մշակույթի ոլորտի համար նախատեսված հատկացումներն ուղղվել են 7 ծրագրերի իրականացմանը:

Կինեմատոգրաֆիայի ծրագրի նպատակը՝ աջակցել կինոարվեստի և կինոարտադրության զարգացմանը, հայկական ավանդույթների շարունակականության ապահովմանը և կինոարվեստի հանրահռչակմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են խաղարկային, վավերագրական և մուլտիպլիկացիոն ֆիլմերի արտադրությանը և թվայնացմանը, Հայաստանում միջազգային կինոփառատոների կազմակերպմանը և միջազգային փառատոներին մասնակցությանը:

Կինեմատոգրաֆիայի ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 714.1 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 842.0 մլն դրամի դիմաց:

Ծախսերը նվազել են՝ 127.9 մլն դրամով, կամ 15.2 %-ով, որը պայմանավորված է ծախսային գերակայություններով, առաջնահերթություններով:

Մշակութային ժառանգության ծրագրի նպատակը՝ ապահովել մշակութային ժառանգության պահպանումը, օգտագործումը, համալրումը և հանրահռչակումը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական աշխատանքների, մշակութային արժեքների փորձաքննության, թանգարանային ծառայությունների իրականացմանը, ՀՀ տարածքում և օտարերկրյա պետություններում գտնվող հայ ճարտարապետության, մշակույթին և պատմությանն առնչվող հուշարձանների ուսումնասիրմանը և պահպանմանը, հուշարձանների ամրակայմանը, նորոգմանը, վերականգնմանը:

Մշակութային ժառանգության ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 2,982.5 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 2,951.7 մլն դրամի դիմաց:Ծախսերն աճել են՝ 30.8 մլն դրամով, կամ 1.0 %-ով, որը պայմանավորված է.

- «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» միջոցառման ծախսերի աճով՝ 50.1 մլն դրամով, կապված «Հայ հոգևոր երաժշտության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով վերակազմակերպման հետ՝ համաձայն ՀՀ կառավարության 09.04.2020թ. N 528-Ն որոշման և «Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության համար լրացուցիչ ծախսերի նախատեսման հետ՝ համաձայն ՀՀ կառավարության 17.09.2020թ. N 1539-Ն որոշման:

- «Հուշարձանների ամրակայում, նորոգում և վերականգնում» միջոցառման ծախսերի աճով՝ 6.1 մլն դրամով:

Միաժամանակ, ծախսերը նվազել են՝ 25.4 մլն դրամով, որը պայմանավորված է ծախսային գերակայություններով, առաջնահերթություններով:

Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի նպատակը՝ նպաստել գրականության հրատարակմանը, տարածմանը և հանրահռչակմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են գրականության և ոչ պետական մամուլի հրատարակմանը, գրադարանային ծառայությունների իրականացմանը,

գրականության հանրահռչակմանը, գրական ծրագրերին և գրքերի միջազգային ցուցահանդեսներին մասնակցությանը:

Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,691.1 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 1,775.7 մլն դրամի դիմաց:

Ծախսերը նվազել են՝ 84.6 մլն դրամով, կամ 4.8 %-ով, որը պայմանավորված է ծախսային գերակայություններով, առաջնահերթություններով:

Ազգային արխիվի ծրագրի նպատակը՝ ապահովել ՀՀ ազգային արխիվային հավաքածուի պահպանությունը, համալրումը, հաշվառումը և օգտագործումը:

Ազգային արխիվի ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 590.2 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 596.1 մլն դրամի դիմաց:

Ծախսերը նվազել են՝ 5.9 մլն դրամով, կամ 1.0 %-ով, որը պայմանավորված է ծախսային գերակայություններով, առաջնահերթություններով:

Արվեստների ծրագրի նպատակը՝ նպաստել ազգային հենքի վրա ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, կերպարվեստի և պարարվեստի զարգացմանը և հանրահռչակմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են օպերային և բալետային արվեստի, թատերական ներկայացումների, երաժշտարվեստի և պարարվեստի համերգների, մշակութային միջոցառումների իրականացմանը, «Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց պատվովճարի հատկացմանը:

Արվեստների ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 8,741.1 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 9,114.9 մլն դրամի դիմաց:

Ծախսերը նվազել են՝ 373.8 մլն դրամով, կամ 4.1%-ով, որը պայմանավորված է.

- ծախսային գերակայություններով, առաջնահերթություններով՝ 637.2 մլն դրամ, հիմնականում կապված մշակութային միջոցառումների իրականացման ծախսերի նվազման հետ,

- «Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ» միջոցառման ծախսերի նվազմամբ՝ 35.8 մլն դրամով, կապված «Հայ հոգևոր երաժշտության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով վերակազմակերպման հետ,

- թատրոնների շենքերի վերանորոգման և կառուցման ծախսերի նվազմամբ՝ 357.3 մլն դրամով:

Միաժամանակ, ծախսերն աճել են՝ 656.5 մլն դրամով, որը պայմանավորված է.

- համերգային 8 կազմակերպությունների աշխատողներին լրավճարների տրամադրման հետ կապված ծախսերի աճով՝ 613.8 մլն դրամով («Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ», «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ», «Կամերային երաժշտության ազգային կենտրոն», «Հայաստանի էստրադային ջազ նվագախումբ», «Կոմիտասի անվան ազգային քառյակ», «Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ», «Գյումրու պետական սիմֆոնիկ նվագախումբ», «Գյումրու ժողովրդական գործիքների պետական նվագախումբ»),

- «Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց պատվովճարի չափի կրկնապատկման հետ կապված ծախսերի աճով՝ 42.7 մլն դրամով (պատվովճարի չափը

նախատեսվել է ամսական 80.0 հազ. դրամ՝ ներկայումս սահմանված 40.0 հազ. դրամի փոխարեն):

Մարզերի մշակութային զարգացման ծրագրի նպատակը՝ նպաստել մարզերում մշակութային կյանքի և մշակութաստեղծ գործունեության ակտիվացմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են մարզերում մշակութային միջոցառումների իրականացմանը, համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը:

Մարզերի մշակութային զարգացման ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 79.9 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 95.7 մլն դրամի դիմաց:

Ծախսերը նվազել են՝ 15.8 մլն դրամով, կամ 16.5 %-ով, որը պայմանավորված է ծախսային գերակայություններով, առաջնահերթություններով:

Մշակութային և գեղագիտական դաստիարակություն ծրագրի նպատակը՝ նպաստել երեխաների հոգևոր և գեղագիտական ընդունակությունների բացահայտմանը և զարգացմանը

Նախագծով նախատեսվում է հատկացնել 608.1 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 666.4 մլն դրամի դիմաց:

Ծախսերը նվազել են՝ 58.3 մլն դրամով, կամ 8.7 %-ով, որը պայմանավորված է ծախսային գերակայություններով, առաջնահերթություններով:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակույթի ոլորտի գծով 2021 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը 2019-2020 թվականների ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 5 աղյուսակում

ՀՀ սպորտի և երիտասարդության ոլորտի համար ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 4,651.1 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 6,102.9 մլն դրամի դիմաց:

Ծախսերը նվազել են 1,451.8 մլն դրամով, կամ 23.8 տոկոսով, որը հիմնականում պայմանավորված է «Աջակցություն համայնքներին մարզական հաստատությունների շենքային պայմանների բարելավման համար» միջոցառման ծախսերի նվազմամբ:

Նախագծով սպորտի և երիտասարդության ոլորտի համար նախատեսված հատկացումներն ուղղվելու են 3 ծրագրերի իրականացմանը:

«Մեծ նվաճումների սպորտ» ծրագրի նպատակը՝ նպաստել Հայաստանում մեծ սպորտի զարգացմանը և միջազգային հարթակներում ՀՀ դիրքի բարելավմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են օլիմպիական խաղերին, միջազգային տարբեր մակարդակի միջոցառումներին, ուսումնամարզական հավաքներին, հանրապետական առաջնություններին Հայաստանի հավաքական թիմերի մասնակցության ապահովմանը, Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում հաղթողների և մրցանակակիրների պարգևատրման ծախսերի իրականացմանը, ՀՀ հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների վարձատրությանը և աշխարհի չեմպիոններին, օլիմպիական խաղերի և շախմատի համաշխարհային օլիմպիադայի մրցանակակիրներին պատվովճարի, օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին անվանական թոշակի հատկացմանը, շախմատիստների պատրաստմանը, հաշմանդամային և նավամոդելային

սպորտին աջակցմանը, սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության և շախմատի մրցույթների պատրաստման ծառայությունների իրականացմանը:

«Մեծ նվաճումների սպորտ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 2,588.6 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 2,342.1 մլն դրամի դիմաց:

Ծախսերն աճել են 246.5 մլն դրամով, կամ 10.5 %-ով, որը պայմանավորված է.

- սպորտային միջոցառումների անցկացման ժամանակացույցով պայմանավորված ծախսերի աճով՝ 75.4 մլն դրամով («Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոներին մասնակցության ապահովում» միջոցառումը իրականացվում է 2 տարին մեկ անգամ),

- Ադապտիվ սպորտին առնչվող ծառայությունների ծախսերի աճով՝ 74.2 մլն դրամով, կապված միջոցառումների թվի ավելացման և 2 նոր «Հայաստանի Հանրապետության հաշմանդամային սպորտի ֆեդերացիա» և «Հաշմանդամ անձանց սեղանի թենիսի հայկական ֆեդերացիա» ՀԿ-ին աջակցության հետ,

- «Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին անվանական թոշակի հատկացում» միջոցառման ծախսերի աճով՝ 73.0 մլն դրամով, հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի ծախսերը,

- նոր նախաձեռնության նախատեսմամբ՝ 51.5 մլն դրամ («ՀՀ «Տարվա լավագույն մարզիկներ» մրցույթի կազմակերպում, անցկացում և հաղթող ճանաչված մարզիկների պարգևատրում»):

Միաժամանակ ծախսերը նվազել են՝ 27.6 մլն դրամով, որը պայմանավորված է ծախսային գերակայություններով, առաջնահերթություններով:

Երիտասարդության ծրագրի նպատակը՝ նպաստել սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքին երիտասարդների լիարժեք ներգրավմանը և նրանց ստեղծագործական ներուժի ամբողջական դրսևորմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների, երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումների իրականացմանը, երիտասարդ ընտանիքներին աջակցմանը:

Երիտասարդության ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,846.5 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 1,533.3 մլն դրամի դիմաց:

Ծախսերն աճել են 313.2 մլն դրամով, կամ 20.4 %-ով, որը պայմանավորված է.

-«Աջակցություն երիտասարդ ընտանիքներին» միջոցառման ծախսերի աճով՝ 380.6 մլն դրամով, կապված շահառուների թվի ավելացման հետ :

Միաժամանակ, ծախսերը նվազել են՝ 67.4 մլն դրամով, որը պայմանավորված է ծախսային գերակայություններով, առաջնահերթություններով:

«Մասսայական սպորտ» ծրագրի նպատակը՝ ապահովել բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորումը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են մասսայական սպորտի 13 միջոցառումների իրականացմանը:

«Մասսայական սպորտ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 216.0 մլն դրամ ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 2,227.5 մլն դրամի դիմաց:

Ծախսերը նվազել են 2,011.5 մլն դրամով, կամ 90.3 %-ով, որը պայմանավորված է.

- «Աջակցություն համայնքներին մարզական հաստատությունների շենքային պայմանների բարելավման համար» միջոցառման ավարտմամբ՝ 2,000.0 մլն դրամ,

- «Ուսանողական մարզական միջոցառումներ» միջոցառման ծախսերի նվազմամբ՝ 14.1 մլն դրամով,

- ծախսային գերակայություններով, առաջնահերթություններով՝ 1.7 մլն դրամով:

Միաժամանակ, ծախսերն աճել են՝ 4.3 մլն դրամով, որը պայմանավորված է «Համաշխարհային ունիվերսիադային Հայաստանի ուսանողական մարզական պատվիրակության մասնակցության ապահովում» միջոցառման ծախսերի աճով:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի և երիտասարդության ոլորտների գծով 2021 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը 2019-2020 թվականների ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 7 աղյուսակում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գծով ծախսերը (առանց ապարատի պահպանման ծախսերի) կկազմեն 497 730.3 մլն դրամ կամ 2021 թվականի պետական բյուջեի ծախսերը 2020 թվականի հաստատված պետական բյուջեի նկատմամբ աճում են շուրջ 10 667.0 մլն դրամով (2020 թվականին՝ 487 063.3 մլն դրամ) (ստորև ներկայացված տեքստում համեմատությունը կատարվում է 2020 թվականի հաստատված պետական բյուջեի նկատմամբ):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ծախսերը ըստ ծրագրերի (միջոցառումների) բնութագրվում են հետևյալ կերպ.

Պարգևավճարներ և պատվովճարներ

-«Զոհված՝ հետմահու «Հայաստանի ազգային հերոս» ՀՀ բարձրագույն կոչում ստացած կամ «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրված անձի ընտանիքին պարգևավճարի տրամադրման ապահովում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 0.6 մլն դրամի չափով (2020 թվականին՝ 0.7 մլն դրամ): Ծախսերի նվազումը 0.1 մլն դրամի չափով պայմանավորված է պարգևավճարին ուղղվող ծախսերի փոփոխությամբ:

-«Զինծառայողներին, ՀՄՊ մասնակիցներին, այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցներին, զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին, ընտանիքներին տրվող պարգևավճարներ» միջոցառման գծով ծախսը կազմում է 10 898.3 մլն դրամ (2020 թվականին՝ 11 117.7 մլն դրամ): Ծախսերի նվազումը 219.4 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ՝ 2021 թվականին կանխատեսվում է 36 168 շահառու 2020 թվականի 36 896 շահառուի դիմաց՝ պահպանելով պարգևավճարների ամսական չափերը:

-«Վետերանների պատվովճարներ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 199.2 մլն դրամի չափով (2020 թվականին՝ 282.0 մլն դրամ): Ծախսերի նվազումը 82.8 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ՝ 2021 թվականին կանխատեսվում է 166 շահառու 2020 թվականի 235 շահառուի դիմաց՝ պահպանելով պատվովճարի ամսական չափը:

-«Զոհված՝ հետմահու «Հայաստանի ազգային հերոս» ՀՀ բարձրագույն կոչում ստացած կամ «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրված անձի ընտանիքին տրվող պարգևավճար» միջոցառման ծախսը կազմում է 163.2 մլն դրամ (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

Անապահով սոցիալական խմբերին աջակցություն

-«Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների իրականացման ապահովում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 366.8 մլն դրամի չափով (2020 թվականին՝ շուրջ 377.0 մլն դրամ): Ծախսերի նվազումը 5.4 մլն դրամի չափով պայմանավորված է նպաստների միջոցառմամբ շահառուների թվի նվազմամբ՝ 2021 թվականին կանխատեսվում է 97 216 շահառու 2020 թվականի 98 666 շահառուի դիմաց:

-«Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրություն» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 4.8 մլն դրամի չափով (2020 թվականին՝ 7.3 մլն դրամ): Ծախսերի նվազումը 2.5 մլն դրամի չափով պայմանավորված է ձեռքբերվելիք ձևաթղթերի քանակի նվազմամբ՝ 2021 թվականին կանխատեսվում է ձեռքբերել 346 140 հատ ձևաթուղթ 2020 թվականի 562 140 դիմաց:

-«Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 36 680.1 մլն դրամի չափով (2020 թվականին՝ 37 227.1 մլն դրամ): Ծախսերի նվազումը 547.1 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ՝ 2021 թվականին կանխատեսվում է 97 216 շահառու 2020 թվականի 98 666 շահառուի դիմաց:

-«Սոցիալական շտապ օգնություն» միջոցառման ծախսը կազմում է 5.6 մլն դրամ (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

Սոցիալական փաթեթների ապահովում

-«Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» միջոցառմամբ ծախսը կազմում է 10 619.5 մլն դրամ (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց

-«Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 2 512.3 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 236.9 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ (սննդի տրամադրման գծով)» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 210.9 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ՝ Լոռու մարզում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 30.0 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կացարանով ապահովման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 6.7 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի համար նախատեսված չափը):

-«Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 58.9 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի համար նախատեսված չափը):

-«Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 19.9 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի համար նախատեսված չափը):

-«Տնային խնամք հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 14.4 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի համար նախատեսված չափը):

-«Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին կոմունալ ծախսերի դիմաց դրամական փոխհատուցում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 14.4 մլն դրամի չափով:

Ժողովրդագրական վիճակի բարելավում

-«Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրման ապահովում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 9.4 մլն դրամի չափով (2020 թվականին՝ 10.1 մլն դրամ): Ծախսերի նվազումը 0.6 մլն դրամի չափով պայմանավորված է նպաստին ուղղվող ծախսերի փոփոխությամբ:

-«Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող վարձու աշխատողին նպաստի տրամադրում» միջոցառմամբ նախատեսվում է 7 861.3 մլն դրամի չափով ծախս (2020 թվականին՝ 3 740.9 մլն դրամ): Ծախսերը աճում են 4120.3 մլն դրամով, որը պայմանավորված է շահառուների թվաքանակի փոփոխությամբ՝ 2021 թվականին կանխատեսվում է 24 721 շահառու (2020 թվականի 14 371 մարդու դիմաց): 2021 թվականին կպահպանվի 2020 թվականի համար խնամքի նպաստի գծով գործող քաղաքականությունը (շահառուների շրջանակի և նպաստի ամսական չափի մասով)՝ հաշվարկը տարածելով տարվա կտրվածքով (2020 թվականի հուլիսի 1-ից խնամքի նպաստի ամսական չափը սահմանվեց 26.5 հազ. դրամ՝ տարեսկզբի 18.0 հազ. դրամի դիմաց, խնամքի նպաստը գյուղական բնակավայրում կտրվի նաև անկախ ծնողի աշխատելու հանգամանքից):

-«Երեխայի ծննդյան միանվագ նպաստ» միջոցառմամբ նախատեսվում է ծախս 16 852.2 մլն դրամի չափով (2020 թվականին՝ 13 755.4 մլն դրամ): Ծախսերը աճում են 3 096.9 մլն դրամով, որը պայմանավորված է 2020 թվականի հուլիսի 1-ից հետո ծնված 1-ին և 2-րդ երեխայի ծննդյան դեպքում միանվագ նպաստի նոր չափի (300.0 հազ. դրամ) սահմանման հետ կապված ծախսերի տարածմամբ տարվա կտրվածքով՝ շահառուների թվաքանակի պահպանման պայմաններում (36 200 շահառու):

-«Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն» միջոցառմամբ նախատեսվում է ծախս 526.8 մլն դրամի չափով:

Համաձայն ՀՀ կառավարության 14.05.2020 թվականի N 968-Լ որոշման, նշված միջոցառման շրջանակներում նախատեսվում է՝

- մարզային բնակավայրերում բնակարան ձեռք բերելու համար միանվագ դրամական աջակցության տրամադրում,

- կանխավճարի (հիփոթեքային պարտավորության) ապահովագրության համար դրամական աջակցության տրամադրում,

- երեխայի ծննդով պայմանավորված՝ հիփոթեքային վարկ մարող ընտանիքներին դրամական աջակցության տրամադրում:

Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում

-«Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրություն» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 6.3 մլն դրամի չափով (2020 թվականին՝ 3.3 մլն դրամ): Ծախսերի աճը 3.0 մլն դրամի չափով պայմանավորված է ձեռքբերվելիք ձևաթղթերի քանակի աճով՝ 2021 թվականին կանխատեսվում է ձեռք բերել 150 000 հատ ձևաթուղթ 2020 թվականի 79 170 դիմաց:

-«Մայրության նպաստ» միջոցառմամբ նախատեսվում է 11 260.3 մլն դրամի չափով ծախս (2020 թվականին՝ 8 268.3 մլն դրամ): Ծախսերի աճը 1 366.2 մլն դրամի չափով պայմանավորված է փաստացի կատարողականով:

-«Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 3 009.2 մլն դրամի չափով (2020 թվականին՝ 1 643.1 մլն դրամ): Ծախսերի աճը 2 992.1 մլն դրամի չափով պայմանավորված է փաստացի կատարողականով:

-«Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում» միջոցառման գծով նախատեսվում է 76.1 մլն դրամի չափով ծախս (2020 թվականին՝ 82.4 մլն դրամ): Ծախսերի նվազումը կազմում է 6.3 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ՝ 2021 թվականին կանխատեսվում է 309 շահառու 2020 թվականի 335 մարդու դիմաց:

Կենսաթոշակային ապահովություն

-«Կենսաթոշակների և այլ դրամական վճարների տրամադրման տեղեկատվական միասնական համակարգերի սպասարկում և շահագործում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 72.4 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Կենսաթոշակների և այլ դրամական վճարների իրականացման ապահովում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 1 072.3 մլն դրամի չափով (2020 թվականին՝ 1 374.9 մլն դրամ): Ծախսերի նվազումը 302.5 մլն դրամի չափով պայմանավորված է կենսաթոշակներին, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներին, պարգևավճարներին, պատվովճարին և այլ միջոցառումներին ուղղվող ծախսերի փոփոխությամբ՝ վճարման ծառայության գումարի չափի վերանայման պայմաններում:

-«Կենսաթոշակների ձևաթղթերի տպագրություն» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 0.8 մլն դրամի չափով (2020 թվականին՝ 0.6 մլն դրամ): Ծախսերի աճը 0.2 մլն դրամի չափով պայմանավորված է ձեռքբերվելիք ձևաթղթերի քանակի աճով՝ 2021 թվականին կանխատեսվում է ձեռք բերել 90 900 հատ ձևաթուղթ 2020 թվականի 50 000 դիմաց:

-«Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» միջոցառմամբ նախատեսվում է 32 610.2 մլն դրամի չափով ծախս (2020 թվականին՝ 30 133.7 մլն դրամ): Ծախսերի աճը 2 476.5 մլն դրամի չափով պայմանավորված է կենսաթոշակառուների թվաքանակի աճով՝ 2021 թվականին կանխատեսվում է միջին տարեկան 34 440 շահառու 2020 թվականի 33 646 շահառուի դիմաց՝ կենսաթոշակի միջին ամսական չափի պահպանման պայմաններում:

-«Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» միջոցառմամբ նախատեսվում է 593.5 մլն դրամի չափով ծախս (2020 թվականին՝ 622.0 մլնդրամ): Ծախսերի նվազումը 28.5 մլն դրամի չափով պայմանավորված է կենսաթոշակառուների թվաքանակի նվազմամբ՝ 2021 թվականին կանխատեսվում է միջին

տարեկան 1 655 շահառու 2020 թվականի 1 734 շահառուի դիմաց՝ կենսաթոշակի միջին ամսական չափի պահպանման պայմաններում:

-«Աշխատանքային կենսաթոշակներ» միջոցառմամբ նախատեսվում է 245 315.9 մլն դրամի չափով ծախս (2020 թվականին՝ 246 472.0 մլն դրամ): Ծախսերի նվազումը 1 156.1 մլն դրամով պայմանավորված է կենսաթոշակառուների թվաքանակի փոփոխությամբ՝ 2021 թվականին կանխատեսվում է միջին տարեկան 467 151 շահառու 2020 թվականի 468 761 շահառուի դիմաց՝ կենսաթոշակի միջին ամսական չափի պահպանման պայմաններում:

-«ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակներ» միջոցառմամբ նախատեսվում է 3 009.9 մլն դրամի չափով ծախս (2020 թվականին՝ 2 959.5 մլն դրամ): Ծախսերը աճում են 50.5 մլն դրամով, որը պայմանավորված է կենսաթոշակառուների թվաքանակի աճով՝ 2021 թվականին կանխատեսվում է միջին տարեկան 730 շահառու 2020 թվականի 720 շահառուի դիմաց՝ կենսաթոշակի միջին ամսական չափի պահպանման պայմաններում:

-«Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 70 007.6 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն

-«Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների վերանորոգում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 8.1 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Պետական հավաստագրերով աջակցող միջոցների տրամադրում» միջոցառման ծախսը կազմում է 886.7 մլն դրամ (2020 թվականին՝ 952.8 մլն դրամ): 2021 թվականին կանխատեսվում է տրամադրել 13 311 պետական հավաստագիր 2020 թվականի 13 822 դիմաց:

-«Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային սոցիալ-վերականգնողական ծառայություններ» միջոցառման ծախսը կազմում է 87.5 մլն դրամ (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում» միջոցառմամբ նախատեսվում է ծախս 28.9 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Աուտիզմ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում» միջոցառմամբ նախատեսվում է ծախս 85.0 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների ծրագրի իրականացման ապահովում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 3.1 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 12.4 մլն դրամի չափով: (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Մտավոր խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 43.8 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 37.8 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

Ավանդների փոխհատուցում

-«Մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված ավանդների դիմաց փոխհատուցման միջոցառման իրականացման ապահովում» միջոցառմանգծով նախատեսվում է ծախս 12.0 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» միջոցառման գծով ծախսը կազմում է 1 200.0 մլն դրամ (պահպանվել է 2020 թվականի մակարդակը): 2021 թվականին նախատեսվում է փոխհատուցում տրամադրել «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N 8 հավելվածի 4-րդ կետով սահմանված սանդղակին համապատասխան՝ մինչև 1938 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակից կամ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված անձանց, ինչպես նաև կառավարության սահմանած այլ սոցիալական խմբերին՝ կառավարության սահմանած կարգով:

Սոցիալական ապահովություն

-«Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների տրամադրում» միջոցառմամբ նախատեսվում է 25 395.4 մլն դրամի չափով ծախս (2020 թվականին՝ 20 640.2 մլն դրամ): Ծախսերը աճում են 4 755.2 մլն դրամով, որը պայմանավորված է նպաստ ստացողների թվաքանակի աճով՝ 2021 թվականին կանխատեսվում է միջին տարեկան 79 461 շահառու 2020 թվականի 67 087 մարդու դիմաց՝ պահպանելով 2020 թվականի նպաստի միջին ամսական չափը:

-«Կենսաթոշակ, ծերության նպաստ, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ կամ հաշմանդամության նպաստ ստանալու իրավունք ունեցող անձանց մահվան դեպքում տրվող թաղման նպաստ» միջոցառմամբ նախատեսվում է 4 456.8 մլն դրամի չափով ծախս (2020 թվականին՝ 4 402.0 մլն դրամ): Ծախսերի աճը 54.8 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվաքանակի աճով՝ 2021 թվականին կանխատեսվում է 22 284 շահառու 2020 թվականի 22 010 դիմաց՝ պահպանելով հուղարկավորությունը կատարող անձանց տրվող թաղման նպաստի չափը:

-«Վնասի փոխհատուցում կերակրողը կորցրած անձանց» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել շուրջ 4.0 մլն դրամի չափով ծախս (2020 թվականին՝ 4.9 մլն դրամ): Ծախսերի նվազումը շուրջ 1.0 մլն դրամի չափով պայմանավորված է դատարանների վճիռներով սահմանված ժամկետների հետ կապված ծախսերի վերանայմամբ:

-«ԱՊՀ տարածքում Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամների և մասնակիցների օդային տրանսպորտով մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցում» միջոցառմամբ ՀՀ քաղաքացիներ հանդիսացող Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամներին և մասնակիցներին, ինչպես նաև նրանց հավասարեցված անձանց (ծրագրավորված՝ թվով 45 անձիք) ԱՊՀ տարածքում զեղչ սակագնով կամ անվճար ծառայություններ մատուցելու հետևանքով չստացված եկամուտների փոխհատուցման նպատակով «Սիբիր» ավիաընկերություն» ԲԲԸ-ին փոխհատուցելու համար նախատեսվում է հատկացնել 15.0 մլն դրամ (2020 թվականի համեմատ 32%ով պակաս):

Զբաղվածության ծրագիր

- «Գործազուրկների՝ աշխատանաքից ազատման ռիսկ ունեցող՝ ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 63,9 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

- «Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 7,0 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում ծրագրի ուսուցման կազմակերպման և խորհրդատվական ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 10,0 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

- «Վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման ապահովում» միջոցառման գծով նախատեսվում է 1,3 մլն դրամի չափով ծախս (2020 թվականին՝ 0,9 մլն դրամ): Ծախսերի աճը կազմում է 0,4 մլն դրամ, որը պայմանավորված է «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում» միջոցառման գծով ծախսերի ավելացմամբ:

-«Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացների կազմակերպում» միջոցառման գծով նախատեսվում է շուրջ 2,6 մլն դրամի չափով ծախս (2020 թվականին՝ 2,2 մլն դրամ): Ծախսերի աճը կազմում էշուրջ 0,4 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների աճով:

-«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 50,0 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցում և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 42,8 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 23,3 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 164,3 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 207,5 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է 192,8 մլն դրամի չափով ծախս (2020 թվականին՝ 605,3 մլն դրամ): Ծախսերի նվազումը կազմում է 412,5 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ:

-«Գործազուրկների՝ աշխատանաքից ազատման ռիսկ ունեցող՝ ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող

անձանց կրթաթոշակի տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 71,4 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում՝ երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 448,8 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում» միջոցառման գծով նախատեսվում է 113,5 մլն դրամի չափով ծախս (2020 թվականին՝ 129,1 մլն դրամ): Ծախսերի նվազումը կազմում է 15,6 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ:

-«Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում» միջոցառման գծով նախատեսվում է 126,0 մլն դրամի չափով ծախս (2020 թվականին՝ 90,0 մլն դրամ): Ծախսերի աճը կազմում է 36,0 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների թվի աճով:

-«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է 575,6 մլն դրամի չափով ծախս (2020 թվականին՝ 510 մլն դրամ): Ծախսերի աճը կազմում է 65,6 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների թվի աճով:

Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ

-«Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 21.3 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման)՝ շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 315,0 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն

-«Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 2,017,3 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և հաստատությունում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաների ընտանիք վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 28,4 մլն դրամի չափով (2020 թվականին՝ 19,6 մլն դրամ): Ծախսերի աճը կազմում է 8,8 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների թվի աճով:

-«Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 470,9 մլն դրամի չափով (2020 թվականին՝ 52,8 մլն դրամ): Ծախսերի աճը կազմում է 418,1 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների թվի աճով:

-«Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 545,8 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 40,2 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցում սովորող երեխաներին դրամական աջակցության տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 6,4 մլն դրամի չափով (2020 թվականին՝ 2,7 մլն դրամ): Ծախսերի աճը կազմում է 3,7 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների թվի աճով:

-«Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 0,4 մլն դրամի չափով (2020 թվականին՝ 0,2 մլն դրամ): Ծախսերի աճը կազմում է 0,2 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների թվի աճով:

-«Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 168,9 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Մարդկանց թրաֆիքինգի (և/կամ) շահագործման զոհերին միանվագ դրամական փոխհատուցման տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 1,7 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 13,3 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 66,7 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցություն» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 10,0 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 291,2 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Կենսաբանական ընտանիք տեղափոխված և հաստատություն մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքների բնաիրային օգնության փաթեթի տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 34 մլն դրամի չափով (2020 թվականին՝ 79,4 մլն դրամ): Ծախսերի նվազումը կազմում է 45,4 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների թվի կրճատմամբ:

Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր

-«Մեթոդաբանական ձեռնարկների մշակում՝ հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 104,3 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

-«Մասնագիտական կողմնորոշման՝ համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 24,1 մլն դրամի չափով (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

Բնակարանային ապահովում.

- «Զոհված (մահացած) առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովում և բնակարանային պայմանների բարելավում» միջոցառմամբ նախատեսվում է 500.0 մլն դրամ (պահպանվել է 2020 թվականի մակարդակը), որի շրջանակներում նախատեսվում է լուծել 66 ընտանիքի (2020 թվականին՝ 62 ընտանիք) բնակարանային ապահովման խնդիրը՝ ֆինանսական աջակցության տրամադրմամբ: Ֆինանսավորման նույն մակարդակի պահպանմամբ ֆինանսական աջակցություն ստացող ընտանիքների թվի աճը պայմանավորված է Երևան քաղաքում և ՀՀ մարզերում աջակցություն ստացող ընտանիքների թվերի հարաբերակցությամբ:

-«Բնակարանային շինարարություն» միջոցառման գծով նախատեսվել է 1,290.6 մլն դրամ, որը ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված համադրելի ցուցանիշից՝ 522.0 մլն դրամից ավել է 147.2%-ով: Ցուցանիշի աճը պայմանավորված է շինարարական որոշ աշխատանքների մեկնարկով: Ծրագրում ներառված են հետևյալ աշխատանքները.

ա/ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Բաղրամյան 43 հասցեի վթարային շենքի փոխարեն նոր շենքի շինարարության շարունակման և ավարտման աշխատանքները՝ 309.6 մլն դրամ:

բ/ Երկրաշարժից հետո աղետի գոտու բնակավայրերում կառուցված ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման նպատակով լուծման կարիք ունի անվտանգ, հուսալի բնակֆոնդի ստեղծման հիմնախնդիրը: Այն համայնքներում, որտեղ կենտրոնացված են վերը նշված խնդիրները, նախատեսվում է կառուցել թվով 5 բազմաբնակարան շենք, ընդ որում 5 շենքից 1-ի դեպքում նախատեսվում է Սպիտակ քաղաքում կառուցել նոր բազմաբնակարան շենք՝ 428.6 մլն դրամ, իսկ 4-ի դեպքում նախատեսվում է ավարտին հասցնել Գյումրի քաղաքում առկա կիսակառույց բազմաբնակարան շենքերից 3-ի, Վանաձոր քաղաքում առկա կիսակառույց բազմաբնակարան շենքերից 1-ի շինարարությունը՝ 552.4 մլն դրամ:

Միաժամանակ սոցիալական ապահովության ոլորտում նախատեսվում է շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագիրը.

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագիր, որի նպատակներն են բարելավել սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրումը, հզորացնել սոցիալական պաշտպանության նպաստներ վճարող և ծառայություններ տրամադրող մարմինների վերլուծական, մշտադիտարկման և գնահատման գործառույթները:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

-Համալիր սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրման ընդլայնում:

-Աջակցություն զբաղվածության նոր ռազմավարության իրականացմանը:

-Կենսաթոշակային համակարգի արդիականացում:

-Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերլուծական կարողությունների և մշտադիտարկման ու գնահատման համակարգերի հզորացում:

-Ծրագրի կառավարում՝ 2021թ. 2,082.7 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,644.3 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 438.4 մլն դրամ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը 2019-2020 թվականների ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 9 աղյուսակում:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գծով նախագծով նախատեսվում է 243,295.4 մլն դրամ (առանց կառավարման ապարատի), որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

1. **«Ոռոգման համակարգի առողջացում» ծրագիր.**

Ծրագրի նպատակն է ոռոգման ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովումը, որի համար ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել հատկացնել 7,428.1 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1.1 «Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,089.3 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մակարդակին համապատասխան:

Միջոցառմամբ նախատեսվում է ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպությունների ընթացիկ ֆինանսական ճեղքվածքի ծածկման նպատակով պետական աջակցության տրամադրում՝ վերջիններիս համար հաստատված սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով:

Գումարի հաշվարկման համար հիմք են հանդիսացել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2007թ. սահմանված ոռոգման ջրի սակագների հաշվարկները և 2010թ. վերանայված տարբերակները:

1.2 «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 2,856.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մակարդակին համապատասխան, որի համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 25.08.2016թ. N33-18 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության բարելավման ռազմավարությանը և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ռազմավարությունը:

1.3 «Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,795.8 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մակարդակին համապատասխան:

1.4 «Ջրային տնտեսության հիդրոտեխնիկական սարքավորումների տեղադրում» միջոցառման համար ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 787.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 360.0 մլն դրամի դիմաց, կամ ավել 427.0 մլն դրամով՝ պայմանավորված աշխատանքների ծավալների ավելացմամբ: Միջոցառման շրջանակներում 2021 թվականին նախատեսվում է ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերը կահավորել կարգավարական /դիսպետչերական հսկողություն և տվյալների ձեռքբերում/ SCADA համակարգով հագեցած շուրջ 1066 ջրաչափական սարքավորումներով:

1.5 «Հեր-Հերի ջրամբարից ինքնահոս ջրատարի կառուցում» միջոցառման համար ՀՀ Նախագծով նախատեսվում է հատկացնել շուրջ 900.0 մլն դրամ՝ ջրամբարից ինքնահոս ջրատար համակարգի կառուցման աշխատանքների համար:

2. **«Որոտան-Արփա-Սևան թունելի ջրային համակարգի կառավարում» ծրագիր**.

Ծրագրի նպատակն է Որոտան-Արփա-Սևան թունելի ջրային համակարգի պահպանումն ու շահագործումը, որի շրջանակներում 2021 թվականին նախատեսված «Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարում» միջոցառմամբ նախատեսվում է «Որոտան-Արփա-Սևան» ջրային համակարգի պահպանման ու շահագործման նպատակով հավատարմագրային կառավարման պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցում՝ ապահովելով համակարգի անվտանգ, անխափան շահագործումն և պահպանումը, ինչը թույլ է տալիս առավելագույն քանակի ջուր տեղափոխել Սևանա լիճ:

2004 թվականի օգոստոսի 17-ին կնքված ՆԾՁԲ-04/36 պայմանագրի համաձայն (որով նախատեսվել է «Որոտան-Արփա-Սևան» հիդրոհանգույցի ջրային համակարգը հանձնել հավատարմագրային կառավարման) Նախագծով նախատեսվում է Արփա-Սևան թունելի պահպանման և շահագործման նպատակով հավատարմագրային կառավարչի պահպանման ծախսերի համար հատկացնել 205.8 մլն դրամ՝ պահպանելով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված չափաքանակը:

3. «Կոլեկտորադրենաժային ծառայություններ» ծրագիր.

Ծրագրի նպատակն է կոլեկտորադրենաժային ցանցի միջոցով գրունտային ջրերի հեռացումն ու համակարգի կենսունակության բարելավումը, որի համար «Կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել 336.5 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մակարդակին համապատասխան: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է մաքրել և վերանորոգել 198 կմ երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանց:

4. «Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնագիտական վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների աշխատանքի արդյունավետության բարելավումը, որի համար «Վերապատրաստման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է հատկացնել 26.1 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մակարդակից 46.4% պակաս, որը պայմանավորված է գործող օրենսդրությամբ սահմանված կարգավորումներով:

Միջոցառմամբ նախատեսվում է իրականացնել համայնքային ծառայողների, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմիններ աշխատակիցների վերապատրաստում:

5. «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ճանապարհային ցանցի բարելավումն ու անվտանգ երթևեկության ապահովումը, որի համար 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 46,736.2 մլն դրամ: Նշվածի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

5.1 «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների բարելավման և անվտանգ երթևեկության ծառայություններ».

Միջոցառման համար ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 10,895.9 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 10,377.0 մլն դրամի դիմաց, կամ ավել 518.8 մլն դրամով՝ պայմանավորված Հյուսիս-հարավ ճանապարհային

միջանցքի ներդրումային ծրագրի վարկային համաձայնագրով ստանձնած պարտավորություններով (սկսած 2014թ.-ից և յուրաքանչյուր ֆիսկալ տարվա համար հանրապետական և միջպետական ճանապարհների շահագործման/պահպանման տարեկան բյուջեն ավելացվում է առնվազն 5%-ով):

Նշված միջոցառմամբ նախատեսվում է իրականացնել 3055 կմ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ամառային պահպանման և 3477.6 կմ ձմեռային պահպանման, 60 կմ պարբերական պահպանման (միջին նորոգման), 72.6 կմ մետաղական արգելափակոցների պահպանման և վերականգնման, ինչպես նաև երեք թունելների և հինգ կամուրջների պահպանման ու շահագործման աշխատանքներ:

Միջոցառման նպատակն է ապահովել անվտանգ և անխափան երթևեկության համար ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և դրանց վրա գտնվող արհեստական կառույցների պահպանվածությունը:

5.2 «Մարզային նշանակության ավտոճանապարհների բարելավման և անվտանգ երթևեկության ծառայություններ».

Միջոցառման համար ՀՀ 2021 թվականին նախատեսվում է 1,466.3 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 1,396.5 մլն դրամի դիմաց, կամ ավել 69.8 մլն դրամով՝ պայմանավորված Համաշխարհային բանկի կողմից իրականացվող Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման վարկային ծրագրով ստանձնած պարտավորություններով (Փոխառուն պետք է մինչև Ծրագրի ավարտն ապահովի, որ Ծրագրի շրջանակում կենսական նշանակության ճանապարհային ցանցի հիմնանորոգված ճանապարհային հատվածների պահպանության համար հատկացվեն բավարար բյուջետային միջոցներ):

Միջոցառմամբ նախատեսվում է իրականացնել 1213.6 կմ մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ նորոգման և 2133.5 կմ ձմեռային պահպանման աշխատանքներ:

Նշված միջոցառման նպատակն է ապահովել անվտանգ և անխափան երթևեկության համար ՀՀ ընդհանուր օգտագործման մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանվածությունը:

5.3 «Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆի) համակարգի կարգավորում».

Նշված միջոցառման նպատակն է Հայաստանի Հանրապետությունում տախոնետ համակարգի անընդհատ և անխափան աշխատանքի ապահովումը: Համակարգի առկայության պահանջը բխում է «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» Եվրոպական համաձայնագրից, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2006 թվականից: Հսկիչ սարքերը (թվային տախոգրաֆները) կիրառվում են միջպետական բեռնափոխադրումներ իրականացնող բեռնատար տրանսպորտային միջոցների վրա՝ տրանսպորտային միջոցի արագությունը, անցած ճանապարհը և վարորդի վարելու և հանգստի ռեժիմները արձանագրելու համար:

Միջոցառմամբ տախոնետ համակարգի պահպանման (սպասարկման) համար ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 15.7 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 15.9 մլն դրամի դիմաց, կամ պակաս 0.2 մլն դրամով՝ որն արդյունք է փոխարժեքի տարբերության:

5.4 «Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն, ուսումնասիրություններ և փորձաքննություններ» միջոցառման գծով «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրական խնդիրների իրագործման նպատակով ՀՀ 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 218.1 մլն դրամ (2020 թվականի պետական բյուջեի մակարդակին համապատասխան):

5.5 «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» միջոցառման համար 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 33,039.2 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 21,559.6 մլն դրամի դիմաց:

5.6.«Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» միջոցառման համար 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 1,101.0 մլն դրամ:

6. «Աջակցություն փախստականների ինտեգրմանը» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ապահովել փախստականների ինտեգրումը հասարակությանը, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

6.1 «Ապաստան հայցողների կեցության խնդիրների լուծման միջոցառումների իրականացում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 29.5 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

6.2 «ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծման միջոցառումների իրականացում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 37.8 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

6.3 «ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց համար քաղաքացիական կողմնորոշման դասընթացների կազմակերպում» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել 2.3 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

6.4 «Ապաստանի ընթացակարգում թարգմանչական ծառայությունների ձեռք բերում» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել 2.1 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

6.5 «Ժամանակավոր տեղավորման կենտրոնում չտեղավորված ապաստան հայցողներին դրամական օգնության տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 1.3 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

6.6 «ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց վարձակալությամբ բնակարանների ձեռքբերման ծախսերի փոխհատուցում» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել 13.5 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

6.7 «1988-1992 թվականներին բռնագաղթված և Հայաստանի Հանրապետությունում ապաստանած փախստական ընտանիքների բնակարանային ապահովում» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել 2,169.7 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 2,169.9 մլն դրամի դիմաց, կամ պակաս 0.2 մլն դրամով: Տարբերությունը պայմանավորված է ՀՀ 2020թ-ի պետական բյուջեով նոտարների դեպոզիտ հաշիվների սպասարկման նպատակով գումարների հատկացմամբ: Միջոցառման նպատակն է բնակության վայր չունեցող փախստական ընտանիքների բնակարանային ապահովման աջակցությունը:

6.8 «ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագիր» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել 13.7 մլն դրամ՝

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 13.8 մլն դրամի դիմաց, կամ պակաս 0.1 մլն դրամով: ՀՀ վերադարձող քաղաքացիներին վերաինտեգրման նպատակով:

7. «Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայություններ» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ընդերքի օգտագործման արդյունավետության բարձրացումը, որի համար «Ընդերքի մասին տեղեկատվություն տրամադրման ծառայություններ» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել 16.9 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մակարդակին համապատասխան:

Միջոցառման նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքի վերաբերյալ երկրաբանական տեղեկությունների ընդունումը և պահպանումը, հանքավայրերի ու օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրի վարումը, երկրաբանական տեղեկության միասնական համակարգի ստեղծումը, վարումը, տնօրինումը, տրամադրումը, միասնական կոորդինատային համակարգով տրամադրված ընդերքի տեղամասերի ծայրակետային կոորդինատների համադրումը ֆոնդային նյութերի հետ, ընդերքօգտագործման ֆոնդի ստեղծումը և վարումը:

8. «Երկաթուղային ցանցի զարգացում» ծրագիր.

Ծրագրի շրջանակում նախատեսված «Ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրում» միջոցառմամբ ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրման համար նախատեսվում է 2021 թվականին հատկացնել 393.6 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի ցուցանիշից 12% ավել, ելնելով ՀՀ կառավարության 07.02.2008թ «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու մասին կոնցեսիոն պայմանագրի նախագծին հավանություն տալու և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարին լիազորություն վերապահելու մասին» N 83-Ա որոշումից (կոնցեսիոների կողմից կանխատեսվող կոնցեսիոն տարեկան վճարի չափով):

Միջոցառման նպատակն է ՀՀ կառավարության 07.02.2008թ. N 83-Ա որոշմամբ հաստատված Կոնցեսիոն պայմանագրի համաձայն սուբսիդավորել համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումներից «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի նախորդ տարվա արդյունքներով առաջացած տարեկան վնասը (30%):

9. «Պետական գույքի կառավարում» ծրագիր.

Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

9.1 «Պետական գույքի հաշվառման, գույքագրման, գնահատման, անշարժ գույքի պահառության, սպասարկման աշխատանքների և աճուրդների իրականացման ծառայություններ» միջոցառման կատարումն ապահովելու համար 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 418.1 մլն դրամ:

Միջոցառման նպատակն է ապահովել պետական սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման, գնահատման, հաշվառման, հաշվառված գույքի տվյալների մշակման, փոփոխությունների գրանցման, տեղեկատվության տրամադրման աշխատանքների, թվով 8 անշարժ գույքի պահառության, աճուրդների կազմակերպման և անցկացման ծառայությունների իրականացում, ինչպես նաև պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական համակարգի և էլեկտրոնային աճուրդների կազմակերպման ծրագրերի

սպասարկում, բացի այդ Կառավարական N 2 (հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3, Վ.Սարգսյան 3/8 և Վ. Սարգսյան 3/3) և Կառավարական N 3 շենքերի սպասարկման ծառայությունների իրականացումը, որի մեջ ներառվում է նաև Կառավարական N 2 (հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3, Վ.Սարգսյան 3/8 և Վ. Սարգսյան 3/3), և Կառավարական N 3 շենքերի թվով տասնվեց վերելակների, օդորակման և օդափոխության համակարգերի, հաստիքային և վթարային էլեկտրասնուցման համակարգերի, ներքին ու արտաքին լուսավորության համակարգերի, ջրամատակարարման ու կոյուղուհամակարգի, հակահրդեհային անվտանգության ու ծխահեռացման համակարգի, անցակետային, անվտանգության և տեսահսկման համակարգի, հեռախոսային կապի և ինտերնետի ներքին ցանցերի, հետերաշխիքային սպասարկման ապահովումը:

9.2 «Շարժական գույքի պահառության կազմակերպում» միջոցառման համար Նախագծով նախատեսվել է հատկացնել 30.9 մլն դրամ:

Միջոցառման նպատակն է պետական մարմիններին և կազմակերպություններին ամրացված՝ յուրաքանչյուր միավոր մինչև 5 մլն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի օտարման գործընթացում գտնվելու ժամանակահատվածում գույքի պահառության կազմակերպումը:

10. «Այլընտրանքային աշխատանքային ծառայություն» ծրագիր.

Ծրագրի նպատակն է քաղաքացիական պարտքի կատարման այլընտրանքային տարբերակների ապահովումը, որի շրջանակում «Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրում» միջոցառմամբ նախատեսվում է ՀՀ-ում այլընտրանքային աշխատանքային ծառայության անցած ՀՀ քաղաքացիաներին «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրամական դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրման համար 2021 թվականին հատկացնել 24.6 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի ցուցանիշից 42.4% պակաս, որը պայմանավորված է կատարման ապահովման համար ներկա գնահատմամբ:

11. «Քաղաքային զարգացում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է քաղաքային ենթակառուցվածքների զարգացումը, որի համար նախատեսվում է 2021 թվականին հատկացնել 8,930.0 մլն դրամ, այդ թվում.

11.1 «Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում» միջոցառմամբ մետրոպոլիտենով ուղևորափոխադրումների սպասարկման որակի բարելավման և երթևեկության անվտանգության ապահովման նպատակով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 2.787.7 մլն դրամ, որից.

ա/ 2,001.7 մլն դրամը՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ուղևորափոխադրման ծառայությունների սուբսիդավորման համար (պահպանվել է 2020 թվականի մակարդակը):

բ/ 786.0 մլն դրամը՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների գծով տոկոսների և մայր գումարի մարման համար, որը ՀՀ 2020թ. պետական բյուջեով հաստատված ցուցանիշի նկատմամբ պակաս է 13.3 մլն դրամով՝ փոխարժեքի փոփոխություններով պայմանավորված:

12.2 «Վերգետնյա էլեկտրոտրանսպորտով ուղևորափոխադրումների ծառայությունների մատուցում» միջոցառմամբ վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների սպասարկման որակի բարելավման և երթևեկության անվտանգության ապահովման նպատակով ՀՀ 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 628.3 մլն դրամ (պահպանվել է 2020 թվականի մակարդակը), որը կուղղվի «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի կողմից ուղևորափոխադրման ծառայությունների մատուցման արդյունքում կրած վնասի փոխհատուցմանը:

Միջոցառման նպատակն է աջակցել Երևանի քաղաքապետարանին՝ վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայությունների սուբսիդավորման նպատակով:

12.3 «Պետական աջակցություն Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների իրականացման համար» և «Պետական աջակցություն Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացման համար» միջոցառումների գծով ՀՀ 2021 թվականին նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 3,284.0 մլն դրամ և 2,229.9 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարների չափով:

Նշված միջոցառումների նպատակն է աջակցել Երևանի քաղաքապետարանին՝ Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և արտաքին լուսավորության ցանցի շահագործման ու պահպանման աշխատանքների իրականացման նպատակով:

12.4 Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության ծրագրին պետական աջակցություն միջոցառման նպատակն է աջակցել Երևանի քաղաքապետարանին՝ իրականացնելու մի շարք հանրային շենքերում (մանկապարտեզներ, պոլիկլինիկաներ, մշակութային օջախներ, սպորտդպրոցներ և այլն) էներգետիկ արդյունավետության բարձրացմանն և արդիականացմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև վերականգնվող էներգիայի՝ արևային ֆոտովոլտային կայանների և արևային ջրատաքացուցիչների կիրառման աշխատանքներ: Միջոցառման գծով ՀՀ 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 600,0 մլն դրամ:

13. «Ռադիոակտիվ թափոնների կառավարում» ծրագիր.

Նշված ծրագրով նախատեսված «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայություններ» միջոցառմամբ ՀՀ 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 37.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մակարդակին համապատասխան:

Ծրագրի նպատակն է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրման, ուսումնասիրման, պահպանման, վնասազերծման և թաղման ապահովումը՝ մարդկանց և շրջակա միջավայրի իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից պաշտպանելու համար:

14. «Ավիացիայի բնագավառում վերահսկողության, կանոնակարգման և զարգացման ապահովում» ծրագիր.

Նշված ծրագրի շրջանակներում «Աշխատակազմի մասնագիտական կարողությունների զարգացում» միջոցառման գծով 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 36.5 մլն դրամ՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտե աշխատակիցների վերապատրաստման նպատակով:

15. «Տարածքային զարգացում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ՀՀ համայնքների կառավարման արդյունավետության բարձրացումն ու տնտեսական գործունեության խթանումը:

Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

15.1 Ֆինանսական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին.

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը սահմանում է (համանման սահմանմամբ դրույթ բերված է նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում), որ պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 93-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) սահմանվում է ոչ պակաս, քան տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի չորս տոկոսը: 2021 թվականի համար նախորդող երկրորդ բյուջետային տարին՝ 2019 թվականի բյուջետային տարին է, հետևաբար ըստ վերոհիշյալ օրենքների վերը նշված պահանջի՝ 2021 թվականին համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 93-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) չպետք է պակաս լինի ՀՀ 2019 թվականի համախմբված բյուջեի փաստացի եկամուտների ընդհանուր գումարի՝ 1,614.9 մլրդ դրամի 4%-ը կազմող 64,597.0 մլն դրամից:

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրել ընդհանուր գումարով 64,597.0 մլն դրամի դոտացիաներ: ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների բաշխումն ըստ առանձին համայնքների իրականացվել է «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:

Դոտացիաները բաղկացած են երկու մասից՝ «Ա» և «Բ»: Այդ մասերից յուրաքանչյուրը հաշվարկվում է ըստ առանձին համայնքների:

«Ա» մասով յուրաքանչյուր համայնքին դոտացիաները հատկացվում են տվյալ համայնքին 2016 թվականին տրամադրված դոտացիաների փաստացի գումարի չափով,

«Բ» մասով դոտացիաները հաշվարկվում են ըստ համայնքների բյուջետային ապահովվածության գործակցի: Մասնավորապես,

2021 թվականի յուրաքանչյուր համայնքի դոտացիաների հաշվարկի համար, որպես բազային անփոփոխելի գումար համարվել է ՀՀ 2016թ. պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրված ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարը և 2021 թվականի ֆինանսական համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի (64,597.0 մլն դրամ) ու 2016 թվականին հատկացված դոտացիայի ընդհանուր գումարի (47,127.5 մլն դրամ) տարբերության չափով հավելաճի գումարը (17,469.5 մլն.դրամ):

Ընդ որում, 2021 թվականի համար հավելաճի մասով դոտացիաների հաշվարկը իրականացվել է «Բ» մասով:

Հարկ է նշել, որ համաձայն «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի 2021 թվականի ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կի-

րառված 2019 թվականի գույքահարկի և հողի հարկի գծով բոլոր ելակետային տվյալները տրամադրվել են համայնքների ղեկավարների կողմից:

Ինչ վերաբերում է հաշվարկներում կիրառված մյուս ցուցանիշներին.

համայնքի բնակչության թվաքանակը՝ տվյալ համայնքի տարածքում հաշվառված բնակչության թիվը,

պետական տուրքերի հաշվարկային գումարը,

համայնքի կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից, նախկին շրջկենտրոնից և մայրաքաղաքից,

համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից,

համայնքի 0-16 տարեկան և կենսաթոշակային տարիքի բնակչության թիվը հաշվառված բնակչության թվի մեջ,

համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի թիվը,

ապա վերջիններս տրամադրվել են համապատասխան պետական լիազոր մարմինների կողմից:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 93-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն ՀՀ օրենքներով համայնքների եկամուտների նվազեցման հետևանքով համայնքների բյուջեներում առաջացող եկամուտների կորուստների գումարները ենթակա են փոխհատուցման պետության կողմից: Այդ կապակցությամբ, «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան կիրառելով տեղական ինքնակառավարման մարմիններից (իրենց իրավասության շրջանակներում) ստացված տեղեկատվությունը, կատարվել են համայնքների 2019 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ենթակա գումարների հաշվարկներ: Արդյունքում, համայնքների 2019 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ենթակա ընդհանուր գումարը կազմել է շուրջ 59.8 մլն.դրամ:

15.2 «Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 800.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մակարդակին համապատասխան:

Ծրագրի նախատեսմամբ և իրականացմամբ ապահովվում է «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկումը, որով նախատեսվում է փոխհատուցել (ամբողջությամբ կամ մասնակի) ՀՀ կառավարության 18.12.2014թ. N1444-Ն որոշմամբ նախատեսված բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի, սահմանամերձ համայնքների վարչական տարածքում գտնվող մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքների համար վճարման ենթակա հողի հարկի և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկի գծով ծախսերը:

15.3 Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն բնակավայրի համապատասխան ցուցանիշները հայտնի պատճառներով չեն կարող կիրառվել ֆինանսական համահարթեցման դոտացիաների բաշխման հաշվարկներում, նշված բնակավայրի վարչական ղեկավարի և աշխատակազմի 2021 թվականի պահպանման

ծախսերի գծով ՀՀ 2021 թվականի ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին առանձին տողով նախատեսվում է 4.9 մլն դրամի չափով հատկացումներ:

15.5 «ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով» միջոցառման համար ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 7,000.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 10,000.0 մլն դրամի դիմաց:

Միաժամանակ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության գծով նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր, որի շրջանակներում վերակառուցվում են «Հաղթանակ» 220 կՎ, «Չարենցավան-3» և «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանները, ինչպես նաև նախատեսվում է ծրագրի շրջանակներում տնտեսված միջոցների հաշվին վերակառուցել 40 և ավելի տարիներ շահագործման մեջ գտնվող 220/110/10 կՎ «Զովունի» ենթակայանը, որի իրականացման արդյունքում կբարձրանա ենթակայանների, ինչպես նաև էներգահամակարգի անվտանգությունը և աշխատանքի հուսալիությունը՝ 2021թ-ին նախատեսվում է 3,697.4 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,957.9 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 739.5 մլն դրամ:

2. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՀԲ) աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր, որի նպատակն է աջակցել Հայաստանում էլեկտրաէներգիայի մատակարարման համարժեքության և հուսալիության պահպանման ջանքերին՝ էլեկտրաէներգիա արտադրող/բաշխող ընկերությունների (Երևանի ՋԷԿ, ՀԱԷԿ ՓԲԸ) ֆինանսական վիճակը բարելավելու միջոցով: Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը կնպաստի էներգետիկայի ոլորտի ընկերությունների ֆինանսական վիճակի բարելավմանը՝ 2021թ-ին նախատեսվում է 633.1 մլն դրամ վարկային միջոցներ:

3. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում կարգավորման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնման ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է արդիականացնել SCADA համակարգը, զգալիորեն ավելացնել համակարգից օգտվողների քանակը, ստեղծել հարևան երկրների տվյալների միջսերվերային փոխանակման հնարավորություն, ինչպես նաև նախատեսվում է կառուցել էլեկտրաէներգետիկ համակարգի պահուստային կառավարման կենտրոն, որը կապահովի առաջնային կարգավարական կենտրոնի բնական աղետների, պատերազմական իրավիճակների կամ տեխնիկական պատճառներով խափանվելու դեպքում էլեկտրաէներգետիկական համակարգի վերահսկողությունն ու շարունակական կառավարումը՝ 2021թ-ին նախատեսվում է 513.8 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 451.0 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 62.8 մլն դրամ:

4. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման շրջանակներում «Աշնակ» ենթակայանի վերակառուցման և էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման բարելավման ծրագիր, որի շրջանակներում վերակառուցվում է «Աշնակ» 220 կՎ ենթակայանը, ինչպես նաև

նախատեսվում է տնտեսված միջոցների հաշվին վերակառուցել 220/110/6 կՎ «Արարատ-2» ենթակայանը, որոնց իրականացման արդյունքում կբարձրանա ենթակայանների, ինչպես նաև էներգահամակարգի անվտանգությունը և աշխատանքի հուսալիությունը՝ 2021թ-ին նախատեսվում է 3,939.8 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,151.9 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 787.9 մլն դրամ:

5. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց 1» Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայանների վարկային ծրագիր, որի նպատակն է միացնել հայկական և վրացական էներգահամակարգերը՝ վրացական սահմանին մոտ՝ Այրումում (Հայաստան) տեղակայվող 500/400/220 կՎ բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանով (վերջնական հզորությունը 1050 ՄՎտ): Վրացական կողմից միացումը նախատեսվել է «Մառնեուլի» ենթակայանից 500 կՎ ՕԳ-ի միջոցով, հայկական կողմից՝ Դդմաշենում տեղակայվող 400/220 կՎ ենթակայանից 400 կՎ ՕԳ-ի միջոցով: Արդյունքում՝ Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը նախատեսվել է ներկայիս 200 ՄՎտ-ից առաջին փուլում հասցնել 350 ՄՎտ-ի, հետագայում՝ ելնելով տարածաշրջանային շուկայի պահանջարկից, հասցնել մինչև 1050 ՄՎտ-ի՝ 2021թ-ին նախատեսվում է 24,355.6 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 24,112.1 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 243.5 մլն դրամ:

6. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց 1» Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայանների դրամաշնորհային ծրագիր, որը փոխկապակցված է համանուն վարկային ծրագրի հետ՝ 2021թ-ին նախատեսվում է 1,525.2 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,448.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 676.7 մլն դրամ:

7. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագիր, որի նպատակն է Շիրակի մարզում՝ Ախուրյան գետի վրա, գյուղատնտեսական նպատակներով արդյունավետ ոռոգման համակարգի ստեղծում, որը կհանդիսանա գետի ամբողջ ավազանի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման մաս: Ծրագրով նախատեսվում է ավարտին հասցնել կիսակառույց պատվարը, օժանդակ կառույցները և վերականգնել թունելները, ինչը կապահովի ստորին բրիեֆում տարածաշրջանների անվտանգությունը՝ 2021թ.-ին նախատեսվում է 2,962.1 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,423.4 մլն դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորում ՝ 538.7 մլն դրամ:

8. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի երկրորդ փուլ, որի նպատակն է ապահովել Ախուրյանի գետի երկայնքով ջրի պաշարների կայուն օգտագործումը, բարձրացնել գյուղատնտեսական արտադրողականությունը, նվազեցնել թիրախային խմբի խոցելիությունը կլիմայի փոփոխության ազդեցության, շրջակա միջավայրի էկոհամակարգերի և կենսաբազմազանության պահպանման, Կապս ջրամբարի շրջակա միջավայրի բնակչության անվտանգության ռիսկը՝ 2021թ.-ին նախատեսվում է 236.8 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 197.3 մլն դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորում ՝ 39.5 մլն դրամ:

9. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման դրամաշնորհային ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է ֆինանսավորել «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Կապսի ջրամբարի կառուցման Փուլ I փուլի

փորձագիտական ծառայությունների իրականացումը՝ շրջակա միջավայրի վրա սոցիալական գնահատման խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում՝ 2021թ.-ին նախատեսվում է 78.6 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 65.5 մլն դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորում 13.1 մլն դրամ:

10. Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման ծրագիր, որի նպատակն է Վեդու ջրամբարի և ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում, ինչը կբարձրացնի ջրապահովման մակարդակը և կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել պատվարը, օժանդակ կառուցվածքները, փոխադրող համակարգը՝ գետից մինչև ջրամբար և հեռացնող խողովակաշարը (ինքնահոս): Վեդու ջրամբարի կառուցումը կբարձրացնի Վեդի և Արարատ ՋՕԸ-ների շուրջ 3200 հա հողատարածքների ջրապահովման մակարդակը՝ 2021թ.-ին նախատեսվում է 3,385.7 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,825.3 մլն դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ 560.4 մլն դրամ:

11. Զարգացման ֆրանսիական գործակալության աջակցությամբ իրականացվող ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության և ոռոգման կառավարման կարողությունների բարելավման դրամաշնորհային ծրագրի խորհրդատվություն և կառավարում, որի շրջանակներում նախատեսվում է աջակցություն ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության և ոռոգման կառավարման կարողությունների բարելավման ուղղություններով: Որպես ծրագրի բաղադրիչներ իրականացվելու են ոռոգման համակարգի ռազմավարության մշակման, ոռոգման համակարգի գույքագրման և վերագնահատման, ներդրումային կարիքների գնահատման, ջրի և կորուստների կառավարման և այլ գործառույթներ: 2021թ.-ին նախատեսվում է 583,8 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 402.7 մլն դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ 181.2 մլն դրամ:

12. Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր, որի նպատակն է բարելավել և արդիականացնել Հայաստանի ոռոգման համակարգերը՝ կրճատելով շահագործման և պահպանման ծախսերը, ոռոգման համակարգերում կրճատել բարձր ջրակորուստները, նվազեցնել էլեկտրաէներգիայի ծախսումները կամ բարձրացնել էներգածախսատար համակարգերի արդյունավետությունը, վերանախագծել ներտնտեսային ցանցերը՝ գոյություն ունեցող հողօգտագործման մեթոդներին համապատասխան՝ 2021թ.-ին նախատեսվում է 4,294.7 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,445.3 մլն դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորում ՝ 849.4 մլն դրամ:

13. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր, որի նպատակն է աջակցել Երևան քաղաքի ջրամատակարարման բարելավմանը՝ ջրամատակարարման ցանցի վերակառուցման, ջրահեռացման համակարգերի բարելավման միջոցով և համարվում է նախորդ ծրագրի մասնաբաժին ԵՆԲ-ի աջակցությամբ՝ 2021թ. նախատեսված է 890.4 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 626.1 մլն դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ 264.3 մլն դրամ:

14. Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է աջակցել Երևան քաղաքի ջրամատակարարման բարելավմանը և համարվում է նախորդող վարկային ծրագրերի դրամաշնորհային մասնաբաժին՝ 2021թ. նախատեսված է

1,231.6 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 985.7 մլն դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորում 245.8 մլն դրամ:

15.Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ, իրականացվում է Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող նույնանուն ծրագրի հետ համատեղ: 2021թ. նախատեսված է 2,636.2 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 2,183.3 մլն դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորում 452.9 մլն դրամ:

16. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ, որոնց նպատակն է 6 քաղաքների և 37 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ վերականգնման աշխատանքների, բաշխիչ ցանցերի վերականգնման, Գյումրի քաղաքի առավել ռիսկային կետերի (Աթոյան, Շիրակացի, Ղուկասյան փողոցների) կոյուղու համակարգի վերականգման, Վանաձոր, Արմավիր քաղաքների ջրամատակարարման համակարգի նորացման, ինչպես նաև թվով 3 ջրամբարների կառուցման աշխատանքների որոշ մասի իրականացումը (ԵՆԲ վարկի հետ համատեղ ֆինանսավորում):

2021թ. նախատեսված է 2,531.1 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,099.9 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 431.2 մլն դրամ:

17. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և Եվրոպական միության Հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման դրամաշնորհային ծրագրի երրորդ փուլ, որի նպատակն է ջրամատակարար ընկերությունների կողմից դուրս մնացած 560 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնումը, կեղտաջրերի մաքրման կայանի կառուցումը, կոյուղու, պոմպակայանի, կոլեկտորի, կոյուղու ցանցի վերականգնումը, ինչը թույլ կտա Արմավիր, Մեծամոր քաղաքների ու Նորապատ համայնքի կեղտաջրերի մաքրման աշխատանքներ իրականացնել: Աշխատանքներ կիրականացվեն նաև Արմավիր քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի առավել վթարային ճանաչված հատվածների վերականգնման համար՝ 2021թ. նախատեսված է 2,028.6 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,686.5 մլն դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորում ՝ 342.2 մլն դրամ:

18.Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման փուլ 1 ծրագիր, որի շրջանակներում Ջրաձոր գյուղի վերաբնակեցման համար նախատեսվում է խորհրդատվություն և կառավարում, ինչպես նաև ենթակառուցվածքների և բնակելի տների կառուցում: Համաձայնագրի համաձայն նշված ծախսը կատարվելու է ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցների հաշվին՝ 2021թ. նախատեսված է 1,065.5 մլն դրամ ՀՀ կառավարության համաֆինանսավորում:

19.Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագիր, որի նպատակն է աջակցել Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բարելավմանը, նոր աղբավայրի կառուցմանը, մասնագիտացված սարքավորումների ձեռք բերմանը, ինչպես նաև լրացուցիչ բնապահպանական և սոցիալական

հետազոտությունների կատարմանը՝ 2021թ-ին նախատեսվում է 719.6 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 599.7 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 119.9 մլն դրամ:

20.Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիր, որի նպատակն է աջակցել Երևանի տարածքում նոր աղբավայրի կառուցմանը, մասնագիտակցված տրանսպորտային միջոցների և սարքավորումների գնման գործընթացին՝ 2021թ-ին նախատեսվում է 1,133.8 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,028.9 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 104.9 մլն դրամ:

21.Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի կոշտ թափոնների ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն), որի նպատակն է բարելավել Երևան քաղաքում և շրջակա շրջաններում կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգը, նոր սանիտարական աղբավայրի և օժանդակ ենթակառուցվածքի կառուցմանը, աջակցել Նուբարաշենի գործող աղբավայրի փակմանը և վերականգնմանը, ինչպես նաև լրացուցիչ մասնագիտացված սարքավորումների ձեռք բերմանը՝ 2021թ-ին նախատեսվում է 1,133.8 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,028.9 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 104.9 մլն:

22.Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Կոտայքի և Գեղարքունիքի մարզերիի կոշտ թափոնների կառավարման դրամաշնորհային ծրագիր, որի հիմնական նպատակն է վերամշակել Կոտայքի մարզի կոշտ կենցաղայաին թափոնները: Դրամաշնորհային ծրագիրն ուղղված է հիմնական վարկային ծրագրի աջակցմանը՝ 2021թ-ին նախատեսվում է է 719.6 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 599.7 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 119.9 մլն դրամ:

23. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման խորհրդատվության համար դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է խորհրդատվություն տրամադրել Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների հիմնական վարկային ծրագրի իրականացմանը՝ 2021թ-ին նախատեսվում է 125.6 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 104.6 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 20.9 մլն դրամ:

24. Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է բարելավել Երևանում կոշտ թափոնների կառավարման համակարգը, այդ թվում՝ նոր աղբավայրի կառուցում, շահագործում և վերամշակման ծավալների ավելացմանը նպաստող համակարգերի ներդրում՝ 2021թ-ին նախատեսվում է 2,073.9 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,728.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 345.5 մլն դրամ:

25. Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է բարելավել Երևանում կոշտ թափոնների կառավարման համակարգը, այդ թվում՝ նոր աղբավայրի կառուցում, շահագործում և վերամշակման ծավալների ավելացմանը նպաստող համակարգերի ներդրում՝ 2021թ-ին նախատեսվում է 518.5 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 432.1 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 86.4 մլն դրամ:

26. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է Նոր աղբավայրի նախագծում, կառուցում, մասնագիտացված տրանսպորտային միջոցների և

սարքավորումների ձեռքբերում՝ 2021թ-ին նախատեսվում է 328.6 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 257.3 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 71.3 մլն դրամ:

27. Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող Հայաստանի տարածքային զարգացման դրամաշնորհային ծրագիր, որն ուղղված է ՀՀ մարզերի և համայնքների տարածքային և տեղական ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը, աջակցության և զարգացման մոդելների մշակմանը և կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ 2021թ. 34.5 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 18.9 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 15.6 մլն դրամ:

28. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագիր, որի նպատակներն են դպրոցների շենքերի սեյսմակայունության բարձրացումը, սեյսմիկ աղետների պատրաստվածության և արձագանքման կարողությունների հզորացումը, սեյսմիկ ռիսկերի կառավարման և նվազեցման օժանդակող քաղաքականությունների և համակարգերի բարելավումը և սեյսմիկ անվտանգության ներդրումային ծրագրի գործադիր և իրականացնող մարմինների կարողությունների զարգացումը՝ 2021թ. նախատեսվում է 4,794.0 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,982.1 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 811.9 մլն մլն դրամ:

29. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր, որի նպատակն է վերականգնել և բարելավել Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքները, որի շրջանակներում նախատեսվում ուղևորների սպասարկման որակի բարելավում, մետրոպոլիտենի գծերի, կայարանների, շենքերի, կառույցների, էլեկտրամատակարարման և կապի համակարգերի, շարժակազմերի և տեխնոլոգիական սարքավորումների անխափան շահագործման հուսալիության բարձրացում, մետրոպոլիտենի օբյեկտներում սանիտարատեխնիկական վիճակի և աղտոտումից շրջակա միջավայրի պահպանության ապահովում, էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացում, թունելային ջրատարի և շարժասանդուղքների վերանորոգում՝ բ) մետրոպոլիտենի գծերի, կայարանների, շենքերի, կառույցների, էլեկտրամատակարարման և կապի համակարգերի, շարժակազմերի և տեխնոլոգիական սարքավորումների անխափան շահագործման հուսալիության բարձրացում՝ 2021թ.-ին նախատեսվում է 341.7 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 284.7 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 56.9 մլն դրամ:

30. Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է վերականգնել և բարելավել Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքները՝ 2021թ. նախատեսվում է 491.7 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 409.8 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 81.9 մլն. դրամ:

31. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր, որի նպատակն է բարելավել Երևանի քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքը և ծառայությունները: 2021թ.-ին նախատեսվում է 1,363.9 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,019.2 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 344.7 մլն դրամ:

32. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագիր, որի նպատակն է բարելավել քաղաքային ենթակառուցվածքները, այդ թվում՝ Արգավանդ - Շիրակ, Բաբաջանյան -

Աշտարակ ճանապարհահատվածը՝ 2021թ.-ին նախատեսվում է 5,897.1 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 4,417.9 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 1,479.2 մլն դրամ:

33. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագիր, որի նպատակն է Գյումրի քաղաքում հիմնական ճանապարհների վերակառուցում և հանրային լուսավորության արդիականացում, այդ թվում՝ ասֆալտի և մայթերի նորոգում, ջրահեռացման համակարգերի վերականգնում, Գյումրու քաղաքապետարանի համար ավտոկայանատեղիների վերաբերյալ ռազմավարության մշակում՝ 2021թ.-ին նախատեսվում է 2,062.2 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,718.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 343.7 մլն դրամ:

34. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհներ տեխնիկական համագործակցության դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է աջակցել «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային ծրագրի իրականացման թիմին աշխատանքների համար մրցութային փաստաթղթերի պատրաստման, պայմանագրերի շնորհման համար՝ 2021թ.-ին նախատեսվում է 243.1 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 202.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 40.6 մլն դրամ:

35. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհներ դրամաշնորհային ծրագիր (Տրանշ Ա, Բ, Գ), որի նպատակն է աջակցել «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային ծրագրի իրականացման շրջանակներում հանրային լուսավորության արդիականացմանը, Գյումրու քաղաքապետարանի համար ավտոկայանատեղիների վերաբերյալ ռազմավարության մշակմանը՝ 2021թ.-ին նախատեսվում է 3,066.4 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 2,555.4 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 511.1 մլն դրամ:

36. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» ծրագիր, որի նպատակն է Երևանում ստեղծել հուսալի լուսավորության ցանց (մոտ 28 փողոցներում), ապահովել էլեկտրաէներգիայի էական խնայողություն, ներդնել արտաքին լուսավորության ցանցի հեռակառավարման համակարգ, փոխել վթարված հենասյուները, փոխարինել առկա լուսատուները LED լուսատուներով՝ 2021թ.-ին նախատեսվում է 920.9 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 767.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 153.5 մլն դրամ:

37. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է Երևանում ստեղծել հուսալի լուսավորության ցանց (մոտ 28 փողոցներում), ապահովել էլեկտրաէներգիայի էական խնայողություն, ներդնել արտաքին լուսավորության ցանցի հեռակառավարման համակարգ, փոխել վթարված հենասյուները, փոխարինել առկա լուսատուները LED լուսատուներով՝ 2021թ.՝ 134.9 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 107.2 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 27.7 մլն դրամ:

38. E5P աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է Երևանում ստեղծել հուսալի լուսավորության ցանց (մոտ 28 փողոցներում), ապահովել էլեկտրաէներգիայի էական խնայողություն, ներդնել արտաքին լուսավորության ցանցի հեռակառավարման համակարգ, փոխել վթարված հենասյուները, փոխարինել առկա լուսատուները LED լուսատուներով՝ 2021թ.՝ 492.6 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 410.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 82.1 մլն դրամ:

39. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն» անցման կետի կամրջի վերակառուցման ծրագիր, որի նպատակն է Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամրջի կառուցումը, որը կնպաստի միջազգային ստանդարտներին համապատասխան Հայաստանի և Վրաստանի միջև գտնվող տվյալ անցակետով իրականացվող ծառայություն-ների որակի բարձրացմանը՝ 2021թ.-ին նախատեսվում է 832.9 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 650.7 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 182.2 մլն դրամ:

40. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր, որի նպատակն է բարելավել գյուղական համայնքների շուկաների և ծառայությունների հասանելիությունը, ինչպես նաև ամրապնդել կենսական նշանակության ճանապարհային ցանցը կառավարելու կարողությունները՝ 2021թ.՝ 9.2 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 7.4 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 1.8 մլն դրամ:

41. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման լրացուցիչ ծրագիր, որի նպատակն է հիմնանորոգել շուրջ 190 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներ՝ 2021թ.-ին նախատեսվում է 652.6 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 511.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 141.1 մլն դրամ:

42. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման երկրորդ լրացուցիչ ծրագիր, որի նպատակն է հիմնանորոգել շուրջ 61 կմ ընդհանուր երկարությամբ համայնքային և միջհամայնքային ճանապարհահատվածներ՝ 2021թ.-ին նախատեսվում է 1,340.0 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,072.0 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 268.0 մլն դրամ:

43. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիր, որի նպատակն է՝ հիմնանորոգել և վերակառուցել Հայաստանի Հանրապետության կենտրոնը Վրաստանի Հանրապետության հետ կապող՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման 92 կմ ընդհանուր երկարությամբ միջպետական ճանապարհը: (կմ 38+450 – կմ 90+191 հատվածը)՝ 2021թ.-ին նախատեսվում է 3,696.1 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,911.8 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 784.3 մլն դրամ:

44. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիր, որի նպատակն է՝ հիմնանորոգել և վերակառուցել Հայաստանի Հանրապետության կենտրոնը Վրաստանի Հանրապետության հետ կապող՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհը (կմ 0+000 – կմ 38+450 հատված)**:** 2021թ.-ին նախատեսվում է 17.4 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 14.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 2.9 մլն դրամ:

45. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Տրանշ 2), որի նպատակն է Աշտարակ-Թալին 41.9 կմ հատվածի վերակառուցումը և ներկայումս երկշարք ճանապարհի լայնացումը մինչև քառաշարք ճանապարհի, ինչպես նաև իրականացվելու են ներդրումային ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող հետագա ծրագրերի մանրամասն նախագծերի ուսումնասի-րություններ, շինարարության վերահսկողություն, գնումների և կարողությունների հզորացման

աշխատանքներ՝ 2021թ.-ին նախատեսվում է 3,484.0 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,425.0 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 1,059.0 մլն դրամ:

46. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Տրանշ 3), որի նպատակն է Թալին-Գյումրի 27,5 կմ հատվածի վերակառուցումը՝ 2021թ.-ին նախատեսվում է 2,396.7 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,917.4 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 479.4 մլն դրամ:

47. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Տրանշ 3), որի նպատակն է Թալին-Լանջիկ 18,7 կմ հատվածի վերակառուցումը՝ 2021թ.-ին նախատեսվում է 3,172.0 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,319.0 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 853.0 մլն դրամ:

48. Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի ծրագիր, որի նպատակն է ուսումնասիրել և վերակառուցել Քաջարան-Ագարակ շուրջ 45 կմ ճանապարհահատվածը՝ 2021թ.-ին նախատեսվում է 2,224.0 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,110.0 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 1,114.0 մլն դրամ:

49.Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման դրամաշնորհային ծրագիր (Տրանշ 3), որը փոխկապակցված է համանուն վարկային ծրագրի հետ, իրականացվում է վարկային ծրագրի ժամկետներում նույն ուղղվածությամբ՝ 2021թ.-ին նախատեսվում է 590.6 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 456.4 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 134.3 մլն դրամ:

50. ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող Տեղական ինքնակառավարման բարեփոխումների դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է Հայաստանի Հանրապետությանն օժանդակել հասնելու ավելի մասնակցային, արդյունավետ և հաշվետվողական կառավարման՝ Հայաստանում վարչատարածքային բարեփոխման միջոցով: Ծրագրի շրջանակներում ԱՄՆ ՄԶԳ-ն ներդրումային միջոցներ կտրամադրի ՀՀ կառավարության կողմից իրականացվող վարչատարածքային բարեփոխումների պիլոտային փուլում 14 խոշորացվող փնջերում զարգացման ծրագրերի ֆինանսավորման համար՝ 2021թ.-ին նախատեսվում է 496,6 մլն դրամաշնորհային միջոցներ:

51. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տարածքային զարգացման հիմնադրամի ծրագիր, որի նպատակն է՝ նպաստել տարածքներում բնակչության նյութական ու ոչ նյութական բարեկեցության աճին՝ սոցիալական ու տնտեսական ենթակառուցվածքների ու հանրային ծառայությունների որակի ու հասանելիության բարձրացման միջոցով և օժանդակել տարածքների ինստիտուցիոնալ և ֆինանսական կարողությունների հզորացմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել մոտ 120 համայնքային մակարդակի ենթածրագիր՝ սոցիալական ենթակառուցվածքների վերականգնման և նոր օբյեկտների կառուցման ոլորտում: Ինչպես և ՀՍՆՀ նախորդ ծրագրերում, նախատեսվում է համայնքային կենտրոններին, դպրոցներին և մանկապարտեզներին գույքի տրամադրում՝ 2021թ.-ին նախատեսվում է 1,303.7 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 840.1 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 463.6 մլն դրամ:

Այս ոլորտում Նախագծով (առանց կառավարման ապարատի), նախատեսվող բյուջետային ծախսերի համեմատությունը ՀՀ 2019 թվականի բյուջետային տարվա փաստացի և ՀՀ 2020 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 12 աղյուսակում:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գծով նախագծով (առանց կառավարման ապարատի) նախատեսվում է 8,251.4 մլն դրամ (առանց կառավարման ապարատի), որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

1.«Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր».

Նշված ծրագրի նպատակը Բարձր տեխնոլոգիաների ենթակառուցվածքների բարելավումն է, որն նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումներով.

1.1 «Մասնագետների պատրաստման ԲՈՒՀ-մասնավոր հատված համագործակցություն» միջոցառման իրականացման համար ՀՀ 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 380.0 մլն դրամ:

Միջոցառման նպատակն է ԲՈՒՀ-երի և տեխնոլոգիական ոլորտի ընկերությունների հետ մշակել և իրականացնել համատեղ կրթական/վերապատրաստման արդեն իսկ կիրառված և իրենց արդյունավետությունն ապացուցած ծրագրեր, ներգրավելով ոլորտի առաջատար մասնավոր ընկերություններին: Նախատեսվում է նաև աջակցել ոլորտի կազմակերպություններին և անհատներին՝ ստանալ որակյալ կրթություն ձեռներեցության, կառավարման, վաճառքի և մարքեթինգի հարցում՝ համապատասխան տեղական և միջազգային ծրագրերով:

1.2 ««Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհներ» միջոցառման իրականացման համար ՀՀ 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 1,000.0 մլն դրամ:

Միջոցառումը նախատեսում է դրամաշնորհների տեսքով տրամադրել աջակցություն գիտահետազոտական և փորձարարական խմբերին, ստարտափերին, տեխնոլոգիական ոլորտի կազմակերպություններին՝ անհրաժեշտ թեմաների շուրջ աշխատանքներ իրականացնելու համար: Մասնավորապես նախատեսվում է փոքր դրամաշնորհների տրամադրում համալսարանական խմբերին, գիտահետազոտական և փորձարարական խմբերին, ստարտափ ընկերություններին, համաֆինանսավորման միջոցով դրամաշնորհներ տրամադրել ստարտափ ընկերություններին:

Միջոցառման նպատակն է խրախուսել ստեղծագործական/գիտական խմբերին՝ դրամաշնորհային միջոցներով կատարել գիտահետազոտական և փորձարարական աշխատանքներ առաջնահերթ ուղղություններով: Հաջորդ փուլով հնարավորություն է ստեղծվում այդ խմբերի համար գրանցել իրենց ընկերությունները, ներգրավել ֆինանսական այլ միջոցներ և ստանալ համաֆինանսավորում՝ նոր մասնագետներ գրավելու, իրենց գաղափարն իրականացնելու և համաշխարհային շուկա դուրս գալու նպատակով:

1.3 «Հայկական վիրտուալ կամուրջ» միջոցառման իրականացման համար ՀՀ 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 1,184.7 մլն դրամ:

Միջոցառման նպատակն է Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական արդյունաբերական կենտրոն: Միջոցառումը նախատեսում է.

- Կալիֆորնիա նահանգի Սան Հոզե քաղաքում (Սիլիկոնյան հովիտ) ստեղծել աշխատանքային պայմաններ ունեցող, տեխնիկապես գերհագեցած և կեցության համապատասխան պայմաններով կենտրոնի ստեղծում

• Հայաստանում և արտասահմանում գտնվող հայկական տեխնոլոգիական համայնքների մասնագիտական համագործակցության ապահովման մեխանիզմների ստեղծում.

• Բարձր տեխնոլոգիական ոլորտում գործող ձեռներեցների վերապատրաստման միջոցառումների ապահովում Հայաստանում և արտերկրում.

• Ստարտափ ընկերությունների աքսելերացիայով և ինկուբացիայով զբաղվող միջազգային կազմակերպությունների ներգրավում Հայաստան և աջակցություն տեղական համանման կազմակերպությունների զարգացմանը.

• Արտերկրից դեպի Հայաստան ստարտափերի ներհոսքի ապահովման միջոցառումների իրականացում, դրանց տեղակայման, վերապատրաստման, «Վիրտուալ կամուրջի» բաղկացուցիչ միջոցառումներում ինտեգրման ապահովում.

• Հայաստանի ամբողջ տարածքում աջակցություն տեխնոլոգիական կենտրոններին և նոր կենտրոնների ստեղծում:

• «Ներուժ» սփյուռքահայ երիտասարդների «startup» ծրագրի կազմակերպում և իրականացում:

1.4 «Շուկաների զարգացում և միջազգային համագործակցություն» միջոցառման իրականացման համար ՀՀ 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 425.0 մլն դրամ:

Միջոցառման նպատակն է բարձր տեխնոլոգիական ընկերությունների, ապրանքների և ծառայությունների արտերկրում պատշաճ ներկայացումը և թիրախավորված վաճառքի խթանումը:

Միջոցառման իրականացման արդյունքում հայկական ընկերությունները կարող են մասնակցել ցուցահանդեսներին, սեմինարներին, երկկողմ գործարար ֆորումներին և այլ միջոցառումներին, հնարավորություն ստանալով ներկայացնել իրենց արտադրանքը, ծառայությունները և դուրս գալ միջազգային շուկա:

2. «Պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտություններ» ծրագրի «Գիտական և գիտատեխնիկական նպատակային ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ» միջոցառման գծով նախատեսվում է հատկացնել 4,574.2 մլն դրամ՝ 2020 թվականի ՀՀ պետական բյուջեով հաստատված 3,854.9 մլն դրամի դիմաց: 2021 թվականին գումարի ավելացման համար հիմք է ընդունվել ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշման դրույթներն այն մասին, որ 2020 թվականից սկսած պետք է շեշտակի ավելացնել միջոցառման գծով ծախսերը:

3. «Հեռահաղորդակցության ապահովում» ծրագիր.

Ծրագրի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

3.1 «Հեռահաղորդակցության և կապի կանոնակարգում» միջոցառման շրջանակներում «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ՀՀ 2021 թվականին նախատեսվում է 310.3 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մակարդակին համապատասխան:

Միջոցառման նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության հաճախականությունների բաշխումների աղյուսակի

կազմումը, ռադիոեթերի մոնիթորինգի և ազդանշանների տեխնիկական պարամետրերի չափումների անցկացումը, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների տեղորոշումը:

3.2 «Թվային հեռուստահեռարձակման ապահովման ծառայություններ» միջոցառմամբ ՀՀ-ում թվային հեռուստահեռարձակման ապահովման շրջանակներում հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալման նպատակով 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 120.3 մլն դրամ՝ ՀՀ 2020թ. պետական բյուջեով հաստատված 119.4 մլն դրամի դիմաց (տարբերությունը պայմանավորված է փոխարժեքի փոփոխությամբ):

Միջոցառումը նախատեսված է արբանյակային ցանցը օպտիկամանրաթելային համակարգին անհասանելի, հիմնականում սահմանամերձ բնակավայրերում տեղադրվող հաղորդակներին հանրապետական սփռման մուլտիպլեքսի ազդանշանը հասցնելու համար: Այն ծառայելու է նաև որպես պահուստ՝ օպտիկա-մանրաթելային համակարգի հնարավոր խանգարումների դեպքում:

4. «Ռազմարդյունաբերության բնագավառում պետական քաղաքականության մշակում խորհրդատվական, մոնիտորինգի և աջակցության ծառայություններ, ծրագրերի համակարգում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ բարձր տեխնոլոգիական նախարարության կազմում գործող ռազմարդյունաբերական կոմիտեի պահպանման ծախսերի ֆինանսավորում: Նշված միջոցառման գծով ՀՀ 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 257.3 մլն դրամ՝ ՀՀ 2020թ. պետական բյուջեով հաստատված 420.3 մլն դրամի դիմաց (որը պայմանավորված է գործող օրենսդրությամբ սահմանված կարգավորումներով:

Այս ոլորտում Նախագծով (առանց ապարատի ծախսերի) նախատեսվող բյուջետային ծախսերի համեմատությունը ՀՀ 2019 թվականի բյուջետային տարվա փաստացի և ՀՀ 2020 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի 11 աղյուսակում:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության գծով նախագծով (առանց ապարատի ծախսերի) նախատեսվում է 7,461.4 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ» ծրագիր

Ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,685.57 մլն դրամ, որի շրջանակներում իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

1.1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննություն» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 45.46 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափին համապատասխան:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության աշխատանքների իրականացում:

1.2. ՀՀ կառավարության 20.01.2020թ. N 81-Ն որոշմանը համապատասխան Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության

կենտրոն», «Անտառային մոնիթորինգի կենտրոն», և Արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների միաձուլման ձևով վերակազմակերպման արդյունքում ստեղծվել է Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը, որի արդյունքում ՀՀ 2020թ. պետական բյուջեով հաստատված «Հիդրոօդերևութաբանական ծառայություններ», «Անտառային պետական մոնիտորինգի իրականացում» և «Շրջակա միջավայրի մոնիթորինգ և տեղեկատվության ապահովում» միջոցառումների իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցները ուղղվել են 1016 ծրագրի 11004 «Հիդրոօդերևութաբանություն, շրջակա միջավայրի մոնիթորիգ և տեղեկատվության ապահովում» միջոցառմանը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,640.11 մլն դրամ:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է՝

- Հանրապետության տարածքում պետական նշանակության հիդրոօդերևութաբանական աշխատանքների կատարում՝ մթնոլորտի և ջրոլորտի ուսումնասիրությունների ձևով, հանրապետության տարածքում հիդրոօդերևութաբանական երևույթների, ջրային օբյեկտների հիդրոլոգիական բնութագրերի ուսումնասիրության, ֆոնային ռադիոակտիվության վերաբերյալ դիտարկումների կատարման, այդ ոլորտների վերաբերյալ փաստացի և սպասվող փոփոխությունների, ինչպես նաև դրանց հնարավոր հետևանքների մասին անհրաժեշտ տեղեկատվության ապահովումը և մթնոլորտային երևույթների կառավարումը ու ռադիոլոկացիոն կայանների դիտարկումների, թափոնների ուսումնասիրության աշխատանքների իրականացումը, ինչպես նաև նպաստելու շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների) պահպանությանը:

- Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության բարձր մակարդակի ապահովմանը նպաստելը՝ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) նկատմամբ դիտարկումների իրականացման, վիճակի գնահատման վերաբերյալ բավարար տվյալների ստեղծման, դրանց գրանցման, վերլուծման, տրամադրման ու պահման միջոցով.

- Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վիճակի մասին տեղեկատվությունը բնապահպանական միասնական տեղեկատվական շտեմարանում ներբեռնումն ու շտեմարանի վարումը.

- Թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ու թափոնների դասակարգչի կազմման համար ուսումնասիրության իրականացումը, ինչպես նաև թափոնների օգտագործման ու վնասազերծման սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների մասին տվյալների հավաքումն ու վերլուծումը.

- Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների առանձին բաղադրիչների մասին տվյալների հավաքագրման ու վերլուծության հիման վրա համապատասխան համակարգչային շտեմարանների (բազա) ստեղծումը և վարումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական մարմիններին, հասարակական կազմակերպություններին ու հասարակությանն այդ շտեմարաններում պարունակվող տեղեկությունների տրամադրումը և ստացումը:

2. «Բնապահպանական ծրագրերի իրականացում համայնքներում» ծրագիր, որի շրջանակում նախատեսվում է իրականացնել.

2.1 «Բնապահպանական սուբվենցիաներ համայնքներին» միջոցառումը: Միջոցառման շրջանակներում «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ համայնքներին կտրամադրվեն սուբվենցիաներ բնապահպանական ծրագրերի իրականացման համար՝ 150.0 մլն դրամի չափով:

3. «Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում և պահպանում» ծրագիր

Ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 3,347.26 մլն դրամ, որի շրջանակներում իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

3.1 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) կողմից տրամադրվող «Կովկասի պահպանվող տարածքների աջակցության ծրագիր-Հայաստան (Էկոտարածաշրջանային ծրագիր-Հայաստան, 3-րդ փուլ)» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է բնական պաշարների և պահպանվող տարածքների կառավարումը, հարակից գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը, Հարավային Կովկասում կենսաբազմազանության պահպանումը: Ծրագրի իրականացումը կնպաստի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում կենսոլորտային տարածքի ստեղծմանը՝ 2021թ. նախատեսվում է 2,093,0 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,574. 1 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 518,9 մլն դրամ:

3.2 «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 208.23 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափին համապատասխան:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մաքրել Սևանա լճի շրջակայքի 271 հա ջրածածկ անտառտնկարկներ:

3.3 «Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 7.6 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի չափաքանակին համապատասխան:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Սևանա լճի ջրահավաք ավազանի կենդանական ռեսուրսների (ձկան և խեցգետնի) պաշարների հաշվառման աշխատանքներ, այդ թվում ներկա վիճակի, տարածական տեղաբաշխման, կենսաբանական և էկոլոգիական հատկանիշների բացահայտում:

3.4 Բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեության ապահովմանն ուղղված միջոցառումների համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,031.36 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի չափաքանակին համապատասխան:

Վերոգրյալ հատկացումների շրջանակներում «Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկերում, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներում, «Սոսու պուրակ», «Զանգեզուր» և «Զիկատար» արգելավայրերում, ինչպես նաև «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում կատարվելու են բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման դիտանցի ապահովումը, ինչպես նաև տնկարկների պահպանության և պաշտպանության իրականացումը:

3.5 «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի պահպանման» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 7.0 մլն դրամ՝ ՀՀ 2020թ. պետական բյուջեի չափաքանակին համապատասխան:

4. «Անտառների կառավարում» ծրագիր

Ծրագրի համար Նախագծով (առանց ապարատի ծախսերի) նախատեսվում է հատկացնել 1,933.7 մլն դրամ, որի շրջանակներում իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

4.1 «Անտառպահպանական ծառայություններ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,335.5 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի չափաքանակին համապատասխան:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի իրավասության ներքո գտնվող անտառային 342,400 հա տարածքների պահպանում:

4.2 «Անտառների կադաստրի վարում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 15.0 մլն դրամ՝ ՀՀ 2020թ. պետական բյուջեի չափաքանակին համապատասխան:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է անտառների հաշվառման և անտառային պետական կադաստրի վարում 342,400 հա տարածքում:

4.3 «Անտառների վնասակար օրգանիզմների դեմ պայքար» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 43.7 մլն դրամ՝ ՀՀ 2020թ. պետական բյուջեի չափաքանակին համապատասխան:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի անտառածածկ տարածքներում վնասատուների և հիվանդությունների դեմ պայքար շուրջ 5400 հա տարածքում:

4.4 «Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ» միջոցառման գծով նախատեսված է 413.8 մլն դրամ՝ անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների իրականացման համար՝ ՀՀ 2020թ. պետական բյուջեի չափաքանակին համապատասխան:

4.5 «Անտառկառավարման պլանների կազմում» միջոցառման գծով ներկայացվել է 125.7 մլն դրամ՝ անտառկառավարման պլանների կազմման աշխատանքներ՝ ՀՀ 2020թ. պետական բյուջեի չափաքանակին համապատասխան:

5. «Բնապահպանական նմուշների պահպանություն և ցուցադրություն» ծրագիր

Ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 344.87 մլն դրամ, որի շրջանակներում իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

5.1 «Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն» միջոցառման գծով Նախագծով նախատեսվում է հատկացնել 42.3 մլն դրամ՝ ՀՀ 2020թ. պետական բյուջեի չափաքանակի 50.6 մլն դրամի դիմաց: Ծախսերը նվազել են 8.3 մլն դրամով, որը պայմանավորված է ծախսային գերակայություններով, առաջնահերթություններով:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է «Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի իրավասության ներքո գտնվող Հայաստանին բնորոշ բնության օբյեկտների նմուշների պահպանում, ֆոնդերի թարմացում, նմուշների ցուցահանդեսների կազմակերպում:

5.2 «Կենդանաբանական այգու ցուցադրություններ» միջոցառման գծով Նախագծով նախատեսվում է հատկացնել 302.6 մլն դրամ՝ ՀՀ 2020թ. պետական բյուջեի չափաքանակի

302.8 մլն դրամի դիմաց: Ծախսերը նվազել են 0.2 մլն դրամով, որը պայմանավորված է ծախսային գերակայություններով, առաջնահերթություններով:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է աջակցություն Երեանի քաղաքային համայնքին մշակութային ժամանցի միջոցառումների իրականացման նպատակով, որը իրականացվում է «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի միջոցով:

Այս ոլորտում Նախագծով (առանց ապարատի ծախսերի) նախատեսվող բյուջետային ծախսերի համեմատությունը ՀՀ 2019 թվականի բյուջետային տարվա փաստացի և ՀՀ 2020 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 15 աղյուսակում:

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

ՀՀ էկոնոմիկայի նախարարության գծով (առանց կառավարման ապարատի և ենթավարկի) Նախագծով նախատեսվում է հատկացնել 32,242.3 մլն դրամ: Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

1. «Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է **«Տնտեսական հետազոտություններ և վերլուծություններ»** միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 27.4 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի նպատակն է նախանշել ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականության շրջանակի ձևավորման գործընթացի համար անհրաժեշտ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման ընթացիկ և հեռանկարային միտումների, ճյուղային համամասնությունների ու կառուցվածքային տեղաշարժերի բացահայտման, տնտեսական զարգացման ցուցանիշների կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումների իրականացման աշխատանքների հիմնական ուղղությունները:

2. «Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

2.1 «Ստանդարտների մշակման ծառայություններ» միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 14.1 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

ա) «Ազգային ստանդարտների մշակում»,

բ) «Միջազգային, եվրոպական և միջպետական ստանդարտացման կազմակերպությունների հետ համագործակցության և աշխատանքների կազմակերպում»,

գ) «Ստանդարտացման ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների կազմակերպում»:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության ինտեգրումը ստանդարտացման բնագավառի միջազգային և եվրոպական համակարգերին, որը կնպաստի սպառողների շահերի պաշտպանությանը անվտանգ ապրանքների ձեռքբերման հարցերում, հայրենական արտադրողների կողմից մրցունակ ապրանքների արտադրմանը և ծառայությունների մատուցմանը:

2.2 «Պետական աջակցություն ՀՀ հավատարմագրման համակարգին» միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 16.7 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի նպատակը միջազգային և եվրոպական հավատարմագրման համակարգերին ինտեգրումն է, այդ թվում հավատարմագրման ազգային մարմնի կայացումը և հավատարմագրման արդյունքների փոխճանաչման բազմակողմանի համաձայնագրերում հավատարմագրման մարմնի մասնակցությունը, ինչը կվերացնի առևտրային խոչընդոտները, կապահովի ապրանքների ազատ տեղաշարժը, կբացառի նույն ապրանքի կրկնակի փորձարկման և կրկնակի սերտիֆիկացման անհրաժեշտությունը և դրանով կնպաստի տնտեսության զարգացմանը:

3. «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը» ծրագրի շրջանակներում նախատեսվում է **«ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում»** միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 183.1 մլն դրամ՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի նպատակն է ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային հնարավորությունների, նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների, գործարար ուսուցողական, տեղեկատվական, տեխնիկական և խորհրդատվական ծառայությունների մատուցման հնարավորությունների, ինչպես նաև ՓՄՁ սուբյեկտների գործունեության շրջանակների ընդլայնում և նրանց մրցունակության բարձրացումը:

4. «Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի» շրջանակներում նախատեսվում է.

4.1 «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումները», որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 528.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են իրականացնել հետևյալ ենթամիջոցառումները.

ա) «Գործարար համաժողովներին (ֆորումների), ինչպես նաև այլ համանման միջոցառումներին մասնակցություն և (կամ) կազմակերպում»,

բ) «Մշակող արդյունաբերության ոլորտների ընկերություններին օժանդակության ցուցաբերում՝ ֆինանսական գործիքների կիրառմամբ»,

գ) «Հայկական ապրանքների՝ նպատակային շուկաներում առաջմղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում»,

դ) «Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում»:

Ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ սահմանված երկարաժամկետ հեռանկարում նպաստել վերամշակող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացմանը, արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների հավասարակշռված և փուլային միջոցառումների իրականացմանը:

4.2 «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում ներդրումային և ՊՄԳ ծրագրերի իրականացմանը» միջոցառման, որի համար Նախագծով

նախատեսվում է հատկացնել 867.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի հիմնական նպատակն է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավում, ներդրողներին խորհրդատվության և աջակցության տրամադրում, օտարերկրյա ներդրումային ծրագրերին բաժնեմասնակցութուն, ՊՄԳ ոլորտի զարգացման խթանում, ՊՄԳ ծրագրերի զարգացման աջակցություն:

5. «Զբոսաշրջության զարգացման ծրագրի» ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել **«Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը»** միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 200.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել զբոսաշրջային ոլորտի հետևյալ ենթամիջոցառումները.

ա) Ակտիվ և թիրախային մարքեթինգային և խթանման միջոցառումների իրականացում,

բ) Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, փաթեթավորում և խթանում,

գ) Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում,

դ) Միջազգային համագործակցություն՝ իրավապայմանագրային պարտավորությունների իրականմացում, միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների կողմից կազմակերխվող միջոցառումներին մասնակցություն:

6. «Գյուղատնտեսության խթանման ծրագիր» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 6,113.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

6.1 «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացմանը» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 300.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման հիմնական նպատակներն են գինեգործական արտադրանքի որակի բարելավումը, հայկական գինու ճանաչելիության բարձրացումն ինչպես արտերկրում այնպես էլ երկրի ներսում, վաճառքի ծավալների ընդլայնումը ներքին շուկայում, արտահանման ծավալների ավելացումը:

6.2 «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական ծրագրերի իրականացմանը» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 153.2 մլն դրամ:

Միջոցառման նպատակն է հանրապետության տարածքում կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ պատվաստված անասնագլխաքանակի կայուն վարակամերժության ֆոնի ստեղծումը և պահպանումը, անասնաբուժասանիտարական տեսակետից բարձրորակ անասնապահական մթերքի և հումքի արտադրության ապահովումը, կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանությունը:

6.3 «Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 4,027.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 2,151.0 մլն դրամի դիմաց կամ 1,876.0 մլն

դրամով ավել, որը պայմանավորված է կորոնավիրուս հիվանդության հետևանքով գյուղատնտեսական վարկերի պայմանների փոփոխությամբ (բարելավմամբ):

Միջոցառումն ուղղված է գյուղական համայնքներում գյուղատնտեսության համար առաջնահերթ համարվող ոլորտներում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացմանը:

6.4 «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,633.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 998.9 մլն դրամի դիմաց կամ 634.1 մլն դրամով ավել, որը պայմանավորված է կորոնավիրուս հիվանդության հետևանքով գյուղատնտեսական վարկերի պայմանների փոփոխությամբ (բարելավմամբ):

Միջոցառման նպատակը գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ոլորտում զբաղված իրավաբանական անձանց պտուղբանջարեղենի և խաղողի մթերումների նպատակով տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության բարձրացումն է, որի արդյունքում կապահովվի գյուղատնտեսական մթերքների գնման դիմաց գյուղացիական տնտեսություններին կատարվող վճարումների ժամանակին կատարումը, կբարձրանա գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրանքի մրցունակության մակարդակը, կավելանան գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրանքի արտադրության ու արտահանման ծավալները, կաճի հանրապետության մշակող արդյունաբերության արտադրանքի արտադրության ծավալում ագրովերամշակման արտադրության արտադրանքի մասնաբաժինը:

7. «Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 424.6 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

7.1 «Բուսասանիտարիայի ծառայությունների, հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների իրականացում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 108.4 մլն դրամ:

Միջոցառման իրականացումն ուղղված է գյուղատնտեսության ոլորտի հողերի բերրիության պահպանման և բարձրացման ընդհանուր նպատակի կատարմանը, որի արդյունքում կճշտվի բույսերի վնասակար օրգանիզմներով վարակվածության արեալը, ինչը նվազագույն քանակի կհասցնի ոչ նպատակային քիմիական պայքարի աշխատանքները:

7.2 «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 41.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել հանրապետությունում առավել զանգվածային տարածված և վտանգավոր օրգանիզմների դեմ բույսերի պաշտպանության միջոցառումներ, այդ թվում պայքար մկնանման կրծողների և մորեխների, ինչպես նաև լոլիկի հարավամերիկյան ցեց վնասատուի դեմ:

7.3 «Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման միջոցառումներ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 48.1 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման իրականացումը հնարավորություն կտա ստանալ բարձրորակ, հիվանդություններից և վնասատուներից զերծ սերմեր և տնկանյութ: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել սելեկցիոն նվաճումների պաշտպանության ապահովում, բույսերի սորտային կազմի ընդլայնում, ցանքատարածությունների ֆիտոսանիտարական վիճակի վատթարացման, հիվանդությունների, մոլախոտերի և վնասատուների զանգվածային բազմացման կանխարգելում:

7.4 «Բուսասանիտարական համակարգի բարելավում և մասնագիտական գիտելիքների բարձրացմանն աջակցություն» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 4.3 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերման և դրանց դեմ պայքարի միջոցառումների իրականացման մեթոդական ուղեցույցների մշակում և տպագրում, ինչպես նաև բուսասանիտարիայի տեսուչների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում:

7.5 «Գյուղատնտեսական մշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննության միջոցառումներ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 27.8 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառմամբ նախատեսվում է բույսերի կարանտինի, առավել վտանգավոր վնասակար օրգանիզմների և թաքնված վարակի հայտնաբերմանն ուղղված, գյուղատնտեսական մշակաբույսերի, բույսերի պաշտպանության միջոցների ազդող նյութի որոշման նպատակով լաբորատոր փորձաքննությունների իրականացում:

7.5 «Հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացմանն աջակցություն» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 195.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման նպատակը հանրապետության տարածքում աշնանացան ցորենի, գարնանացան գարու, ոլոռի, ոսպի, սիսեռի, առվույտի և կորնգանի սերմնաբուծության ու սերմարտադրության զարգացումն է, որի արդյունքում կավելանան հանրապետության տարածքում արտադրվող բարձր վերարտադրության հացահատիկային, հատիկընդեղեն և կերային մշակաբույսերի սերմնանյութի արտադրական ծավալները, կբարձրանա տեղական սերմնանյութով ինքնաբավության մակարդակը:

8. «Անասնաբուժական ծառայություններ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 2,027.6 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

8.1 «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,448.4 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառումն ուղղված է անասնահամաճարակային կայուն իրավիճակ ստեղծելու և պահպանելու նպատակով կենդանիների վարակիչ հիվանդությունների, այդ թվում կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների (դաբաղ, սիբիրախտ, նոդուլյար մաշկաբորբ, խոզերի ժանտախտ, բրադզոտ, պաստերելյոզ, բրուցելյոզ, տուբերկուլյոզ, լեյկոզ, խշխշան պալար (էմկար), թռչունների կեղծ ժանտախտ և մեղուների

վարրոատոզ) կանխարգելմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման համար կենսապատրաստուկների ձեռքբերմանը և անասնաբուժական մասնագետների վարձատրությանը:

8.2 «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 338.9 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման նպատակն է կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային վիճակի բարելավումը, մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պահպանումը: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների և վարակամերժության աստիճանի որոշմանն ուղղված լաբորատոր փորձաքննությունների իրականացում, կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննությունների իրականացում:

8.3 «Դաբաղ հիվանդության շճահետազոտություն» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 10.2 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման նպատակը դաբաղ հիվանդության դեմ պատվաստումների որակի և շճաբանական հետազոտությունների վրա հիմնված հիվանդության հնարավոր ներթափանցման ռիսկերի գնահատումն է:

8.5 «Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 230.0 մլն դրամ՝՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 750.0 մլն դրամի դիմաց կամ 520.0 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է 2020թ. գյուղատնտեսական կենդանիների համարակալման համակարգի ներդրումից հետո միայն պահպանման գծով ծախսերի նախատեսմամբ:

Միջոցառման նպատակը Հայաստանի Հանրապետությունում ներդնել խոշոր եղջերավոր կենդանիների համատարած համարակալման, հաշվառման և անձնագրավորման համակարգ:

9. «Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 2,603.2 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

9.1 «Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 240.7 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 384.3 մլն դրամի դիմաց կամ 143.6 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է փաստացի արդյունքների գնահատմամբ:

Միջոցառման նպատակը մատչելի նպատակային վարկերի տրամադրման միջոցով խաղողի, ինտենսիվ պտղատու և հատապտղատու այգետնկումների խթանմամբ հանրապետությունում պտղաբուծության և խաղողագործության զարգացումն է, խաղողի, պտղի և հատապտղի արտադրության ծավալների ավելացումը, պտուղների և հատապտուղների ներմուծման փոխարինումը և արտահանման ծավալների ավելացումը:

9.2 «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 285.1 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 192.5 մլն դրամի դիմաց կամ 92.6 մլն դրամով ավել՝ պայմանավորված կորոնավիրուս հիվանդության հետևանքով գյուղատնտեսական վարկերի պայմանների փոփոխությամբ (բարելավմամբ):

Միջոցառման նպատակը գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես լիզինգային մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումն է:

9.3 «Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 550.6 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 450.4 մլն դրամի դիմաց կամ 100.2 մլն դրամով ավել՝ պայմանավորված կորոնավիրուս հիվանդության հետևանքով գյուղատնտեսական վարկերի պայմանների փոփոխությամբ (բարելավմամբ):

Միջոցառման հիմնական նպատակն ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ ֆինանսական վարձակալության մեխանիզմների կիրառմամբ անասնաբուծության, բուսաբուծության, ջերմոցային, սառնարանային տնտեսություններում (այդ թվում՝ կաթի մթերման կայաններ, սպանդանոցային տնտեսություններ և այլն) օգտագործվող սարքավորումների մատակարարումն է:

9.4 «Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 95.8 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 412.5 մլն դրամի դիմաց կամ 316.7 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է փաստացի արդյունքների գնահատմամբ:

Միջոցառման նպատակը ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումն է՝ արդյունքում գյուղատնտեսական հողատարածքներում ոռոգման արդյունավետ եղանակների ներդրման խթանումը, ջրային ռեսուրսների խնայողաբար և արդյունավետ օգտագործումը, հողօգտագործողների եկամուտների աճի ապահովումը:

9.5 «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 65.5 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 229.8 մլն դրամի դիմաց կամ 164.3 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է փաստացի արդյունքների գնահատմամբ:

Միջոցառման նպատակը գյուղատնտեսության ոլորտի կորուստների ռիսկերը մեղմելու նպատակով կարկտապաշտպան ցանցերի ներդրումը խթանելու համար գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումն է, արդյունքում պտղատու և խաղողի այգիների կարկուտից արդյունավետ պաշտպանությունը, տնտեսավարողների եկամուտների աճի ու այգեգործության արդյունավետության բարձրացումը:

9.6 «Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար պետական աջակցություն» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 50.0 մլն

դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 140.2 մլն դրամի դիմաց կամ 90.2 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է փաստացի արդյունքների գնահատմամբ:

Միջոցառման նպատակը կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով գյուղատնտեսական հողատարածքներում ոռոգման արդիական համակարգերի ներդրման խթանումն է՝ արդյունքում ջրային ռեսուրսների խնայողաբար և արդյունավետ օգտագործումը, հողօգտագործողների եկամուտների աճի ապահովումը:

9.7 «Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագիր» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 67.1 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված չափաքանակին համապատասխան:

Միջոցառման նպատակը կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով խաղողի, ինտենսիվ պտղատու և հատապտղատու այգետնկումների խթանմամբ հանրապետությունում պտղաբուծության և խաղողագործության զարգացումն է, խաղողի, պտղի և հատապտղի արտադրության ծավալների ավելացումը, պտուղների և հատապտուղների ներմուծման փոխարինումը և արտահանման ծավալների ավելացումը:

9.8 «Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիր» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 151.7 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 200.5 մլն դրամի դիմաց կամ 48.8 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է փաստացի արդյունքների գնահատմամբ:

Միջոցառման նպատակը Հայաստանի Հանրապետությունում տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով տոհմային ԽԵԿ-ի մատակարարումն է:

9.9 «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցություն» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 453.6 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 630.0 մլն դրամի դիմաց կամ 176.4 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է փաստացի արդյունքների գնահատմամբ:

Միջոցառման նպատակը գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման ծախսերի մասնակի փոխհատուցումն է, արդյունքում կենդանիների պահվածքի պայմանների բարելավումը՝ բարձրացնելով կենդանիների մթերատվության ցուցանիշները:

9.10 «Փոքր և միջին ջերմոցային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիր» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 450.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 1,125.0 մլն դրամի դիմաց կամ 675 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է փաստացի արդյունքների գնահատմամբ:

Միջոցառման նպատակը գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից փոքր և միջին ջերմատների կառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման ծախսերի մասնակի փոխհատուցումն է, արդյունքում պաշտպանված գրունտի մակերեսի, ջերմատնային

տնտեսությունների արտադրանքի արտադրության ծավալների, գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացումը:

9.11 «Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 172.3 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 364.1 մլն դրամի դիմաց կամ 191.8 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է փաստացի արդյունքների գնահատմամբ:

Միջոցառման նպատակը տոհմային ՄԵԿ-ի ձեռքբերման նպատակով գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորումն է՝ բարձրարժեք տոհմային ոչխարների և այծերի ձեռքբերան և բարձր մթերատու հոտերի ձևավորման խրախուսման, տոհմային գործի զարգացման նպատակով:

9.12 «Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման նպատակով պետական աջակցություն» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 20.7 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 310.5 մլն դրամի դիմաց կամ 289.8 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է փաստացի արդյունքների գնահատմամբ:

Միջոցառման նպատակը տոհմային ՄԵԿ-ի ձեռքբերման նպատակով գյուղատնտեսությունում տնտեսավարողների կատարված ծախսերի փոխհատուցումն է՝ բարձրարժեք տոհմային ոչխարների և այծերի ձեռքբերան և բարձր մթերատու հոտերի ձևավորման խրախուսման, տոհմային գործի զարգացման նպատակով:

10. «Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 190.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

10.1 «Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 20.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված չափաքանակին համապատասխան:

Միջոցառմամբ նախատեսվում է սննդամթերքի անվտանգության և որակի ապահովման բնագավառներում միջազգային չափորոշիչների պահանջներին համապատասխան ունենալ հնարավորություն իրականացնելու լաբորատոր փորձաքննություններ, բնակչությանն անասնաբուժասանիտարական, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված պահանջների տեսակետից անվտանգ ու բարձրորակ սննդամթերքով և հումքով ապահովում, սննդի շղթայի փուլերում վտանգավոր սննդամթերքի հայտնաբերում, դրա հետագա իրացման կանխում և սահմանված կարգով օգտահանում կամ ոչնչացում:

10.2 «Բուսական ծագման մթերքներում պեստիցիդների, նիտրատների, ծանր մետաղների և գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մնացորդների մոնիթորինգ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 45.8 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված չափաքանակին համապատասխան:

Միջոցառման նպատակն է մոնիթորինգի ենթարկել Հայաստանի Հանրապետությունում արտադրվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն ներմուծվող բուսական ծագման մթերքում պեստիցիդների, նիտրատների և ծանր մետաղների մնացորդային քանակները՝

հավաստելու, որ ինչպես ներմուծված, այնպես էլ տեղական արտադրության բուսական ծագում ունեցող սննդամթերքը չի պարունակում պեստիցիդների, նիտրատների, ծանր մետաղների մնացորդային քանակներ և գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներ կամ վերջիններիս պարունակությունը չի գերազանցում ՀՀ օրենդրությամբ սահմանված մնացորդային քանակները:

10.3 «Կենդանական ծագման մթերքում մնացորդային նյութերի հսկողության մոնիթորինգ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 125.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված չափաքանակին համապատասխան:

Միջոցառման նպատակն է մնացորդային նյութերի հսկողության իրականացում ձկան, մեղրի, կաթի և խոշոր եղջերավոր կենդանիների, խոզի, թռչնի մսի մեջ, որը կբացահայտի և կհավաստի, որ նշված կենդանական ծագում ունեցող մթերքները պարունակում են կամ չեն պարունակում արգելված նյութեր կամ հայտնաբերված նյութերի պարունակությունը չի գերազանցում ՀՀ օրենդրությամբ սահմանված առավելագույն թույլատրելի մնացորդային քանակների սահմանաչափերը:

11. «Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել **«Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում»** միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 3,300.0 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է տնտեսավարողների համար ստեղծել մատչելի ֆինանսական միջոցների հասանելիության հնարավորություն՝ պահանջարկի փոփոխվող պայմաններին արձագանքելու, արտաքին մարտահրավերներին դիմակայելու և ըստ այդմ գործունեությունը շարունակելու կամ վերադասավորվելու ու փոփոխված տնտեսական իրավիճակին հարմարվելու և զարգացման ռազմավարությունը ճշգրտելու գործողություններ իրականացնելու համար:

Միաժամանակ նախատեսվում է իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր, որի նպատակներն են՝

1. Նպաստել ընտրված մարզերի տեղական տնտեսություններում զբոսաշրջության աճին, որը տեղի կունենա ենթակառուցվածքներում ներդրումներ, քաղաքային վերածնունդ, մշակութային ժառանգության վերականգնում, հմտությունների զարգացում, տուրիստական պրոդուկտների զարգացում, զանազանում և մասնավոր հատվածի ներդրումների խթանում ապահովող համալիր մոտեցման իրականացման միջոցով:

2. Օգնել ստեղծել և հիմնել զբոսաշրջային շրջաններ, որոնք կմիացնեն ընտրված մարզերի բազմաթիվ վայրեր:

Միասին այս գործողությունները կօգնեն ավելի մեծ թվով այցելուներ գրավել դեպի մարզեր և մեծացնել իրենց ծախսերն, իսկ դա իր հերթին կխթանի աշխատատեղերի ստեղծումը և տեղական տնտեսական աճը՝ 2021թ. 7,178.5 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 5,742.8 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 1,435.6 մլն դրամ:

2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր, որի

նպատակն է աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքներին արոտօգտագործման/անասնապահական առավել մրցունակ և կայուն համակարգերի ստեղծման հարցում՝ 2021թ.-ին նախատեսվում է 2,579,8 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,261,8 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 317,9 մլն դրամ:

3. Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիր, որի նպատակն է նվազեցնել գյուղական աղքատությունը Հայաստանում, ինչպես նաև ստեղծել ավելի բարեկարգ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքներ: Մասնավորապես.

ա/ Գյուղական ֆինանսավորման աջակցություն (իրականացվում է ԳՖԿ-ի և ՀԳՏՏՋՀ-ի միջոցով)

բ/ գյուղական ենթակառուցվածքների վերականգնում (ոռոգման և բազմանպատակ կենցաղային ջրամատակարարման համակարգեր),

գ/ Ֆերմերների իրազեկության բարձրացում և աջակցություն,

դ/ Ծրագրի կառավարում՝ 2021թ.-ին նախատեսվում է 283,9 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 236,3 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 47,6 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում նախատեսված են նաև վարկավորմանն ուղղվող միջոցներ՝ 1,453. 5 մլն դրամ:

4. ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիր, որի նպատակն է նվազեցնել գյուղական աղքատությունը Հայաստանում, ինչպես նաև ստեղծել ավելի բարեկարգ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքներ: Մասնավորապես.

ա/ Գյուղական ֆինանսավորման աջակցություն (իրականացվում է ԳՖԿ-ի և ՀԳՏՏՋՀ-ի միջոցով)

բ/ Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում, մասնավորապես ոռոգման և բազմանպատակ կենցաղային ջրամատակարարման համակարգեր,

գ/ Ֆերմերների իրազեկության բարձրացում և աջակցություն,

դ/ Ծրագրի կառավարում՝ 2021թ.-ին նախատեսվում է 164,7 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 146,0 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 18,7 մլն դրամ:

5. Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» դրամաշնորհային ծրագիր, որը փոխկապակցված է համանուն վարկային ծրագրի հետ, իրականացվում է վարկային ծրագրի ժամկետներում՝ նույն ուղղվածությամբ՝ 2021թ.-ին նախատեսվում է 198,6 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 155,8 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 42,8 մլն դրամ:

6. Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է մեծացնել Վայոց ձորի, Արարատի և Սյունիքի մարզերի ագրոէկոլոգիական առումով առավել ռիսկային տարածքների բնակիչների ընդհանուր կարողությունները՝ նշված մարզերում համայնքային դեգրադացված հողերի վերականգնման միջոցով՝ 2021թ.-ին նախատեսվում է 1,056,3 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 900,7.0 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 155,6 մլն դրամ:

7. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մոնիտորինգի և գնահատման կարողությունների զարգացման» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է ամրապնդել մոնիթորինգի և գնահատման կարողությունները՝ գյուղատնտեսական քաղաքականության փաստահավաք վերլուծություն իրականացնելու և մշակելու հնարավորություն տալու համար՝ 2021թ.-ին նախատեսվում է 471,2 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 348,8 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 122,4 մլն դրամ:

8. ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացված «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի արդյունքում ձևավորված ֆինասական միջոցների կառավարում միջոցառման նպատակն է գյուղական աղքատության կրճատումը՝ գյուղատնտեսական ոլորտի կայուն տնտեսական աճի միջոցով, գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության մեծացումը՝ ոռոգման համակարգերի ընդգրկումն ընդլայնելու և որակի բարելավման, համակարգը կառավարող մարմինների հզորացման և ֆերմերների արտադրանքի եկամտաբերությունն ավելացնելու հնարավորություններ ստեղծելու միջոցով՝ 2021թ նախատեսվում է 35,6 մլն դրամ դրամաշնորհային միջոցներ:

9. Զարգացման ֆրանսիական գործակալության աջակցությամբ իրականացվող ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում ոռոգվող գյուղատնտեսության զարգացման դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է տեխնիկական աջակցության և ներդրումների միջոցով արդի ոռոգման զարգացումը՝ վերացնելով ջրի պահեստավորման, ոռոգման ենթակառուցվածքների, հողերի կոնսոլիդացիայի և խորհրդատվական ծառայությունների հետ կապված խոչընդոտները՝ 2021թ.-ին նախատեսվում է 811,4 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 649,1 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 162,3 մլն դրամ:

10 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) հետ համատեղ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցություն միջոցառման հիմնական նպատակը ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման նախադրյալների ստեղծումը և ապահովագրական համակարգի ներդրման հիմնական մոտեցումների հստակեցումն է: Միջոցառումը նախատեսվում է իրականացնել պետական աջակցությամբ, որի շրջանակներում մասնակի կսուբսիդավորվի փորձնական ծրագրին մասնակից տնտեսավարողների ապահովագրավճարը և կցուցաբերվի կազմակերպական աջակցություն: 2021թ.-ին նախատեսվում է 507,2 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 253,6 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 253,6 մլն դրամ:

Այս ոլորտում Նախագծով (առանց կառավարման ապարատի և ենթավարկերի ծախսերի) նախատեսվող բյուջետային ծախսերի համեմատությունը ՀՀ 2019 թվականի բյուջետային տարվա փաստացի և ՀՀ 2020 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 13 աղյուսակում:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության գծով 2021 թվականի Նախագծով նախատեսվում է հատկացնել 13,051.2 մլն դրամ (առանց կառավարման ապարատի):

Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

«Տեխնիկական անվտանգության կանոնակարգում» ծրագրով նախատեսվում է «Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ» միջոցառումը, որի

համար ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի Նախագծով նախատեսվում է 46.3 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափին համապատասխան:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում տեխնածին վթարների կանխարգելումը, դրանց հետևանքների վերացումը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցումը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

«Սեյսմիկ պաշտպանության» ծրագրով նախատեսվում է «Սեյսմիկ պաշտպանության ոլորտում ծառայությունների տրամադրում» միջոցառումը, որի համար ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի Նախագծով նախատեսվում է 803.5 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված ցուցանիշից 85.1 մլն դրամով պակաս՝ պայմանավորված 2020թ. «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի սարքավորումների անվտանգ պահպանման համար 54.0 մլն դրամ և «Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն» ՄՈԱԿ-ի 6 ամսվա պահպանման համար 15,5 մլն դրամ (տարվա կտրվածքով նվազեցումը կկազմի 31,0 մլն դրամ) հատկացմամբ:

Միջոցառման նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատումը, սեյսմիկ ռիսկի նվազեցումը:

«Փրկարար ծառայություններ» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել հրդեհաշիջման, հակահրդեհային քարոզչության, բնական և տեխնածին աղետների ժամանակ բնակչության և կառույցների պաշտպանություն: Նշված միջոցառման գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 11,665.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճը կազմում է 335.1 մլն դրամ, պայմանավորված՝ աշխատանքի վարձատրության փոփոխությամբ, ՀՓՋ-ների վերանորոգմամբ, հենակետերի գազիֆիկացմամբ, փրկարար ծառայողների համազգեստի ձեռք բերմամբ, փրկարարական նյութերի և գործիքների ձեռք բերմամբ և այլն

«Փրկարար ծառայողներին և փրկարար շներին դեղորայքով ապահովում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել փրկարար ծառայողների համար անհրաժեշտ առաջին օգնության դեղորայք և վիրակապական նյութեր, ինչպես նաև փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի կինոլոգիական խմբին հատուկ որոնողափրկարարական և սակրավորական աշխատանքների իրականացման համար նախատեսված 8 փրկարարական շների պատվաստանյութեր: Նշված միջոցառման գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 0.9 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Պետական աջակցություն Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնին» (այսուհետ՝ ՄՈԱԿ) միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ, ՌԴ և երրորդ երկրների տարածքում արտակարգ իրավիճակների կանխարգելման աշխատանքների մասնակցություն և արտակարգ իրավիճակներից տուժած բնակչությանը մարդասիրական օգնության ցուցաբերում: Նշված միջոցառման գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 38.8 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճը կազմում է 31.1 մլն մլն դրամ, պայմանավորված՝ ՄՈԱԿ-ի 19 նոր հաստիքների պահպանման ծախսերի իրականացմամբ:

«Պետական ռեզերվների պահպանում», «Նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորում և պահպանում» միջոցառումների շրջանակներում նախատեսվում է

իրականացնել ՀՀ պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանում և պետական պահուստի կուտակում, ամբարում և թարմացում: Նշված միջոցառումների գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 359.7 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

ՀՀ արդարադատության նախարարություն

«Քրեակատարողական ծառայություններ» ծրագրի շրջանակներում՝

«Քրեակատարողական ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է դատապարտյալների վերահսկողության, կալանավայրերում կացության ապահովման, սոցիալ-հոգեբանական վերականգնման, ուսուցման աշխատանքների, մշակութային և մարզական միջոցառումների իրականացում:

Նշված միջոցառումների գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 11,081.8 մլն դրամ, որը ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նկատմամբ ավելացել է 1,749.2 մլն դրամով՝ պայմանավորված ՔԿՎ ծառայողների համար լրացուցիչ հավելումների նախատեսմամբ և ՔԿՎ հիմնարկներում պահվող կալանավորների համար ամբողջ տարվա կտրվածքով սննդի ծառայությունների կազմակերպմամբ:

«Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին պատշաճ բժշկական օգնություն և սպասարկման ծառայություններ» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել կալանավայրերում դատապարտյալներին բժշկական ծառայությունների մատուցում: Նշված միջոցառման գծով 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 588.6 մլն դրամ, որը ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է 117.7 մլն դրամով՝ պայմանավորված ԱԱՀ-ի գծով գումարների նվազեցմամբ (առողջապահական հիմնարկները ազատված են ԱԱՀ-ից):

«Դեղորայքի ապահովում կալանավայրերում պահվող ազատազրկվածներին» միջոցառման գծով նախատեսվում է կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերում կալանավայրերում պահվող ազատազրկվածների համար: Նշված միջոցառման գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 150.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Քրեակատարողական ծառայություններ» ծրագրի «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում» միջոցառման գծով 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 36.9 մլն դրամ՝ քրեակատարողական հիմնարկներում գտնվող իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթության ծրագրերի իրականացման նպատակով:

«Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագրի շրջանակներում իրականացվում են թվով 3 միջոցառումներ՝ «Հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում» միջոցառում, որի համար 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 213.0 մլն դրամ, «Դատավորների, դատախազների, դատավորների և դատախազների թեկնածուների ցուցակում գտնվող անձանց, դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում ծառայողների, դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման ծառայություններ» միջոցառում,

որի համար 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 237.5 մլն դրամ և «Մասնագիտական վերապատրաստում անցնող ունկնդիրներին կրթաթոշակի տրամադրում» միջոցառում, որի համար 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 44.4 մլն դրամ:

«Դատական և հանրային պաշտպանություն» ծրագրի շրջանակներում նախատեսված է «Փորձաքննությունների ծառայությունների տրամադրում» միջոցառումը: Փորձաքննությունների նշանակման և կատարման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ քրեական, քաղաքացիական և վարչական օրենսգրքերով, ինչպես նաև ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով: Վերջիններովս սահմանված է նաև փորձաքննությունների նշանակման և կատարման կարգը: Փորձաքննության արժեքի որոշման կարգը սահմանվել է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի թիվ 79-Ն որոշմամբ, իսկ ինչ վերաբերում է փորձաքննությունների կանխատեսվող քանակներին, ապա դրանք կանխատեսվում են ելնելով նախընթաց տարիների վիճակագրական տվյալներից և ենթակա են փոփոխման փաստացի նշանակվող փորձաքննությունների քանակներից:

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 220.7 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով: Հաշվարկը կատարվել է 6225 փորձաքննությունների համար, պահպանելով փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա արժեքը՝ 560 դրամ:

«Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում» ծրագրի նպատակը՝ հանրային իրազեկվածության ապահովումն է: Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են հրատարակչական, տեղեկատվության և տպագրական և թարգմանչական ծառայությունների իրականացմանը: Ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 635.6 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 639.3 մլն դրամի դիմաց:

Նախագծով ծախսերն նվազել են 3.7 մլն դրամով, կամ 0.6 տոկոսով, որը պայմանավորված է ծախսային գերակայություններով, առաջնահերթություններով:

«Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգի իրականացում» ծրագիրը հանդիսանում է նոր ծրագիր, որի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիոն իրավախախտումների բացահայտումը, կոռուպցիոն հանցագործությունների քննությունը դարձնել ավելի արդյունավետ՝ մասնագիտացված հակակոռուպցիոն մարմնի միջոցով վերջինս իրականացնելու եղանակով, ինստիտուցիոնալ հենքեր ստեղծել կոռուպցիոն գործերով նախաքննություն իրականացնող անձանց մասնագիտացման համար: Ապահովել կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի համապատասխանությունը «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի, Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի պահանջներին, ՏՀՋԿ հակակոռուպցիոն ցանցի, ԵԽ ու ԵՄ փորձագետների առաջարկություններին: Կոռուպցիոն հանցագործությունների քննության միասնականության ապահովման նպատակով մշակել կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկա:

Ծրագրի՝ «Հակակոռուպցիոն կոմիտեի շենքային պայմանների ապահովում» և «Հակակոռուպցիոն դատարանի շենքային պայմանների ապահովում» միջոցառումների համար ՀՀ 2021թ-ի համար նախատեսվել է հատկացնել 2,000,000.0 հազար դրամ՝ յուրաքանչյուր միջոցառման գծով 1,000,000.0 հազարական դրամ:

Միաժամանակ արդարադատության ոլորտում նախատեսվում է շարունակել և

իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագիրը.

ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «Աջակցություն օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոնի գործունեությանը» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է հզորացնել մասնգիտական կադրերը և ինստիտուցիոնալացնել շահագրգիռ կողմերի խորհրդատվության արդյունավետ մեխանիզմները: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

-Ամրապնդել կենտրոնի մասնագիտական կադրային ապահովումը

-Համակարգային ձևով կիրառել շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունավետ մեխանիզմները

2021թ. նախատեսվում է 73,648.2 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 9,468.4 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 64,179.8 մլն դրամ:

ՀՀ պաշտպանության նախարարություն

«Ռազմական կարիքների բավարարում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարության ընթացիկ գործունեության ապահովում: ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նշված միջոցառման համար նախտեսվել է 217,895.5 մլն դրամ, որի աճը ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նկատմամբ կազմում է 10,136.5 մլն դրամ: Նախատեսված գումարի ավելացումը պայմանավորված է ՀՆԱ-ի աճով:

«Ռազմական նշանակության համակարգերի պահպանում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ տարածքում տեղակայված հակաօդային ռազմական նշանակության համակարգերի պահպանում: ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նշված միջոցառման համար նախատեսվել է 1,170.2 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել պաշտպանության կարիքների համար անհրաժեշտ բնակելի, գրասենյակային և այլ նշանակության շենքերի և շինությունների պայմանների բարելավում: Վերը նշված միջոցառման գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 87,239.8 մլն դրամ, որի աճը ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նկատմամբ կազմում է 6,250.6 մլն դրամ:

«Հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է ՀՀ տարածքում իրականացնել հականականային գործողությունների ենթակա տարածքի հետազննում, քարտեզագրում, նախատեսվող ծավալի աշխատանքների հստակեցում և իրականացվող միջոցառումների պլանավորում: Վերը նշված միջոցառման գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 338.9 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակներում իրականացվում է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելիս կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելիս վնասվածք

կամ խեղում կամ դրանց հետևանքով հիվանդություն ստացած զինծառայողների երկարաժամկետ վերականգնողական բուժումը, ինչպես նաև մի շարք հարբժշկական միջոցառումներ:

Միջոցառման գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 132.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարից 27.4 մլն դրամով կամ 26.2%-ով ավել, որը պայմանավորված է ծրագրային միջոցառումների շտկմամբ և ներծրագրային վերաբաշխմամբ:

«Հիգիենիկ և համաճարակային փորձագիտական ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում կշարունակվի ՀՀ զինված ուժերում սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանը, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների ու քիմիական թունավորումների դեմ պայքարը, ինչպես նաև կանխարգելման գործընթացին ուղղված աշխատանքները:

Միջոցառման գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 37.3 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարից 5.0 մլն դրամով կամ 15.5%-ով ավել, որը պայմանավորված է՝ ռազմաբժշկական հաստատություններում բժշկական բույթի թափոնների ոչնչացումը սանիտարական նորմերին և պահանջներին համապատասխանեցնելու հանգամանքով:

«Հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումների պահպանման ծառայություններ» միջոցառման շրջանակներում ռազմաբժշկական հաստատություններում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև լաբորատոր և գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացման անընդհատությունը և անվտանգությունն ապահովելու նպատակով մշտապես իրականացվում է բժշկական սարքավորումների արդիականացում, դրանց սպասարկում, կարգաբերում, ընթացիկ և կապիտալ վերանորոգում, որի գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 40.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Դեղորայքի տրամադրում զորամասային և հոսպիտալային օղակներում բուժօգնություն ստացողներին» միջոցառման շրջանակներում բոլոր հոսպիտալներում, պոլիկլինիկաներում, առանձին բժշկական ջոկատներում և զորամասերի բուժկետերում բժշկական օգնություն և սպասարկում ստացողներին տրամադրելու նպատակով կենտրոնացված կարգով իրականացվում է դեղերի, վիրակապական և ծախսվող այլ միջոցների ձեռքբերում:

Միջոցառման գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 1,496.2 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարից 20.9 մլն դրամով կամ 1.4%-ով պակաս:

«Հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումներով համալրում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է զորամասերի բուժկետերը և ռազմաբժշկական հաստատությունները համալրել ժամանակակից բժշկական սարքավորումներով և գույքով, որոնք հնարավորություն են տալու մեծացնել մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ծավալները, ապահովել բարձր որակ, բուժօգնության հասանելիություն և մատչելիություն:

Միջոցառման գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 1,129.8 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարից 970.5 մլն դրամով ավել, որը պայմանավորված է զորամասերի բուժկետերի և ռազմաբժշկական հաստատությունների համալրմամբ ժամանակակից բժշկական սարքավորումներով և գույքով:

ՀՀ Ոստիկանություն

«Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման, հանցագործությունների և այլ իրավախախտումների նախականխման, կանխման, խափանման, հայտնաբերման և բացահայտման ծառայություններ: Վերը նշված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 24,855.9 մլն դրամ, որը ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 269.7 մլն դրամով՝ պայմանավորված զին ծառայողների բնակության վարձավճարով:

«Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի N 1008 որոշման N 1 հավելվածով հաստատված պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների պահպանությունը և անվտանգության ապահովումը: Նշված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 4,049.4 մլն դրամ, ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառման գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 7,175.6 մլն դրամ:

«Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ քաղաքացիների անձնագրերի ձևակերպում, ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու, դադարեցնելու, փախստականի կարգավիճակ ստացած, ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրացիներին մուտքի վիզաներ, կացության կարգավիճակներ տալու մասին գործերի վարումը: Նշված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 2,021.6 մլն դրամ:

«Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող ամբուլատոր-պոլիկլինիկական և հոսպիտալային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց: Նշված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 38.7 մլն դրամ, որը ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով հաստատված գումարից պակաս է 31.5 մլն դրամով կամ 44.9%-ով, պայմանավորված՝ ՀՀ ոստիկանության բուժվարչության հոսպիտալը լուծարելու և այն ՀՀ առողջապահության նախարարությանը փոխանցելու հանգամանքով:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ճանապարհային երթևեկության կարգավորում,

անվտանգության ապահովում, ճանապարհապարեկային ծառայության իրականացում, ճանապարհատրանսպորտային պատահարների և տվյալ բնագավառում վարչական իրավախախտումների պետական հաշվառում, վարորդական վկայականների տրամադրում: Նշված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 12,406.3 մլն դրամ:

«Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել տրանսպորտային միջոցների պետհամարանիշների ձեռքբերում և տրամադրում: Նշված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 770.4 մլն դրամ, որը ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է 334.6 մլն դրամով՝ պայմանավորված միջծրագրային վերաբաշխմամբ:

«ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կարիքի բավարարում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ճանապարհային ոստիկանության և այլ ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի ապահովում: Նշված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 176.9 մլն դրամ:

«Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ոստիկանության մարմինների աշխատանքների պլանավորում, համակարգում, ծրագրային միջոցառումների մշակում և իրականացում, միջգերատեսչական և միջազգային համագործակցության ապահովում, համընդհանուր և ոլորտային աշխատանքների իրականացում, մոնիտորինգ և հսկողություն: Նշված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 11,011.4 մլն դրամ, որը ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է 795.1 մլն դրամով՝ պայմանավորված միջծրագրային վերաբաշխումներով:

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

«Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ անվտանգությանն սպառնացող վտանգի մասին տեղեկատվության ստացում, վերլուծում, վտանգի կանխատեսում, վտանգի կանխման և չեզոքացման վերաբերյալ առաջարկությունների մշակում: Վերը նշված միջոցառման գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է հատկացնել 23,312.1 մլն դրամ, որը ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 13,400.0 մլն դրամով՝ պայմանավորված ծառայության բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությամբ:

«ՀՀ տարածքում երկաթուղիով իրականացվող միջպետական ռազմական փոխադրումների, երկաթուղային կայարաններում կատարվող սպասարկման ծառայություններ» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև կնքված համաձայնագրերի համաձայն ՀՀ-ում տեղակայված ՌԴ զորամիավորումների հասցեով ՀՀ տարածքում երկաթուղիով

իրականացվող միջպետական ռազմական փոխադրումներ: Վերը նշված միջոցառման գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից մատուցված ծառայությունների փոխհատուցման նպատակով հատկացնել 14.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Ազգային անվտանգության համակարգի տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ազգային անվտանգության համակարգի, ստորաբաժանումների համար անհրաժեշտ վարչական սարքավորումների ձեռք-բերում: Վերը նշված միջոցառման գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 53.8 մլն դրամ, որը ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է 141.1 մլն դրամով:

«Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր» միջոցառման շրջանակներում իրականացվում է Հայաստանի Հանրապետության սահմանային անվտանգության ապահովում: Նշված միջոցառման գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 7,619.4 մլն դրամ, որը ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 293.1 մլն դրամով (ծախսերի ավելացումը պայմանավորված է տվյալ տարվա գնաճով):

«Ազգային անվտանգության համակարգի ստորաբաժանումների համար դեղորայքի ձեռքբերում» միջոցառման գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 26.8 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Պետական պահպանության ծառայություններ» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել բարձրաստիճան պաշտոնատար անձանց և Հայաստանի Հանրապետությունում գտնվող բարձրաստիճան հյուրերի անվտանգության ապահովում: Վերը նշված միջոցառման գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 3,705.7 մլն դրամ, որը ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է 176.7 մլն դրամով:

«Դեղորայքի տրամադրում պետական պահպանության ծառայությանը» միջոցառման շրջանակում նախատեսվում են կենտրոնացված կարգով պետական պահպանության ծառայության կարիքների համար անհրաժեշտ դեղորայքի ձեռքբերում, որի գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 1.1 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

ՀՀ վարչապետի աշխատակազմ

ՀՀ վարչապետի աշխատակազմի գծով նախագծով (առանց ապարատի ծախսերի) նախատեսվում է 15,698.0 մլն դրամ: Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

1. «ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

1.1 «Աջակցություն ՀՀ կառավարության աշխատակազմի ներքո գործող Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարությանը» միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 23.6 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի իրականացման նպատակն է Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը լիարժեք անդամակցելու հանձնառության ապահովումը, ազգային քաղաքականության ապահովման և անդամակցության վճարների իրականացման միջոցով:

1.2 «Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածությանը ՀՀ անդամակցության շրջանակում միասնական տեղեկատավական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի ստեղծում և պահպանում» միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 92.1 մլն դրամ, ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 20-ի N 217-Ա որոշման համաձայն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն ճանաչվել է որպես Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում ստեղծված՝ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի (ինտեգրացիոն շլյուզ)՝ ՀՀ պետական բաղադրիչի օպերատոր: Իսկ ինտեգրացիոն շլուզի սարքավորման սպասարկումն ու գործունեությունն ապահովելու համար գործող լիցենզիաների բաժանորդագրության ժամկետների լրանալու պատճառով անհրաժեշտ են նոր սարքավորումներ և ծրագրային ապահովման լիցենզիաներ:

2. «Տեսչական վերահսկողության ծրագրի» շրջանակներում նախատեսվում է.

2.1 «Արտադրանքի և որակի վերահսկողության ծառայություններ» միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 15.0 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Փորձանմուշների ձեռքբերման ծախսեր,
- Փորձանմուշների փորձարկման ծախսեր,
- Շարժական լաբորատորիայի համար անհրաժեշտ ծախսեր:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ապրանք արտադրողների և ծառայություն մատուցողների կողմից սպառողներին իրացվող արտադրանքի նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը՝ ստանդարտացման և չափագիտական նորմերի ապահովման միջոցով:

«Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին» ծրագրի նպատակը՝ նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը, հասարակական կազմակերպություններին, կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին աջակցմանը:

«Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 192.7 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 135.7 մլն դրամի դիմաց:

Ծախսերն աճել են՝ 57.0 մլն դրամով, կամ 42.0 %-ով, որը պայմանավորված է 2 նոր միջոցառումների նախատեսմամբ՝ «Աջակցություն «ՀՀ վետերանների միավորում» հասարակական կազմակերպությանը» և «Աջակցություն հասարակական կազմակերպություններին», համապատասխանաբար՝ 18.0 և 38.9 մլն դրամ:

«Հանրային իրազեկում» ծրագրի նպատակը՝ ապահովել հանրային կապերի՝ պետական մարմինների թափանցիկությունը, տեղեկատվության մատչելիությունը:

Ծրագրով նախատեսված հատկացումները ուղղվելու են հանրային իրազեկման ապահովմանը, պետական մամուլի հրատարակմանը, «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության ՀՀ մասնաբաժնի վճարմանը, տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայությունների իրականացմանը:

«Հանրային իրազեկում» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,145.9 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 1,108.9 մլն դրամի դիմաց:

Նախագծով ծախսերն աճել են՝ 37.0 մլն դրամով, կամ 3.3 %-ով, որը պայմանավորված է.

- «Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ» միջոցառման ծախսերի աճով՝ 17.7 մլն դրամով, կապված «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում սփյուռքի ստորաբաժանման ստեղծման հետ (ՀՀ կառավարության 12.03.2020 թվականի N 274-Ն որոշում):

- «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության ՀՀ մասնաբաժնի վճար» միջոցառման ծախսերի աճով՝ 19.3 մլն դրամով, կապված յուրաքանչյուր տարի մասնաբաժնի չափի ավելացման հետ՝ 10%-ով (ՀՀ Նախագահի 03.07.2007թ. N Ղ-1212 հանձնարարական):

«Տոների և հիշատակի օրերի ծրագիր»-ի նպատակը՝ տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացումը՝ ի նպաստ Ազգային ինքնության պահպանմանը:

Տոների և հիշատակի օրերի ծրագրի շրջանակներում հատկացումները կուղղվեն 2 միջոցառումների իրականացմանը՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման տարեդարձին նվիրված միջոցառումներ» և «Քաղաքացու օրվան նվիրված միջոցառումներ» համապատասխանաբար՝ 150.0 և 40.0 մլն դրամի չափով:

Սփյուռքի ծրագրերի գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 890.9 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 775.2 մլն դրամի դիմաց:

Ծախսերն աճել են 115.7 մլն դրամով, կամ 14.9 տոկոսով, որը հիմնականում պայմանավորված է «iԳործ» սփյուռքահայ մասնագետների ներգրավում ՀՀ պետական կառավարման համակարգում» միջոցառման ծախսերի աճով և «Հայրենադարձության ինտեգրման կենտրոն» նոր միջոցառման նախատեսմամբ:

Միաժամանակ, միջոցառումների միջև կատարվել է հատկացումների վերաբաշխում:

Նախագծով սփյուռքի ծրագրերի համար նախատեսված հատկացումներն ուղղվելու են 2 ծրագրերի իրականացմանը՝ «Հայաստան-Սփյուռք գործակցության ծրագիր» և «ՀՀ զարգացման գործընթացներում Սփյուռքի ներուժի ներգրավում», համապատասխանաբար՝ 815.9 և 75.0 մլն դրամ:

Հայաստան-Սփյուռք գործակցության ծրագրի նպատակը՝ նպաստել Հայաստանի և հայկական սփյուռքի միջև կապերի ամրապնդմանը և զարգացմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են 7 միջոցառումների իրականացմանը՝ «Քայլ դեպի տուն», «Սփյուռքի երիտասարդ առաջնորդների վերապատրաստում», «Հայաստան-Սփյուռք գործակցության վերաբերյալ իրազեկման ապահովում», «Աշխատանք սփյուռքի համայնքներում», «Ի գործ»՝ սփյուռքահայ

մասնագետների ներգրավում ՀՀ պետական կառավարման համակարգում», «Աջակցություն Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին» և «Հայրենադարձության ինտեգրման կենտրոն»:

«Քայլ դեպի փուն» միջոցառման շրջանակներում նախատեսվում է կազմակերպել Սփյուռքի հայ երիտասարդության և պատանիների ճանաչողական այցելություններ, հայերենի ուսուցման և հայրենագիտության դասընթացներ:

Նախատեսվում է 2021 թվականին ընդգրկել 800 մասնակից 2020 թվականի՝ 600-ի դիմաց:

«Սփյուռքի երիտասարդ առաջնորդների վերապատրաստում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է ՀՀ-ի մասին ճանաչողական և համայնքային գործիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպում, Հայաստանի ներքին քաղաքականությանը իրազեկության ապահովում:

Նախատեսվում է 2021 թվականին միջոցառմանը մասնակից համայնքների թիվը համայնքների ընդհանուր թվում հասցնել 20% -ի 2020 թվականի՝ 10% -ի դիմաց:

«Հայաստան-Սփյուռք գործակցության վերաբերյալ իրազեկման ապահովում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է Հայաստան-Սփյուռք համագործակցության, հայրենադարձության, Սփյուռքից ներդրումների, Հայաստան-Սփյուռք գործակցության ծրագրերի ներկայացման ուղղություններով հեռուստահաղորդումների, տեսանյութերի պատվիրում և Սփյուռքում արբանյակային հեռարձակում:

Նախատեսվում է 2021 թվականին հեռարձակել 122 հեռուստահաղորդումներ, տեսահոլովակներ և գովազդային նյութեր 2020 թվականի՝ 120-ի դիմաց, ապահովել սփյուռքահայերի իրազեկվածության 38% -ը:

«Աշխատանք սփյուռքի համայնքներում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել այցելություններ՝ համայնքների խնդիրներին ծանոթանալու, դրանց լուծման ուղիների քննարկման, համայնքներում կազմակերպված միջոցառումներին մասնակցության, ՀՀ կառավարության Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ծրագրերի ներկայացման և այլ նպատակներով:

Նախատեսվում է 2021 թվականին 20 այցելություններ 2020 թվականի՝ 80-ի դիմաց:

«iԳործ» սփյուռքահայ մասնագետների ներգրավում ՀՀ պետական կառավարման համակարգում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է սփյուռքի բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավում ՀՀ հանրային քաղաքականության ոլորտում, ՀՀ զարգացման նոր ծրագրերի մշակում՝ նկատի ունենալով միջազգային փորձը:

Ի տարբերություն 2020 թվականին նախատեսված «Հանրային ոլորտում սփյուռքահայ երիտասարդ մասնագետների պրակտիկայի կազմակերպում» միջոցառման (շահառուների թիվը՝ 20 երիտասարդ մասնագետներ), 2021 թվականին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 27.08.2020 թվականի N 1467-Ն որոշումը, միջոցառումը վերանվանվել է և ընդլայնվել է շահառուների թիվը՝ ընդգրկելով 100 մասնագետի:

«Աջակցություն Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին» միջոցառման շրջանակներում նախատեսվում է՝ հայկական լրատվամիջոցների, գործող կայքէջերի և հեռուստաալիքների միջոցով հայ ազգաբնակչության շրջանում տարածաշրջանի քաղաքական, սոցիալական, ազգային և մշակութային կյանքի վերաբերյալ տեղեկատվության տարածում:

Նախատեսվում է 2021 թվականին, ինչպես նաև 2020 թվականին Վրաստանի հանրապետության քաղաք Ախալքալակում և համանուն շրջանի գյուղերում տեղեկատվության հասանելիությունը ապահովել 100%-ով:

«Հայրենադարձության ինտեգրման կենտրոն» նոր միջոցառման շրջանակներում նախատեսվում է մեկ պատուհանի սկզբունքով ՀՀ-ում ինտեգրման հարցում աջակցության ցուցաբերում պոտենցիալ հայրենադարձներին:

Հայրենադարձների թիվը 2021 թվականին կանխատեսվում է 3000 մարդ:

ՀՀ զարգացման գործընթացներում Սփյուռքի ներուժի ներգրավում ծրագրի նպատակը՝ ապահովել Սփյուռքի ներուժի բացահայտումը, Սփյուռքի ներուժի վերաբերյալ տեղեկատվական համակարգերի ստեղծումը, Հայաստան-Սփյուռք համատեղ ծրագրերի իրականացումը, ըստ ոլորտների համահայկական մասնագիտական ցանցերի ստեղծումը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են «Սփյուռքի մարդկային ներուժի վերհանում, դրա քարտեզագրում և տեղեկատվական բազայի ստեղծում» միջոցառման իրականացմանը:

Նախատեսվում է 2021 թվականին հավաքագրել սփյուռքի մարդկային ներուժի 50 000 տվյալ, որի մեջ ոլորտային մասնագետների գծով տվյալները կկազմեն 50%: 2020 թվականին «Սփյուռքի համայնքների ուսումնասիրությունների իրականացում և ներուժի բացահայտում» միջոցառման շրջանակներում նախատեսված էր սփյուռքի մարդկային ներուժի 70 000 տվյալի հավաքագրում, որի մեջ ոլորտային մասնագետների գծով տվյալները կազմում են 40%:

«Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում» ծրագրի «ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծառայություններ» միջոցառման գծով 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 19.8 մլն դրամ՝ քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների հետևողական վերապատրաստման և ուսուցման նպատակով:

«ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի «Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ» միջոցառման գծով 2021 թվականին նախատեսվում է հատկացնել 1.6 մլն դրամ՝ աշխատակազմի աշխատակիցների մասնագիտական վերապատրաստումներ իրականացման նպատակով:

Միաժամանակ ՀՀ վարչապետի աշխատակազմում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիր, որի նպատակն է բարելավել հանրային հատվածի ֆինանսական հաշվետվությունների որակը և հանրության հասանելիությունը ընդլայնված էլեկտրոնային պետական ծառայություններին:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

ա) Պետական ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգեր,

բ) Էլեկտրոնային կառավարման լուծումներ բարելավված ծառայությունների մատուցման համար,

գ) Կարողությունների զարգացում և զարգացման փոքր ինտերվենցիաներ,

դ) Ծրագրի կառավարում՝ 2021թ.-ին նախատեսվում է 3,128.0 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,484.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 643.5 մլն դրամ:

2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր, որի նպատակն է հզորացնել արտահանման խթանման, ներդրումների ներգրավման և ձեռնակություններին տրամադրվող որակի կառավարման ծառայությունների կարողությունները:

Ծրագիրը կազմված է 4 բաղադրիչից՝

ա) երկրում առևտրի խթանման և որակի համակարգի արդյունավետության բարելավում,

բ) ներդրումների և արտահանման խթանում,

գ) որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում,

դ) ծրագրի կառավարում և մոնիթորինգի ու գնահատում՝ 2021թ. 9,253.2 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 7,480.2 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 1,773.0 մլն դրամ:

3. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է աջակցել Ստացողին հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման հարցում՝ իրականացնելով Արտահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) Ստանդարտը՝ 2021թ.-ին նախատեսվում է 11.9 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 9.9 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 2.0 մլն դրամ:

ՀՀ վարչապետի աշխատակազմի 2021 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը 2019-2020 թվականների ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 10 աղյուսակում:

Հանրային հեռարձակողի խորհուրդ

Հանրային հեռարձակողի խորհրդի Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում ծրագրի նպատակը՝ ապահովել բազմազան տեղեկատվական, ճանաչողական, կրթական, ժամանցային հեռուստատեսային և ռադիո հաղորդումների արտադրությունը և հեռարձակումը:

Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում ծրագրով Նախագծով (առանց կառավարման ապարատի) նախատեսվում է հատկացնել 6,877.1 մլն դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 7,371.8 մլն դրամի դիմաց:

Ծախսերը նվազել են 494.7 մլն դրամով, կամ 6.7 տոկոսով, որը պայմանավորված է.

- «Հեռուստատեսային ծառայություններ» միջոցառման ծախսերի նվազմամբ՝ 400.0 մլն դրամով (Հանրային հեռուստաընկերության կողմից ներգրավված վարկը ամբողջությամբ մարելու հետ կապված վարկի մարմանն ուղղված միջոցներ),

- «Ներդրումներ տեխնիկական վերազինման նպատակով» միջոցառման չնախատեսմամբ՝ 100.0 մլն դրամ, հաշվի առնելով ծախսային գերակայությունները, առաջնահերթությունները:

Միաժամանակ, միջազգային կազմակերպություններին անդամավճարի գծով ծախսերն աճել են 5.3 մլն դրամով, կապված տարադրամի փոխարժեքի փոփոխությամբ:

Բացի այդ, նախատեսվել է «Հանրային հեռարձակողի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ» նոր միջոցառումը՝ 8.7 մլն դրամի չափով՝ ի հաշիվ նշված նպատակով ընկերությունների համար նախատեսված հատկացումների վերաբաշխման («Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի հ.27-ի 1-ին կետի 17-րդ ենթակետ):

Հանրային հեռարձակողի խորհրդի 2021 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը 2019-2020 թվականների ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 6 աղյուսակում:

ՀՀ քաղաքաշինության կոմիտե

«Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում պետական քաղաքականության իրականացում և կանոնակարգում» ծրագրի գծով (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվել է 496.5 մլն դրամ, որը ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված համադրելի ցուցանիշից՝ 543.0 մլն դրամից պակաս է 8.6 %-ով: Ցուցանիշի նվազումը պայմանավորված է միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման աշխատանքների հայտագրված ֆինանսական պահանջով: Ծրագրի գծով 2021 թվականի ծախսերը նախատեսվել են հետևյալ ուղղություններով.

- «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում և տեղայնացում» միջոցառման գծով՝ 98.5 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել և ավարտին հասցնել թվով 8 նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակումը և սկսել թվով 20-ի մշակման և տեղայնացման աշխատանքները,
- «Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում» միջոցառման գծով՝ 397.0 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է մշակել ՀՀ Գեղարքունիքի (մասամբ), Լոռու, Կոտայքի (մասամբ) և Շիրակի (մասամբ) մարզերի ընդհանուր առմամբ թվով 18 համակացված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերը,
- «Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ» միջոցառման գծով 1.0 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել աշխատակազմի աշխատակիցների վերապատրաստում:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերի համեմատությունը՝ 2019 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2020 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 3 աղյուսակում:

ՀՀ կադաստրի կոմիտե

Անշարժ գույքի պետական ռեգիստրի համակարգի գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 4,645.4 մլն դրամի ծախսեր՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 5,200.0 մլն դրամի դիմաց կամ 10.7 %-ով պակաս: Հատկացվող միջոցներից համակարգի պահպանման ծախսերը կկազմեն 3,848.5 մլն դրամ՝ 2020 թվականի համար հաստատված 4,235.1 մլն դրամի դիմաց, իսկ համակարգի կարողությունների զարգացմանն ուղղվող ծախսերը կկազմեն 796.9 մլն դրամ՝ 2020 թվականի համար հաստատված 930.8 մլն դրամի դիմաց: Համակարգի կարողությունների զարգացման 2021 թվականի ծախսերից 601.9 մլն դրամը կուղղվի գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքներին՝ հետևյալ ուղղություններով.

1.Գեոդեզիայի բնագավառում /ՀՀ անտառապատ շրջաններում 2-րդ դասի GNSS հիմնակետերի տեղծում/ նախատեսվող աշխատանքների գծով նախատեսվել է 3.99 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է ՀՀ հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան անտառապատ շրջաններում տեղադրել 2-րդ դասի թվով 20 նոր հիմնակետեր, որոնց օգնությամբ հնարավոր կլինի իրականացնել անտառապատ տարածքների սահամանագծերի շրջադարձային կետերի ճշգրիտ կոորդինատավորում:

2. ՀՀ տարածքի օդալուսանկարահանման օրթոֆոտոհատակագծերի և թվային բարձունքային մոդելի ստեղծման աշխատանքների գծով նախատեսվել է 597.9 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել ՀՀ ողջ տարածքի պլանաբարձունքային կապակցման աշխատանքների հիմքով իրականացված օդալուսանկարահանմամբ և տիեզերանկարահանմամբ օրթոֆոտոհատա-կագծերի և ռելիֆի մոդել: Աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ ՀՀ երեք խոշոր քաղաքների համար GSD-10 սմ ձևաչափի ծածկույթով, ՀՀ մնացած տարածքի համար GSD-20 սմ ձևաչափի ծածկույթ օրթոֆոտոհատակագծեր և սահմանային տարածքի համար GSD-30 սմ ձևաչափի տիեզերական օրթոֆոտոհատակագծեր, որոնց մշակմամբ ստացված քարտեզներն ու հատակագծերը կնպաստեն բնական և տնտեսական ռեսուրսների արդյունավետ կառավարումն իրականացնել, ունենալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն ՀՀ և նրա առանձին վարչատարածքային միավորների տնտեսության վիճակի ու բնական ռեսուրսների վերաբերյալ:

ՀՀ կադաստրի կոմիտեի ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերի համեմատությունը՝ 2019 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2020 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 14 հավելվածում:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) «Հարկային և մաքսային ծառայություններ» ծրագրի (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի) շրջանակներում նախատեսվել է թվով 8 միջոցառում, որից 4-ը՝ կապիտալ բնույթի (այդ թվում մեկական վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող միջոցառումներ): Նշված միջոցառումների համար նախատեսվել է հատկացնել 10,021.4 մլն դրամ (որից վարկային միջոցներ՝ 1,363.7 մլն, դրամաշնորհային միջոցներ՝ 1,477.1 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ ընդհանուր 568.1 մլն դրամ), այն ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված համադրելի ցուցանիշից՝ 6,929.1 մլն դրամից ավել է 44.6 %-ով: Ցուցանիշի փոփոխությունը պայմանավորված է հիմնականում նոր՝ Մեղրիի սահմանային անցակետի շինարարական աշխատանքների իրականացմամբ:

Ծրագրի գծով 2021 թվականի ծախսերը նախատեսվել են հետևյալ ուղղություններով.

- «Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերում» միջոցառման գծով՝ 2,908.1 մլն դրամ:
- «Դրոշմապիտակների ձեռքբերում» միջոցառման գծով՝ 3,402.0 մլն դրամ:
- «Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստում» միջոցառման գծով 142.5 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է Կոմիտեի թվով 2020 աշխատակիցների վերապատրաստում:
- «Փորձաքննությունների ծառայություններ» միջոցառման գծով՝ 10.8 հազ դրամ, պահպանվել է ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափը: Հաշվարկը կատարվել է 273 փորձաքննությունների համար, պահպանելով փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա արժեքը՝ 460 դրամ:

Միջոցառման նպատակն է ապահովելու ՀՀ Սահմանադրության հոդված 64, կետ 1 համաձայն՝ յուրաքանչյուրի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Փորձաքննության արժեքի որոշման կարգը սահմանվել է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի թիվ 79-Ն որոշմամբ, իսկ ինչ վերաբերում է փորձաքննությունների կանխատեսվող քանակներին, ապա հաշվի են առնվել 2019 թվականի և 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կատարված դատական փորձաքննությունների քանակային ցուցանիշների վերլուծությունը:

- «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավում» միջոցառման գծով՝ 7.1 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է Կոմիտեի թվով 2 օբյեկտներում ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքների իրականացում:
- «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմանների բարելավում» միջոցառման գծով՝ 142.0 մլն դրամ: Նշված միջոցներն ուղղվելու են Կոմիտեի թվով 1 օբյեկտի վերանորոգման աշխատանքների իրականացմանը:
- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Մեղրիի սահմանային անցակետի ծրագիր» վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նոր շենքային պայմանների ապահովում՝ 1,636.4 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,363.7 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 272.7 մլն դրամ:
- Վերը նշված՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Մեղրիի սահմանային անցակետի ծրագիր»-ը նախատեսվում է նաև դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ 1,772.5 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,477.1 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 295.4 մլն դրամ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերի համեմատությունը՝ 2019 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2020 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 16 աղյուսակում:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՀՀ 2021թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների համաձայն՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պետական պարտքը կկազմի 4,309 մլրդ դրամ (8,850 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 69.0%-ը, իսկ 2021 թվականի տարեվերջին այն կկազմի 4,486 մլրդ դրամ (9,215 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 66.8%-ը:

	առ 31.12.2019թ.	առ 31.12.2020թ.	առ 31.12.2021թ.
մլրդ դրամ			
ՀՀ պետական պարտք	**3,512**	**4,309**	**4,486**
այդ թվում՝			
արտաքին պետական պարտք	2,775	3,279	3,247
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք	*235*	*256*	*239*
ներքին պետական պարտք	737	1,030	1,239
մլն ԱՄՆ դոլար			
ՀՀ պետական պարտք	**7,321**	**8,850**	**9,215**
այդ թվում՝			
արտաքին պետական պարտք	5,785	6,734	6,669
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք	*489*	*525*	*492*
ներքին պետական պարտք	1,537	2,116	2,546
տոկոսներով ՀՆԱ-ի նկատմամբ			
ՀՀ պետական պարտք	**53.5**	**69.0**	**66.8**
այդ թվում՝			
արտաքին պետական պարտք	42.2	52.5	48.3
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք	*3.6*	*4.1*	*3.6*
ներքին պետական պարտք	11.2	16.5	18.4

2020 և 2021 թվականների համար փոխարկումները կատարվել են 1 ԱՄՆ դոլար = 486.86 դրամ փոխարժեքով (01.09.2020թ. դրությամբ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեք (աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ)):

ՀՀ արտաքին պետական պարտքի գծով 2020 և 2021թթ. ընթացքում ակնկալվում է.

	2020թ. (մլն ԱՄՆ դոլար)	2021թ. (մլն ԱՄՆ դոլար)
ՀՀ արտաքին պետական պարտքի գծով վարկերի ստացում	**1 307**	**262**
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտքի գծով	*100*	*51*
ՀՀ արտաքին պետական պարտքի գծով մայր գումարի մարում	**394**	**329**
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտքի գծով	*78*	*85*
ՀՀ արտաքին պետական պարտքի գծով տոկոսավճար	**178**	**182**
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտքի գծով	*10*	*9*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԸ

Կառավարության պարտքի 2020 և 2021 թվականների կանխատեսումները կատարվել են հիմք ընդունելով հետևյալը.

- ՀՀ 2020թ. պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը պարտքային գործիքների հաշվին կիրականացվի 686 մլրդ դրամի չափով, որից 260 մլրդ դրամը պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին, 185 մլրդ դրամը՝ արտաքին վարկերի հաշվին և 241 մլրդ դրամը՝ արտարժութային պետական պարտատոմսերի հաշվին,
- ՀՀ 2021թ. պետական բյուջեի նախագծի հիմքում դրված պակասուրդի ֆինանսավորման սցենարը, որի համաձայն զուտ ֆինանսավորումը պարտքային գործիքների հաշվին կիրականացվի 194 մլրդ դրամի չափով, որից 210 մլրդ դրամը պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին և (16) մլրդ դրամը՝ արտաքին վարկերի հաշվին,
- ներգրաված պարտքի սպասարկման և մարման պայմանները,
- 2020 և 2021 թվականների պարտքի մնացորդի փոխարկումները կատարվելու են 01.09.2020թ. դրությամբ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքների (աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ) հիման վրա՝ 1 ԱՄՆ դոլար = 486.86 դրամ,
- ՀՀ 2021թ. պետական բյուջեի նախագծի հիմքում դրված 2020թ. և 2021թ. ՀՆԱ-ի կանխատեսումային ցուցանիշները:


Ըստ կանխատեսումների՝ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքը կկազմի 4,247 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 63.2 տոկոսը և 2020 թվականի տարեվերջի համեմատությամբ ՀՆԱ-ի նկատմամբ կնվազի 1.7 տոկոսային կետով: Նշենք, որ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նշված կանխատեսումները տարբերվում են կառավարության պարտքի կառավարման 2021-2023 թվականների միջնաժամկետ ռազմավարական ծրագրով սահմանված ցուցանիշներից՝ պայմանավորված հիմնականում կանխատեսումներում կիրառված մակրոտնտեսական ու հարկաբյուջետային շրջանակի և փոխարժեքների տարբերություններով ու կառավարության պարտքի գծով գործառնություններով:


	առ 31.12.2019թ.	առ 31.12.2020թ.	առ 31.12.2021թ.
ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ	3,277	4,053	4,247
ՀՀ կառավարության պարտք, մլն ԱՄՆ դոլար	6,832	8,325	8,723
ՀՀ կառավարության պարտք, % ՀՆԱ-ում	49.9	64.9	63.2


Նախատեսվում է 2020-2021 թվականներին կառավարության պարտքի կառուցվածքում ավելացնել ՀՀ դրամով տեղաբաշխված պետական գանձապետական պարտատոմսերի կշիռը, որն ըստ կանխատեսումների կկազմի համապատասխանաբար 22.9% և 26.8%: Կառավարության պարտքը կունենա հետևյալ կառուցվածքը.


	առ 31.12.2019թ.	առ 31.12.2020թ.	առ 31.12.2021թ.
Կառուցվածքն ըստ ռեզիդենտության, մլրդ դրամ*			
ներքին պարտք	737	1 030	1 239
արտաքին պարտք	2 540	3 023	3 008
Կառուցվածքն ըստ գործիքակազմի, մլրդ դրամ			
արտաքին վարկեր և փոխառություններ	2 066	2 342	2 325
պետական գանձապետական պարտատոմսեր	681	928	1 139
արտարժութային պետական պարտատոմսեր	527	779	779
արտաքին երաշխիքներ	4	4	4
ներքին երաշխիքներ	-	-	-
Արժութային կառուցվածքը, մլրդ դրամ			
ՀՀ դրամով ներգրավված պարտք	681	928	1 139
արտարժույթով ներգրավված պարտք	2 596	3 125	3 108
Կառուցվածքն ըստ տոկոսադրույքի տեսակի, մլրդ դրամ			
լողացող տոկոսադրույքով	530	779	813
ֆիքսված տոկոսադրույքով	2 747	3 274	3 434

** 2020 և 2021 թվականների համար պետական գանձապետական և արտարժութային պարտատոմսերի գծով պարտքի մնացորդը բաշխվել է ըստ ռեզիդենտության հիմք ընդունելով 2020թ. օգոստոսի 31-ի դրությամբ փաստացի ձևավորված փոխարժեքները:*











Հաշվի առնելով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումները և պարտքի գծով ծրագրավորված գործառնությունները, ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2021-2023 թվականների ռազմավարական ծրագրով ամրագրված ուղենշային ցուցանիշները 2021թ. տարեվերջի դրությամբ կկազմեն.

	Ուղենիշ	2020թ. (կանխ.)
Վերաֆինանսավորման ռիսկ		
Մինչև մարում միջին ժամկետը	8 – 11 տարի	8.4 տարի
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) առավելագույն կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	առավելագույնը 20%	10.8%
Տոկոսադրույքի ռիսկ		
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 80%	80.9%
Փոխարժեքի ռիսկ		
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 25%	29.2%
ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 25%	26.8%

2021 թվականի տարեվերջի դրությամբ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի 38%-ը բաժին կընկնի Համաշխարհային Բանկին (Զարգացման Միջազգային Ընկերակցություն ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ): Կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների կլինի հետևյալը.



2021 թվականի տարեվերջի դրությամբ ձևավորվող կառավարության պարտքի մարման ժամանակացույցը սփռված կլինի մինչև 2054 թվականը և կունենա հետևյալ տեսքը.



2021 թվականին կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույքը կկազմի 4.6%: Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ) կկազմեն ՀՆԱ-ի 2.9%-ը:

	2019թ.	*2020թ.*	*2021թ.*
Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճար), մլրդ դրամ	**157.5**	**166.7**	**191.7**
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	2.4	2.7	2.9
Կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույք, %	**4.8**	**4.8**	**4.6**

Պակասուրդի ֆինանսավորման պարտքային գործիքակազմը

2021 թվականին պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին կկազմի 193.7 մլրդ դրամ, ինչը կիրականացվի պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին՝ 210 մլրդ դրամ և արտաքին վարկերի հաշվին՝ (16.3) մլրդ դրամ:

Պակասուրդի ֆինանսավորումը պետական գանձապետական պարտատոմսերով

Պետական գանձապետական պարտատոմսերով բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվելու է կարճաժամկետ (3, 6, 9 և 12 ամիս), միջնաժամկետ (3 և 5 տարի), երկարաժամկետ (10 և 30 տարի) և խնայողական պարտատոմսերի հաշվին:

Յուրաքանչյուր երկու ամիսն առնվազն մեկ անգամ կկազմակերպվի 52, 39, 26 և 13 շաբաթ մարման ժամկետ ունեցող պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդներ: Կարող են իրականացվել նաև պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի լրացուցիչ թողարկումներ, ընդ որում մինչև 3 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ կարող են իրականացվել կանխիկ հոսքերի կառավարման նպատակով, իսկ 3-12 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման շրջանակներում:

Կուսումնասիրվի 6 ամիս մարման ժամկետ ունեցող պետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման ծավալների ավելացման միջոցով դրանց՝ որպես ուղենշային սահմանման հնարավորությունները:

2021 թվականի ապրիլի 29-ին կթողարկվեն 3 և 5 տարի մարման ժամկետայնությամբ նոր միջնաժամկետ պետական գանձապետական պարտատոմսեր:

Աճուրդների կողմնորոշիչ ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի եռամսյակային կտրվածքով:

Յուրաքանչյուր աճուրդին տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալների (միջակայքի) և ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի աճուրդից առաջ՝ գործակալների հետ խորհրդակցելուց հետո:

2021 թվականի ընթացքում կիրականացվեն նաև պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումներ: 2021 թվականի ընթացքում պարտատոմսերի հետգնումների 70-80% կիրականացվեն մարման գրաֆիկի հարթեցման, իսկ 20-30%՝ պարտատոմսերի իրացվելիությունը խթանելու նպատակով: ՀՀ ֆինանսների նախարարությունը յուրաքանչյուր թողարկման պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածում այդ պարտատոմսերի հետգնում չի իրականացնի:

ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք էջում եռամսյակային կտրվածքով, յուրաքանչյուր եռամսյակից 10 օր առաջ, կհրապարակի ուղենշային համարվող պարտատոմսերի ցանկը:


COVID 19 համավարակով պայմանավորված հետաձգվեց պետական գանձապետական պարտատոմսերի փոխանակման աճուրդային համակարգի ներդրումը 2020 թվականին: Այն նախատեսվում է իրականացնել 2021 թվականին:

Պակասուրդի ֆինանսավորումն արտաքին վարկերով

ՀՀ 2021 թվականին պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորելու համար նախատեսվում է արտաքին վարկերի գծով կատարել 102.7 մլրդ դրամի (210.9 մլն ԱՄՆ դոլար) մասհանումներ[24]: Ընդ որում մասհանումների ամբողջ ծավալը նախատեսվում է կատարել նպատակային վարկային ծրագրերի գծով:


2021 թվականին մասհանումների 32.9%-ը կատարվելու է գերմանական վարկերի գծով, 32.3%-ը՝ Համաշխարհային Բանկի (ՎԶՄԲ և ԶՄԸ) վարկերի գծով: Հաջորդ խոշոր մասնաբաժինը 17.0% բաժին է ընկնում Ասիական Զարգացման Բանկին: Ըստ վարկատուների մասհանումների կառուցվածքը հետևյալն է.

[24] Արտաքին վարկերի գծով պակասուրդի ֆինանսավորման և արտաքին վարկերից մասհանումների տարբերությունը պայմանավորված է համապատասխան վարկային ծրագրերի շրջանակներում բացված հատուկ հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդներով:



2021 թվականին նպատակային վարկային ծրագրերի գծով մասհանումների կառուցվածքում խոշորագույնը գերմանական KfW բանկի աջակցությամբ իրականացվող Կովկասյան էլեկտրահաղորդման ցանցի ծրագիրն է՝ 49.5 մլն ԱՄՆ դոլար: Ընդհանուր առմամբ, ըստ ոլորտների մասհանումների կառուցվածքը կլինի հետևյալը.

2021 թվ




ականին մասհանումների գերակշիռ մասը (49.4%) կկատարվի Եվրոյով տրամադրված վարկերի գծով:

Կառավարության պարտքի մարումը և սպասարկումը

2021 թվականին կառավարության պարտքի մարման և սպասարկման համար կպահանջվի 470.3 մլրդ դրամ, որից 278.6 մլրդ դրամը կկազմեն պարտքի գծով մարումները, իսկ 191.7 մլրդ դրամը՝ տոկոսավճարները:

մլրդ դրամ	*մարում*	*սպասարկում*	***ընդամենը***
Պետական գանձապետական պարտատոմսեր	159.6[25]	107.4	**267.0**
Արտարժութային պետական պարտատոմսեր	-	40.2	**40.2**
Արտաքին վարկեր	119.0	44.1	**163.1**
Ընդամենը	**278.6**	**191.7**	**470.3**



ՀՀ կառավարության արտարժութային պարտքի սպասարկման և մարման համար նախատեսված միջոցները փոխարկվել են ՀՀ դրամի հիմք ընդունելով 2020թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքները և այն ենթադրությամբ, որ ԱՄՆ դոլարի 6-ամսյա LIBOR-ի դրույքաչափը 2021 թվականին միջին հաշվով կկազմի 1.0%, 6-ամսյա EURIBOR-ը՝ չի գերազանցի զրոյական մակարդակը, իսկ SDR-ի տոկոսադրույքը՝ 1.2%:

Պետական գանձապետական պարտատոմսերի մարման համար նախատեսված 159.6 մլրդ դրամի մեջ 28 մլրդ դրամը կազմում է պարտատոմսերի հետգնումների համար ծրագրավորված գումարը:

Արտաքին վարկերի մարման և սպասարկման գծով նախատեսվում է վճարել 163.1 մլրդ դրամ (335.1 մլն ԱՄՆ դոլար): Նախատեսվող վճարումների կառուցվածքն ըստ վարկատուների հետևյալն է.

մլն ԱՄՆ դոլար	**տոկոսավճար**	**մարում**	**ընդամենը**
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	19.3	12.2	31.5

[25] Ցուցանիշը ներառում է պետական գանձապետական պարտատոմսերի հետգնման համար նախատեսված 28 մլրդ դրամը:

մլն ԱՄՆ դոլար	տոկոսավճար	մարում	ընդամենը
Զարգացման Միջազգային Ընկերակցություն	10.2	72.5	82.7
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	0.7	6.3	7.0
Եվրոպական Ներդրումային Բանկ	2.3	4.6	6.9
Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամ	0.6	3.9	4.5
ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ	2.0	5.0	7.0
Ասիական Զարգացման Բանկ	17.2	43.2	60.4
Եվրամիություն	2.7	-	2.7
Արժույթի Միջազգային Հիմնադրամ	6.1	18.5	24.6
Եվրասիական Զարգացման Բանկ	7.1	0.2	7.3
Գերմանիա (ՎՎԲ)	6.8	22.0	28.9
Ռուսաստանի Դաշնություն	10.8	37.4	48.3
Ֆրանսիա	1.9	1.5	3.4
ԱՄՆ	0.3	1.7	2.0
Ճապոնիա	1.9	10.7	12.6
Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամ	0.1	0.6	0.8
Չինաստանի Արտահանման-Ներմուծման Բանկ	0.4	1.5	2.0
ԿԲՍ Բանկ (Բելգիա)	0.0	0.6	0.6
Ռայֆայզն Բանկ (Ավստրիա)	0.1	1.0	1.1
Էռստե Բանկ (Ավստրիա)	0.1	0.7	0.9
Ընդամենը	**90.7**	**244.4**	**335.1**

Արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը 2021 թվականին կկազմեն 82.5 մլն ԱՄՆ դոլար՝ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի գծով արժեկտրոնային վճարումների համար:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1. 2021 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվածից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը

Կարճաժամկետ հատվածում հարկային եկամուտների կանխատեսվող հոսքերի վրա մակրոտնտեսական բնույթի ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը հիմնվել է ստորև նկարագրված **կանխատեսումների ռիսկի և ենթադրություններից շեղումների ռիսկի** վրա:

1. Կանխատեսումների ռիսկ

Սովորաբար կանխատեսումներ իրականացնելիս ի հայտ են գալիս հանգամանքներ, որոնք կապված են լինում օգտագործվող կանխատեսման մոդելների տեղայնացումից և մասնավորեցումից, տնտեսության կառուցվածքային տեղաշարժերից[26], նոր երևույթներից (որի վերաբերյալ նախկինում տեղեկատվությունը բացակայել է) և այլն: Այս ռիսկերն ընդունված է անվանել կանխատեսման ռիսկեր:

Հատկապես ներկա իրավիճակում՝ կորոնավիրուսի տարածման և տևողության անորոշությունների հետևանքով, տնտեսական աճի ռիսկերը գնահատվում են առավելապես դեպի ներքև, որը պայմանավորված է ճգնաժամից տնտեսության վերականգնման անորոշությունների՝ ավելի ուշ դուրս գալու ռիսկերով: Բացի այդ, մակրոտնտեսական կանխատեսումներում ներառված չեն ԱՄՀ կողմից համաշխարհային և գործընկեր երկրներ տնտեսական աճերի կանխատեսման դեպի ներքև վերանայումները, որոնք ևս մեծացնում են դեպի ներքև ռիսկերը:

Բյուջեի ծրագրի կատարման տեսանկյունից կարևորվում է ՀՆԱ-ի կանխատեսման ռիսկի գնահատումը, քանի որ բյուջեի ծրագրված սցենարի հարթ իրականացումը կախված է տնտեսությունում ստեղծված անվանական ՀՆԱ-ի մեծությունից: ՀՆԱ-ի գծով կանխատեսումների ռիսկը գնահատվել է նախորդ տարիներին պետական բյուջեների հիմքում դրվող ՀՆԱ կանխատեսված ցուցանիշների և ՀՆԱ փաստացի ցուցանիշների միջև շեղման հիման վրա: Մասնավորապես, հետճգնաժամային 2010-2019 թվականների փաստացի ՀՆԱ իրական աճերը միջին հաշվով շեղվել են կանխատեսվածից 1.9 տոկոսային կետ: Այս պարագայում, հաշվի առնելով կանխատեսվածից ցածր ՀՆԱ ձևավորման վերոնկարագրյալ ռիսկերի գերակշռությունը՝ որպես ռիսկ է դիտարկվել ՀՆԱ իրական աճի կանխատեսված մակարդակից 1.9 տոկոսային կետով ավելի ցածր մակարդակի ձևավորումը:

Արդյունքում, ՀՆԱ նվազման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա 2021 թվականի համար գնահատվում է 9.2 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

2. Ենթադրություններից շեղումների ռիսկ

[26]Սա որոշակիորեն կապված է նաև մոդելների սպեցիֆիկացիաների հետ, քանի որ ժամանակային շարքերի վրա հիմնված մոդելներն իրենց մեջ ներառում են տնտեսության նախորդ ժամանակահատվածի զարգացումների տեղեկատվությունը, իսկ կանխատեսվող տարում ի հայտ եկող տնտեսության կառուցվածքային տեղաշարժը միայն կարող է ներառվել հաջորդ տարվա կանխատեսումների մոդելներում:

Պետական բյուջեի հիմքում դրվող կանխատեսումները կառուցվում են որոշակի ենթադրությունների հիման վրա, որոնք էլ իրենց հերթին կախված են արտաքին գործոններից (օրինակ, ներքին տնտեսության գնաճը՝ միջազգային շուկաների գների կանխատեսվող վարքագծից): Սակայն միշտ չէ, որ այդ ենթադրությունները կանխատեսվող հորիզոնում իրականություն են դառնում՝ կապված ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ-ի կառավարման դաշտից դուրս ի հայտ եկող երևույթների հետ (օրինակ՝ նավթի համաշխարհային գների հնարավոր փոփոխությունները):

Ենթադրություններից շեղումների ռիսկ է նաև ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսական զարգացումները: Միաժամանակ, ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում մաքսատուրքերի մասնաբաժինը կարող է փոփոխվել նոր պետությունների ԵԱՏՄ-ին անդամակցությունից:

2.1. Գնաճի շեղման հնարավոր չափը

Գնաճի ցուցանիշի շեղման հնարավոր չափ է դիտարկվում ՀՀ ԿԲ-ի կողմից դրամավարկային քաղաքականության ծրագրում (գնաճի հաշվետվություններում) ներկայացվող գնաճի նպատակային ցուցանիշի կենտրոնական արժեքից շեղման առավելագույն չափը, որը կազմում է 1.5 տոկոսային կետ: Հետևաբար բյուջեի հիմքում դրվող գնաճիկանխատեսված ցուցանիշից շեղման ռիսկերը գնահատվում են հավասարակշռված՝ կանխատեսված արժեքից **դեպի ներքև՝ 1.5 տոկոսային կետի չափով** և **դեպի վերև շեղումը՝ 1.5 տոկոսային կետի չափով**:

Գնաճի շեղման ռիսկը կարող է ազդեցություն ունենալ ՀՀ պետական բյուջեի և՛ եկամտային, և՛ ծախսային կատարողականների վրա՝ անուղղակի հարկերի, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների գծով ծախսերի ուղղությամբ: Գնանկումային պայմաններում հարկերից մուտքերը կկրճատվեն և ընդհակառակը:

Արդյունքում, գների նվազման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա 2021, թվականի համար գնահատվում է 2.6 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

2.2. Փոխարժեքի շեղման հնարավոր չափը

ՀՀ ԿԲ-ն և ՀՀ ՖՆ-ն փոխարժեքի կանխատեսումներ չեն իրականացնում և մակրոտնտեսական քաղաքականությունն իրականացվում է լողացող փոխարժեքի սկզբունքի հիման վրա, ընդ որում, յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի ցուցանիշների կանխատեսումների հիմքում դրվում է փոխարժեքի անփոփոխ (որոշակի պահի դրությամբ) մակարդակ: Սակայն փոխարժեքի տատանումները կազդեն ներմուծումից ՀՀ պետական բյուջե մուտքագրվող հարկային եկամուտների վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատմականորեն և՛ արժևորման, և՛ արժեզրկման ուղղությամբ փոխարժեքի տատանումների բացարձակ շեղման միջին չափը չի գերազանցել 5.0 տոկոսը՝ որպես ռիսկ է դիտարկվել ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի առավելագույնը 5% արժեզրկումը:

Արդյունքում, փոխարժեքի 5 տոկոսով արժեզրկման ռիսկի դրսևորման դեպքում, այլ հավասար պայմաններում, 2021 թվականին կարելի է ապահովել հարկային եկամուտների 11.3 մլրդ ՀՀ դրամ լրացուցիչ մուտք:

2.3. Ներմուծման գծով ռիսկի հնարավոր չափը

Քանի որ մաքսային սահմանին ներմուծումից գանձվող անուղղակի հարկերը էական կշիռ ունեն պետական բյուջեի ընդհանուր հարկային եկամուտներում, անհրաժեշտ է գնահատել նաև ներմուծման հնարավոր նվազման պարագայում հարկային եկամուտների նվազման ռիսկի չափը: Հետճգնաժամային տարիներին պետական բյուջեում ներմուծման գծով կանխատեսումների շեղման միջին բացարձակ չափը սահմանվում է 10.4%-ի միջակայքում, ինչն էլ հաշվի է առնվել այս գործոնի ազդեցությունը գնահատելու համար: 2021 թվականի համար ծրագրվածից համապատասխանաբար 10.4%-ից պակաս ներմուծման ռիսկի դրսևորման պայմաններում հարկային եկամուտների վրա ազդեցությունը գնահատվում է 14.5 մլրդ ՀՀ դրամ՝ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

Ամփոփելով վերը նկարագրված **կանխատեսումների ռիսկի և ենթադրություններից շեղումների ռիսկի** գնահատականները, ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման ռիսկերի ազդեցության քանակական ամփոփ գնահատականները ներկայացվում են ստորև.

Աղյուսակ 19. ***Հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների ռիսկերի ազդեցություն***[27]

Ռիսկի տեսակը	Ազդեցության գնահատականը, մլրդ ՀՀ դրամ
	2021թ.
Ռիսկերի առանձին հանդես գալու պայմաններում	
1. Կանխատեսվածից 1.9 տոկոսային կետով ավելի ցածր իրական ՀՆԱ-ի աճ	-9.2
2. 1.5 տոկոսային կետով ավելի ցածր գնաճի ռիսկ	-2.6
3. Փոխարժեքի առավելագույնը 5.0 տոկոսով արժեզրկման ռիսկ	11.3
4. Ներմուծման 10.4 տոկոսով նվազման ռիսկ	-14.5
Վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում	**-16.6**

Այսպիսով, գնահատվում է, որ հարկային եկամուտների վրա ազդող վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտների ծրագրված մակարդակից շեղումը կկազմի շուրջ 16.6 մլրդ ՀՀ դրամ:

[27] ՀՆԱ, ներմուծման, փոխարժեքի և գների գծով հավանական ռիսկերի քանակային գնահատականը ստացվել է՝ հիմք ընդունելով այս գործոնների պատմական շարժի բացարձակ միջին սխալը:

Հարկային եկամուտների վրա առանձին ռիսկերի ազդեցության չափի վերաբերյալ պատկերացում են տալիս նաև ստորև ներկայացվող զգայունության գնահատականները, սակայն այս դեպքում դիտարկվում է հարկային եկամուտների աճի վրա ազդող գործոնների աճերի 1% փոփոխության ազդեցությունը, ինչը ներկայացված է հարկային եկամուտների զգայունության աղյուսակում:


Աղյուսակ 20. ***Հարկային եկամուտների զգայունությունը հիմնական տնտեսական գործոնների նկատմամբ, տոկոս***

	ՀՆԱ	Գնաճ	Փոխարժեք	Ներմուծում
Միջին տարեկան ազդեցություն	0.24	0.11	0.17	0.06

Ինչպես երևում է աղյուսակից, հարկերի հավաքագրման առումով առավել էական գործոններ են հանդիսանում ՀՆԱ-ի և փոխարժեքի փոփոխությունները:

Հարկային եկամուտների կանխատեսումների հետ կապված անորոշությունների և ռիսկերի հաշվեկշռի վերաբերյալ գնահատականներն իրենց արտացոլումն են գտել ստորև ներկայացվող հարկային եկամուտների հավանականային բաշխման գծապատկերում և համապատասխան աղյուսակում (տես՝ Գծապատկեր 6 և Աղյուսակ 21)[28]: Հավանականային բաշխման գրաֆիկի կառուցման ժամանակ օգտագործվել է աղյուսակ 19-ում գնահատված ամբողջական ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում ի հայտ եկող բացասական ռիսկերը:

Գծապատկեր 7. ***Հարկային եկամուտների տարեկան աճի տեմպերի կանխատեսումների հավանականային բաշխումը[29], տոկոս***



[28]Հարկային եկամուտների գծով ռիսկերի ազդեցության գնահատականը կառուցվել է ՀՀ ֆինանսների նախարարության ռիսկերի գնահատման համակարգի ներքո կառուցված մոդելի հիման վրա:

[29]Հավանականային կանխատեսման գրաֆիկի կառուցման ընդհանուր մեթոդաբանությունը ներկայացված է Ներդիրում:

Կանխատեսումների բաշխման հավանականություններն առավել պարզորոշ երևում են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ 21. ***Հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը***

Հարկային եկամուտների աճի միջակայքը	Հարկային եկամուտների աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը			
	2021-I	**2021-II**	**2021-III**	**2021-IV**
0-4 տոկոս	***0.59***	0.04	0.02	0.03
4-8 տոկոս	0.15	0.29	0.19	0.24
8-12 տոկոս	0.00	***0.56***	***0.55***	***0.55***
12-16 տոկոս	0.00	0.11	0.24	0.18

Աղյուսակ 21-ի առաջին սյունը ներկայացնում է հարկային եկամուտների աճի միջակայքերը, իսկ 2-ից 5-րդ սյուները՝ նշված միջակայքերից յուրաքանչյուրում այդ աճի ձևավորվելու հավանականությունները՝ ըստ եռամսյակային կանխատեսումների:

Ակնհայտ է, որ 2021 թվականի համար վերոնշյալ չորս միջակայքերի շարքում 2021 թվականի վերջին 8.0-12.0% միջակայքում հարկային եկամուտների աճի ձևավորվելու հավանականությունն ամենաբարձրն է (Գծապատկեր 6-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 21-ում՝ հոծ նշումով):

Ներդիր

Իրական ՀՆԱ-ի և հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխման գծապատկերի կառուցումը

Իրական ՀՆԱ-ի և հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը ներկայացնող գծապատկերները ցույց են տալիս տնտեսության զարգացման ապագա ընթացքի վերաբերյալ կառավարության գնահատականները՝ տնտեսական աճի ծրագրային ցուցանիշների վերաբերյալ, ինչպես նաև հարկային եկամուտների հավաքագրման կանխատեսվող ընթացքը:

Կանխատեսումների հավանականային բաշխման գծապատկերի կառուցման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ բոլոր կանխատեսումները ինչ-որ չափով անորոշ են: Կարևոր է հաշվի առնել ոչ միայն կոնկրետ կանխատեսված արժեքները, այլ նաև բոլոր այն վերոնշյալ ռիսկերը, որոնց արդյունքում կարող են շեղումներ առաջանալ իրական ՀՆԱ-ի կանխատեսումների և հարկերի կանխատեսումների կենտրոնական արժեքներից: Հիմնվելով միայն կետային կանխատեսումների վրա հնարավոր չէ բավարար չափով տեղեկատվություն ներկայացնել դրանց հետ կապված անորոշությունների և դրանց աղբյուրների վերաբերյալ: Այդ պատճառով կարևորվում է որոշակի վստահության միջակայքի կառուցման խնդիրը, որը թույլ կտա գնահատել իրադարձությունների զարգացման հավանական ընթացքը: Իրական ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսումների հավանականային

բաշխման ներկայացված գծապատկերները հիմնվում են Անգլիայի բանկի կողմից մշակված մեթոդաբանության վրա և հաշվի է առնում կանխատեսումների հավանականային բաշխման ասիմետրիկության առկայությունը:

Հայաստանի համար իրական ՀՆԱ-ի և հարկերի աճի կանխատեսումների բաշխման գծապատկերները կառուցվել են երեք չափորոշիչների հիման վրա.

1. կենտրոնական արժեքները, 2. անորոշության չափը (դիսպերսիան), որը ստանալու համար հիմք են հանդիսացել փաստացի պատմական շարքերի կանխատեսումային սխալները և 3. ռիսկերի հարաբերական հաշվեկշիռը՝ անհամաչափության գործակցի գնահատման նպատակով:

Ունենալով կանխատեսված կենտրոնական արժեքները, անորոշության չափը (ցրվածքը) և ռիսկերի հաշվեկշիռը՝ կառուցվել են իրական ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսումների հավանականային բաշխման գրաֆիկները 2021 թվականի համար (տես՝ Գծապատկեր 3.1):

ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսման գծապատկերներում կենտրոնական մուգ (կարմիր) ավելի նեղ միջակայքը ներառում է նաև կանխատեսման կենտրոնական սցենարը (կանխատեսված արժեքները): Որքան հավանականային կանխատեսումները հեռանում են կենտրոնական սցենարից, այնքան ավելի ցածր է դառնում դրանց իրագործման հավանականությունը, ինչը գծապատկերում արտահայտվում է ավելի թույլ գունավորմամբ: Ներկայացված բաշխումը սիմետրիկ չէ, քանի որ ապագայի համար առկա են տնտեսական աճի և հարկերի կենտրոնական կանխատեսումից ավելի ցածր մակարդակների ձևավորման ռիսկեր:

2.2. Պետական բյուջեի վրա մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվածից շեղման ռիսկերի ազդեցության ընդհանուր գնահատականը և դրանց մեղմման հնարավորությունները

Կանխատեսումներում մեծ ուշադրություն է դարձվում նաև պետական բյուջեի ծախսերի պլանավորված մակարդակների ապահովումը խաթարող ռիսկերին, որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման:

Աղյուսակ 22. ***ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և ծախսերի, ինչպես նաև այլ հոսքերի գծով ռիսկերի ընդհանուր ազդեցությունը[30]. (ֆինանսավորման պահանջ՝ - պահանջի մեծացում, + պահանջի նվազում), մլրդ ՀՀ դրամ***

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող ռիսկեր	2021թ.
1. Կանխատեսվածից 1.9 տոկոսային կետով ավելի ցածր իրական ՀՆԱ-ի աճ	-9.2
2. 1.5 տոկոսային կետով ավելի ցածր գնաճի ռիսկ	3.2

[30]Ընդհանուր ազդեցության գնահատականը հիմնված է մակրոտնտեսական ռիսկերի առանձին հանդես գալու ենթադրության վրա:

3. Փոխարժեքի առավելագույնը 5.0 տոկոսով արժեզրկման ռիսկ	6.6
4. Ներմուծման 10.4 տոկոսով նվազման ռիսկ	-14.5
5. ԵՄ բյուջետային աջակցության դրամաշնորհների չստացման ռիսկեր	2.2
Ընդամենը	**-11.7**

Աղյուսակ 22-ում ցույց են տրված գնահատված լրացուցիչ ռիսկերը, որոնք կհանգեցնեն լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման: Ակնհայտորեն երևում է, որ գնաճի տատանումների հետևանքով կնվազի նախատեսված ֆինանսավորման պահանջը և համապատասխանաբար կփոփոխվեն նաև պետական բյուջեի ծախսերը՝ նվազման ուղղությամբ:

Հարկ է նշել, որ սպասվում է շուրջ 68 մլն Եվրոի չափով ԵՄ բյուջետային աջակցության դրամաշնորհի ստացում, որի մի մասը կարող է ստացվել 2020, իսկ մյուս մասը 2021 թվականին: Սակայն, վերջիս պարունակում է բարձր անորոշություն, այդ իսկ պատճառով ներառված չէ հիմնական սցենարի կանխատեսումներում: Դրամաշնորհի ստացումը հանդիսանում է դրական ռիսկ, և դրա ստացման պարագայում փոփոխություններ կառաջանան ինչպես բյուջեի եկանուտների, այնպես էլ պակասուրդի և պարտքի ցուցանիշներում:

Հաշվի առնելով մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող մակարդակից վերոնշյալ հնարավոր շեղումների ռիսկերի գնահատականները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման տեսանկյունից 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի լրացուցիչ ֆինանսավորման պահանջը կկազմի շուրջ 11.9 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 0.2%-ը:

3. ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

Կանխատեսումներ: Աղյուսակ 23-ում ներկայացված է ՀՀ ֆինանսների նախարարության և այլ կառույցների կողմից ՀՀ տնտեսական աճի 2020-2021թթ. կանխատեսումների համեմատականը: Նշված կառույցների կողմից ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները հիմնականում վերանայվել են նվազման ուղղությամբ: Այսպես՝ ՀՀ կենտրոնական բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը և Մուդիսը 2020թ. ՀՆԱ կանխատեսվող ցուցանիշը նվազեցրել են 2.2-4.5 տոկոսային կետով՝ կանխատեսելով համապատասխանաբար 6.2%, 6.0% և 4.0% անկում: 2020թ. ՀՀ տնտեսական ավելի խորը անկման կանխատեսումները պայմանավորված են ինչպես ՀՀ, այնպես էլ աշխարհի տնտեսությունների վերջին զարգացումների և կորոնավիրուսի ավելի խորը հետևանքները հաշվի առնելու հանգամանքով:

Ռիսկեր: Հաշվի առնելով կորոնավիրուսի համավարակի անորոշությունները՝ կապված դրա տարածման տեմպերի, երկրորդ ալիքի հավանականության, ինչպես նաև հակավիրուսի հայտնաբերման հետ, բոլոր կանխատեսողները 2021թ. ՀՀ տնտեսական աճի ռիսկերը գնահատում են հիմնականում դեպի ներքև:

Աղյուսակ 23. *ՀՀ ՖՆ և այլ կառույցների կողմից ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները (%)*

	2020թ.	2021թ.
ՀՀ ֆինանսների նախարարություն (2020 սեպտեմբեր)	-6.0	4.8
ՀՀ կենտրոնական բանկ (2020թ. սեպտեմբեր)	-6.2	4.9
Արժույթի միջազգային հիմնադրամ (2020 սեպտեմբեր)	-6.0	3.5
Մուդիս (2020 օգոստոս)	-4.0	7.5
ՀՀ կենտրոնական բանկ (2020թ. հունիս)	-4.0	5.5
Համաշխարհային բանկ (2020 հունիս)	-2.8	4.9
ՀՀ ֆինանսների նախարարություն (2020 ապրիլ)	-2.6	7.0
ՀՀ կենտրոնական բանկ (2020թ. մարտ)	0.7	7.2
Արժույթի միջազգային հիմնադրամ (2020 ապրիլ)	-1.5	4.8
Մուդիս (2020 ապրիլ)	0.5	7.0

Աղբյուրը՝ համապատասխան կառույցների հրապարակումներ

4. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ (ԷՆԵՐԳԵՏԻԿԱ, ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ) ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ներածություն

Հարկաբյուջետային ռիսկերի գնահատման բարելավման նպատակով Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) հետ համատեղ մշակվել է ֆիսկալ ռիսկերի կառավարման բարելավման 2019-2023 թվականների ճանապարհային քարտեզը, որով նախանշված նպատակների իրականացման համար կատարվել է նաև ենթակառուցվածքային ոլորտներում, մասնավորապես, էներգետիկայի, տրանսպորտի և ջրային տնտեսության ոլորտների թվով քսան կազմակերպությունների գործունեությանն առնչվող հարկաբյուջետային ռիսկերի գնահատում: Այս համատեքստում, զուգահեռաբար, իր գործուն աջակցությունն է ցուցաբերել նաև Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ):

Հարկաբյուջետային ռիսկերի գնահատման նպատակը

Հարկաբյուջետային ռիսկերի այս գնահատման նպատակն է ֆինանսական վիճակի վերլուծության միջոցով գնահատել Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման հավանականությունը, որը կարող է հանգեցնել պետական բյուջեից Ընկերություններին չնախատեսված փոխառությունների, սուբսիդիաների տրամադրման, սեփական կապիտալի համալրման կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտության, ինչպես նաև Ընկերություն-ների կողմից պետական բյուջե կանխատեսված շահութաբաժինների, ստացված վարկային

միջոցների օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսների չվճարման և մայր գումարների չմարման:

Հարկաբյուջետային ռիսկերի գնահատման մեթոդաբանություն

Ընկերությունների կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառվել է ԱՄՀ-ի կողմից հրապարակված՝ «Կորպորատիվ հատվածից առաջացող ֆիսկալ ռիսկերի կառավարման ուղեցույց»-ում (այսուհետ՝ ԱՄՀ ուղեցույց), ինչպես նաև ԱԶԲ խորհրդատուի հետ մշակված և ՀՀ ֆինանսների նախարարի 14.09.2018թ. N439-Ա հրամանով հաստատված «Ֆիսկալ ռիսկերի գնահատման ձեռնարկ»-ում ներկայացված մեթոդաբանությունը, որի համաձայն Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման հավանականությունը կանխատեսելու համար հաշվարկվել է միջազգայնորեն այդ նպատակով ընդունված Է. Ալթմանի «Z-միավոր» կոչվող հսկիչ ցուցանիշը: Զուգահեռաբար Ընկերությունների ֆինանսական հուսալիության մասին լրացուցիչ տեղեկատվության ստացման, ինչպես նաև «Z-միավոր»-ի ստուգաճշտման համար կիրառվել են լրացուցիչ ֆինանսական գործակիցներ (շահութաբերության, իրացվելիության, վճարունակության հաշվարկման համար), որոնք արտացոլում են կապը Ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների տարբեր հոդվածների միջև:

Էներգետիկայի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերություններ

Էներգետիկայի ոլորտի դիտանցման ենթարկված թվով ութ պետական մասնակցությամբ ընկերությունների (Ընկերություններ) գործունեության արդյունքում հարկա-բյուջետային ռիսկերն են.

- Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում որպես ժամանակավոր օգնություն չնախատեսված բյուջետային վարկերի տրամադրման կամ սեփական կապիտալի համալրման համար բյուջետային հատկացումների անհրաժեշտության առաջացում,
- Ընկերություններին չնախատեսված սուբսիդիաների տրամադրում կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն,
- Ընկերություններից պետական բյուջեի մուտքերի կազմում նախատեսված շահութաբաժինների չստացում,
- ՀՀ պետական բյուջեից Ընկերություններին տրամադրված վարկային միջոցների օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսների չվճարում և մայր գումարների չմարում:

2019թ. ընթացքում (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան) էներգետիկայի ոլորտի (այսուհետ՝ Ոլորտ) Ընկերությունների հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները կազմել են 111.9 մլրդ դրամ 2018թ. (այսուհետ՝ նախորդ ժամանակաշրջան) 124.7 մլրդ դրամի դիմաց, կամ պակաս 12.8 մլրդ դրամով (10.3%-ով), իսկ 2020թ. 1-ին կիսամյակում՝ (այսուհետ՝ միջանկյալ ժամանակաշրջան) 61.0 մլրդ դրամ՝ 2019թ. 1-ին կիսամյակի 49.4 մլրդ դրամի դիմաց կամ ավել 11.6 մլրդ դրամով (23.5%-ով): Հաշվետու ժամանակաշրջանում այդ Ընկերությունների հանրագումարային ծախսերը կազմել են 108.9 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 122.8 մլրդ դրամի դիմաց՝ կամ 13.9 մլրդ դրամով

պակաս (11.3%-ով), իսկ միջանկյալ ժամանակաշրջանում 51.0 մլրդ դրամ՝ նախորդ միջանկյալ ժամանակաշրջանի 42.3 մլրդ դրամի դիմաց կամ ավել 8.7 մլրդ դրամով (20.6%-ով):

Ընկերությունների հանրագումարային 111.9 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 108.9 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում շահույթը կազմել է 3.0 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը կազմել է 2.6 մլրդ դրամ, նախորդ ժամանակաշրջանի 2.9 մլրդ դրամի դիմաց: Միջանկյալ ժամանակաշրջանում Ընկերությունների հանրագումարային 61.0 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 51.0 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում շահույթը կազմել է 10.0 մլրդ դրամ (աղյուսակ 24):

Աղյուսակ 24. ***Էներգետիկայի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը (վնասը) ըստ տարիների***

հազ. դրամ

	2018թ.	2019թ.	2020թ. (1-ին կիսամյակ)
	Փաստ.	Փաստ.	Փաստ.
Էներգետիկայի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը հարկումից հետո	**2,877,833.8**	**2,579,309.3**	**7,262,429.0**
«Հայկական ատոմակայան» ՓԲԸ	(2,765,702.0)	(2,521,168.0)	5,493,635.0
«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	3,370,279.0	3,783,925.0	49,597.0
«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն (ՋԷԿ)» ՓԲԸ	2,206,620.8	1,262,087.3	1,752,796.0
«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ	5,740.0	17,908.0	(82,161.0)
«Էներգակարգաբերում» ՓԲԸ[31]	6,449.0	-	-
«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ	31,990.0	15,133.0	30,960.0
«Հայատոմ» ՓԲԸ	11,872.0	11,468.0	13,342.0
«Անալիտիկ» ՓԲԸ	10,585.0	9,956.0	4,260.0

Հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ Ընկերություն-ների հանրագումարային սեփական կապիտալը նվազել է մոտ 2.0 մլրդ դրամով (2.3%-ով) և կազմել 83.2 մլրդ դրամ: Ընդ որում Ընկերությունների հանրագումարային պարտավորությունները 4.6 անգամ գերազանցում են սեփական կապիտալի

[31] **Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի հունվարի 31-ի ««Էներգակարգաբերում» փակ բաժնետիրական ընկերությունը «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը միացման ձևով վերակազմակերպելու մասին» N54-Ա որոշման, 2019թ. վերլուծությունը իրականացվել է թվով 7 ընկերությունների ցուցանիշների հիման վրա:**

հանրագումարային մեծությանը: Միջանկյալ ժամանակաշրջանում նախորդ միջանկյալ ժամանակաշրջանի նկատմամբ Ընկերությունների հանրագումարային սեփական կապիտալը ավելացել է 4.0 մլն դրամով և կազմել 90. 3 մլրդ դրամ (աղյուսակ 25):

Աղյուսակ 25. ***Էներգետիկայի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային հաշվապահական հաշվեկշիռը 2018թ. դեկտեմբերի 31-ի, 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. հունիսի 30-ի դրությամբ***

հազ. դրամ

Հաշվեկշռային հոդվածներ	2018թ.	2019թ.	2020թ. 1-ին կիսամյակ
1. Ընդամենը ակտիվներ	435,287,267.9	466,665,802.2	463,824,230.0
- Ընթացիկ ակտիվներ	79,960,062.9	84,423,033.2	89,161,822.0
- Ոչ ընթացիկ ակտիվներ	355,327,205.0	382,242,768.9	374,662,408.0
2. Ընդամենը պարտավորություններ	350,159,009.6	383,500,663.1	373,560,452.0
- Ընթացիկ պարտավորություններ	66,335,523.5	66,024,817.6	58,213,157.0
- Ոչ ընթացիկ պարտավորություններ	283,823,486.1	317,475,845.5	315,347,295.0
3. Սեփական կապիտալ (զուտ ակտիվներ)	85,128,258.3	83,165,139.1	90,263,778.0

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել: Ընդ որում «Երևանի ՋԷԿ», «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ները հանդիսանում են միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ենթավարկային պայմանագրերով Ոլորտին տրամադրված վարկային միջոցների խոշորագույն ստացողներից: Ընկերությունները ներգրավված չեն այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ այդ Ընկերությունների ֆինանսական վիճակի վրա:

Հաշվետու ժամանակաշրջանում որոշ Ընկերությունների ֆինանսական կատարողականի փոքր-ինչ բարելավման արդյունքում ստացված շահութաբաժինները կազմել են 49.5 մլն դրամ՝ կանխատեսվող 36.0 մլն դրամի փոխարեն: Հետևաբար, 2019թ. փաստացի շահութաբաժինների գումարը 13.4 մլն դրամով գերազանցել է կանխատեսվող ցուցանիշը, որը պայմանավորված է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի մոտ 3 անգամ ավել շահութաբաժնի վճարմամբ:

Ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 26. ***Էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները***

Ցուցանիշ	2018թ.	2019թ.	2020թ. 1-ին կիսամյակ	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	1.1	1.0	1.2	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա (%)	(4.6)	2.4	11.9	Առնվազն 8%
Արագ իրացվելիության գործակից	0.5	0.4	0.6	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն (օր)	70.3	48.5	39.5	Առավելագույնը 60/30 օր
Պարտքի սպասարկման գործակից	0.1	0.3	0.2	Առավելագույնը 0.5
Վերաֆինանսավորման գործակից	3.1	2.7	5.0	Առավելագույնը 1
Z- միավոր	0.72	0.8	1.08	Ապահով գոտի Z>2.6, Գորշ գոտի 1.1<Z<2.6, Ծանր գոտի Z<1.1

Ինչպես երևում է աղյուսակից, հաշվետու ժամանակաշրջանում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման նշանակալի հավանականության մասին (գործակիցը՝ Z=0.8, գտնվում է սահմանված ծանր գոտում՝ Z<1.1), իսկ միջանկյալ ժամանակաշրջանում արդեն նկատվում է բարելավման միտում, (գործակիցը՝ Z=1.08):

Հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից երեքը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և վկայում են ֆինանսական վիճակի վատթարացման բարձր հավանականության մասին:

Զուտ շահույթի մարժան բնութագրում է բիզնեսի գործառնական արդյունավետությունը: Այն հաշվետու ժամանակաշրջանում 2.4% է, որը Ոլորտի որոշ Ընկերությունների վնասով աշխատելու արդյունք է և դեռևս ցածր է միջազգային պրակտիկայում կիրառվող շեմային

մակարդակից, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում այս ցուցանիշը ցուցաբերել է դրական դինամիկա, աճել է 0.4 տոկոսային կետով (գործակիցը կազմել է 11. 9):

Արագ իրացվելիության գործակիցը հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում նախորդ ժամանակաշրջանների նկատմամբ դեռևս ցածր է մնում միջազգային պրակտիկայում կիրառվող շեմային մակարդակից, որը փաստում է, որ որոշ Ընկերություններ կարող են արագ իրացվելի ընթացիկ ակտիվների հաշվին մարել ընթացիկ պարտավորությունների ընդամենը 40-60 տոկոսը:

Դեբիտորական պարտքերի վերադարձելիության միջին ժամանակաշրջանի ցուցանիշը հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի ցուցանիշի նկատմամբ չնայած ցուցաբերել է աճման դինամիկա, այնուամենայնիվ հաշվետու տարում մնացել է սահմանային նորմայի միջակայքում (հաշվետու տարում նախորդ տարվա նկատմամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերը նվազել են 2.3 մլրդ դրամով կամ 18.9%-ով):

Վերաֆինանսավորման գործակիցը հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ դրսևորել է նվազման դինամիկա և կազմել 2.7, որը դեռևս բավականին բարձր է միջազգային պրակտիկայում կիրառվող շեմային մակարդակից: Դա փաստում է, որ որոշ Ընկերություններ ի վիճակի չեն գործառնություններից ստացվող դրամական հոսքերի հաշվին կատարել իրենց ընթացիկ պարտավորությունները:

Հաշվի առնելով, որ հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում Ընկերությունների համար հաշվարկված Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարանալու բարձր հավանականության մասին, այս դեպքում, անկախ լրացուցիչ գործակիցներից, Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման հավանականությունը նշանակալի է:

Մասնավոր ընկերություններ

Էներգետիկայի ոլորտի դիտանցման ենթարկվող մասնավոր Ընկերությունների գործունեության արդյունքում հարկաբյուջետային ռիսկերն են.

- ՀՀ պետական բյուջեից մասնավոր Ընկերություններին չնախատեսված փոխառությունների տրամադրում կամ սեփական կապիտալի համալրում,
- Մասնավոր Ընկերություններին սուբսիդիաների տրամադրում կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն,
- ՀՀ պետական բյուջեից մասնավոր Ընկերություններին տրամադրված վարկերի դիմաց տոկոսների չվճարում և մայր գումարների չմարում:

Հաշվետու ժամանակաշրջանում էներգետիկայի ոլորտի դիտանցման ենթարկված մասնավոր ընկերությունների (թվով հինգ) հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ ավելացել են 23.3 մլրդ դրամով և կազմել 463.1 մլրդ դրամ, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում նախորդ միջանկյալ ժամանակաշրջանի նկատմամբ նույնպես ավելացել են 7.6 մլրդ դրամով և կազմել 223.4 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունների հանրագումարային ծախսերը կազմել են 436.3 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 437.4 մլրդ դրամի դիմաց՝ նվազելով 1.1 մլրդ դրամով (0.25%-ով), իսկ միջանկյալ ժամանակաշրջանում նախորդ միջանկյալ ժամանակաշրջանի նկատմամբ ավելացել են 10.2 մլրդ դրամով և կազմել 208.5 մլրդ դրամ:

Ընկերությունների 463.1 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 436.3 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում շահույթը կազմել է 26.8 մլրդ դրամ, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում՝ Ընկերությունների հանրագումարային 223.4 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 208.5 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում շահույթը կազմել է 14.9 մլրդ դրամ, որից զուտ շահույթը 8.6 մլրդ դրամ (աղյուսակ 27):

Աղյուսակ 27. ***Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների հանրագումարային զուտ շահույթն ըստ տարիների***

հազ. դրամ

Մասնավոր ընկերություններ	2018թ.	2019թ.	2020թ. 1-ին կիսամյակ
	Փաստ	Փաստ	Փաստ
ԸՆԴԱՄԵՆԸ	16,154,475.0	14,830,506.0	8,646,589.0
1. «Հրազդան ՋԷԿ» ԲԲԸ	2,835,161.0	2,382,469.0	(209,941.0)
2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	14,920,000.0	524,000.0	2,489,000.0
2.1 «Տրանսգազ» ՍՊԸ*	(5,811.0)	23,776.0	(31,957.0)
3.«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ	(12,353,723.0)	159,937.0	(442,299.0)
4. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	10,753,037.0	11,764,100.0	6,809,829.0

*«Տրանսգազ» ՍՊԸ-ի ցուցանիշները ներառված են «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի ցուցանիշներում

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել: Ընդ որում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ները հանդիսանում են միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ենթավարկային պայմանագրերով ոլորտին տրամադրված վարկային միջոցների խոշորագույն ստացողներից:

Ընկերությունները ներգրավված չեն այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ այդ Ընկերությունների ֆինանսական վիճակի վրա:

Ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 28. ***Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները***

Ցուցանիշ	**2018թ.**	**2019թ.**	2020թ. 1-ին կիսամյակ	**Թույլատրելի սահմանային նորմա**
Ծախսերի վերականգնման գործակից	1.1	1.1	1.1	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա (%)	3.7	3.2	3.9	Առնվազն 8%
Արագ իրացվելիության գործակից	2.8	2.8	2.5	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն (օր)	54.6	57.9	41.4	Առավելագույնը 60/30 օր
Պարտքի սպասարկման գործակից	0.1	0.1	0.1	Առավելագույնը 0.5
Վերաֆինանսավորման գործակից	1.0	0.7	1.2	Առավելագույնը 1
Z միավոր	1.23	1.4	1.65	Ապահով գոտի՝ Z>2.6,Գորշ գոտի՝ 1.1<Z<2.6,Ծանր գոտի՝ Z<1.1:

Ինչպես երևում է աղյուսակից հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման միջին հավանականության մասին (համապատասխանաբար՝ Z=1.4 և Z=1.65, գտնվում են սահմանված գորշ գոտում 1.1<Z<2.6):

Հաշվետու ժամանակաշրջանում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից մեկը, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում երեքը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային:

Զուտ շահույթի մարժան բնութագրում է բիզնեսի գործառնական արդյունավետությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ այս ցուցանիշը ցուցաբերել է նվազման դինամիկա և 4.8 տոկոսային կետով պակաս է պրակտիկայում կիրառվող նվազագույն նորմայից, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում ցուցաբերել է դրական դինամիկա և կազմել է 3,9 տոկոսային կետ, որը դեռևս 4,1 տոկոսային կետով պակաս է պրակտիկայում կիրառվող նվազագույն նորմայից:

Արագ իրացվելիության գործակիցը հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ ցուցաբերել է դրական դինամիկա և կազմել 2.8, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում կազմել 2. 5, որը փաստում է, որ Ընկերությունները արագ իրացվելի ընթացիկ ակտիվների հաշվին կարող են մարել իրենց ընթացիկ պարտավորությունները:

Վերաֆինանսավորման գործակիցը հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 0.3 կետով և կազմել է 0.7, որը փաստում է, որ որոշ Ընկերություններն ի վիճակի են գործառնություններից ստացվող իրենց դրամական հոսքերի հաշվին կատարել իրենց ընթացիկ պարտավորությունները, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում կազմել է 1. 2:

Հաշվի առնելով, որ հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատող Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական միջին վիճակի հավանականության մասին (Z=1.4) և (Z=1.65), իսկ լրացուցիչ վեց գործակիցներից հաշվետու ժամանակաշրջաններում մեկը, միջանկյալ ժամանակաշրջաններում երեքը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում կիրառվող շեմային մակարդակին, հետևաբար Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականության գնահատականը միջին է:

Տրանսպորտի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերություններ

Տրանսպորտի ոլորտի դիտանցման ենթարկվող պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության արդյունքում հարկաբյուջետային ռիսկերն են.

- Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում որպես ժամանակավոր օգնություն չնախատեսված բյուջետային վարկերի տրամադրման կամ սեփական կապիտալի համալրման համար բյուջետային հատկացումների անհրաժեշտության առաջացում,
- Ընկերություններին չնախատեսված սուբսիդիաների տրամադրում կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն,
- Ընկերություններից պետական բյուջեի մուտքերի կազմում նախատեսված շահութաբաժինների չստացում,
- ՀՀ պետական բյուջեից Ընկերություններին տրամադրված վարկային միջոցների օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսների չվճարում և մայր գումարների չմարում:

Հաշվետու ժամանակաշրջանում տրանսպորտի ոլորտի երեք պետական մասնակցությամբ ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ) հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները կազմել են 11.4 մլրդ դրամ՝ 2018թ. 11.8 մլրդ դրամի դիմաց կամ պակաս 0.4 մլրդ դրամով (3.4%), իսկ միջանկյալ ժամանակշրջանում՝ հանրագումարային եկամուտները կազմել են 3.4 մլրդ դրամ, նախորդ միջանկյալ ժամանակաշրջանի 4.73 մլրդ դրամի դիմաց կամ 1.36 մլրդ դրամով պակաս (28.7%): Հաշվետու ժամանակաշրջանում այդ Ընկերությունների հանրագումարային ծախսերը կազմելեն 8.7 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 8.4 մլրդ դրամի դիմաց՝ կամ ավել 0.3 մլրդ դրամով (3.6%), իսկ միջանկյալ ժամանակաշրջանում հանրագումարային ծախսերը կազմել են 4.0 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունների 11.4 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 8.7 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում շահույթը կազմել է 2.7 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը՝ 2.1 մլրդ դրամ, 2020թ. առաջին կիսամյակում վնասը կազմել է 0.7 մլրդ դրամ, իսկ զուտ վնասը ՝ 0.6 մլրդ դրամ (աղյուսակ 29):

Աղյուսակ 29. ***Տրանսպորտի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը (վնասը) ըստ տարիների***

հազ. դրամ

	2018թ.	2019թ.	2020թ. 1-ին կիսամյակ
	Փաստ.	Փաստ.	Փաստ.
Տրանսպորտային ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը հարկումից հետո	**2,701,095.0**	**2,116,872.0**	**(601,980.0)**
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	1,794,986.0	1,357,196.0	(467,664.0)
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	825,467.0	790,219.0	(91,884.0)
«Հայավտոկայարան» ՓԲԸ	80,642.0	(30,543.0)	(42,432.0)

Աղյուսակ 30. ***Տրանսպորտային ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային հաշվապահական հաշվեկշիռը 2018թ. դեկտեմբերի 31-ի, 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. հունիսի 30-ի դրությամբ***

հազ. դրամ

Հաշվեկշռային հոդվածներ	2018թ.	2019թ.	2020թ. 1-ին կիսամյակ
1. Ընդամենը ակտիվներ	28,261,773.0	27,971,012.0	25,061,530.0
- Ընթացիկ ակտիվներ	7,416,624.0	7,693,811.0	5,280,290.0
- Ոչ ընթացիկ ակտիվներ	20,845,149.0	20,277,201.0	19,781,240.0
2. Ընդամենը պարտավորություններ	14,098,044.0	12,668,912.0	12,348,971.0
- Ընթացիկ պարտավորություններ	2,290,818.0	2,019,561.0	1,838,521.0
- Ոչ ընթացիկ պարտավորություններ	11,807,226.0	10,649,351.0	10,510,450.0
3. Սեփական կապիտալ (զուտ ակտիվներ)	14,163,729.0	15,302,100.0	12,712,560.0

Հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ Ընկերությունների հանրագումարային սեփական կապիտալն ավելացել է 1.1 մլրդ դրամով (7.7%):, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում՝ հանրագումարային սեփական կապիտալըն նվազել է 1.7 մլրդ դրամով (12.2%):

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել:

Հարկ է նաև նշել, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ին ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիայի հաշվարկներում ներառված են նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի շրջանակներում այս ընկերությանը ենթավարկային պայմանագրերով տրամադրված վարկերի մայր գումարների և հաշվարկված տոկոսների մարումները:

Ընկերությունները ներգրավված չեն այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իրենց ֆինանսական վիճակի վրա:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ պետական բյուջե շահութաբաժիններ վճարվել է միայն «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից՝ 406.6 մլն դրամ, կանխատեսված 327.3 մլն դրամի փոխարեն:

Ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 31. ***Տրանսպորտային ոլորտի պետական ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները***

Ցուցանիշ	2018թ.	2019թ.	2020թ. 1-ին կիսամյակ	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	1.4	1.3	0.8	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա (%)	26.0	21.3	(21.5)	Առնվազն 8%
Արագ իրացվելիության գործակից	2.9	3.5	2.5	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն (օր)	59.0	55.8	98.1	Առավելագույնը 60/30 օր
Պարտքի սպասարկման գործակից	0.02	0.01	0.0	Առավելագույնը 0.5
Վերաֆինանսավորման գործակից	0.55	0.53	0.3	Առավելագույնը 1
Z- միավոր	03.9	4.2	2.5	Ապահով գոտի Z>2.6, Գորշ գոտի 1.1<Z<2.6, Ծանր գոտի Z<1.1

Ինչպես երևում է աղյուսակից հաշվետու ժամանակաշրջանում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման ցածր հավանականության մասին (գործակիցը՝ Z=4.2, գտնվում է սահմանված ապահով գոտում՝ Z>2.6), իսկ միջանկյալ ժամանակաշրջանում՝ միջին՝ Z=2.5 (1.1<Z<2.6 գորշ գոտի):

Հաշվետու ժամանակաշրջանում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցները հիմնականում ապահովել են միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները և վկայում են ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին, սակայն միջանկյալ ժամանակաշրջանում՝ ֆինանսական երեք գործակիցներ չեն ապահովել թույլատրելի սահմանային նորմաները:

Հաշվի առնելով, որ հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատող Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին, իսկ ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական գործակիցները ապահովել են միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները և վկայում են ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին, հետևաբար այս երկու նախնական գնահատումների զուգակցման արդյունքում Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման հավանականությունը գնահատվում է ցածր: Սակայն միջանկյալ ժամանակաշրջանում՝ Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատող Z-միավորը

վկայում է Ընկերությունների ֆինանսական միջին ծանրության հավանականության մասին Z=2.5:

Ոռոգման ոլորտ

Ոռոգման ոլորտի դիտանցման ենթարկված պետական մասնակցությամբ երկու ընկերությունների գործունեության արդյունքում հարկաբյուջետային ռիսկերն են.

- Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում որպես ժամանակավոր օգնություն չնախատեսված բյուջետային վարկերի տրամադրման կամ սեփական կապիտալի համալրման համար բյուջետային հատկացումների անհրաժեշտության առաջացում,
- Ընկերություններին չնախատեսված սուբսիդիաների տրամադրում կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն,
- Ընկերություններից պետական բյուջեի մուտքերի կազմում նախատեսված շահութաբաժինների չստացում,
- ՀՀ պետական բյուջեից Ընկերություններին տրամադրված վարկային միջոցների օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսների չվճարում և մայր գումարների չմարում:

Հաշվետու ժամանակաշրջանում ոռոգման ոլորտի երկու պետական մասնակցությամբ ընկերությունների (Ընկերություններ) հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները կազմել են 2.7 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 3.6 մլրդ դրամի դիմաց կամ 0.9 մլրդ դրամով պակաս (25.0%), իսկ միջանկյալ ժամանակաշրջանում Ընկերությունների հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները կազմել են 1.2 մլրդ դրամ նախորդ նույն ժամանակաշրջանի 1.4 մլրդ դրամի դիմաց կամ 0.2 մլրդ դրամով պակաս (14.3%): Հաշվետու ժամանակաշրջանում այդ Ընկերությունների հանրագումարային ծախսերը կազմել են 5.7 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 7.7 մլրդ դրամի դիմաց՝ կամ պակաս 2.0 մլրդ դրամով (26.0%), միաժամանակ միջանկյալ ժամանակաշրջանում հանրագումարային ծախսերը կազմել են 0.9 մլրդ դրամ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 0.8 մլրդ դրամի դիմաց կամ 0.1 մլրդ դրամով ավել (12.5.%):

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունների հանրագումարային 2.7 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 5.7 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում վնասը կազմել է 3.0 մլրդ դրամ, իսկ զուտ վնասը նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ պակասել է 1.1 մլրդ դրամով (26.0.%), Միջանկյալ ժամանակաշրջանում Ընկերությունների հանրագումարային 1.2 մլրդ ընդհանուր եկամուտների և 0.9 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում շահույթը կազմել է 0.3 մլրդ դրամ (աղյուսակ 32):

Աղյուսակ 32. ***Ոռոգման ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային զուտ շահույթը (վնասը) ըստ տարիների***

հազ. դրամ

	2018թ.	2019թ.	2020թ. 1-ին կիսամյակ
	Փաստ.	Փաստ.	Փաստ.

	2018թ.	2019թ.	2020թ. 1-ին կիսամյակ
	Փաստ.	Փաստ.	Փաստ.
Ռոգման ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը հարկումից հետո	(4,175,612.0)	(3,086,788.0)	339,321.0
«Ջրառ» ՓԲԸ	(4,170,199.0)	(3,092,914.0)	337,980.0
«Մելիորացիա» ՓԲԸ	(5,413.0)	6,126.0	1,341.0

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել:

Ընկերությունները ներգրավված չեն այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իրենց ֆինանսական վիճակի վրա:

Ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 33. ***Ռոգման ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների ֆինանսական ցուցանիշները***

Ցուցանիշ	2018թ.	2019թ.	2020թ. 1-ին կիսամյակ	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	0.5	0.5	1.4	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա (%)	(211.7)	(197.7)	58.8	Առնվազն 8%
Արագ իրացվելիության գործակից	7.7	6.2	3.6	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն (օր)	388.6	262.0	541.5	Առավելագույնը 60/30 օր
Պարտքի սպասարկման գործակից	(0.0)	0.0	0.2	Առավելագույնը 0.5
Վերաֆինանսավորման գործակից	0.2	0.1	0.5	Առավելագույնը 1
Z- միավոր	38.3	171.6	91.1	Ապահով գոտի Z>2.6, Գորշ գոտի 1.1<Z<2.6, Ծանր գոտի Z<1.1

Ինչպես երևում է աղյուսակից հաշվետու ժամանակաշրջաններում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր

վիճակի բավականին ցածր հավանականության մասին (գործակիցը՝ համապատասխանաբար՝ Z=171.6, Z= 91.1, գտնվում են սահմանված ապահով գոտում՝ Z>2.6):

Հաշվետու ժամանակաշրջանում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից երեքը, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում մեկը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային, իսկ Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատող Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին, հետևաբար այս երկու նախնական գնահատումների զուգակցման արդյունքում Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման հավանականությունը գնահատվում է միջին:

Պետական-մասնավոր գործընկերություն (ՊՄԳ)

Տրանսպորտի և ջրային տնտեսության ոլորտներում ՊՄԳ ձևաչափով գործում են «Հարավկովկասյան երկաթուղի» և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ները:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ

ՀՀ կառավարության 07.02.2008թ. N83-Ա որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի և «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի միջև 13.02.2008թ. կնքվել է «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ փոխանցելու մասին» կոնցեսիոն պայմանագիրը:

Հաշվետու ժամանակաշրջանում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդամենը եկամուտները կազմել են 25.5 մլրդ դրամ նախորդ ժամանակաշրջանի 23.0 մլրդ դրամի դիմաց կամ ավել 10.9%-ով (2.5 մլրդ դրամով), իսկ միջանկյալ ժամանակաշրջանում՝ 10.7 մլրդ դրամ նախորդ միջանկյալ ժամանակաշրջանի 9.2 մլրդ դրամի դիմաց կամ ավել 1.5 մլրդ դրամով (16.3%):

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության ծախսերը կազմել են 24.3 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 22.8 մլրդ դրամի դիմաց՝ կամ ավել 1.5 մլրդ դրամով (6.6%), իսկ միջանկյալ ժամանակաշրջանում ծախսերը կազմել են 9.4 մլրդ դրամ նախորդ միջանկյալ ժամանակաշրջանի 8.6 մլրդ դրամի դիմաց, կամ ավել 0.8 մլրդ դրամով (9.3%):

Ընկերության 25.5 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 24.3 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում շահույթը կազմել է 1.2 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը՝ 1.1 մլրդ դրամ, միաժամանակ միջանկյալ ժամանակաշրջանում 10.7 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 9.4 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում շահույթը կազմել է 1.3 մլրդ դրամ:

Ընկերության հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 34. *«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ֆինանսական ցուցանիշները*

Ցուցանիշ	2018թ.	2019թ.	2020թ. 1-ին կիսամյակ	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	1.0	1.1	1.1	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա (%)	2.6	4.5	14.5	Առնվազն 8%
Արագ իրացվելիության գործակից	2.1	2.6	3.3	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն (օր)	13.1	23.3	15.4	Առավելագույնը 60/30 օր
Պարտքի սպասարկման գործակից	0.0	0.0	0.0	Առավելագույնը 0.5
Վերաֆինանսավորման գործակից	1.4	1.0	1.0	Առավելագույնը 1
Z- միավոր	18.8	17.8	19.0	Ապահով գոտի Z>2.6, Գորշ գոտի 1.1<Z<2.6, Ծանր գոտի Z<1.1

Ինչպես երևում է աղյուսակից, հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերության ֆինանսական ծանր վիճակի բավականին ցածր հավանականության մասին (գործակիցները համապատասխանաբար՝ Z=17.8, Z=19 գտնվում են սահմանված ապահով գոտում՝ Z>2.6):

Հաշվետու ժամանակաշրջանում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից մեկը չի համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցները համապատասխանում են միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և վկայում են ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին:

Հաշվի առնելով, որ հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերության ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից ընդամենը մեկը չի համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներն էլ համապատասխանում են այդ նորմային, հետևաբար այս երկու նախնական գնահատումների զուգակցման արդյունքում Ընկերության ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատվում է ցածր:

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունը չունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ենթավարկային պայմանագրերով նախատեսված վարկային պարտավորություններ:

Ընկերությունը ներգրավված չի այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էականա զդեցություն ունենալ ընկերության ֆինանսական վիճակի վրա:

Հարկ է նաև նշել, որ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված է, որ կոնցեդենտը սուբսիդավորում է (մասնակի փոխհատուցում է) համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումների կոնցեսիոների (Ընկերության) տարեկան վնասը կոնցեսիոների կողմից անկախ աուդիտորի կողմից այդ վնասների հաստատված հաշվարկների ներկայացման պարագայում:

Սուբսիդիայի համաձայնեցված չափը կազմում է 2015թ. 25%, 2016թ. մինչև 2038թ. 30 տոկոս (2015թ. համար 344.1 մլն դրամ, 2016թ.՝ 312.8 մլն դրամ, իսկ 2017թ-ին 301.7 մլն դրամ, 2018թ-ին՝ 347.0 մլն դրամ, 2019թ. նախատեսվել է 352.0 մլն դրամ, փաստացի վճարվել է 377.8 մլն դրամ):

Միաժամանակ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված է նաև, որ կոնցեսիոները կոնցեդենտին պետք է վճարի տարեկան կոնցեսիոն վճար՝ համախառն հասույթի 2%-ի չափով (2015թ.՝ 344.1 մլն դրամ, 2016թ.՝ 312.8 մլն դրամ, 2017թ.՝ 301.7 մլն դրամ, իսկ 2018թ.՝ 347.0 մլն դրամ, 2019թ. փաստացի վճարվել է 377.8 մլն դրամ):

Հետևաբար հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիայի և Ընկերության կողմից վճարվող կոնցեսիոն վճարի չափերը համեմատելի են, ուստի Ընկերության կողմից ՀՀ պետական բյուջեի վճարվող կոնցեսիոն վճարի չվճարման ռիսկը գնահատվում է բավականին ցածր:

Միաժամանակ հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության արդյունքները՝ ՀՀ պետական բյուջեից Ընկերությանը չնախատեսված փոխառությունների, սուբսիդիաների (այդ թվում լրացուցիչ) տրամադրման, սեփական կապիտալի համալրման կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտության, ինչպես նաև Ընկերության կողմից ՀՀ պետական բյուջե վճարվող կոնցեսիոն վճարի չվճարման ռիսկը գնահատվում է ցածր:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ

21.11.2016թ. ՀՀ կառավարության և «Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվել է «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագիր՝ 15 տարի ժամկետով (Վարձակալական պայմանգիր):

Վարձակալական պայմանգրի 9-րդ հոդվածի համաձայն Ընկերության կողմից մատուցվող ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայությունների սակագները կարգավորվում և հաստավում են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

Միաժամանակ Վարձակալական պայմանագրի 8-րդ հոդվածի համաձայն Ընկերությունը պարտավոր է յուրաքանչյուր կիսամյակ վճարել վարձակալության վճար՝ համաձայն նախատեսված վարձակալության վճարի վճարման ժամանակացույցի: Վարձակալության վճարի ամբողջական գումարը կազմել է 89.7 մլրդ ՀՀ դրամ:

Հարկ է նաև նշել, որ Ընկերությունն ապահովել է Վարձակալական պայմանագրով 2020թ. Վարձակալական վճարի կիսամյակային առաջին վճարումը:

Հաշվետու ժամանակաշրջանում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդամենը եկամուտները կազմել են 22.4 մլրդ դրամ նախորդ ժամանակաշրջանի 21.4 մլրդ դրամի դիմաց՝ կամ ավել 4.6%-ով (1.0 մլրդ դրամով), իսկ միջանկյալ ժամանակաշրջանում՝ 9.3 մլրդ դրամ նախորդ միջանկյալ ժամանակաշրջանի 9.1 մլրդ դրամի դիմաց, կամ ավել 0.2 մլրդ դրամով (2.2%-ով):

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության ծախսերը կազմել են 19.2 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 19.4 մլրդ դրամի դիմաց՝ կամ պակաս 1.0%-ով (0.2 մլրդ դրամով), իսկ միջանկյալ ժամանակաշրջանում՝ 7.3 մլրդ դրամ նախորդ միջանկյալ ժամանակաշրջանի 7.5 մլրդ դրամի դիմաց կամ պակաս 0.2 մլրդ դրամով (2.7%-ով):

Ընկերության 22.4 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 19.2 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում շահույթը կազմել է 3.2 մլրդ դրամ, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում 9.3 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 7.3 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի պայմաններում շահույթը կազմել է 2.0 մլրդ դրամ:

Ընկերության հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 35. ***«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ֆինանսական ցուցանիշները***

Ցուցանիշ	2018թ.	2019թ.	2020թ. 1-ին կիսամյակ	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	1.1	1.2	1.3	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա (%)	(14.1)	(9.0)	(2.0)	Առնվազն 8%
Արագ իրացվելիության գործակից	0.6	1.0	1.1	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն (օր)	72.3	74.3	100.4	Առավելագույնը 60/30 օր
Պարտքի սպասարկման գործակից	0.1	0.0	0.0	Առավելագույնը 0.5
Վերաֆինանսավորման գործակից	5.3	2.1	4.0	Առավելագույնը 1
Z- միավոր	(1.3)	(0.5)	0.1	Ապահով գոտի Z>2.6, Գորշ գոտի 1.1<Z<2.6, Ծանր գոտի Z<1.1

Ինչպես երևում է աղյուսակից հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերության ֆինանսական ծանր վիճակի նշանակալի հավանականության մասին (գործակիցները՝ գտնվում են սահմանված ծանր գոտում՝ Z<1.1): Հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից երեքը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և վկայում են ֆինանսական ծանր վիճակի նշանակալի հավանականության մասին:

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունը չունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ենթավարկային պայմանգրերով նախատեսված վարկային պարտավորություններ:

Ընկերությունը ներգրավված չի այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ընկերության ֆինանսական վիճակի վրա:

Հաշվի առնելով, որ հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերության ֆինանսական ծանր վիճակի հավանականության մասին, իսկ ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից երեքը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և վկայում են ֆինանսական ծանր վիճակի հավանականության մասին, հետևաբար այս երկու նախնական գնահատումների զուգակցման արդյունքում Ընկերության ֆինանսական վիճակի վատթարացման հավանականությունը նշանակալի է:

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

ՍՊԵՑԻՖԻԿ ՖԻՍԿԱԼ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՇՐՋԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սպեցիֆիկ ֆիսկալ ռիսկերն առաջանում են պայմանական պարտավորությունների կամ այլ անորոշ իրադարձությունների նյութականացման արդյունքում: Այդ իրադարձություններից յուրաքանչյուրը կարող է ենթադրել անհապաղ և/կամ շարունակական ծախսեր՝ պայմանավորված կառավարության բացահայտ պարտավորություններով (պարտավորություններ, որոնք ունեն իրավական կամ պայմանագրային հիմք) կամ թաքնված պարտավորություններով, որոնք սահմանված չեն որևէ օրենքով կամ պայմանագրով:

Ստորև կատարված ուսումնասիրությունն արտացոլում է սպեցիֆիկ ֆիսկալ ռիսկերի ընդգրկուն շրջանակը, որի համար հիմք է հանդիսացել ԱՋԲ-ի հետ համատեղ մշակված ֆիսկալ ռիսկերի կառավարման բարելավման 2019-2023 թվականների ճանապարհային քարտեզը:

Հնարավոր բնապահպանական պարտավորությունների հետևանքով առաջացող ֆիսկալ ռիսկեր

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) քարտեզագրման արդյունքում առկա է մոտ 2500 սողանքային տարածքներ և ներկայում խնդրի լուծման ֆինանսավորման աղբյուր դիտարկվում է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդը: Թունավոր թափոնների տեղամասերի հետ կապված ռիսկերից խուսափելու նպատակով նշված տարածքներում հանքարդյունաբերական գործունեության թույլտվություններ չեն տրամադրվում:

ՇՄՆ նաև նույնականացրել է հնարավոր բնապահպանական պարտավորություններ ենթադրող 44 տեղամասեր, որոնք առաջացել են դեռևս խորհրդային ժամանակաշրջանում հիմնականում հանքարդյունաբերական ծագումով: Վերականգնման նպատակով ՇՄՆ կողմից առաջնահերթ են համարվել 10 վայրեր, որից 2019թ. վերականգնել է միայն մեկ տեղամաս: ՇՄՆ իրականացնում է ջրի խորքային հորերի որակի ուսումնասիրություններ՝ հնարավոր ռիսկերը բացահայտելու նպատակով:

Այսպիսի հնարավոր պարտավորությունները չափազանց բարդ է նախապես հաշվարկել, սակայն կարևորագույն խնդիրը վերականգնման կարիք ունեցող տեղամասերի

նույնականացումն ու մանրակրկիտ ուսումնասիրությունն է՝ ծախսերի նախնական հաշվարկներ կատարելու նպատակով: Այս առնչությամբ ՇՄՆ բարձրացրել է 3 առաջնահերթ խնդիրներ.

- Սևանա լճի ջրածածկ և ճահճապատ անտառտնկարկների մաքրում: ՇՄՆ հաշվարկների համաձայն 2021-2023թթ. ժամանակահատվածի համար պահանջվում է 706.0 մլն դրամ:

- Սևանա լճից մինչև 1901.5 մետր բացարձակ նիշում գտնվող շենքեր-շինությունների քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ: Սևանա լճի մակարդակի բարձրանալու հետևանքով քանդման ենթակա են դարձել 68520 $մ^2$ ընդհանուր մակերեսով 1697 շենքեր և շինություններ: 2021 և 2022թթ. նախատեսվող աշխատանքների մոտավոր արժեքը կազմում է 1,464 մլն դրամ:

- Ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրազուրկ տեղամասերի և օբյեկտների ռեկուլտիվացիայի նախագծային փաթեթների մշակման աշխատանքներ: Սա առնչվում է վերը նշված հին, շրջակա միջավայրն աղտոտող հանքարդյունաբերական և հարակից ոլորտների 44 տեղամասերին, որոնք ներառում են պոչամբարները: Վտանգավոր և առաջնահերթ համարվող 10 տեղամասերի ամբողջական մաքրման և ռեկուլտիվացիայի ծրագրի մոտավոր արժեքը գնահատվել է 2,216 մլն դրամ:

Այսպիսով, բնապահպանական վերականգման ծախսերի ընդհանուր գնահատված մոտավոր արժեքը ներկայումս մոտ 4.4 մլրդ դրամ է:

Բնական և մարդածին աղետներից առաջացող ֆիսկալ ռիսկեր

Աղետների ռիսկերը կարող են ունենալ հիմնականում բնական պատճառներ, հատկապես՝ հիդրոօդերևութաբանական (ջրհեղեղներ, կարկտահարություն, ցրտահարություն, երաշտ, փոթորիկ), երկրաֆիզիկական (երկրաշարժ, հրաբխի ժայթքում, սողանք), կենսաբանական (համաճարակներ և պանդեմիաներ, սանիտարական այլ ճգնաժամեր), տիեզերական (հեռահաղորդակցության և էլեկտրաէներգետիկ խափանումների հանգեցնող արեգակնային փոթորիկներ): Սակայն, կարող են լինել նաև այլ պատճառներ, հատկապես՝ տեխնոլոգիական, բնատեխնածին:

2019թ. բնական աղետների (կարկտահարություն և ցրտահարություն) հետևանքով վնասվել է 15698 հա ցանքատարածություններ, որոնց հասցված ընդհանուր վնասը կազմել է 9,578 մլն դրամ: 50-100% տուժած հողօգտագործողներին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 437.0 մլն դրամ գումարի փոխհատուցում: 2020թ. տեղի ունեցած բնական աղետների հետևանքով կրած վնասների համար վնասի փոխհատուցում չի նախատեսվում, քանի որ պետական աջակցության միջոցով իրականացվում է գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիր: Սակայն վնասված ցանքատարածությունները կազմում են շուրջ 1221,4 հա, որոնցից ակնկալվող բերքի կորուստը դրամական արժեքով կազմում է շուրջ 636.0 մլն դրամ:

Հայաստանը նաև մեծապես ենթարկվում է երկրաշարժի ռիսկի՝ ինչպես ցույց է տվել 1988թ. Սպիտակի երկրաշարժը: Երևանի տարածաշրջանը սեյսմագետների կողմից համարվում է բարձր ռիսկի գոտի, մասնավորապես՝ Գառնու խզվածքի պատճառով և այստեղ առկա է խոշոր, ավերիչ երկրաշարժերի պատմություն: Այդ տարածքում խոշոր երկրաշարժը կարող է ծանր մակրոտնտեսական ազդեցություններ ունենալ: Հայաստանը պատմականորեն խոցելի է եղել երկրաշարժերի տեսանկյունից: 1988թ. տեղի ունեցած վերջին ավերիչ երկրաշարժի հետևանքով երկրի հյուսիսային շրջաններում պատճառված տնտեսական

վնասները կազմել են մոտավորապես 15-20 մլրդ ԱՄՆ դոլար: Նշված վնասները գերազանցում էին նախկին Հայկական ԽՍՀ ՀՆԱ-ն:

Համաձայն աղետների ռիսկի կառավարման վերաբերյալ ԱԶԲ 2014թ. զեկույցի, Երևանում 7.0 բալ ուժգնությամբ երկրաշարժի հետևանքով կարող է զոհվել ընդհուպ մինչև 300 հազար մարդ, ինչը պայմանավորված է ոչ համարժեք, խորհրդային ժամանակաշրջանի մեծաթիվ շենքերի, հատկապես՝ խոշոր բազմաբնակարան շենքերի առկայությամբ:

Նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տնտեսական վնասները կարող են կազմել ընդհուպ մինչև ՀՆԱ 100%, ինչը կարող է նշանակել ՀՆԱ 30%-ի չափով ֆիսկալ ազդեցություններ (Համաշխարհային Բանկ և ԱԶԲ):

Կենսաբանական վտանգների առումով, ինչպես այլ երկրներում, այնպես էլ ՀՀ-ում, Covid-19 հիվանդության տարածումը՝ չնայած վաղ ձեռնարկված միջոցառումներին այն տարբեր կասկադային ազդեցությունների միջոցով վերածվեց տնտեսական և սոցիալական ճգնաժամի: Հաշվի առնելով, որ համավարակը դեռևս շարունակվում է, այս աղետի ֆիսկալ ազդեցությունների գնահատմանը հնարավոր է անդրադառնալ համավարակի ավարտից հետո (ուղիղ սանիտարահամաճարակային արձագանք և տնտեսական ու սոցիալական աջակցության փաթեթներ):

Ֆինանսական համակարգից առաջացող ֆիսկալ ռիսկեր

Վերջին տարիների ընթացքում ՀՀ ԿԲ կողմից վերահսկվող առևտրային բանկերն ուժեղ կապիտալացվել են և ներկայումս ունեն հասանելի կապիտալի բուֆերներ: Ֆինանսական համակարգը բավական ամուր է խիստ շոկերի դիմակայելու տեսանկյունից: Ինչպես և երկրների մեծամասնությունում, Covid-19 համավարակի հետ կապված ճգնաժամն առաջացրել է ՀՀ ԿԲ կողմից իրացվելիության մասով աջակցության ապահովման անհրաժեշտություն՝ բացի կապիտալի բուֆերի հետ կապված որոշ կանոնների մեղմացումը, որը թույլ է տալիս օգտագործել այդ բուֆերները, նաև հիմնական կապիտալի համարժեքության նորմատիվը 10%-ից մինչև 9% իջեցնելը:

Ներկա փուլում դեռևս վաղ է նշել վարկերի այն մասնաբաժինը, որոնք կդառնան ժամկետանց և ՀՀ ԿԲ-ն օգոստոս ամսին հրապարակված Ֆինանսական կայունության հաշվետվությունում նշում է այս առումով առկա մեծ անորոշությունը: ՀՀ ԿԲ-ն բանկերին առաջարկել է խթանել ժամանակավոր վերաֆինանսավորումները և վարկերի մարման ժամանակացույցերի փոփոխություններն՝ առանց ճգնաժամի առաջին ամիսների ընթացքում հաճախորդների վարկային վարկանիշի որակի փոփոխության: Վերը նշված Ֆինանսական կայունության հաշվետվությունում ՀՀ ԿԲ-ն նաև իրականացրել է սթրես թեստեր, որոնք ցույց են տալիս, որ բանկային համակարգը, ընդհանուր առմամբ, ունակ է դիմակայել հիմնական ռիսկերի:

Առևտրային բանկերում խնդիրների ծագման հետևանքով Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին ֆինանսական միջոցների տրամադրման անհրաժեշտության ռիսկը ներկայումս, սահմանափակ է, սակայն անորոշությունների մակարդակը մնում է բարձր:

Պետության դեմ իրականացվող դատական վարույթներից առաջացող ֆիսկալ ռիսկեր

ՀՀ ՖՆ մասնակցությամբ պետության դեմ քննվող հայցերի քանակը կազմում է 725, մոտ 3.0 մլրդ ՀՀ դրամի, 1.6 մլն ԱՄՆ դոլարի, 606.4 հազ. եվրոյի և 3.6 մլն չեխական կրոն հայցագնով:

Բացի վերը նշված հայցերից, առկա են առավել նշանակալի այլ հայցեր՝ ընդդեմ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի: Ներկայացված հայցերով ՀՀ դատարաններում վիճարկվում է 2114 դատական գործ՝ մոտ 116.0 մլրդ դրամ գումարի չափով:

Անհրաժեշտ է նշել, որ ռիսկի իրական մակարդակը շատ ավելի ցածր է, քանի որ հայցվորները ոչ բոլոր գործերն են հաղթում, իսկ հաղթելու պարագայում վճռով հաճախ սահմանվում են ավելի փոքր գումարներ:

Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ձևաչափով գործող ընկերությունների պայմանագրերից բխող պայմանական պարտավորությունների վերլուծություն

Վերլուծության են ենթարկվել ստորև ներկայացված ՊՄԳ ձևաչափով գործող թվով երեք ընկերությունների պայմանագրերը:

Անվանում	Ոլորտ	Սկիզբ	Ավարտ	Պայմանական պարտավորությունների ֆիսկալ ռիսկի կարգավիճակը	
				Մինչև COVID 19	COVID-19 ի պայմաններում
«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ	Տրանսպորտ	2008թ.	2038թ.	Միջին	Բարձր
«Վեոլիա Ջուր» ՓԲԸ	Ջրամատակարարում և կեղտաջրերի հեռացում	2016թ.	2031թ.	Միջին	Միջին
«Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ	Տրանսպորտ	2002թ.	2032թ.	Ցածր	Բարձր

Բացի նշված երեք պայմանագրերից ՀՀ Կառավարության և մասնավոր ընկերությունների միջև ստորագրվել են կառավարության աջակցության համաձայնագրեր էներգետիկայի ոլորտում, որոնք նույնպես հանդիսանում են պայմանական պարտավորությունների աղբյուր, քանի որ պարունակում են երաշխավորած գնման պայմաններ: Սակայն քանի դեռ դրանցից երկուսը շահագործման հանձնված չեն և գտնվում են կառուցման ընթացքում ֆիսկալ ռիսկի կարգավիճակը գնահատվել է ցածր:

Անվանում	Սկիզբ	Ավարտ	Պայմանական պարտավորությունների ֆիսկալ ռիսկի կարգավիճակը
«Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ	2018թ.	2042թ.	Ցածր
«Արմփաուեր» ՓԲԸ	2017թ.	2042թ.	Ցածր
«Քոնթուրգլոբալ հիդրո կասկադ»	2014թ.	2040թ.	Ցածր

2019թ. դեկտեմբերի 26-ին թիվ 1922-Լ որոշմամբ ՀՀ կառավարությունը հավանություն տվեց խոշոր արևային կայանի կառուցման ծրագրին, որո այժմ գտնվում է մրցույթի նախաորակավորման փուլում: Նախատեսվում է, որ ծրագրային ընկերության հիմնադիր է լինելու հաղթող հայտատուն և պետական «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ: Ծրագրի կայացման դեպքում ակնկալվում է տարբեր պայմանական պարտավորությունների առաջացում:

Համաձայն ՊՄԳ պայմանագրերի՝ պայմանական պարտավորությունների նյութականացման ռիսկը եղել է միջին կամ ցածր, սակայն COVID 19-ի ճգնաժամի պայմաններում ռիսկի աստիճանը բարձրացել է ՊՄԳ բոլոր պայմանագրերի համար (այդ պայմանագրերում ֆորս-մաժորային իրավիճակներին և ֆինանսական կայունությանը վերաբերող դրույթների հիման վրա), հաշվի առնելով, որ ճգնաժամն ազդում է ընկերությունների դրամական հոսքերի վրա, ինչն իր հերթին մեծացնում է պայամանագրի վերաբանակցման և վաղաժամ դադարեցման ռիսկերը:

COVID 19-ի ճգնաժամային իրավիճակով պայմանավորված ՊՄԳ ընկերությունների կորպորատիվ ռիսկերի նախորդ վերլուծությունների օգտակարությունը կարող է նվազել, քանի որ ֆինանսական հաշվետվությունների թվերը ներկայացնում են անցյալը, իսկ ներկա պայմաններում առավել կարևոր է դրամական միջոցների ընթացիկ դիրքը, ֆինանսական պարտավորությունների ծավալը, բաժնետերերի և վարկատուների կողմից ՊՄԳ ընկերությանն աջակցելու կարողությունն ու պատրաստակամությունը:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ

ՀՀ կառավարության 07.02.2008թ. N83-Ա որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի և «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի միջև 13.02.2008թ. կնքվել է «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ փոխանցելու մասին» կոնցեսիոն պայմանագիրը:

Կոնցեսիոն պայմանագիրը ներառում է վնասի սուբսիդավորում ուղևորափոխադրման ոչ շահութաբեր երթուղիների համար, ինչն էլ նյութականացել է յուրաքանչյուր տարի: Սակայն վճարման ենթակա գումարների առավելագույն չափը սահմանափակվում է տարեկան կոնցեսիոն վճարի չափով: Ըստ առկա պատմական տեղեկատվության, կոնցեսիոն պայմանագրի մեկնարկից ի վեր ոչ մի այլ պայմանական պարտավորության նյութականացում տեղի չի ունեցել:

Կոնցեսիոն պայմանագիրը նախատեսում է նաև փոխհատուցումներ մի շարք դեպքերում, որոնց նյութականացման ռիսկի հավանականությունն ավելանում է պայմանավորված համավարակի հետ կապված ճգնաժամով: Այդպիսի դեպքերից են՝

Օրենսդրության անբարենպաստ փոփոխություն,

Անհաղթահարելի ուժի ազդեցության մեղմման ծախսեր,

Անհաղթահարելի ուժի հետևանքով պայմանագրի վաղաժամ դադարեցման հետ կապված վճարումներ,

Կոնցեդենտի դեֆոլտի հիմքով պայմանագրի վաղաժամ դադարեցման վճարներ,

Փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի վաղաժամ դադարեցման վճարներ:

Կոնցեսիոն պայմանագրի վաղաժամ դադարեցման վճարների մասով չափելի պայմանական պարտավորությունների առավելագույն ազդեցությունը վատագույն սցենարի դեպքում գնահատվում է 96.9 մլրդ ՀՀ դրամ[32]: Վաղաժամ դադարեցումը ենթադրում է նաև շարժակազմի ձեռք բերման և այլընտրանքային գործընկերոջ ընտրության գործընթացի ծախսեր:

Կոնցեսիոն պայմանագրի ֆիսկալ ռիսկայնության կարգավիճակը մինչև համավարակը գնահատվում էր միջին, իսկ համավարակի հետ կապված ճգնաժամով պայմանավորված՝ բարձր (արտակարգ դրության և կիրառվող սահմանափակումների առկայության ազդեցություն):

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ

21.11.2016թ. ՀՀ կառավարության և «Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվել է «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագիր՝ 15 տարի ժամկետով (Վարձակալական պայմանգիր):

Վարձակալական պայմանագրի գծով ՀՀ կառավարությունը ստանձնել է մի շարք նշանակալի պայմանական պարտավորություններ, այդ թվում ՝

Եթե Վարձակալը պարտադիր բնույթի կապիտալ աշխատանքներից բացի իրականացրել է այլ աշխատանքներ, ապա համապատասխան գումարը ենթակա է փոխհատուցման Վարձատուի կողմից (ով նաև հանդիսանում է կոնցեսիոն ակտիվների վարձատու):

Առկա է բազային սակագնի երաշխիք, որն արդեն երկու անգամ կիրառվել է՝ ներառյալ ՀՀ կառավարության կողմից վարձակալական վճարի կրճատմամբ՝ միտված խուսափելու սպառողների համար առաջիկայում սակագների բարձրացումից:

Վարձակալական պայմանագիրը լի է վերաբանակցությունների և վաղաժամկետ դադարեցման իրադարձություններով: Առաջիկայում Վարձակալական պայմանագրի վաղաժամկետ դադարեցման ռիսկը ցածր է:

Covid 19 ճգնաժամի պայմաններում ՀՀ կառավարությունը փոխհատուցել է ընկերությանը՝ փոքր սպառողների հաշիվների համար. մասնավորապես այդ նպատակով մարտ ամսին ՀՀ կառավարության կողմից հաստատվեց մոտ 300 մլն դրամ սուբսիդիա: Միևնույն ժամանակ,

[1] Կիրառվել է Ասիական Զարգացման Բանկի կողմից մշակված մեթոդաբանությունը:

ընկերությունն ունեցել է և՛ ընկերությունների կողմից ծառայության սպառման ծավալների կրճատում, և՛ վճարումների ուշացում: Քանի դեռ տնտեսական իրավիճակը էապես չի բարելավվել, այդ միտումները կարող են շարունակվել: Տնտեսական վերականգնման բարձր անորոշության պայմաններում մեծանում են պայմանագրի պայմանական պարտավորությունների նյութականացման հնարավորությունները: Այդ պատճառով Վարձակալական պայմանագրի հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը ներկայում նշանակալի է:

Վարձակալական պայմանագրի վաղաժամ դադարեցման վճարների մասով չափելի պայմանական պարտավորությունների առավելագույն ազդեցությունը վատագույն սցենարի դեպքում գնահատվում է 73.6 մլրդ ՀՀ դրամ:

«Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ

Կոնցեսիոն պայմանագիրը գործում է 2002թ-ից Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի համար, իսկ 2007թ-ից ի վեր ներառում է նաև Գյումրու «Շիրակ» օդանավակայանը: Մայր ընկերությունը աշխարհի օդանավակայանների խոշորագույն օպերատորներից է՝ «Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.» ընկերությունը, որը ցուցակված է Նյու Յորքի ֆոնդային բորսայում:

Խումբը մինչև 2019 թվականը շահութաբերության բարձր ցուցանիշներ ուներ, իսկ ՀՀ-ի դուստր ձեռնարկությունը եղել է ամենաարդյունավետներից մեկը:

Պայմանագիրը Կոնցեսիոներին հնարավորություն է տալիս միակողմանիորեն երկարացնել կոնցեսիայի տևողությունը:

Հաշվի առնելով ընկերության բարձր շահութաբերությունը՝ պայմանագրի վաղաժամ դադարեցման պայմանական պարտավորությունը և ընկերության բիզնես ռիսկը գնահատվել են ցածր:

Սակայն իրավիճակը փոխվել է համավարակով պայմանավորված, քանի որ աշխարհում օդանավակայանների ոլորտը ճգնաժամից առավել տուժածներից մեկն է:

Միաժամանակ, խմբի գրեթե բոլոր ընկերությունները գտնվում էին ֆինանսական դժվարությունների մեջ և բանակցում էին վարկատուների հետ վարկերի վերակառուցման շուրջ, ինչպես նաև բանակցություններ վարում կառավարությունների կողմից կոնցեսիոն վճարների ժամանակավոր դադարեցման և որոշ դեպքերում լրացուցիչ աջակցության տրամադրման շուրջ:

Իրավիճակն համեմատաբար վերահսկելի է հայկական ընկերության համար, սակայն անորոշության բարձր մակարդակով:

«Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ն վարկի մասով ունեցել է տեխնիկական դեֆոլտ՝ կովենանտի խախտման պատճառով, սակայն, համաձայն ֆինանսական հաշվետվության, ընկերությունը բանկի հետ եկել է համաձայնության հետևաբար հետվճարման ժամանակացույցը մնում է անփոփոխ: Խնդիրը կայանում է նրանում, որ առաջիկա տարվա համար ընկերությունը չի ունենա դրամական միջոցների բավարար ներհոսք՝ տարվա իր մարումները կատարելու համար:

Պետք է նշել, որ վարկատուների օգտին են գրավադրված ընկերության բաժնետոմսերը և ակտիվները: Վարկի մնացորդը 2020 թվականի սկզբին գնահատվում է 36 մլրդ ՀՀ դրամ, որի

մի մասը կարող է դառնալ ՀՀ կառավարության պարտավորություն (հաշվի առնելով դրամական միջոցների մնացորդի վերաբերյալ առկա տեղեկությունները)՝ Կոնցենդենտի կամ մայր ընկերության ֆինանսական դժվարությունների առկայության դեպքում: ՀՀ կառավարության համար առավելագույն պարտավորությունը գնահատվում է 12 մլրդ ՀՀ դրամ: Հետևաբար, վերոնշյալ ՊՄԳ պայմանագրի ֆիսկալ ռիսկայնության կարգավիճակը նշանակալի է:

Բյուջետային վարկավորման ուսումնասիրություն

ՀՀ պետական բյուջեից, միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից ներգրավված վարկային միջոցների հաշվին 31.08.2020թ. դրությամբ տրամադրված բյուջետային վարկերի և ենթավարկերի չմարված մասի ընդհանուր գումարը կազմել է 432.8 մլրդ դրամ, որն հիմնականում ուղղվել է ՀՀ ենթակառուցվածքային ոլորտին, գյուղատնտեսության և այլ ոլորտներին: Ընդհանուր առմամբ տրամադրվել է **51** վարկառուների 85 միավոր վարկ:


2020թ. օգոստոսի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության տրված վարկերի կառուցվածքում միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների աջակցությամբ իրակա-նացվող նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ենթավարկային պայմանագրերով կազմակերպություններին տրամադրված բյուջետային վարկերի չմարված մասը (մնացորդը) կազմել է մոտ 205.0 մլրդ դրամ կամ տրամադրված ընդհանուր վարկային պորտֆելի 47.4 **%**-ը:

Ենթակառուցվածքային ոլորտում տրամադրված վարկերի չմարված մասի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն էներգետիկայի ոլորտի վարկերը՝ 324.9 մլրդ դրամ (96.6%):

Ընդհանուր վարկային պորտֆելում ՀՀ դրամով տրամադրված վարկերը կազմել են 27% կամ 116.4 մլրդ դրամ, ԱՄՆ դոլարով՝ 157.65 մլրդ դրամ կամ 36%, Եվրոյով՝ 45.45 դրամ կամ 11%, ճապոնական իենով՝ 111.77 մլրդ դրամ կամ 26 %: (տես գծապատկերը):

Ակնհայտ է, որ պորտֆելը պարունակում է փոխարժեքի էական ռիսկեր, քանի որ տրամադրված վարկերի գերակշիռ մասը՝ 73.1%-ը ներգրավված է արտարժույթով, իսկ վարկառուների եկամուտները հիմնականում ՀՀ դրամով են:

Վարկերի արժութային կազմը



Ամենախոշոր 3 վարկառուները էներգետիկ ոլորտի պետական ընկերություններ են, որոնց չմարված վարկային պորտֆելը կազմում է ընդհանուրի մոտ 62%:

ԽՈՇՈՐ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՄՆԱՑՈՐԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անվանում	Մլրդ դրամ	Կշիռը վարկային մնացորդի մեջ (%)	Կշիռը ՀՆԱ-ի մեջ (%)	Ֆիսկալ ռիսկի կարգավիճակը
«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ	119.7	24.6	1.8	Միջին
«Բարձրավոլտ էլ. ցանցեր» ՓԲԸ	57.6	11.9	0.8	Միջին
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ	107.7	22.1	1.5	Միջին
ԸՆԴԱՄԵՆԸ	284.7	-	-	-

5. 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.

Արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականություն մշակելու և իրականացնելու տեսանկյունից հարկային ծախսերի գնահատականը խիստ կարևոր է, քանի որ հարկային ծախսերի գնահատմամբ ամբողջականացվում է պետության կողմից իրականացվող՝ եկամուտների վերաբաշխման գործառույթի շրջանակներն ու արդյունավետությունը:

Հարկային ծախսերի գնահատականի վերաբերյալ տեղեկատվությունը թափանցիկ և շահառուների տարբեր խմբերի համար հասանելի դարձնելու նպատակով, որոշ երկրներ այդ տեղեկատվությունը ներառում են առաջիկա տարվա համար մշակվող բյուջեի բացատրագրում:

Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ հարկային ծախսերի մեծությունը գնահատվել է 2015թ. համար, որը ներառվել է «2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի բացատրագրում՝ որպես առանձին հավելված:

Հարկային ծախսերը.

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ «Հարկային ծախս» հասկացությունը սահմանված չէ: Բովանդակային առումով, հարկային ծախսերը գործող հարկային արտոնությունների հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտներն են կամ այդ եկամուտների չափով պետության կրած այլընտրանքային ծախսերն են, քանի որ հարկային ծախսերը հանգեցնում են համապատասխան գումարի չափով բյուջետային ծախսերի կրճատման: Ընդ որում, ի տարբերություն պետական բյուջեի ծախսերի, որոնք ենթակա են խորքային վերլուծության, մոնիտորինգի ու հսկողության, հարկային ծախսերը հաճախ պատշաճ ձևով չեն վերահսկվում: Արդյունքում, նվազում է հանրային ֆինանսների կառավարման արդյունավետությունն ու թափանցիկությունը, սահմանափակվում են պետության վերաբաշխիչ գործառույթի շրջանակները: Այդ իսկ պատճառով հարկային ծախսերի պարբերաբար գնահատումը հանգուցային նշանակություն ունի պետության հարկաբյուջետային քաղաքականության տեսանկյունից:

Հաշվետվությամբ ընդգրկվող ժամանակահատվածը, հարկային ծախսերի գնահատման համար օգտագործված տեղեկատվությունը և ընտրված մեթոդաբանությունը.

Սույն հաշվետվությամբ գնահատված են 2021 թվականի հաշվետու տարվա հարկային ծախսերը:

Գնահատման համար տեղեկատվական հիմք են հանդիսացել 2019 թվականի հաշվետու տարվա համար ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված հիմնական մակրոտնտեսական տվյալները, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված հաշվետվությունների տվյալները, որոնք ենթարկվել են որոշակի ճշգրտումների՝ կապված 2021 թվականի համար կանխատեսվող համապատասխան տվյալների հետ:

Հաշվետվության մեթոդաբանության հիմքում դրված են ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքի (հարկունակ և ոչ հարկունակ մասերի) ուսումնասիրության մակրոտնտեսական մոտեցումները, 2019 թվականին վերաբերող ԱԱՀ-ի, շահութահարկի և շրջանառության հարկի հաշվարկներով՝

ԱԱՀ-ի և շահութահարկի արտոնությունների, ինչպես նաև ԱԱՀ-ով հարկվող շեմի ուսումնասիրության արդյունքները:

Հաշվետվության կազմման համար ընտրվող մեթոդաբանության տեսանկյունից շատ կարևոր է նաև «Հարկային ծախս» հասկացության հստակ սահմանումը և հարկային ծախսերի շրջանակի ճիշտ որոշումը: Այս առումով, հատկանշական է այն, որ գործող հարկային օրենսդրությամբ նախատեսված՝ հարկման արտոնյալ պայմաններ ենթադրող ոչ բոլոր կարգավորումները կարելի է դիտարկել որպես հարկային ծախսեր (օրինակ՝ եկամտային հարկով հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող եկամուտները)՝ անգամ եթե դրանց կիրառության արդյունքում կրճատվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարվող հարկերը: Հարկային ծախսերի շրջանակի որոշման համար հաշվի է առնվել «Հենանիշային հարկ» հասկացությունը, որն իրենից ներկայացնում է հարկերի այն հանրագումարը, որը կվճարվեր պետական բյուջե տնտեսության մեջ ձևավորվող ողջ հարկման բազան հարկելու պարագայում: Այս համատեքստում հարկային ծախսերը որոշվել են որպես հենանիշային հարկերի և փաստացի պետական բյուջե վճարվող հարկերի տարբերություն: Հարկային ծախսերի գնահատումը՝ որպես հենանիշային հարկերի ու պետական բյուջե փաստացի գանձվող հարկերի տարբերություն, ընդունված մոտեցում է նաև միջազգային պրակտիկայում: Ընդ որում, հատկանշական է այն, որ միջազգային պրակտիկայում հենանիշային հարկերի կամ այլ կերպ ասած՝ հարկային նշաձողի միասնական կամ սպառիչ սահմանում չկա: Երկրների մի մասում, օրինակ, հարկային ծախսերը սահմանվում են որպես օրենսդրությամբ նախատեսված դրույթներ, որոնց կիրառությունը հանգեցնում է պետական եկամուտների կրճատման հարկային նշաձողի կամ նորմի (այսինքն՝ հարկի հաշվարկման հիմնական սկզբունքի) կիրառության համեմատությամբ: Հարկային ծախսերի սահմանման ընդհանուր սկզբունքն այն է, որ դրանք ունեն սահմանափակ կիրառության շրջանակ: Օրենսդրության այնպիսի դրույթներ, որոնցից կարող է օգտվել հարկ վճարողների մեծամասնությունը, դիտվում են որպես ընդհանուր կանոնի՝ հարկային նորմի մաս և չեն որակվում որպես հարկային ծախսեր: Կան երկրներ, որտեղ ընդհանրապես հարկային ծախսերի կամ հենանիշային հարկի կամ հարկային նշաձողի սահմանումներ չկան: Այս երկրներում, օրենսդրության առանձնահատուկ դրույթները (օրինակ, ազատումներ կամ հարկման նվազեցված դրույքաչափեր) դիտվում են որպես բազային հարկային համակարգի մաս, այլ ոչ թե որպես հարկային ծախս: Ընդհանուր առմամբ, ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ազատումները երկրների այս խմբում չեն դիտարկվում որպես հարկային ծախսեր: Երրորդ խումբ երկրներում հարկային ծախսերը սահմանվում են որպես հարկային համակարգի առանձին դրույթներ, որոնք նվազեցնում են տնտեսական միավորի հարկային պարտավորությունները՝ որոշակի քաղաքականության նպատակներին հասնելու և ոչ թե առավել արդյունավետ և տնտեսապես չեզոք եղանակով եկամուտներ ստանալու նպատակով:

Հաշվետվության շրջանակներում գնահատվել են ավելացված արժեքի հարկին, շահութահարկին և եկամտային հարկին վերաբերող հիմնական (ընդգրկուն) հարկային արտոնությունների ու ավելացված արժեքի հարկի չհարկվող շեմի կիրառության հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտները: Սույն հաշվետվությամբ մեր կողմից կատարվող ուսումնասիրություններն ու գնահատականներն առավել ընդգրկուն և տարբերակված լինելու նպատակով՝ ընդլայնվել են գնահատվող ԱԱՀ-ի և շահութահարկի հարկային արտոնությունների տեսակները, այդ թվում՝ հիմնվելով հարկ

վճարողների կողմից հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկներով արտացոլված տվյալների վրա:

Հարկային ծախսերի մասին հաշվետվությունների կազմման ու ներկայացման միջազգային փորձը.

Հարկային ծախսերի մասին հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը ընդունված ու տարածված գործելակերպ է Եվրոպական Միության ու Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ երկրների մեծ մասում:

Հարկային ծախսերի վերաբերյալ առաջին հաշվետվությունները կազմվել են 1960-ական թվականների վերջերին Գերմանիայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում: 1970-ական թվականների վերջին հարկային ծախսերի մասին հաշվետվություններ սկսեցին կազմվել նաև Ավստրիայում, Կանադայում, Իսպանիայում և Միացյալ Թագավորությունում:

Հարկային ծախսերի տարեկան հաշվետվությունները կազմվում և հրապարակվում են հարկային արտոնությունների կիրառության արդյունքում չգանձվող հարկային եկամուտների մեծությունը ուշադրության կենտրոնում պահելու, հարկային արտոնությունների շրջանակի վերանայման վերաբերյալ քաղաքական որոշումներ կայացնելու, ինչպես նաև հարկաբյուջետային քաղաքականության թափանցիկությունն ու Կառավարության հաշվետվողականությունն ապահովելու նպատակով:

Ավստրիայում, Բելգիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Պորտուգալիայում, Իսպանիայում և Միացյալ Թագավորությունում հարկային ծախսերի մասին հաշվետվությունների կազմումն ու հրապարակումը կարգավորվում է օրենքով: Նշյալ հաշվետվությունները ուղղակիորեն կապված են պետական բյուջեի հետ, իսկ դրանց կազմումը բյուջետային գործընթացի կարևոր բաղկացուցիչներից է:

Հարկային ծախսերի մասին հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը հիմնականում կատարվում է տարեկան պարբերականությամբ, թեև կան երկրներ, որոնք այս հաշվետվությունները կազմում և ներկայացնում են երկու կամ երեք տարին մեկ անգամ:

Հարկային ծախսերի մասին հաշվետվության կազմման ու ներկայացման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում.

Սույն փաստաթուղթը Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բյուջետային գործընթացի շրջանակներում հարկային ծախսերի գնահատման վեցերորդ հաշվետվությունն է: Թեև մեր երկրի օրենսդրությամբ հարկային ծախսերի մասին հաշվետվություն կազմելու և ներկայացնելու պահանջ նախատեսված չէ, այդուհանդերձ կարևորելով այսպիսի փաստաթղթերի դերը հանրային ֆինանսների կառավարման թափանցիկության անհրաժեշտ մակարդակի ապահովման գործում՝ Կառավարությունը մտադիր է հարկային ծախսերի մասին ամենամյա հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը դարձնել բյուջետային գործընթացի կարևոր բաղկացուցիչ:

Մյուս կողմից, հարկային ծախսերի մասին այսպիսի փաստաթղթի կազմումը հնարավորություն կընձեռի առավել համապարփակ ձևով գնահատել գործող հարկային արտոնությունների արդյունավետությունը, դրանց հետագա կիրառության նպատակահարմարությունը կամ հարկային արտոնությունները կրճատելու հնարավորություններն ու սահմանափակումները:

Բացի այդ, հարկային ծախսերի գնահատմամբ Կառավարությունը ընդհանրացնում է երկրի ռեսուրսային ներուժի վերաբերյալ պատկերացումները, ինչը շատ կարևոր է՝ գնահա-

տելու համար Կառավարության առջև դրված համակարգային խնդիրների լուծման եղանակները:

<u>Հարկային ծախսերի հաշվետվության ներկայացման կարևորությունը հարկային արտոնությունների շրջանակը վերանայելու տեսանկյունից.</u>

Հայաստանյան հարկային համակարգի ձևավորման ու զարգացման ողջ ընթացքում հարկային օրենսդրությամբ նախատեսված են եղել տարբեր հարկային արտոնություններ, որոնց շրջանակը հարկային քաղաքականության իրականացման տարբեր փուլերում, կախված տնտեսության զարգացման տեմպերից, առաջնահերթություններից ու մարտահրավերներից, մշտապես վերանայվել է: Որոշ հարկային արտոնություններ ժամանակավոր բնույթ են ունեցել (օրինակ՝ օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտ կազմակերպությունների՝ շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունը) և կողմնորոշված են եղել քաղաքականության իրականացման որևէ ժամանակահատվածում կոնկրետ խնդիրների լուծմանը: Որոշ հարկային արտոնություններ, որոնք տրվել են դեռևս հարկային համակարգի ձևավորման ամենավաղ փուլերում, շարունակվում են կիրառվել մինչև այժմ, քանի որ դրանց կիրառության պատճառներն ու հիմնավորումները արդիական են նաև մեր օրերում (օրինակ՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտների համար նախատեսված՝ շահութահարկից ու եկամտային հարկից ազատման արտոնությունները):

Ընդհանուր առմամբ, ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս հարկային օրենսդրությամբ նախատեսված հարկային արտոնությունները կարելի է խմբավորել երեք հիմնական խմբերում՝

1) սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնություններ,
2) ոլորտային հարկային արտոնություններ,
3) գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ու ակտիվության բարձրացմանն ուղղված հարկային արտոնություններ:

Սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնությունների կիրառության հիմնական նպատակը առողջապահական, կրթական ու գիտական նշանակության որոշ ծառայությունների մատուցումն ու ապրանքների մատակարարումը ավելացված արժեքի հարկից ազատելն է, ինչը, այլ հավասար պայմաններում հնարավորություն է ընձեռում նշյալ ապրանքներն ու ծառայությունները ձեռք բերել համեմատաբար ցածր գներով:

Ոլորտային հարկային արտոնությունների կիրառությունը պայմանավորված է հիմնականում ազգային տնտեսության երկարաժամկետ և կայուն զարգացման տեսանկյունից տնտեսության որոշ ոլորտների զարգացման գերակայություն համարելը: Դրանք հիմնականում այն ոլորտներն են, որոնք ավանդաբար ձևավորել են ազգային տնտեսության նկարագիրը (ոսկերչություն, զբոսաշրջություն, գորգագործություն և այլն): Այս առումով, Կառավարությունը տարբեր գործիքներով (այդ թվում՝ հարկային արտոնությունների կիրառությամբ) օժանդակում է այդ ոլորտներում գործող տնտեսավարող սուբյեկտներին,

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ու ակտիվության բարձրացմանն ուղղված հարկային արտոնությունների կիրառության հիմնական նպատակը տնտեսավարող սուբյեկտների համար առավել նպաստավոր հարկային միջավայրի ձևավորումը և ազգային տնտեսության մրցունակության բարձրացումն է:

Վերոնշյալ հարկային արտոնությունների կիրառության հետևանքով առաջացող՝ հարկային եկամուտների կորստի՝ հարկային ծախսերի գնահատման հաշվետվությունների կազմումը,

ներկայացումը և գործադիր ու օրենսդիր իշխանության մարմիններում դրանց քննարկումը կարևոր քայլ է հարկային արտոնությունների շրջանակի հնարավոր վերանայման քաղաքականության իրականացման ճանապարհին:

Այս իմաստով, առաջիկա տարիներին հարկային ծախսերի նման գնահատականները հիմք են հանդիսանալու հարկային արտոնությունների շրջանակի վերանայման, հարկման բազայի ընդլայնման ու ամրապնդման քաղաքականություն իրականացնելու համար, ինչը հնարավորություն կընձեռի աստիճանաբար բարելավել հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը և ամրապնդել հարկման հորիզոնական արդարության սկզբունքը: Հարկային քաղաքականության այս ուղղության նպատակը, ըստ էության, հարկման ոլորտում խտրականությունը նվազագույնի հասցնելը և պետական բյուջեի հարկային եկամուտների արդարացի վերաբաշխուն ապահովելն է:

Միաժամանակ, ակնհայտ է, որ գործող արտոնությունների շրջանակի վերանայումը կնշանակի կտրուկ փոփոխել այդ արտոնություններից օգտվողների ձեռնարկատիրական ու տնտեսական գործունեության պայմանները և ազգային տնտեսության ներդրումային միջավայրը ընդհանրապես: Այս առումով, հարկային արտոնությունների շրջանակի վերանայումը պետք է իրականացվի բավարար զգուշավորությամբ՝ խուսափելու համար հնարավոր ցնցումներից ու տնտեսության վրա բացասական հետևանքներից, և հետևողականությամբ, քանի որ հարկային արտոնությունների շրջանակի վերանայումը լրացուցիչ ռեսուրսներ կենտրոնացնելու և դրանք տնտեսության հետագա զարգացմանն ուղղելու հնարավորություն կընձեռի: Մասնավորապես, նախքան հարկային արտոնությունների կրճատումը պետք է մանրամասն ուսումնասիրվեն գործող հարկային արտոնությունների կիրառության բոլոր դրական ու բացասական կողմերը, այդ թվում՝ ինչպես պետության, այնպես էլ այդ արտոնություններից օգտվողների տեսանկյունից, համադրվեն արտոնությունների կիրառության օգուտներն ու վնասները, բացահայտվեն արտոնությունների վերանայման հնարավոր ազդեցությունները պետական բյուջեի հարկային եկամուտների, ազգային տնտեսության տնտեսական ակտիվության, գործարար ու ներդրումային գրավչության, երկրի սոցիալ-տնտեսական վիճակի, տնտեսական մրցակցության, գնաճային ճնշումների և այլ կարևոր ցուցանիշների վրա: Վերոնշյալը նաև նշանակում է, որ առաջիկա տարիներին հարկային քաղաքականության շրջանակներում շեշտադրումը կատարվելու է հատկապես այն արտոնությունների վերանայման վրա, որոնց ազդեցությունը ազգային տնտեսության զարգացման տեսանկյունից գնահատվում է ցածր և որոնց կիրառության նպատակահարմարությունը չի հիմնավորվում «ծախսեր-օգուտներ» վերլուծությունների արդյունքներով: Այսինքն, բոլոր այն հարկային արտոնությունները, որոնց կիրառության արդյունքում սպառողների ու տնտեսավարող սուբյեկտների համար ստեղծվող «օգուտները» համարժեք չեն պետության կրած «ծախսերին» (պետության կորցրած հարկային եկամուտներին), պետք է աստիճանաբար կրճատվեն: Քաղաքականության այսպիսի մոտեցումը հիմնավորվում է ֆինանսական ռեսուրսներ կենտրոնացնելու՝ պետության սահմանափակ ներուժը առավել արդյունավետ և առավել հասցեական ձևով օգտագործելու նպատակադրումով, քանի որ հարկային արտոնությունների տրամադրմամբ, պետությունը, ըստ էության, զրկվում է լրացուցիչ հարկային եկամուտներ հավաքագրելու և զարգացման, սոցիալական, բնապահպանական, առողջապահական կամ այլ հանրօգուտ նպատակներով լրացուցիչ ծրագրեր իրականացնելու հնարավորություններից: Արդյունքում պետության կարևորագույն գործառույթներից մեկը՝ եկամուտների վերաբաշխման գործառույթը, ամբողջությամբ և հասցեական ձևով չի իրականացվում:

Հարկային ծախսերի գնահատականները ըստ հարկատեսակների ու արտոնությունների հիմնական տեսակների.

Սույն հաշվետվությամբ ներկայացված է հարկային արտոնությունների հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտների մակրոտնտեսական գնահատականը՝ տնտեսության այն ոլորտների մասով, որոնք օգտվում են հարկային արտոնություններից: Միաժամանակ, գնահատվել են մի քանի այլ հարկային արտոնությունների (ոչ ոլորտային նշանակության) կիրառության հետևանքով պետական բյուջեի հարկային եկամուտների կորուստները: 2021 թվականի հարկային ծախսերի գնահատականը ներառում է նաև ԱԱՀ-ի հաշվարկով արտացոլված մի շարք այլ հարկային արտոնությունների գնահատականները:

Գնահատման արդյունքների համաձայն, հարկային ծախսերի տարեկան մեծությունը կազմել է **451,075 մլն. դրամ**, որից ավելացված արժեքի հարկի գծով՝ **362,931 մլն. դրամ**, շահութահարկի գծով՝ **71,739 մլն. դրամ**, եկամտային հարկի գծով՝ **16,406 մլն. դրամ**:

I. ԱԱՀ-ի գծով հարկային ծախսերը.

Ավելացված արժեքի հարկի գծով հարկային ծախսերի մեծությունը տնտեսության տարբեր ոլորտների ու առանձին հարկային արտոնությունների միջև բաշխվում է հետևյալ կերպ.

1) գյուղատնտեսություն՝ ***16,544 մլն. դրամ***,

2) առողջապահություն՝ ***53,279 մլն. դրամ***,

3) կրթություն՝ ***27,807 մլն. դրամ***,

4) ֆինանսներ և ապահովագրություն՝ ***73,878 մլն. դրամ***,

5) խաղատների գործունեություն, շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպում՝ ***53,217 մլն. դրամ***,

6) ոսկու և թանկարժեք քարերի իրացում՝ ***3,167 մլն. դրամ***,

7) մարդասիրական օգնություն՝ ***3,924 մլն. դրամ***,

8) պարարտանյութերի իրացում՝ ***3,615 մլն. դրամ***,

9) ծխախոտի արտադրանք արտադրող չհանդիսացող և ծխախոտի արտադրանք ներմուծող չհանդիսացող հարկ վճարողների կողմից ծխախոտի արտադրանքի օտարում՝ ***19,847 մլն. դրամ***,

10) ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարում՝ ***1,419 մլն. դրամ***,

11)սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում՝ ***913 մլն. դրամ***,

12)ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցում, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարում, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարում՝ ***133 մլն. դրամ***,

13) այլ օրենքներով տրված արտոնություններ՝ ***1,860 մլն. դրամ***,

14)վերը չնշված այլ արտոնություններ՝ ***62,425 մլն. դրամ****:*

*** ավելացված արժեքի հարկի գծով հարկային ծախսերի մեծությունը գնահատելիս՝***

- ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափի կիրառությունը չի դիտվել որպես հարկային ծախս, քանի որ այն հիմնականում կիրառվում է արտահանվող ապրանքների

իրացման գործարքների համար, որոնց մասով ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափի կիրառությունը միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցում է, և հետևաբար, այդ գործարքներից ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունը չի կարող համարվել հենանիշային հարկ,

- հաշվարկներում չեն ներառվել նաև ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքների մասով մաքսային մարմինների կողմից հաշվարկվող ավելացված արժեքի հարկի գումարները, որոնց վճարման ժամկետը հետաձգվում է օրենքով սահմանված համապատասխան ժամկետներով՝ հաշվի առնելով այն, որ ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետի հետաձգումը միայն ժամանակային ազդեցություն է ունենում պետական բյուջեի հարկային եկամուտների մեծության վրա,
- հաշվարկներում չեն ներառվել նաև այն ապրանքների ներմուծման համար ավելացված արժեքի հարկի հաշվարկային գումարները, որոնք ներառված են «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ օրենքով հաստատված ցանկում, քանի որ այդ ապրանքների մասով, տնտեսական գործունեության հետագա փուլերում կարող են ձևավորվել ավելացված արժեքով հարկման բազաներ, որոնցից ավելացված արժեքի հարկը հաշվարկվում և վճարվում է օրենքով սահմանված կարգով:

Այսպիսով, 2021 թվականի ԱԱՀ-ի գծով գնահատված հարկային ծախսերը կազմում են **362,931** ***մլն. դրամ****:

Տրված գնահատականում ներառված է նաև ԱԱՀ-ի շեմի կիրառության հետևանքով ԱԱՀ-ի գծով հարկային եկամուտների հաշվարկային կորուստը, որը սույն հաշվետվությունում ներկայացվում է առանձին գնահատմամբ և կազմում է* ***38,957 մլն. դրամ,* *ինչպես նաև միկրոբիզնեսին տրված հարկային արտոնությունների մասով ԱԱՀ-ի գծով հարկային եկամուտների հաշվարկային կորուստը, որը սույն հաշվետվությունում ներկայացվում է առանձին գնահատմամբ և կազմում է* ***1,924 մլն. դրամ****:*

II. Շահութահարկի գծով հարկային ծախսեր.

Շահութահարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են ***71,739 մլն. դրամի չափով****:
Շահութահարկի գծով հարկային արտոնությունները գնահատվել են հետևյալ հիմնական ուղղություններով.

1) գյուղատնտեսություն՝ ***40,925 մլն. դրամ***, այդ թվում՝ կազմակերպությունների շահույթից՝ ***2,491 մլն. դրամ***, և ֆիզիկական անձանց (ԱՁ-ների) շահույթից՝ ***38,434 մլն. դրամ***,

2) հարկվող շահույթի նվազեցման արտոնություններ, բացառությամբ՝ գյուղատնտեսության՝ ***6,188 մլն. դրամ***,

3) շահութահարկի նվազեցման արտոնություններ՝ ***98 մլն. դրամ***,

4) ԱԱՀ-ի շեմ՝ ***23,374 մլն. դրամ,***

5) միկրոբիզնես՝ ***1,154 մլն. դրամ:***

**Մինչև 2020 թվականը հարկային ծախսերի գնահատականներում ֆիզիկական անձանց (ԱՁ-ների) շահույթի գծով հարկային ծախսերը ներառված էին եկամտային հարկի բաժնում:*

III. Եկամտային հարկի գծով հարկային ծախսեր.

Եկամտային հարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են **16,406 մլն. դրամի չափով**, այդ թվում՝ եկամտային հարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են գյուղատնտեսության վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության մասով, ինչպես նաև միկրոբիզնեսի մասով՝ **4,798 մլն. դրամի չափով**:

IV. ԱԱՀ-ի շեմի գծով հարկային ծախսերը.

ԱԱՀ-ի շեմի գծով հարկային ծախսերը գնահատվել են ***62,331 մլն. դրամի չափով*,*** այդ թվում՝

ԱԱՀ՝ ***38,957 մլն. դրամ***,

Շահութահարկ՝ ***23,374 մլն. դրամ***:

**ԱԱՀ-ի շեմի գծով հարկային ծախսերի գնահատման համար ԱԱՀ-ի շեմն ընդունվել է 115.0 մլն. դրամ:*

V. Միկրոբիզնեսի գծով հարկային ծախսերը.

ԱԱՀ-ի շեմի գծով հարկային ծախսերը գնահատվել են ***7,876 մլն. դրամի չափով*,*** այդ թվում՝

ԱԱՀ՝ ***1,924 մլն. դրամ***,

Շահութահարկ՝ ***1,154 մլն. դրամ***,

Եկամտային հարկ՝ ***4,798 մլն. դրամ***:

Ընդհանուր հարկային ծախսը գնահատվել է ***451,075 մլն. դրամի չափով***, ինչը 2021 թվականի համար կանխատեսված հարկային եկամուտների և ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է համապատասխանաբար՝ ***30.05 և 6.71 տոկոս:***

Վերլուծության ամփոփ արդյունքները ներկայացված են ստորև.

մլն. դրամ

Հ/Հ	Հարկային ծախսերի տեսակը	Հարկային ծախսերի չափը	Կշիռը հարկային եկամուտների մեջ	Կշիռը ՀՆԱ-ի մեջ
1	**ԱԱՀ-ի գծով, այդ թվում՝**	**362,931**	***24.18%***	***5.40%***
1.1.	*գյուղատնտեսություն*	16,544	*1.10%*	*0.25%*
1.2.	*առողջապահություն*	53,279	*3.55%*	*0.79%*

1.3.	*կրթություն*	27,807	*1.85%*	*0.41%*
1.4.	*ֆինանսներ և ապահովագրություն*	73,878	*4.92%*	*1.10%*
1.5.	*ԱԱՀ-ի շեմ*	38,957	*2.60%*	*0.58%*
1.6.	*խաղատների գործունեություն, շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպում*	53,217	*3.55%*	*0.79%*
1.7.	*ոսկու և թանկարժեք քարերի իրացում*	3,167	*0.21%*	*0.05%*
1.8.	*մարդասիրական օգնություն*	3,924	*0.26%*	*0.06%*
1.9.	*պարարտանյութերի իրացում*	3,615	*0.24%*	*0.05%*
1.10.	*ծխախոտի արտադրանք արտադրող չհանդիսացող և ծխախոտի արտադրանք ներմուծող չհանդիսացող հարկ վճարողների կողմից ծխախոտի արտադրանքի օտարում*	19,847	*1.32%*	*0.30%*
1.11.	*ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարում*	1,439	*0.10%*	*0.02%*
1.12.	*սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում*	913	*0.06%*	*0.01%*
1.13.	*ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցումը, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարումը, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարում*	133	*0.01%*	*0.00%*

1.14.	*այլ օրենքներով տրված արտանություններ*	1,860	*0.12%*	*0.03%*
1.15.	*այլ արտոնություններ*	62,425	*4.16%*	*0.93%*
1.16.	*Միկրոբիզնես*	1,924	*0.13%*	*0.03%*
2	**Շահութահարկի գծով, այդ թվում՝**	**71,739**	***4.78%***	***1.07%***
2.1.	*գյուղատնտեսություն, այդ թվում՝*	40,925	*2.73%*	*0.61%*
2.1.1.	*կազմակերպությունների շահույթից*	2,491	*0.17%*	*0.04%*
2.1.2.	*ֆիզիկական անձանց (Ա/Ձ-ների) շահույթից*	38,434	*2.56%*	*0.57%*
2.2.	*հարկվող շահույթի նվազեցման արտոնություններ, բացառությամբ՝ գյուղատնտեսության*	6,188	*0.41%*	*0.09%*
2.3.	*շահութահարկի նվազեցման արտոնություններ*	98	*0.01%*	*0.00%*
2.4.	*ԱԱՀ-ի շեմ*	23,374	*1.56%*	*0.35%*
2.5.	*միկրոբիզնես*	1,154	*0.08%*	*0.02%*
3	**Եկամտային հարկի գծով, այդ թվում՝**	**16,406**	***1.09%***	***0.24%***
3.1.	*գյուղատնտեսության ոլորտի աշխատողների աշխատավարձ*	11,608	*0.77%*	*0.17%*
3.2.	*միկրոբիզնես*	4,798	*0.32%*	*0.07%*
Ընդամենը		**451,075**	***30.05%***	***6.71%***

Մեթոդաբանություն
2021 թվականի հարկային ծախսերի գնահատման

I. ԱԱՀ-ի գծով հարկային ծախսերը.

ԱԱՀ-ի գծով հարկային ծախսերը գնահատվել են հետևյալ հիմնական ուղղություններով.

1) գյուղատնտեսություն,
2) առողջապահություն,
3) կրթություն,
4) ֆինանսներ և ապահովագրություն,
5) խաղատների գործունեություն, շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպում,
6) ոսկու և թանկարժեք քարերի իրացում,

7) մարդասիրական օգնություն,

8) պարարտանյութերի իրացում,

9) ծխախոտի արտադրանք արտադրող չհանդիսացող և ծխախոտի արտադրանք ներմուծող չհանդիսացող հարկ վճարողների կողմից ծխախոտի արտադրանքի օտարում,

10) ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարում,

11) սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում,

12) ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցում, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարում, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարում,

13) այլ օրենքներով տրված արտոնություններ,

14) վերը չնշված այլ արտոնություններ:

ՀՀ ՎԿ տվյալների բազայից որոշվել են 2019 թվականի համար տնտեսության յուրաքանչյուր ոլորտի ավելացված արժեքները, որոնք նախապես ճշգրտվել են ֆինանսական միջնորդությունների անուղղակի չափվող ծառայությունների արժեքի չափով:

Տնտեսության յուրաքանչյուր ոլորտի ավելացված արժեքները նվազեցվել են չդիտարկվող (չհաշվառվող) տնտեսության ավելացված արժեքների մասնաբաժնի չափով:

Տնտեսության արտահանելի ճյուղերի ավելացված արժեքները նվազեցվել են արտահանման արժեքների չափով՝ արտահանմանն ուղղված ճյուղերի (գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն, մշակող արդյունաբերություն, էլեկտրաէներգետիկա, փոխադրումներ և պահեստային տնտեսություն, տեղեկատվություն և կապ)՝ ընդհանուր ավելացված արժեքի մեջ ունեցած տեսակարար կշիռներին համապատասխան:

Գյուղատնտեսության ոլորտի ստացված արդյունքը ճշգրտվել է գյուղատնտեսության մասնաբաժնում ապրանքայնության մակարդակով (ապրանքայնության մակարդակը ցույց է տալիս գյուղատնտեսական արտադրանքի այն մասը, որը գնացել է իրացման կամ այլ ձևով օտարման կամ ապրանքափոխանակման):

Այնուհետև ստացված բազայի նկատմամբ կիրառվել է ԱԱՀ-ի 20% դրույքաչափը և հաշվարկվել է ԱԱՀ-ի գծով եկամտային ներուժը: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2021 թվականի տնտեսության ճյուղերի կանխատեսվող ծավալների աճով:

Ստացված արդյունքների հիման վրա առանձնացվել են գյուղատնտեսության, կրթության, առողջապահության, ֆինանսական և ապահովագրության ոլորտների համապատասխան ԱԱՀ-ի մասնաբաժինները, որոնք իրենցից ներկայացնում են այդ ոլորտների համար ԱԱՀ-ի գծով հարկային ծախսերը:

Միաժամանակ, ԱԱՀ-ի հաշվարկներից արտաճվել են խաղատների, շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման, ոսկու և թանկարժեք քարերի իրացման, մարդասիրական օգնության, պարարտանյութերի իրացման, ծխախոտի արտադրանք արտադրող չհանդիսացող և ծխախոտի արտադրանք ներմուծող չհանդիսացող հարկ վճարողների կողմից ծխախոտի արտադրանքի օտարում, ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի

օտարում, սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում, ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցում, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարում, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարում և այլ օրենքներով տրված ԱԱՀ-ից ազատման արտոնությունների մասով շրջանառությունները, որոնց նկատմամբ կիարառելով համապատասխան գործունեության տեսակների ավելացված արժեք/թողարկում հարաբերակցության ցուցանիշը, այնուհետև՝ ԱԱՀ-ի 20% դրույքաչափը, հաշվարկվել է նշված գործունեության տեսակների համար ԱԱՀ-ի գծով եկամտային ներուժը: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2021 թվականի նշված գործունեության տեսակների կանխատեսվող ծավալների աճով:

Բացի այդ, որոշվել են ԱԱՀ-ի գծով վերը չնշված այլ հարկային ծախսերը՝ որպես ԱԱՀ-ի գծով եկամտային ներուժի և ներքին տնտեսությունից փաստացի հավաքագրված ԱԱՀ-ի, վերոնշյալ ոլորտների, գործունեության տեսակների, ԱԱՀ-ի շեմի ու միկրոբիզնեսի գծով գնահատված՝ ԱԱՀ-ի հարկային ծախսերի հանրագումարի տարբերություն:

II. Շահութահարկի գծով հարկային ծախսեր.

Շահութահարկի գծով հարկային ծախսերի գնահատականը ներառում է գյուղատնտեսության արտոնությունները, ինչպես նաև շահութահարկի հաշվարկներով արտացոլված հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները, բացառությամբ՝ գյուղատնտեսության արտոնությունների և շահութահարկի նվազեցման արտոնությունները:

Գյուղատնտեսություն.

Որոշվել են 2019 թվականի համար գյուղատնտեսության ոլորտի զուտ շահույթը և զուտ խառը եկամուտները՝ հիմք ընդունելով եկամուտների ձևավորման եղանակով 2018 թվականի համար հաշվարկված գյուղատնտեսության ոլորտի զուտ շահույթը և զուտ խառը եկամուտները, որոնց նկատմամբ կիրառվել է գյուղատնտեսության ոլորտի 2019 թվականի՝ արտադրական եղանակով որոշված ավելացված արժեքների աճի տեմպը:

Ստացված արդյունքը ճշգրտվել է գյուղատնտեսության մասնաբաժնում չդիտարկվող (չհաշվառվող) տնտեսության և ապրանքայնության մակարդակով:

Այնուհետև որոշվել է ստացված արդյունքի մեջ առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի մասնաբաժինը՝ համաձայն ՀՀ ԱՎԿ տվյալների: Այնուհետև կիրառվել է շահութահարկի 18% դրույքաչափը և հաշվարկվել է շահութահարկի գծով եկամտային ներուժը: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2021 թվականի գյուղատնտեսության ճյուղի կանխատեսվող ծավալների աճով:

Հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները, բացառությամբ՝ գյուղատնտեսության.

Շահութահարկի հաշվարկներից արտածվել են հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները, բացառությամբ՝ գյուղատնտեսության արտոնությունների, որոնց նկատմամբ կիրառվել է շահութահարկի 18% դրույքաչափը՝ արդյունքում հաշվարկվել է նշված

ուղղության համար շահութահարկի գծով եկամտային ներուժը: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2021 թվականի նշված ուղղության կանխատեսվող ծավալների աճով:

Շահութահարկի նվազեցման արտոնությունները.

Շահութահարկի հաշվարկներից արտածվել են շահութահարկի նվազեցման արտոնությունները, որն իրենից ներկայացնում է նշված ուղղության համար շահութահարկի գծով եկամտային ներուժը: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2021 թվականի նշված ուղղության կանխատեսվող ծավալների աճով և շահութահարկի դրույքաչափի փոփոխության արդյունքով:

III. Եկամտային հարկի գծով հարկային ծախսեր.

Եկամտային հարկի գծով հարկային ծախսերի մասով գնահատվել է գյուղատնտեսության և միկրոբիզնեսի արտոնությունները:

Գյուղատնտեսություն.

Որոշվել են 2019 թվականի համար գյուղատնտեսության ոլորտի վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության գծով եկամուտները՝ հիմք ընդունելով եկամուտների ձևավորման եղանակով 2018 թվականի համար հաշվարկված գյուղատնտեսության ոլորտի վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության գծով եկամուտները, որոնց նկատմամբ կիրառվել է գյուղատնտեսության ոլորտի 2019 թվականի՝ արտադրական եղանակով որոշված ավելացված արժեքների աճի տեմպը:

Ստացված արդյունքը ճշգրտվել է գյուղատնտեսության մասնաբաժնում ապրանքայնության մակարդակով:

Որոշվել է ճշգրտված արդյունքի մեջ ֆիզիկական անձանց (անհատ ձեռնարկատեր չհանդիսացող) մասնաբաժինը՝ համաձայն ՀՀ ՎԿ տվյալների: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2020 թվականի գյուղատնտեսության ճյուղի կանխատեսվող ծավալների աճով:

Հաշվարկվել է ստացված արդյունքին համապատասխանող եկամտային հարկի գումարը:

IV. ԱԱՀ-ի շեմի գծով հարկային ծախսերը.

Որոշվել է 2019 թվականի շրջանառության հարկ վճարողների շրջանառությունը՝ համաձայն հարկ վճարողների կողմից ներկայացված շրջանառության հարկի հաշվարկների:

Հաշվարկվել է շահութահարկի բազան՝ հիմք ընդունելով շահութաբերության միջինացված մակարդակները:

Ստացված բազայի նկատմամբ կիրառվել է շահութահարկի 20% դրույքաչափ և հաշվարկվել է շահութահարկի գծով արդյունքը:

Հաշվարկվել է ԱԱՀ-ի բազան՝ հիմք ընդունելով շահութաբերության և աշխատավարձերի միջինացված մակարդակները:

Ստացված բազայի նկատմամբ կիրառվել է ԱԱՀ-ի 20% դրույքաչափ և հաշվարկվել է ԱԱՀ-ի գծով արդյունքը:

Շահութահարկի ու ԱԱՀ-ի գծով ստացված եկամտային ներուժի և փաստացի վճարված շրջանառության հարկի տարբերությունը՝ ճշգրտված 2021 թվականի տնտեսության ճյուղերի

կանխատեսվող ծավալների աճով և շահութահարկի դրույքաչափի փոփոխության արդյուքով, իրենից ներկայացնում է ԱԱՀ-ի շեմի գծով շահութահարկի ու ԱԱՀ-ի հարկային ծախսը:

V. Միկրոբիզնեսի գծով հարկային ծախսերը.

Որոշվել է 2019 թվականի մինչև 24 մլն. դրամ շրջանառություն ունցող շրջանառության հարկ վճարողների վճարված շրջանառության հարկի գումարը՝ համաձայն հարկ վճարողների կողմից ներկայացված շրջանառության հարկի հաշվարկների:

Գնահատատվել է վերը նշված հարկ վճարողներից միկրոբիզնեսի շրջանակ տեղափոխված հարկ վճարողների կողմից վճարված շրջանառության հարկի չափը, ինչը ճշգրտվել է 2021 թվականի տնտեսության ճյուղերի կանխատեսվող ծավալների աճով և շահութահարկի դրույքաչափի փոփոխության արդյունքով, որն էլ իրենից ներկայացնում է միկրոբիզնեսի գծով շահութահարկի ու ԱԱՀ-ի հարկային ծախսը: Միկրոբիզնեսի գծով հարկային ծախսի բաշխումն ըստ շահութահարկի ու ԱԱՀ-ի կտարվել է հիմք ընդունելով շահութաբերության և աշխատավարձերի միջինացված մակարդակները:

Այնուհետև գնահատվել է միկրոբիզնեսի շրջանակներում աշխատողների եկամտային հարկի գծով հարկային ծախսը՝ որպես օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր աշխատողի համար նվազագույն աշխատավարձի պայմաններում հաշվարկված հարկի և 5000 դրամ գումարի տարբերության և աշխատողների գնահատված թվաքանակի ու 12-ի արտադրյալ՝ ճշգրտված եկամտային հարկի դրույքաչափի փոփոխության արդյունքով:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 1. *2017-2021թթ պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները (մլրդ դրամով)*.....108
Աղյուսակ 2. *2021թ ակնկալվող արտաքին օժանդակությունն ըստ բնույթի*.....110
Աղյուսակ 3. *ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծի հաշվարկներում կիրառված տարադրամների փոխարժեքները ՀՀ դրամով*.....111
Աղյուսակ 4. *ՀՀ 2017-2021 թթ պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (մլն դրամ)*.....112
Աղյուսակ 5. *Ընդհանուր և առաջնային դեֆիցիտները (%-ով ՀՆԱ-ի նկատմամբ) 2021թ*.....112
Աղյուսակ 6. *2017-2021թթ փաստացի/կանխատեսումային բյուջետային եկամուտները (մլրդ դրամներով)*.....113
Աղյուսակ 7. *Առանձին մակրոտնտեսական ցուցանիշների 2017-2021թթ փաստացի/կանխատեսումային մեծությունները (մլրդ դրամներով)*.....114
Աղյուսակ 8. *2017-2021թթ փաստացի/կանխատեսումային պաշտոնական դրամաշնորհները (մլրդ դրամներով)*.....119
Աղյուսակ 9. *2021 թվականի համար ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակություն պաշտոնական դրամաշնորհային ծրագրեր (մլրդ դրամներով)*.....120
Աղյուսակ 10. *Այլ եկամուտների կազմում հաշվառվող եկամտատեսակների գծով ՀՀ 2017-2021թթ փաստացի/կանխատեսումային ցուցանիշները (մլրդ դրամներով)* 121
Աղյուսակ 11. *2017-2021թթ ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի փոփոխության և հարաբերակցության միտումները*.....125
Աղյուսակ 12. *2017-2021թթ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը ըստ տնտեսագիտական դասակարգման*.....127
Աղյուսակ 13. *ՀՀ պետական բյուջեից համայնքներին տրվող հատկացումների վերաբերյալ*128
Աղյուսակ 14. *2019-2021թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը ըստ արտաքին և ներքին աղբյուրների*.....129
Աղյուսակ 15. *ՀՀ 2021-2023թթ պետական բյուջեների ծախսերը՝ ըստ ոլորտների (մլն. դրամ)*.....131
Աղյուսակ 16. *Սոցիալական ոլորտի բյուջետային ծախսերը (մլն դրամ)*.....133
Աղյուսակ 17. *Տնտեսական ոլորտի 2021-2023թթ բյուջետային ծախսերը (մլն դրամ)*.....135
Աղյուսակ 18. *Արտաքին աղբյուրներից 2021թ. ստացվելիք միջոցների (վարկերի և պաշտոնական դրամաշնորհներ) հաշվին ֆինանսավորվող ծախսերը*.....136
Աղյուսակ 19. *Հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների ռիսկերի ազդեցություն* 241
Աղյուսակ 20. *Հարկային եկամուտների զգայունությունը հիմնական տնտեսական գործոնների նկատմամբ, տոկոս*.....242
Աղյուսակ 21. *Հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը* . 243
Աղյուսակ 22. *ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և ծախսերի, ինչպես նաև այլ հոսքերի գծով ռիսկերի ընդհանուր ազդեցությունը. (ֆինանսավորման պահանջ՝ - պահանջի մեծացում, + պահանջի նվազում), մլրդ ՀՀ դրամ*.....244
Աղյուսակ 23. *ՀՀ ՖՆ և այլ կառույցների կողմից ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները (%)* 245
Աղյուսակ 24. *Էներգետիկայի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը (վնասը) ըստ տարիների*.....248

Աղյուսակ 25. *Էներգետիկայի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային հաշվապահական հաշվեկշիռը 2018թ. դեկտեմբերի 31-ի, 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. հունիսի 30-ի դրությամբ*.....249
Աղյուսակ 26. *Էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները*.....250
Աղյուսակ 27. *Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների հանրագումարային զուտ շահույթն ըստ տարիների*.....252
Աղյուսակ 28. *Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները*.....253
Աղյուսակ 29. *Տրանսպորտի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը (վնասը) ըստ տարիների*.....255
Աղյուսակ 30. *Տրանսպորտային ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային հաշվապահական հաշվեկշիռը 2018թ. դեկտեմբերի 31-ի, 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. հունիսի 30-ի դրությամբ*.....255
Աղյուսակ 31. *Տրանսպորտային ոլորտի պետական ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները*.....256
Աղյուսակ 32. *Ոռոգման ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային զուտ շահույթը (վնասը) ըստ տարիների*.....257
Աղյուսակ 33. *Ոռոգման ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների ֆինանսական ցուցանիշները*.....258
Աղյուսակ 34. *«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ֆինանսական ցուցանիշները*.....259
Աղյուսակ 35. *«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ֆինանսական ցուցանիշները*.....262

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Գծապատկեր 1. *ՀՀ 2017-2021թթ հարկային եկամուտները և պետական տուրքերը (մլրդ դրամով) և կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ*.....115
Գծապատկեր 2. *2017-2021թթ. ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի փոփոխության և հարաբերակցության միտումները*.....125
Գծապատկեր 3. *2017-2021թթ. ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ըստ տնտեսագիտական դասակարգման կառուցվածքի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ*.....126
Գծապատկեր 4. 2017-2021թթ. *Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը*.....129
Գծապատկեր 5. *2017-2021թվականների ծախսերի համեմատականը*.....131
Գծապատկեր 6. *2017-2021 թթ. վարկային, դրամաշնորհային միջոցների հաշվին ֆինանսավորումը, կշիռը ՀՆԱ-ում, կշիռը ընդամենը ծախսերում*.....136
Գծապատկեր 7. *Հարկային եկամուտների տարեկան աճի տեմպերի կանխատեսումների հավանականային բաշխումը, տոկոս*.....242